



ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

Յ ու ն ի ս - Յ ու լ ի ս

2008

ՀՐԱՄԱՆԱԻ

**Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ**

ՎԵՀԱՓԱՌԻ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶ- ՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՐ

**Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս. «Թափանցե՛ք Մայր Աթոռ  
Սուրբ Էջմիածնի, մեր Եկեղեցու և մեր Հայրենիքի խորհուրդի մեջ: Ճա-  
նաչե՛ք խորհուրդը մեր հարատևության և հավատարմորեն  
փարված մնացե՛ք այս սրբազան խորհրդին»**

Հուլիսի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի հան-  
դիսությունների դահլիճում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն  
Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ և բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Համազ-  
գային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց կազմակերպության (ՀՀԵԿ) անդրանիկ պատ-  
գամավորական ժողովի բացման արարողությունը: Ժողովին մասնակցում էին Հայ Եկե-  
ղեցու աշխարհասփյուռ 34 թեմերից և հովվություններից ժամանած շուրջ հարյուր հա-  
մայնքների 130 երիտասարդ ներկայացուցիչներ:

Երիտասարդները Ամենայն Հայոց Հայրապետին դիմավորեցին Հայրապետական  
մաղթերգով, ապա ժողովը բացվեց Տերունական աղոթքով: Աղոթքից հետո ողջույնի  
խոսքով հանդես եկավ ՀՀԵԿ Կենտրոնական խորհրդի աստենապետ Կարեն Պետրոս-  
յանը: Ելույթներ ունեցան նաև Հայաստանի, Ռուսաստանի, Ավստրալիայի, Բրազիլիա-  
յի, ԱՄՆ-ի ու եվրոպական մի շարք երկրների թեմերի, ինչպես նաև Կ. Պոլսոց Հայոց  
Պատրիարքության երիտասարդները: Նրանք համոզմունք հայտնեցին, որ նորաստեղծ  
ՀՀԵԿ-ն պետք է կարևոր խթան հանդիսանա աշխարհասփյուռ հայ երիտասարդներին  
Հայաստանյայց Եկեղեցու շուրջ համախմբելու համար և գրավականը դառնա ազգային  
ինքնության պահպանության:

Այնուհետև ելույթ ունեցավ ժողովի կազմակերպական աշխատանքները համակար-  
գող և ղեկավարող ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան ար-  
քեպիսկոպոս Տերտերյանը, ով իր խոսքում ընդգծեց, որ Համազգային Հայ Եկեղեցասեր  
Երիտասարդաց Կազմակերպության ծնունդը մեր ժամանակի հրամայականն է, որի  
տեսիլքն ունեցավ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ կոչ ու հրավեր ուղղելով  
բոլորին՝ համախմբվելու ամենայն հայոց սրբազան ուխտավայր Մայր Աթոռ Սուրբ Էջ-  
միածնում: «...Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպութեան  
պատկառելի այս առաջին պատգամաւորական ժողովը անկասկած նոր էջ մը կը բանայ  
մեր Սուրբ Եկեղեցոյ պատմութեան մէջ... Նուիրական այս կազմակերպութեան հիմ-  
նական նպատակն է Հայց. Եկեղեցոյ երիտասարդութիւնը առաջնորդել դէպի Աստու-  
ած, դէպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, դէպի Հայրենիք, դէպի հաւատքի կեանք, դէպի  
քրիստոնէական բարոյականով ապրած կեանք, որուն պտղաբերումը պիտի ըլլայ հայ

ընտանիքին ծնունդն ու բարգաւաճումը: Երիտասարդաց Կազմակերպության նպատակն ու առաքելութիւնն է, որ հայ երիտասարդին կեանքը հաստատուի Աստուծոյ հետ երկխոսութեան մէջ, Աստուածատուր կեանքը ապրինք համամարդկային սիրոյ զգացումներով, Հայրենիքն ու Սուրբ Էջմիածինը դարձնելով մեր կեանքին մեկնակէտը, հայ ընտանիքը դարձնելով խարիսխը մեր գոյութեան: Հետեւաբար, պատգամաւորական այս ժողովը պարտականութիւն պիտի վերցնէ բոլորիս համատեղ մտածողութեամբ ստեղծելու նաեւ բարի նպատակները իրագործող միջոցներ», - նշեց Սրբազան Հայրն իր խոսքում՝ երիտասարդների խանդավառ ծափողջույնների ներքո հրավիրելով Վեհափառ Հայրապետին իր օրհնությունն ու պատգամը բերելու երիտասարդությանը:

Նորին Սրբությունն իր խոսքում կարևորելով կազմակերպության ստեղծումը՝ աշխարհասփյուռ երիտասարդության համախմբման, Հայրենիքի և Սփյուռքի երիտասարդների մերձեցման, եկեղեցական կյանքից ներս նրանց գործուն ներգրավման առումներով, ասաց. «Մեր նպատակն է, որ մենք երիտասարդներին համախումբ պահենք մեր Եկեղեցու շուրջ, նրանց կյանքը կազմակերպենք Եկեղեցու հովանու ներքո, Եկեղեցու հարկի տակ, որովհետև Եկեղեցին առանցքն է մեր ազգային կյանքի: ...Հայ Եկեղեցին հայ հոգու ծննդավայրն է, հայ ինքնության երաշխավորը, և լինել էկեղեցասեր, լինել աստվածասեր՝ նշանակում է, առաջին հերթին, լինել հայրենասեր»:

ՀՀԵԿ-ի հիմնադրման կարևորագույն նպատակը Ամենայն Հայոց Կաթողիկոսը նկատեց ազգային ինքնության պահպանությունը, ազգային ոգու կերտումն և ձևավորումը երիտասարդության մեջ՝ թե՛ Սփյուռքում, թե՛ Մայր Հայրենիքում՝ դրանում տեսնելով նաև Հայ Եկեղեցու առաքելությունը: «Մեր մշակույթը, մեր հոգևոր կյանքն ամբողջ թրծված են քրիստոնեությանը, քրիստոսակենտրոն են ու քրիստոսակերտ: Եթե ուզում եք լինել ազգի արժանավոր զավակներ, ուրեմն ձեր կյանքի ընթացքը պետք է անցնի Եկեղեցու միջով, Եկեղեցու ճանապարհով», - պատգամեց Հայոց Հայրապետը:

Խոսքի ավարտին Նորին Սրբությունը հորդորեց երիտասարդներին. «Թափանցե՛ք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, մեր Եկեղեցու և մեր Հայրենիքի խորհրդի մեջ: Ճանաչե՛ք խորհուրդը մեր հարատևության և հավատարմորեն փարված մնացե՛ք այս սրբազան խորհրդին, ապրե՛ք այս խորհրդով, զորացրե՛ք այս խորհուրդը ձեր մեջ եկեղեցաշեն և հայրենաշեն գործերով և բարի ավանդները մեր հայրերի փոխանցե՛ք նոր, եկող սերունդներին»:

Հայոց Հովվապետն իր գնահատանքը հայտնեց Հովնան Սրբազանին՝ անդրանիկ պատգամավորական ժողովի նախապատրաստական աշխատանքները արդյունավետ կազմակերպելու համար, ինչպես նաև բոլոր թեմակալ առաջնորդներին և հոգևոր հովիվներին՝ երիտասարդական կազմակերպության կայացմանը նպաստելու համար:

Հայրապետական «Պահպանիչ» աղոթքից հետո պատգամավորական ժողովը շարունակեց իր աշխատանքները մի քանի խմբերում:

Քննարկումների թեմաներն էին՝ ՀՀԵԿ-ի գործունեությունը, տեղեկատվության տարածումը, ինտերնետային կայքի ստեղծումը, թեմերի համագործակցությունը, բյուջեն և ֆինանսավորումը, համագործակցությունն այլ կառույցների հետ և մի շարք այլ հարցեր:

Այս խնդիրները խմբերում քննարկելուց հետո Ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ երկրորդ լիագումար նիստը, հրնթացս որի քննարկվեց ՀՀԵԿ-ի կանոնադրությունը: Քննարկումների արդյունքում աշխատանքային խմբին լիագորվեց վեց ամսից մեկ տարի ժամանակահատվածում մշակել կանոնադրությունը, որպեսզի այնուհետև այն ներկայացվի Վեհափառ Հայրապետի հաստատմանը: Քննարկումներից հետո կայացավ ՀՀԵԿ Կենտրոնական խորհրդի նոր ընտրություն, որի արդյունքում 21 երիտասարդներ ընտրվեցին Կենտրոնական խորհրդի անդամներ:

Ժողովը եզրափակվեց ՀՀԵԿ-ի կազմակերպական աշխատանքները համակարգող և ղեկավարող ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի խոսքով: Գերաշնորհ Սրբազան Հայրն իր խոսքում, որպես պատգամ երիտասարդներին, առանձնացրեց երեք կետ. «Աստված է մեր կյանքի մեկնակետը, Հայաստանյայց Եկեղեցին ոգին է մեր կյանքի և երիտասարդությունը նպատակն ու առաքելությունն է մեր կյանքի»:

Հուլիսի 13-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության պատգամավորների ուխտի Սուրբ Պատարագ: Պատարագիչն էր ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանը: Պատարագին մասնակցում էին Համազգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության պատգամավորները, ովքեր հրնթացս Ս. Պատարագի ստացան Ս. Հաղորդություն:

Հովնան Սրբազանը, իր քարոզում անդրադառնալով այս հավաքին, ասաց. «Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպութեան պատգամաւորներ ուխտի եկանք Սուրբ Էջմիածին, որպեսզի մեր հաւատքի կեանքը նորոգենք, մեր էության մեջ վերահաստատենք ու ամրապնդենք Հայրենիք եւ Սուրբ Էջմիածինի պատկանելիության զգացողութիւնն ու գիտակցութիւնը, բայց ամենէն աւելին՝ մեր մէջ տեսնենք Եկեղեցին՝ ի Քրիստոս: Որքան հարուստ է այսօր Սուրբ Էջմիածինը երիտասարդ հոգիներէ առ Աստուած բարձրացող աղօթքներով, որոնք կը բացատրեն նոր յանձնառութիւն, ծառայութեան նոր ոգի, եկեղեցասիրութեան նոր գիտակցութիւն Սուրբ Էջմիածնի դեսպաններ դառնալու հպարտ ոգեկանութեամբ: Սիրելի երիտասարդներ, մեր պատգամը ուղղուած է ձեզի, որպէսզի վերադառնաք ձեր համայնքները որպէս նոր մարդ եւ ձեր կյանքը դարձնէք թթխմորը բոլորի կեանքին մէջ որպէս Աստուածսիրութեան ոգի, հայրենասիրութեան սիրոյ զգացողութիւն, ծառայութեան հրաւեր եւ ամենէն աւելին՝ մարդիկ ձեր մէջ գտնեն մանրակերտը Հայ Եկեղեցոյ: Ու ամէն քայլափոխի դուք այնպէս ապրիք, որ ձեր կեանքը դառնայ աղօթքի ներկայութիւն, Աստուծոյ սիրոյ առատացում եւ Սուրբ Էջմիածնի խորհուրդին լոյսը, որպէսզի ձեզմով հոգեւորապէս կերպարանափոխէք նաեւ ամբողջ երիտասարդութեան կեանքը: Կեանքը շնորհի մըն է եւ մեր պարտքն է զայն վերածելու խոստումներու իրագործումի, հրաշագործուած կեանքի, արդարացուած կեանքի եւ յարութեան յաղթանակի խորհրդանիշը»:

Հավարտ Ս. Պատարագի ՀՀԵԿ պատգամավորներին Վեհարանի հանդիսությունների դահլիճում ընդունեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիպման սկզբում Տ. Հով-

նան արքեպիսկոպոս Տերտերյանը Հայոց Հայրապետին ներկայացրեց անցած օրերի ընթացքին ՀՀԵԿ-ի կատարած աշխատանքները՝ վստահություն հայտնելով, որ երիտասարդները նոր հանձնառությամբ և առավել նախանձախնդրությամբ, իբրև երիտասարդ դեսպաններ Ս. Էջմիածնի, պիտի վերադառնան իրենց համայնքները՝ ծառայելու ազգին և Եկեղեցուն:

Այնուհետև իր օրհնությունն ու պատգամը երիտասարդներին բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ ընդգծելով, որ ՀՀԵԿ-ի անդամ լինելը պատիվ է և ծանր պատասխանատվություն: Հայոց Հայրապետը վստահություն հայտնեց, որ կազմակերպությունը տարեցտարի ավելի կգորանա և կընդարձակի իր շարքերը:

*«... Եկեղեցու օրհնության ներքո է մեր ազգը հարատևել, և այդպես պիտի լինի այսուհետև նա: Մեր ոգին կերտվել է Եկեղեցու կամարների ներքո: Սուրբ Ավագանից ենք ծնված՝ գիտակցական մեր կյանքով: Եվ մեր հոգին մեր Եկեղեցու զանձերով է սնվել: Ինչ-որ ունենք, որպես արժեք մտքի և հոգու, որպես ստեղծագործ մեր կարողության վաստակ, կրում է մեր քրիստոնեական հավատքի դրոշմը՝ թրծված մեր հոգուց ծնվող աղոթքներով, առ Աստված ունեցած մեր սիրով ու հավատքով»,-* ասաց Նորին Սրբությունը՝ հորդորելով երիտասարդներին աստվածսիրությամբ, անսասան հավատով իրենց ծառայությունը բերել հայ ժողովրդին՝ փարված մնալով Եկեղեցուն և լծակից լինելով հոգևորականներին՝ Հայ Եկեղեցու առաքելության իրականացման մեջ:

Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը հայտնեց Հովնան Սրբազանին, ՀՀԵԿ-ի ժողովի կազմակերպիչ երիտասարդներին ու մասնակիցներին՝ նախանձախնդիր աշխատանքի համար:

Նույն օրը ՀՀԵԿ պատգամավորները, հրաժեշտ տալով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ մեկնեցին իրենց թեմերը:

\*\*\*

Հուլիսի 14-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ՀՀԵԿ-ի Կենտրոնական խորհուրդը գումարեց իր անդրանիկ ժողովը՝ նախագահությամբ Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի, որով նախանշվեցին ՀՀԵԿ-ի առաջիկա ծրագրերը: Ժողովի ընթացքին կազմակերպության առենապետ ընտրվեց Կարեն Պետրոսյանը:

Նույն օրը Կենտրոնական խորհրդի անդամներին ընդունեց և իր օրհնությունը փոխանցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Հուլիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, մատուցվեց Սուրբ և Անմահ Պատարագ: Պատարագիչն էր Տ. Վարդան ավագ քահանա Գասպարյանը (ԱՄՆ Հայոց Արևմտյան թեմ):

Սուրբ Պատարագի արարողության ավարտին երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի շիրիմի մոտ Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգստյան արարողություն ի հիշատակ երանաշնորհ Հայրապետի:

Այս առիթով քարոզ խոսեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանը՝ անդրադառնալով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կյանքին և գործունեությանը: «Երանելի էր Գարեգին Ա երջանկահիշատակ Հայրապետը, որ երկար տարիներ ծառայեց Սփյուռքում և իր փառապանծ կյանքն ավարտեց Մայր Հայրենիքում՝ ծառայելով որպես Հայ Եկեղեցու առաջին սպասավոր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մենք, որպես քրիստոնյաներ, հիշելով նրան այսօր, չենք տխրում, սակայն մենք կարոտում ենք նրա մաքուր և ազնիվ քրիստոնեական ոգուն, որ հեռացավ մեզանից: Ափսոսում ենք, որովհետև այլևս պատմություն է նրա ոգեշնչող, ուսուցանող, ազնվացնող և իմաստնացնող անձը՝ որպես մեծ ուսուցիչ», - նշեց Հայր Սուրբն իր քարոզում:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության օրվա առիթով:

Մեր հորդորն ու մաղթանքն է, որ Սահմանադրության օրվա խորհրդով առավել զորացնենք Հայրենիքին նվիրյալ ծառայություն մատուցելու մեր կամքն ու ձգտումը՝ հավատարիմ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամփոփված դրույթներին, որոնք երաշխավորում են արժանապատիվ, արդար և ազատ կյանքը մեր ժողովրդի: Կառուցենք հայոց լուսավոր ապագան առ Աստված հավատքով ու հույսով, սահմանադրական սկզբունքների հաստատուն հիմքերի վրա:

Թող Ամենակալն Աստված Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահի և պահպանի Հայաստանի Հանրապետությունը և աշխարհասփյուռ մեր ժողովրդին՝ երկնառաք օրհնությամբ պարզելով շինություն ու պայծառություն, նորանոր ձեռքբերումներ և ամենայն բարիք:

Օրհնությամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**  
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին  
5 հուլիսի 2008 թ.



## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով հուլիս ամսին.

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել են.

- Խաժակ Գոնիայան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
- Տատյանա Ումրիխինա (Ուկրաինայի հայոց թեմ)
- Վիկտոր Պլակիդա (Ուկրաինայի հայոց թեմ)
- Անատոլի Գրիգենկո (Ուկրաինայի հայոց թեմ)
- Հայկ Փամբուխյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Օլեգ Գաբրիելյան (Ուկրաինայի հայոց թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.

- Արտեն ավ. քին. Աշճյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
- Կարեն ավ. քին. Գդանյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
- Առնակ ավ. քին. Գասպարյան (ԱՄՆ հայոց Արևելյան թեմ)
- Գրիգոր Ալթունյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
- Ռիչարդ Տեմիրճյան (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)
- Աշոտ Ամատունի (Ուկրաինայի հայոց թեմ)
- Ազատ Գրիգորյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Մուշեղ Խաչատրյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Վլադիկ Գուդմանով (Ուկրաինայի հայոց թեմ)
- Դորիկ Ալեքսանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Ալեքսանդր Ամատունի (Ուկրաինայի հայոց թեմ)
- Ստեփան Չորոխյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Սուրեն Ամիրխանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Վազգեն Աբգարյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Անուշավան Դանիելյանց (Ուկրաինայի հայոց թեմ)
- Մերուժան Պետրոսյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Վիլեն Մանուկյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Լենդրուշ Ոսկանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Ալեքսանդր Ոսկանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Արտակ Թովմասյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Հակոբ Մելքոնյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Վաղարշակ Մելքոնյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Լևոն Պապինյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Արթուր Ամիրխանյան (Ուկրաինայի հայոց թեմ)
- Հակոբ Հարությունյան (Ուկրաինայի հայոց թեմ)

Վիկտոր Դումայան (Ուկրաինայի հայոց թեմ)  
 Վահան Վերմիշյան (Ուկրաինայի հայոց թեմ)  
 Շամիր Խուրլարյան (Ուկրաինայի հայոց թեմ)  
 Ֆրունզիկ Մարդոյան (Ուկրաինայի հայոց թեմ)  
 Սուրբ Գևորգ եկեղեցու ծխական համայնքին և ազգային Դուրյան վարժարանի  
 տնօրինությանը (Բրազիլիայի հայոց թեմ)  
 Ավստրալիայի հայոց թեմին

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

### ԿԱՐԳԱԼՈՒՅԾ Է ՀՈՉԱԿՎԵԼ Տ. ԿՅՈՒՐԵՂ ԱՔԵՂԱ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Կյուրեղ արեղա Վարդանյանը՝ Իսպանիայում ուսումը և հոգևոր ծառայությունը ինքնակամ լքելու պատճառով:

Կարգալույծ հռչակված եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Աշոտ Վարդանյան ավագանի անունով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՎ  
ՎԱԶԳԵՆՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ԴՊՐԱՆՈՑԻ  
ԱՄԱՎԵՐՁՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆԸ  
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ**

Հուլիսի 2-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ տեղի ունեցավ Գևորգյան Հոգևոր Ճեմարանի (Աստվածաբանական համալսարան) և Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի ամավերջյան հանդիսությունը, որն սկսվեց ՀՀ օրհներգով և Ճեմարանի քայլերգով:

Այնուհետև Գևորգյան Հոգևոր Ճեմարանի 2007-2008 թթ. ուսումնական տարվա ամփոփիչ հաշվետվությամբ հանդես եկավ Ճեմարանի տեսուչ Ս. Սահակ վարդապետ Մաշալյանը: Այսօր Գևորգյան Ճեմարանում ուսանում են 114 սաներ, որոնցից շրջանավարտ 38-ը կհամալրեն Մայր Աթոռի միաբանության շարքերը: Տեսուչ Հայր Սուրբը նշեց, որ ուսումնական գործընթացն անցել է առանց խոչընդոտների, ճեմարանականներն այցելել են բազմաթիվ մշակութային հաստատություններ, թղթակցել զանազան թերթերի և ամսագրերի, կազմակերպվել են ուխտագնացություններ և քննարկումներ տարբեր հարցերի շուրջ: Նա անդրադարձավ Ճեմարանի ձեռքբերումներին և առկա խնդիրներին՝ հույս հայտնելով, որ շրջանավարտ 38 ճեմարանականներն այսուհետ իրենց անսակարկ ծառայությունը կբերեն Հայ Առաքելական Եկեղեցու անդաստանում՝ օգտագործելով ճեմարանում ամբարած իրենց գիտելիքներն ու հոգևոր փորձառությունը:

Տարեկան հաշվետվությամբ հանդես եկավ նաև Սևանի Վազգենյան Հոգևոր Դպրանոցի տեսուչ Ս. Գևորգ աբեղա Մարոյանը: Այսօր դպրանոցում ուսանում են 63 սաներ: Հայր Սուրբն իր հաշվետու զեկույցում անդրադարձավ անցնող ուսումնական տարում ճեմարանի արձանագրած հաջողություններին և խնդիրներին: Նա ուրախությամբ նշեց, որ ճեմարանը համալրվել է նոր դասախոսներով, ամուր կապեր են ստեղծվել ՀՀ բուհերի հետ, կազմակերպվել են հանդիպումներ անվանի մտավորականների և գիտնականների հետ, գիտաժողովներ և ուխտագնացություններ հայոց սրբավայրեր, ճեմարանի գրադարանը համալրվել է կրոնական և օտարալեզու արժեքավոր հրատարակություններով: Տեսուչ Հայր Սուրբը նաև տեղեկացրեց, որ հրատարակվել է «Վազգենյան դպրանոց» եռամսյա պարբերականի առաջին համարը, առաջիկային լույս կտեսնի նաև Ճեմարանի երգչախմբի երկրորդ ձայնասկավառակը՝ 10 հոգևոր երգերով:

Ընկալյալ ավանդության համաձայն՝ տեղի ունեցավ նաև մրցանակաբաշխություն: Վեհափառ Հայրապետը խրախուսական նվերներ հանձնեց բարձր առաջադիմություն ցուցաբերած սաներին: Պատվոգրեր և նվերներ հանձնվեցին նաև Ճեմարանի՝ ֆուտբոլի և շախմատի մրցումներում աչքի ընկած լսարաններին և սաներին:

Վերջում ներկաներին իր գնահատանքը և օրհնությունը բերեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը շնորհակալություն հայտնեց ճեմարանների տեսչություններին, դասախոսական կազմերին և պաշտոնեությանը կատարված աշխատանքների համար՝ անդրադառնալով նվիրյալ հոգևորականներ ունենալու կարևորությանը մեր ժողովրդի կյանքում:

Վեհափառ Հայրապետը նշեց, որ բազմաթիվ եկեղեցիներ այսօր հոգևոր սպասավոր չունեն, շատերը խոնարհված են և անհամբեր սպասում են նվիրյալ, հավատքով լի, ազգի բարօրությանն ու Հայրենիքի շինությանը լծված եկեղեցականների, ովքեր պիտի խանդավառեն ու մխիթարություն բերեն մեր ժողովրդի զավակներին, ովքեր մեր եկեղեցիների լույս խորաններից Քրիստոսի լույս պատգամները պիտի քարոզեն, որպեսզի դրանք դառնան մեր բարեպաշտ ժողովրդի կենցաղի և հոգեբանության հիմքը: Հայոց Հովվապետը կոչեց ճեմարանականներին ներքին ուխտ կատարելու՝ անդուլ աշխատանքով ու նվիրվածությամբ այդ կարիքը նվազեցնելու և իրավիճակը փոխելու համար:

Հանդիսությունը փակվեց Նորին Սրբության «Պահպանիչ» աղոթքով:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

# ՔԱՐՈՉԽՈՍԱԿԱՆ

## Տ. ՀՈՎԱԿԻՄ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(15 հունիսի 2008)

*«Եւ լուայ ձայն յերկնից, որ ասէր ցիս.  
«Գրեա՛, երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին  
այժմիկ վաղվադակի. զայս ասէ Հոգին, քանզի  
հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն  
գործք իւրեանց չոգան զհետ նոցա»:*

*«Եվ երկնքից լսեցի մի ձայն, որ ասում էր  
ինձ. «Գրիր. երանի այն մեռելներին, որոնք  
այժմյանից իսկ ննջեցին ի Տէր: Հոգին այս բանն  
է ասում. հանգստացան իրենց տքնությունից, և  
միայն իրենց գործերի արդյունքը հետևեց ի-  
րենց»:*

(Հովհ. Հայտ. ԺԴ 13)

Միբելի քույրեր ու եղբայրներ, այս օրերին լրացավ Ամենայն Հայոց Գարեգին Առաջին երջանկահիշատակ հայրապետի մահվան իններորդ տարին: Եվ այսօր, սրբազան այս տաճարում, ոգեկոչում ենք հիշատակը երջանկահիշատակ հայրապետի: Սրբազան Պատարագի այս պահին անդրադառնալով հայրապետի մահվան խորհրդին՝ Սուրբ Հովհաննեսի Հայտնության վերն ասված տողերի հետևությամբ պիտի հաստատենք, որ երանելի են մեր «ի Տէր հանգեալ» հայրապետները, քանի որ իրենց գործերն այնպիսին էին, որ հետևում էին իրենց մինչև անդրաշխարհ: Եվ իրապես. ի՞նչը պետք է մեռնի նրանց մեջ: Իմաստուններից մեկը նշում է, որ մահը գոյություն ունի այս աշխարհին բնորոշ՝ հպարտ, ինքնափառաբանման և սին փառքի փնտրտութիւնների համար. սակայն նրանց բոլորովին օտար էին թե՛ մեկը, թե՛ մյուսը, որովհետև ինչպես Առակաց գրքում է գրված, ոչ թե հպարտությունը, այլ խոնարհությունն է նախորդել նրանց փառքին: Մահը գոյություն ունի զգայական կրքերի և մարմնավորի համար, գոյություն ունի ատելության, նախանձի և դիակալության համար: Սակայն նման անկումներից մաքուր էին նրանց հոգիները: Իրենց կյանքը նվիրելով Աստծուն և սեփական ժողովրդին ծառայելուն, ամենայն արդարությամբ նրանց ապրած կյանքը կարելի է բնորոշել Միբաքի բառերով. «Իմաստության արմատը երկյուղն է Տիրոջից, և նրա ոստերը՝ երկար կյանքը: Տիրոջ հանդեպ երկյուղը վանում է մեղքը, իսկ երկյուղ չունեցողը չի կարող արդարանալ»:

Նրանց՝ հայրապետների առաքինի կյանքն ու կենսակերպը կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր ապավինում են իրենց: Քանի որ այդ ծառը միշտ բարձրանում է Աստծո մոտ և Սողոմոնի պես կարող է ասել Տիրոջը. «Չէ՞ որ Քեզ ճանաչելն իսկ բովանդակ արդարություն է, և Քո գործությունը գիտենալը՝ արմատ անմահության»: Եվ քանի որ արդարության ճանապարհը տանում է դեպի կյանք, ռիսակալների ճանապարհը՝ դեպի մահ, ուստի հավատում ենք, որ ինչպես Իմաստության գրքի մեջ է գրված, թե «Անեղծությունը մարդուն մոտեցնում է Աստծուն» (Իմաս. Զ 20), և որ նրանց համար մահ գոյություն չունի և հանգչելով ի Տեր՝ նրանք երանելի են դառնում:

Միբելի քույրեր և եղբայրներ, երանելի են Հայոց հայրապետները: Մեր հայրապետների ապրած կյանքին, ժամանակաշրջաններին անդրադառնալիս զարմանալ կարելի է, թե ինչպիսի դժվարությունների ու փորձությունների միջով են անցել ու կարողացել պահել ու պահպանել ոչ միայն Հայ Եկեղեցին իր ողջ առաքելությամբ, այլև ստեղծել են այն ամենը, ինչ կոչվում է հայ հոգևոր և աշխարհիկ մշակույթ, հայկականություն՝ իր ամբողջության մեջ: Դեռ ոչ վաղ անցյալի քսաներորդ դարում էր, երբ մեր հայրապետները ապրեցին իրենց զավակների նահատակության ողբերգությունն ու կորուստը Հայոց ցեղասպանության դժնդակ տարիներին, դիմագրավեցին բոլշևիզմի և սառը պատերազմի հարվածներին, սակայն մնացին աննկուն, անհաղթ և հզոր: Այսօր մենք նրանց երանելիներ ենք կոչում, որովհետև, ինչպես այսօրվա առաքելական ընթերցվածն է ուսուցանում, նրանց հզորությունն այս աշխարհից չէր, քանզի Աստված ընտրեց այս աշխարհի տկարներին, որպեսզի ամաչեցնի հզորներին: Նրանց երանելիներ ենք կոչում, որովհետև տեսնելով նրանց գործերը և ուսանելով նրանց վարդապետությունը, փաստում ենք, որ այդ ուսմունքը հենց այն իմաստուն ուսմունքն էր, որ Առակաց գրքի խոսքերով կյանքի աղբյուր է և որը մեզ զերծ է պահում ուզածը որոգայթից և հոգևոր մահից:

Այդպես ապրեց և իր ապրածի պտուղները մեզ ավանդեց նաև մեր ժամանակների Հայոց հայրապետներից երջանկահիշատակ Գարեգին Առաջինը: Երանելի էր Գարեգին Առաջին երջանկահիշատակ հայրապետը, ով երկար տարիներ ծառայեց Սփյուռքում և իր փառապանծ կյանքն ավարտեց Մայր Հայրենիքում՝ ծառայելով որպես Հայ Եկեղեցու առաջին սպասավոր՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Մենք որպես քրիստոնյաներ հիշելով նրան՝ այսօր չենք տխրում: Արդարև, մարմինն այդ, որ այս սրբազան տաճարի կողքին այսօր հանգչում է խաղաղության մեջ, հոգևոր առումով մեզ տրտմություն չի պատճառում, սակայն մենք կարոտում ենք նրա մաքուր և ազնիվ քրիստոնեական ոգուն, որ հեռացավ մեզանից: Ափսոսում ենք, որովհետև այլևս պատմություն է նրա ոգեշնչող, ուսուցանող, ազնվացնող և իմաստնացնող անձը՝ որպես մե՛ծ ուսուցիչ: Արագորեն անցան այն տարիները, երբ նա մեզ էր հեղում իր հավատքը, իր սերն ու իր լույսը, բայց մխիթարված ենք, որովհետև նա այսօր էլ շարունակում է խրատել և հորդորել, յուրաքանչյուր հայորդու մղել կյանքի մեծ իմաստի մասին մտորումների, մանավանդ, երբ ընթերցում ես նրա շիրմաքարին դրոշմված առաքյալի խոսքը. «Մարդ է, գոր գործ է զերկիր»: Նա դեռ այս կյանքում ապրում էր ոչ թե ժամանակի մեջ, այլ հավիտենականության, որը հատկապես ար-

տահայտվել է նրա ստեղծագործ կյանքում, որն իր ամբողջության մեջ կարելի է բնորոշել իր գրքերից մեկի խորագրով՝ «Հանդիպում երկրի և երկնքի միջև»:

Միբելի եղբայրներ և քույրեր, շատ է պատահել, երբ ուսումնասիրություններ կատարելիս փորձել ենք ինչ-որ հարցի պատասխան փնտրել և գտնել օտար աստվածաբանների գործերում, ապա ի վերջո նույն հարցի պատասխանն ամբողջությամբ՝ իր սպառիչ և բավարարող բացատրություններով գտել ենք երջանկահիշատակ հայրապետի հոգեներոզ գրվածքներում: Պարզ և հստակ, բայց խորագնա վերլուծություններով նա ընթերցողի առջև է բացում մարդկային հոգին հուզող բազմաթիվ հարցերի պատասխաններ, որոնց հեղինակը բոլոր իրավունքներն ունի հաստատելու, որ ամեն մարդ, ով ճշմարտությունից է, իմ ձայնը լսում է: Նրան խորթ էր ճշմարտության բացահայտման նկատմամբ անտարբերությունը: Նրա գրիչը մինչև մահ շարունակեց ծառայել ճշմարտությանը: Շարունակեց բացահայտել քրիստոնյայի կյանքում ծնվող հարցերի նորանոր, արդիական և հայրենաշունչ պատասխաններ: Նրա կյանքն ու ժառանգությունը նման էին մանանեխի այն հատիկին, որը փոքր է, քան բոլոր սերմերը, սակայն երբ աճում է, բոլոր ճյուղերից ավելի է մեծանում ու ծառ է լինում այն աստիճան, որ երկնքի թռչունները գալիս են ու նրա ճյուղերի վրա հանգստանում:

Եղբայրներ ու քույրեր, թող մեր՝ հատկապես երիտասարդներին, մտքերն ու հոգիները լինեն այդ մանանեխի սերմի կրողները, որոնք աճում են երկրի վրա և դառնում ճշմարիտ կյանքի վկաները: Եվ թող նրանց կյանքի օրինակը ուղեցույց լինի մեզ բոլորիս համար, քանզի որքան որ ծանոթանում ենք նրանց կյանքին, նրանց գործած սխրանքներին, այն կրակին, որի միջով նրանք անցել են, այնքան ավելի ենք տեսնում և զգում մեր տկարությունները, որ դրսևորվում է հայրենիքի և Եկեղեցու նկատմամբ սիրո նվազմամբ, հուսալքությամբ և դասալքությամբ: Փորձենք նրանց՝ մեր փառավոր հայրերի կյանքն օրինակ ունենալ և ուղեցույց: Փորձենք նմանվել նրանց, ովքեր հավատացին Տիրոջ այն խոսքին, թե ով կենդանի է ու Ինձ հավատում է, հավիտյան չի մեռնի: Աղոթենք, որպեսզի Տեր Հիսուս Քրիստոս ողորմի բոլոր հոգիներին ու նաև Գարեգին Առաջին հայրապետի հոգուն, ում հանգստյան համար այսօր պաշտոն պիտի մատուցվի Վեհափառ Հայրապետի բարձր նախագահությամբ: Եվ թող Աստծո շնորհները լինեն մեզ ամենքիս հետ այժմ և հավիտյանս հավիտենից. Ամեն:

**Տ. ՎՐԹԱՆԵՍ ՔԱՀԱՆԱ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ՇՈՂԱԿԱԹ ԵԿԵՂԵՑՈՒՄ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ ԱՆԴՐԱՆԻԿ ՊԱՏԱՐԱԳԻՆ**  
(15 հունիսի 2008 թ.)

Միբելի հավատացյալ քույրեր և եղբայրներ ի Քրիստոս,

Փառք և գոհություն Ամենակարող Բարձրյալին, որ քառասուն օրեր առաջ աստվածային նախախնամությամբ Տիրոջ մշտամնա խորանի առջև ծունկի գալով՝ իմ չորս օծակից եղբայրների հետ արժանացա քահանայության բարձր կոչմանը՝ դառնալով Տիրոջ Սուրբ Սեղանի սպասավոր՝ անձանձիր ծառայելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուն և հայ ժողովրդին:

Այսօր դառնալով Տիրոջ մշակը՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ծնողներիս, որոնց շնորհիվ ես գտա Հայ Եկեղեցու մշակը դառնալու ուղին, Վազգենյան Հոգևոր Դպրանոցի և Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսչություններին, դասախոսական անձնակազմին և բոլոր այն մարդկանց, ովքեր աջակցեցին մեզ ձեռքբերումների ճանապարհին:

Արևշատության երկար օրեր եմ ցանկանում ազգիս Վեհափառ Հայրապետին, ում օրհնության և հայրական հոգածության ներքո դաստիարակվեցինք և արժանացանք մշակը լինելու Հայ Եկեղեցու:

Խորին հարգանքներս մեր հոգևոր ծնող Տ. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանին: Աստուծոց խնդրում ենք, որ Սրբազանի օծյալ աջից արժանի հոգևորականներ ծնվեն հովվելու համար աստվածախնամ հայրորդիներին:

Շնորհակալություն եմ հայտնում նաև Հայր Իգնատիոսին, ում աջակցությամբ այսօր հնարավորություն ունեցա պատարագելու Ս. Շողակաթ եկեղեցում:

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

*«Յաւել ի մեզ Տեր ամենակալ զհաւատ, զոյս, զսէր, և զամենայն գործս առաքինութեան»:*

(Ժամագիրք)

Միբելի հավատացյալներ,

Այս հրաշագարդ առավոտը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցում տոն է: Տոն հոգու ցնծության և պայծառության, աղոթքի և ուխտի նորոգության: Այսօր սովորական այն օրերից չէ, երբ վերստին գնում ենք եկեղեցի միայն աղոթելու, մաս և բաժին ունենալու Սուրբ և Անմահ Պատարագից, այլ տոնն է Սուրբ Մարիամ Աստվածածնի տուփի գյուտի:



Ս. Կույսին նվիրված մի քանի տոներ ունի մեր Եկեղեցին, բայց այսօր խոսելու ենք Աստվածածնի տուփի մասին, թե ինչպես այն գտնվեց:

Երբ երկու իշխաններ Երուսաղեմ ուխտի են գնում, Գալիլիայում տեսնում են մի հրեա կնոջ տան առաջ հավաքված մարդկանց, որոնք տառապում էին տարբեր հիվանդություններով: Հետաքրքրությունից դրդված՝ ներս են մտնում և տեսնում մի տուփ: Կնոջից իմանում են, որ տուփը պատկանել է Սուրբ Աստվածածնին:

Իշխանները, տեսնելով կատարված բազում հրաշքները, գնում են Երուսաղեմ և պատրաստում նմանօրինակ մի տուփ: Վերադառնալիս կրկին այցելում են կնոջը, գաղտնի փոխում են տուփը և դառնալով Երուսաղեմ՝ ամեն ինչ պատմում պատրիարքին: Պատրիարքը մեծ հանդիսությամբ տուփը զետեղում է եկեղեցում և սահմանում Սուրբ Աստվածածնի տուփի գյուտի՝ այսինքն՝ տուփի գտնվելու, վերադարձի տոնը:

Սիրելիներ, եկեք միասնաբար քննենք և տեսնենք, թե որոնք են այն հանգամանքները, որ Մարիամը դարձավ այն անձը, ում շնորհիվ էլ պայմանավորվեց մարդկության փրկությունը:

Աղախին, ծառա, կույս անարատ, Միածնածին և նման բազում բնորոշումների կողքին, անշուշտ, մայր: Այսպես են բնորոշում Եկեղեցու թե՛ շարականագիրները, թե՛ եկեղեցական հայրերը, թե՛ բանաստեղծները և շատ շատեր:

Այս վեհագույն կոչումը, որ տրվում է յուրաքանչյուր կնոջ, ով մայր է դառնում, գալիս է Աստվածածին Սուրբ Մարիամից, քանզի սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ մայրական այդ գաղափարը սրբացվեց և բարձրացվեց Սուրբ Կույսի միջոցով:

Աստված, երբ ստեղծեց այս աշխարհը, մարդուն դրեց վայելչության դրախտում ապրելու և օգտվելու այն ամենից, ինչ կար այնտեղ: Սակայն, ինչպես գիտենք Աստվածաշնչից, մեր նախահայրերի անհնազանդության պատճառով դարձանք մահկանացուներ և այժմ կրում ենք կյանքի ուրախությունները և դառնությունները, կրում ենք տառապանքներ, որ կարող էին և չլինել: Նրանց անհնազանդությամբ էր, որ մեղքի գիտակցությունը աշխարհ եկավ ու նրա հետ ի հայտ եկան բազում տառապանքներ, որոնցից էր որդեճնությանը ուղեկցող ծանր ցավը, որը պատիժ էր աստվածային զայրույթի:

Սակայն Բարեգույթ Աստված Իր աղախնի՝ Աստվածածնի միջոցով մաքրեց, սրբագործեց մայրությունը՝ այն դարձնելով վսեմագույն մի պատիվ, որն ընդունողները երբեք տրտմության առիթ չեն ունենում:

Աղախին, որովհետև խոնարհ գտնվեց Աստծու առջև և հոժարությամբ իր արգանդում կրեց Բանն Աստուծո, մարդկության Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Եվ պատահական չէ, որ մայր անվան հետ է կապվում հայրենիքը, հողը, լեզուն, եկեղեցին՝ Մայր հայրենիք, մայրենի լեզու, մայր հող, Մայր Եկեղեցի: Մայրն է սրբությունների սրբոցը, մայրն է, որ ամեն անգամ մանկան օրորոցն օրորելիս տեսնում է զավակի ապագան, իր մտքում կրթում, դաստիարակում մինչև նրա մեծանալն ու հասունանալը: Անշուշտ, նկատած կլինեք, որ անգամ կենդանական աշխարհում էլ մայրական բնագործ ի վերուստ նրանց մեջ դրված բնագոյների մեջ մեծագույնն է:

Եթե նախամորը հրաման էր տրված ցավերով զավակներ ունենալ և ինչպես Սուրբ Գրքում է ասվում. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները, ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես և նա պիտի իշխի քեզ վրա», - ապա Աստվածամոր հեգույթյան, հնազանդության շնորհիվ կնոջից վերցվեց այդ տրտմության ցավը, և նրան տրվեցին ուրախության և բերկրության աննկարագրելի այնպիսի պահեր, որոնք երբեք չեն կրկնվում:

Այսօր էլ մեր իրականության մեջ հանդիպում ենք բազում երևույթների, մարդկային չարիքների, որոնցով նրանք եղծում են Աստվածածնի անաբատության կերպարը՝ չգիտակցելով, որ ինչպես մարդ ստեղծվեց Աստծո պատկերով և նմանությամբ, կինն էլ մաքրվեց և բարձրացվեց Աստվածածնին տրված շնորհի միջոցով:

Մեր ամենօրյա աղոթքներում մենք հիշում ենք Աստվածածնին, խնդրում և աղերսում ենք Նրա բարեխոսությունը Իր Միածին Որդուն, որպեսզի բազումողորմ Աստված ևս մեկ անգամ հնարավորություն տա փոխվելու և ձերբազատվելու մեղքերից:

Մեր կյանքում էլ կարող ենք շատերի խնդրանքները մերժել, սակայն երբ նույն խնդրանքով դիմում է մայրը, երբեք չես կարողանում մերժողական պատասխան տալ:

Նույնը և Հիսուս Քրիստոս ամեն անգամ, երբ լսում է Աստվածածնի խնդրանքը, չի կարողանում մերժել նրան, հակառակ այն բանի, որ մեր մեղքերից արդեն գոյացել են այնպիսի վիթխարի սարեր, որոնք քանդելը, կործանելը մարդու համար կլինի ուղղակի սիզիպոսյան աշխատանք, այսինքն՝ անվերջ, անարդյունք աշխատանք:

Միբելինե՛ր, եկեք միասնաբար աղոթենք և խնդրենք Ողորմած Աստծուն, որպեսզի մեզ մաքրի մեղքերից, ապրենք Իր ամենագոր Աջի և Ամենատես Աչքի հովանու ներքո՝ ասելով. «Տե՛ր, ավելացրու մեր հավատքը, հույսը, սերը, որպեսզի հաստատուն մնանք Քո պատվիրաններին հետևելու մեջ»:

Աղաչում ենք Քեզ, Սուրբ Աստվածածին, բարեխոսիչ մեզ համար Քո Միածին Որդուն՝ փրկելու այն ժողովրդին, որին գնեց Իր սուրբ արյամբ: Ամեն:

**Տ. ՄԱՀԱԿ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԱՇԱԼԵԱՆԻ ՔԱՐՈԶՐ՝  
ԽՈՍՈՒԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՎԱՐԴԱՎԱՌԻՆ ՄԱՏՈՒՑՈՒԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(29 յունիսի 2008)

«Անուամբ Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Ան, որ կ'ջնուի հպարտանայ, թող Տիրոջնով հպարտանայ, որովհետեւ փառաւոր է մեր Տէրը, սքանչելի են Անոր գործերը: Մեր Տէրը Յիսուս Քրիստոս Աստուած է Աստուծմէ, Լոյս է Լուսէ, ճշմարիտ Աստուած է ճշմարիտ Աստուծմէ: Հետեւաբար կրնանք հպարտանայ, որ այսպիսի Տիրոջ կը պաշտենք, այսպիսի Տիրոջ կը հետեւինք եւ մեր յոյսը դրեր ենք այս փառաւոր Տիրոջ վրայ:

Այսօր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ մեծ տաղաւար տօներէն մէկն է: Հինգ տաղաւար տօներէն Պայծառակերպութիւնը կը տօնենք այսօր, մեր Տիրոջ այլակերպութիւնը, պայծառակերպութիւնը Թաբոր լեռան վրայ: Որովհետեւ այս տօնը կը յայտնէ մեզի, թէ մենք որուն կը հետեւինք եւ մեր յոյսը որուն վրայ դրեր ենք:

Իր խաչելութենէն մի քանի շաբաթներ առաջ Տէր Յիսուս դարձաւ Իր աշակերտներուն եւ հարցում մը ուղղեց անոնց: Հարցում մը, որ պատասխանը Ինքը լաւ գիտէր, բայց նորէն ալ ուզեց աշակերտները պատասխանեն: Ըսաւ. «Ես երեք տարի կը քարոզեմ եւ կը հրաշագործեմ այս ժողովրդին մէջ: Ի՞նչ կ'ըսեն Իմ մասին: Ես ո՞վ եմ»: Աշակերտները իրարու նայեցան եւ ժողովրդի կարծիքն ըսին Յիսուսին, բայց պահելով վատ կարծիքները, յայտնելով միայն լաւերը: Ըսին, որ ոմանք կ'ըսեն, որ Դու նոր մարգարէ մըն ես, ոմանք կ'ըսեն, որ Դու Եղիան ես, որ պիտի գար, կամ Յովհաննէս Մկրտիչը, որ Յովհաննէսը թեեւ գլխատուեց, սակայն յարութիւն առած է, եւ այդ Դուն ես: Ժողովուրդը ուրիշ բաներ ալ կ'ըսեն Յիսուսի մասին. կախարդ կ'ըսեն, որովհետեւ հրաշքները ուրիշ ձեւով չէին կրնար բացատրել, խենթ կ'ըսեն, որովհետեւ Իր ամբողջ գործը ձգած էր եւ Աստուծոյ արքայութիւնը կը քարոզէր առանց դրամի, հերետիկոս կ'ըսեն, որովհետեւ տարբեր տեսանկիւնէն կը նայէր մովսիսական կրօնքին. ներքինի կը կոչէին զայն նաեւ. քանի որ չէր ամուսնացած եւ ամուսնանալու ալ միտք չունէր: Հարկաւ Յիսուս տեղեակ էր նաեւ այս կարծիքներէն:

Բայց Յիսուսին համար կարեւորը ուրիշներու կարծիքը չէր, այլ՝ իր աշակերտներուն, որոնց կը հարցնէ մեղմօրէն. «Իսկ դուք ի՞նչ կ'ըսէք: Ես ո՞վ եմ»: Առանց մտածելու Պետրոս առաքեալը կը պատասխանէ այս անակնկալ հարցումին. «Դուն ես Մեսիան, Դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին»: Եւ Յիսուս ըսաւ. «Երանի քեզի, Պետրոս, որովհետեւ այս ճշմարտութիւնը քեզի յայտնողը միսն ու արիւնը չէ, այլ՝ Աստուծոյ Հոգին է, Սուրբ Հոգին է, որ յայտնեց»:

Իրապէս, Տէր Յիսուսի համար, սիրելին է՛ր, կարեւոր չէ, թէ աշխարհը ի՞նչ կ'ըսէ Իրեն համար: Ո՞վ է Յիսուսը: Դուն, որ քրիստոնէայ ես, դուն, որ կը հետեւիս Քրիստոսին, քեզի համար կարեւոր է պատասխանել թէ ո՞վ է Քրիստոսը:

**Ո՞վ է Քրիստոսը:** Քրիստոսը հրաշք մարդ մըն է: Մտուրին մեջ ծնաւ, խաչի վրայ մեռաւ: Բանուոր դասակարգին կը պատկանէր, համալսարան չգնաց, բանակներ չունէր, զինուորներ չունէր, դրամ չունէր, պետութիւն չունէր Իր ետեւը կանգնած, բայց աշխարհին ամենէն յաջող մարդը դարձաւ, աշխարհի ամենէն անուանի մարդը դարձաւ, միլիոնաւոր մարդիկ կը հետեւին Իրեն: Ինչպէ՞ս այս ձախողանքէն այս յաջողութիւնը դուրս կու գայ. որովհետեւ հրաշք մը կայ Իր կեանքին մէջ: Որովհետեւ պարզ մարդ մը չէ ան: Պարզ մարդ մը ըլլայ, Իր տարեդարձը մէկ օր կը տօնենք, այնպէս չէ՞, այնպէս ինչպէս բոլոր մեր միւս հերոսներուն: Բայց երբ որ Իր տարեդարձը գայ, երկու ամիս կը տօնենք՝ մեծագոյն շուքերով, որովհետեւ այս անձին մէջը ուրիշ բան մը կար, Աստուած կար Անոր մէջը: Մեզի կը նմանէր, ճիշտ եւ ճիշտ նոյն մեզի պէս էր, բայց նաեւ մեզմէ շատ տարբեր բան մը կար մէջը. Աստուած կար, հետեւաբար արժանի է, որ Իր ետեւէն երթանք եւ մեր յոյսը կապենք Անոր, որովհետեւ Աստուած է Աստուծմէ, Լոյս է Լոյսից:

Սակայն Տէր Յիսուս չուզէր, որ մենք կուրաբար հաւատանք Իրեն: Հետեւաբար Իր աշակերտները կ'յառնէ շաբաթ մը յետոյ, վեց օր անցնելէ յետոյ այս գրոյցից, լեռ կը բարձրանայ երեք աշակերտներով՝ Պետրոսով, Յակոբոսով եւ Յովհաննէսով միասին եւ հոն կ'յաղօթեն: Երբ Յիսուս իրենցմէ մի քիչ հեռու ոտքի կանգնած կ'յաղօթ թեւատարած, բան մը փոխուելու կը սկսի իր մարմնին վրայ: Ճառագայթներ արձակուելու կը սկսին: Հագուստները կը փոխուին՝ ճեփ-ճեփակ կ'ըլլան, մազերը եւ մօրուքը կը սպիտականան, եւ աշակերտները կը զարմանան այդ տեսողութենէն: Իրենց ոտքերու վրայ ուժ չմնար, ծունկն դրած Պետրոսը կ'ըլլէ. «Տէր,- կ'ըլլէ,- Քեզի համար, Եղիայի համար եւ Մովսէսի համար երեք տաղաւարներ շինենք»: Որովհետեւ Յիսուսը առանձին չէր. երկու լուսաւոր եակներ կը մասնակցէին այս գրոյցին: Հին Կտակարանի ամենէն մեծ անձերէն էին ասոնք՝ Եղիա եւ Մովսէս մարգարէները: Եւ ճիշտ այդ պահուն լուսաւոր ամպ մը կու գայ, կը ծածկէ Յիսուսը եւ միւսները եւ ձայն մը կ'ըլլէ. «Այս է Իմ սիրելի Որդին, որուն մտիկ ըրէք»: Եւ երբ որ ամպը կ'յերթայ, միայն Յիսուսը կը տեսնեն:

Այս աշակերտներուն տրուած նուէր մըն էր: Երբ որ կը հաւատային, որ Տէր Յիսուս Աստուծոյ Որդին է, որպէսզի իրենց աչքերով վկայ դառնան եւ ճշմարիտ վկայութիւն ընեն ամբողջ աշխարհին, ըսելով թէ՛ «Այս Նազովրեցի Յիսուսին մէջ Աստուածութիւն թաքնուած է, եւ մենք տեսանք այդ մեր աչքերով»:

Սուրբ Երրորդութեան գաղափարը գիտեմ, որ մի քիչ շփոթեցուցիչ գաղափար մըն է, դիւրին հասկանալի չէ: Յիսուս Աստուած է, Հայր Աստուածն ալ երկինք կը գտնուի, ուրեմն Աստուծոյ թիւը երկու՞ կ'ըլլայ: Այս բոլորը իրապէս խորունկ աստուածաբանական խնդիրներ են: Չէ՛, Աստուած երկուքի չի՛ բաժնուիր, Աստուած անբաժանելի է: Բայց եթէ օրինակ մը տանք պարզ, զոր օրինակ պարապ շիշ մը մտածեցէք եւ անիկա ծով նետեցէք, ծովի ջրով կը լեցուի եւ յատակը կ'իջնայ: Եթէ ակնոցներով նայիք անոր, ծովի ակնոցներով, պիտի տեսնէք շիշ մը: Բայց այլեւս անոր մէջ ի՞նչ կայ՝ ծովի ջուրէն, առանց ծովէն բաժնուելու, այսինքն ծովը երկուքի չբաժնուեցաւ, ծովի ջուրը եւ շիշ մէջ ջուրը նոյն ջուրն է, թէ՛ ծովին մէջն է եւ թէ՛ շիշին մէջն է: Երբ որ մարդիկ Տէր

Յիսուսին կը նայէին, ինձի պէս մօրուսաւոր մէկը կը տեսնէին: Կը խօսէր, մարդու կերպարանք ունէր, եւ այդպէս էր: Բայց ամբողջ տիեզերքը լեցնող Աստուած կար Անոր մէջը. առանց բաժնուելու նոյն Աստուածն էր: Եւ բնականաբար մարդիկ անիկա չէին տեսնէր: Բայց այդ աստուածութիւնը յայտնուեցաւ Թաբոր լեռան վրայ:

Միքելինէ՛ր, Տէր Յիսուս Քրիստոս ինչ որ ըսաւ Իր խօսքերուն, ետեւը կ'եցաւ, ինչ որ ըսաւ՝ յաջողեցաւ: Տէր Յիսուս Քրիստոս հրաշքներ միայն չգործեց անցեալին, երբ որ կ'չապրէր. հրաշքներ կը գործէ նաեւ այսօր: Որովհետեւ Աստուած է Ինքը եւ ամէն տեղ է Ինքը: Եւ Ինքը կարող է մեր սիրտերէն ներս մտնել եւ փոխել մեզ: Յիսուս պայծառակերպեցաւ, այլակերպեցաւ. բայց ասիկա ինձի ի՞նչ այսօր: Մեզի համար ի՞նչ բարի լուր ունի այս դէպքը: Ի՞նչ կը տօնենք մենք այսօր: Որովհետեւ մենք կը տօնենք, սիրելիներ, այդ փառաւոր տեսարանը, որ Յիսուսի վրայ կատարուեցաւ, մեր վրայ ալ պիտի կատարուի: Մենք ալ պիտի պայծառակերպինք, մենք ալ պիտի այլակերպինք, մենք ալ Քրիստոսի պէս պիտի ըլլանք: Եւ Քրիստոս պիտի կատարէ այդ բանը. մեր մէջը Իր Հոգին ուղարկելով եւ մեր էութիւնը եւ բնութիւնը փոխելով: Աստուածացնելով նոյն գործը պիտի կատարէ: Այն ձայնը, որ Տէր Յիսուսին եկաւ, մեզի եկաւ. «Սա է Իմ սիրելի Որդին, Որուն մտիկ ըրէք»: Շատ մարդեր կը ճանչնաս, բայց եթէ Տէր Յիսուսը չես ճանչնար, կեանքիդ ամէնէն մեծ կորուստն է: Շատ գրքեր կարդացեր ես, պիտի կարդաս, բայց եթէ Իր խօսքերը չես կարդացեր, շա՛տ պիտի զոջաս: Որովհետեւ Ինքը ոչ միայն պատմութիւնը փոխեց, այլ նաեւ կը փոխէ մեր կեանքերը: Եթէ անգամ մը կը ճանչնաս անոր, անգամ կը մտնէ քու սիրտդ ներս եւ փոխելու սկսի քեզի, այլեւ չես կրնար ապրիլ առանց անոր. երթալիք ուրիշ տեղ մը չունիս այլեւս: Միայն Անոր ծունկերուն առջեւ կրնաս աշակերտիլ եւ հետեւիլ: Եւ այս է, որ մենք կ'յուխտենք այս մեծ տօնին: Որովհետեւ մենք այդ՝ կ'յըսենք այն մեծ պայծառակերպութեան, որ Աստուած պիտի փոխէ մեզի: Փոխել կ'յուզէ մեզի, լուսաւոր դարձնել կ'յուզէ, ժպիտ մը դնել կ'յուզէ մեր երեսին: Որքան պէտք ունի Հայաստանի ժողովուրդը: Դուրսէն եկող բոլոր հայերուն ուշադրութիւնը կը գրաւէ. ժպիտ չկայ, ժպիտը շատ քիչ է Հայաստանում: Պատճառները շատ կրնան ըլլալ, բայց հաւատացէք, որ նիւթական չեն հիմնական պատճառները, որովհետեւ մենք այդ այլակերպող, պայծառակերպող, մեր երեսը փոխող, ժպի՛տ, այո՛, հոն ժպի՛տ դնող Քրիստոսը կորսնցուցեր ենք: Եւ պէտք է Անիկա վերագտնենք, պէտք է Անոր հետ հաշտուինք, եւ պէտք է Անիկա փոխելու սկսի անհատապէս մեզի եւ ազգովին, միասնաբար, ամէնքս:

Երբ որ Վարդավառ ըսուի, շատերը վարդ եւ իրարու ջրել կը հասկնան: Հարկաւ թէ անիկա աւանդական տօնակատարման ձեւ մըն է: Նախաքրիստոնէական շրջաններէն մնացած է մեզի, հեթանոսական արմատներ ունի, պահուելիք բան մը չկայ. սակայն հեթանոսական չեն այլեւս այդ աւանդութիւնները, եթէ իմաստով ընենք մենք: Ինչո՞ւ. որովհետեւ մեր նախահայրերը այդ երկու մեծ սիմվոլներուն մէջ՝ վարդին եւ ջուրին մէջ տեսած են այլակերպութեան խորհուրդը: Վարդը փուշ մըն է, ամէնէն տղեղ բոյսերէն մէկն է: Յետոյ կոկոններ կ'աճեցնէ իր վրայ, որոնք բանի մը չեն նմանիլ: Բայց առաւօտ մը այնպիսի գեղեցկութեամբ կը բացուին այդ կոկոնները, որ աշխարհի ամէնէն գեղեցիկ ծաղիկը կը դառնան ժպտադէմ: Այսինքն այդ անկերպար

բոյսը կը փոխուի, կ'այլակերպի: Նոյնը պատահեցաւ Տէր Յիսուս Քրիստոսին: Այն է Թաբոր լեռան վարդը: Եւ Իր աշակերտներուն առջեւ այդ կոկոնը բացուեցաւ սպիտակ, լուսաւոր: Իսկ ջուրը բոլոր այլակերպութիւններուն, բոլոր փոփոխութիւններուն, կեանքի խորհրդանիշն է: Եւ Տէր Յիսուսը կ'ըրսէ. «Ես եմ Կեանքի Ջուրը: Եթէ մէկը Ինձի գայ, երբեք չի ծարաւնար: Եթէ մէկը հաւատայ Ինձի, իր էութեան մէջէն կենդանի ջուրերու աղբիւրներ կը բխին»:

Հետեւաբար երբ որ այսօր պիտի ջրէք իրարու, հազարաւոր տարիներ տեւող այս աւանդութիւնը պիտի կատարէք, ձեր միտքին մէջ սա՛ պահեցէք. մարդը փոփոխութեան պէտք ունի, մարդը փոխուելու կարօտ արարած մըն է, եւ անիկա միայն Աստուած կրնայ փոխել: Քրիստոսի հոգեւոր ջուրն է, Անոր խօսքերն են, որ մարդուն այդ փոփոխութիւնը կրնան տալ: Ուրեմն ձեր մտքին մէջ թող այդ ըլլայ:

Ես պիտի շնորհաւորեմ ձեր այս սուրբ տօնը: Քրիստոսի օրհնութիւնը ձեր տուններուն մէջ ըլլայ, մեր վրայ ըլլայ, մեր հայրենիքի վրայ ըլլայ եւ հոնդէ լոյս հայթայթէ մեզի, եւ հաւատքի ջուրով կանանչին վերստին մեր եկեղեցիները, մեր վանքերը, եւ հոնդէ աստուածահաճոյ պտուղներ առաջանան:

Տէրը օրհնէ ձեր ամէնը:

**Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(13 հուլիսի 2008)

*«Զի ամենայն տուրք բարիք է ամենայն պարգևից կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ էս Հայր Լուսոյ»:*

*«Բոլոր տեսակի շնորհները եւ պարգեւները մեզ կը բաշխուին եւ կը տրուին ի վերուստ երկինքէն Քեզմէ, Տէր Աստուած մեր, Դուն, որ Լոյսի աղբիւրն էս»:*

(Պատարագամատույց)

«Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, Ամէն»:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, սրբազան Պատարագի աղօթքներու աւարտին մենք կը հանդիպինք այս մաղթանքին: Աղօթք, որ կը դարձնենք մեր սրտի աղօթքը ամէն կիրակի, փառք տալով եւ գոհութիւն վերառաքելով Աստծուն մեզի տրուած բոլոր շնորհներու եւ պարգեւներու համար, բայց մանաւանդ այդ բոլորի մէջէն մեծագոյն պարգեւին, ամենաթանկագին եւ ամենաընտիր պարգեւին՝ կեանքի նուէրի համար: Այսօր, սրբազան այս Պատարագի մէջէն այս աղօթքին մէջ մենք կ'յուզենք խառնել նաեւ աղօթքի մաղթանքը քրիստոնէայ Եկեղեցու վերջին տասնամեակներու ընթացքին ապրած ու գործած մայր Թերեզայի, որ գրեթէ այս նոյն մաղթանքի համագոր եւ հաւասար աղօթք կը կատարէ առ Աստուած՝ ըսելով. «Կեանքը երկնատուր առաքելութիւն մըն է, իրագործէ զայն»: Մայր Թերեզայի մաղթանքը մեր մէջ կ'արթնցնէ յանձնառութեան գիտակցութիւնն ու մասնակցութեան ոգի ու մեր մէջ կը խորացնէ նաեւ Աստծուն, Եկեղեցուն, համայնքին ծառայելու խոր գիտակցութիւնը:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, մենք այս մաղթանք-աղօթքը ընտրեցինք մասնաւոր կերպով, որովհետեւ ձեր աչքերու առջեւ արդէն կը տեսնէք երիտասարդներու ամբողջ խումբ մը, որոնք եկած են Հայաստան եւ արտաշխարհը ներկայացնող աւելի քան երեսունհինգ թեմերէ եւ աւելի քան հարիւր համայնական վիճակներէ եւ որոնք անցնող քանի մը օրերու ընթացքին Հայոց Հայրապետի բարձր հովանաւորութեան ու նախագահութեան ներքոյ, Հայրապետի առաջնորդութեամբ հիմքը դրին, սկիզբը դրին Համազգային Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան եւ աշխատանքային եւ ժողովական օրերու ընթացքին մեզ առաջնորդող հիմնական խորհուրդն եւ ոգին եղաւ Սուրբ Պատարագէն քաղուած այս միտքը, որ կեանքը երկնատուր շնորհ մըն է, գորս իրագործելու պարտականութիւնը ունինք եւ այդ գիտակցութեան կոչը եւ հրաւերն է, որ կ'յստանանք այսօր:

Միրելի՝ բարեպաշտ հաւատացեալներ, անցնող քանի մը օրերու ընթացքին, հինգ-շաբթի երեկոյն սկսած մեր երիտասարդները անընդհատ պատգամ ստացան զիրենք առաջնորդող հոգեւոր սպասաւորներու կողմէ, որպէսզի Աւետարանէն ճառագայթող պատգամը՝ Քրիստոս դարձնելու համար մեր կեանքի ժայռը, նաեւ մեր կեանքի հիմնաքարը: Իւրաքանչիւրս, որպէս սպասաւոր Սուրբ Եկեղեցու, եւ այստեղ, այս Սուրբ Խորանի առջեւ նստած երիտասարդ-երիտասարդուհիներ ունենալով հանդերձ այս գիտակցութիւնը, անցնող քանի մը օրերը դարձուցին ուխտի օրեր, աղօթքի օրեր, հոգեւոր վերազարթօնքի օրեր, անգամ մը եւս իրենց կեանքի մէջ հաստատելով այն հիմնական հաւատքի գիտակցութիւնը, որ Քրիստոս է մեր կեանքի ժայռը, եւ Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին առաջնորդութիւնը մեր կեանքին:

Միրելի բարեպաշտ հաւատացեալներ, ձեր շարքերուն կը տեսնէք երիտասարդ աղօթողներ, որոնք այսօր Սուրբ Էջմիածնի Մայրավանքէն ներս գտնուելով՝ աղօթքի այս քուրայի մէջէն նոր աղօթք առնելով ուխտ կը կատարեն եւ այստեղէն վերադառնալով իրենց համայնքներ՝ դառնան հաւատքի կեանքի թթխմորը: Եւ մենք պիտի ուզէինք ըսել, որ մեր երիտասարդները պիտի դառնան նաեւ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի մեր թեմական եւ համայնական կեանքերէն ներս երիտասարդ դեսպանները Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Այսօր, այս պահուն, մենք սրտի պարտք ունինք մեր երախտագիտութեան ջերմ եւ անկեղծ խօսքը յղելու Ձեզ՝ սիրելի Վեհափառ Հայրապետ, որ դուք եղաք նախաձեռնողը, հրաւիրողը այս ժողովին, Հայ Եկեղեցասէր Երիտասարդաց Կազմակերպութեան պատգամաւորական առաջին ժողովին: Եւ Ձեր քաջալերական խօսքով, Ձեր խրախուսիչ պատգամներով ամրապնդեցիք մեր երիտասարդները, որպէսզի այստեղ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքոյ անոնք դառնան իրենց կեանքով մէկ կամք, մէկ խորհուրդ, հաւատքի կեանքի արտայայտութիւն եւ զօրացած վերադառնան իրենց համայնքները եւ թեմերը այն քաջ համոզումով, որ իրենցմէ իւրաքանչիւրը պարտականութիւն ունի այս շարժման մէջ դառնալու յանձնառութիւն, մասնակցութիւն եւ ծառայութիւն: Միրելի՝ երիտասարդներ, մեր խօսքը մասնաւոր կերպով նաեւ ձեզի կը յղենք այսօր, որպէսզի դուք դառնաք ձեր համայնքները, ձեր թեմական վիճակները որպէս նոր մարդ: Այստեղ ոտք դնող իւրաքանչիւր հայ քրիստոնէայ պարտաւոր է հոգեւոր կերպարանափոխութիւն զգալու իր կեանքի մէջ: Այստեղ ոտք դնող իւրաքանչիւր հայ ուխտաւոր, երբ կը վերադառնայ իր համայնքը, իր թեմը, պարտաւոր է դառնալու իր համայնքի կեանքի մէջ աղը հաւատքի կեանքին, լոյսը հաւատքի կեանքին ձեր համայնական կեանքէն ներս:

Մեր մաղթանքն է, որ դուք դառնաք նաեւ թթխմորը բոլորի կեանքի մէջ աստուածաբնութեան, հայրենասիրութեան սիրոյ զգացումի եւ ծառայութեան հրաւեր դառնայ ձեր կեանքը, բայց ամենէն աւելի մարդիկ ձեր մէջ տեսնեն Հայ Եկեղեցոյ մանրակերտը: Եւ ամեն քայլափոխին դուք այնպէս ապրիք, որ ձեր կեանքը դառնայ աղօթքի ներկայութիւն, Աստուծոյ սիրոյ առատացումը, Սուրբ Էջմիածնի խորհուրդին լոյսը, որպէսզի ձեզմով հոգեւորապէս կերպարանափոխէք նաեւ ամբողջ երիտասարդութեան կեանքը: Յիշեցէ՛ք ուրեմն, որ կեանքը շնորհի մըն է Աստուծոյ կողմէ եւ մեր բոլորի պարտքն է զայն վերածելու խոստումներու իրագործումի, հրաշագործուած կեանքի, արդարացուած կեանքի եւ յարութեան յաղթանակի խորհրդանիշը այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամեն:



**Տ. ԱՌԵՆ ԱՐԵՂԱ ՃԵՊԵՃՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(20 հուլիսի 2008)

«Յանուն Հօր եւ Որդոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Այսօրվա ավետարանական ընթերցվածում ասվում է. «Քանի որ Աստված այնքան սիրեց աշխարհը, որ մինչև իսկ Իր Միածին Որդուն տվեց, որպեսզի նա, ով հավատում է Նրան, չկորչի, այլ հավիտենական կյանք ունենա» (Հովհ. Գ 16):

Միբելի եղբայրներ և քույրեր ի Քրիստոս, քրիստոնեության մեջ թերևս ամենից սիրված և ժողովրդական հատվածն է այս: Այս հատվածը մեզ տալիս է քրիստոնեության գաղափարի ամբողջ կորիզը, որ Աստված ուղարկեց մեզ Իր Միածին Որդուն: Այսինքն, սիրելիներ, Աստված Իր Միածին Որդուն ուղարկելով, ուղարկեց մեզ կատարյալ սեր: Այո՛, կատարյալ սեր: Վերցնելով Քրիստոս որպես կատարյալ օրինակ սիրո, մենք տեսնում ենք, որ Աստված Իր Միածին Որդուն ուղարկեց մեզ, որպեսզի Իր Որդին զոհվի մեզ համար, մեր փրկության համար, և դա է կատարյալ սերը: Մենք որպես թե գիտենք, թե սերը ինչ է: Իբրև թե մենք ասում ենք, որ՝ այո՛, մենք հասկանում ենք, թե սերը ի՛նչ է: Մենք ասում ենք, որ սիրում ենք մեր ծնողներին, սիրում ենք մեր Եկեղեցին, սիրում ենք Հայաստանը, սիրում ենք մեր տները, մեր ընկերներին, մեր քույրերին, եղբայրներին. բայց արդյո՞ք, սիրելի քույրեր և եղբայրներ, մենք պատրաստ ենք անել՝ ինչ որ Քրիստոս արեց մեզ համար՝ մեր կյանքը տալու ուրիշի համար. դա է կատարյալ սերը: Եվ ավելի լավ հասկանալու այս սերը, այս հարաբերությունը, մենք պետք է լավ հասկանանք մեր հարաբերությունը մեր և Աստծո միջև: Որովհետև մենք պետք է ունենանք առողջ հարաբերություն: Այո, մենք տեսնում ենք մեր կյանքում ծնողներ կամ ամուսնացած զույգեր, և մենք ասում ենք՝ այո, առողջ հարաբերություն ունեն, առողջ սեր ունեն, որովհետև անընդհատ իրար հետ խոսում են, անընդհատ իրար հեռաձայնում են: Կամ երբեմն ու երբեմն այս արդի աշխարհում հաղորդագրություններ են ուղարկում, որպեսզի մյուսը իմանա, որ մտածում է իր սիրելին իր մասին: Բայց նաև մենք գիտենք՝ ի՛նչ է ոչ առողջ հարաբերությունը: Եվ երբեմն մենք ենթարկվում ենք ոչ առողջ հարաբերության մեր ու Աստծո միջև: Երբեմն օրեր կան, որ մենք չենք խոսում Աստծո հետ, երբեմն օրեր, շաբաթներ կան, որ մենք չենք աղոթում, երբեմն օրեր կամ շաբաթներ կան, որ մենք բարիքներ չենք անում մեր եղբայրների և քույրերի համար: Եթե մենք իսկապես ունենանք առողջ սեր, առողջ ըմբռնում այս հատվածից, այնժամ անընդհատ մեր հարաբերությունը մեր ու Աստծո միջև սերտ հարաբերություն պիտի լինի, լավ հարաբերություն պիտի լինի:

Միբելի եղբայրներ և քույրեր ի Քրիստոս, այս հատվածից ես պիտի բաժանեմ ձեզ հետ մի փոքրիկ գաղտնիք: Այս հատվածի գաղտնիքը, կորիզը, որ Աստված մեզ ու-

դարկեց, այո՛, Իր Միածին Որդուն. բայց բուն գաղտնիքը այն է, որ Աստված մեզ տալիս է, ինչ որ պետք է մեզ, ինչ որ հարկավոր է մեզ: Մենք շատ բաներ ենք ուզում այս աշխարհից, այս կյանքից: Եվ մենք պետք է լավ ըմբռնենք ու հասկանանք, որ մեր հարաբերությունը մեր ու Աստծո միջև Չմեռ պապիկի նման չէ, որ մենք խնդրենք, նա էլ տա: Երբեմն ու երբեմն մենք պահանջում ենք Աստծուց, որ այսպես կամ այնպես պարզևի մեզ, բայց մենք պետք է լավ հասկանանք, որ Աստված տալիս է մեզ, ինչ որ պետք է: Մենք աղոթում ենք առ Աստված այնինչի կամ այսինչի համար, բայց Աստված տալիս է մեզ, ինչ որ հարկավոր է, ինչ որ պետք է:

Միբելի եղբայրներ և քույրեր, մենք բոլորս, որ այս տաճարից դուրս գանք, ես ուզում եմ, որ մտածենք երկու բանի մասին. առաջին հերթին՝ մտածենք, թե ինչպիսին է հարաբերությունը մեր ու Աստծո միջև, առ ո՞ր հարաբերություն է արդյոք, թե՛ ոչ: Եթե ոչ, այն ժամանակ ավելի աշխատանք պետք է տանենք, որպեսզի, այո՛, առողջ հարաբերություն լինի: Եվ երկրորդ՝ մենք պետք է լավ ըմբռնենք և հասկանանք, որ Աստված տալիս է, ինչ որ պետք է մեզ: Այսօրվա ավետարանական ընթերցվածում մենք տեսնում ենք, որ մեզ պետք էր Իր Միածին Որդին: Մենք տեսնում ենք, որ մեզ, որպես հավատացյալ և հավատարիմ անձեր, պետք էր, որ Քրիստոս գար, խաչվեր և կրեր Իր ուսերի վրա մեր մեղքերը, որպեսզի մենք կարողանանք այդ հնարավորությունը, այդ կարելիությունը ունենալ արժանանալու հավիտենական կյանքին:

Միբելի եղբայրներ և քույրեր, ես աղոթում եմ ձեր բոլորիդ համար, որ մենք ավելի լավ ըմբռնենք, ավելի լավ իմանանք՝ ինչ է լինել լավ քրիստոնյա, ինչ է ունենալ առողջ հարաբերություն Աստծո հետ: Եվ աղոթում եմ, որ բոլորս արժանանանք հավիտենական կյանքին հավիտյանս հավիտենից. Ամեն:

**Տ. ԿՏՐԻՃ ՔԱՀԱՆԱ ԴԵՎԵՉՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝  
ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ  
ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

(27 հունվարի 2008)

«Ցանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն»:

Երբ Քրիստոնէության մեծագոյն հալածիչը՝ Սողոս Տարսնացին, ճանապարհ ընկավ դեպի Դամասկոս, ողջ աշխարհը ստրկության մեջ էր: Կար մի պետություն՝ Հռոմը: Այն ուներ մեկ տիրակալ՝ Տիրեղոս Կայսրը:

Մարդկային ու նյութական ողջ ներուժն ուղղված էր հզոր կայսրության էլ ավելի հզորացմանը: Կային մաքսավորներ, որ արտերից հավաքում էին բերքը և աղքատներից խլում իրենց վաստակածը՝ կայսեր լեգեոնները կերակրելու և գանձարանը լցնելու համար, որտեղից կայսրն առատորեն պարգևատրում էր ընտրյալներին: Կային ստրկատերեր, ովքեր մասնակիցներ էին ընտրում մարտախաղերի համար: Իսկ դահիճները ոչնչացնում էին նրանց, ում կայսրը մահվան էր դատապարտում: Արդ, կայսրին ծառայելուց ավելի ի՞նչ նպատակ կարող էր մարդու կյանքն ունենալ: Կյանքը՝ անհույս ու մութ, *ավարտվում էր մահվամբ:*

Ամեն ինչ՝ հանուն Հռոմի: Կայսրն էր պաշտամունքի առարկան, Հռոմը՝ աշխարհի կենտրոնը: Պատահական չէ հնում տարածված ասույթը՝ բոլոր ճանապարհները տանում են դեպի Հռոմ: Հսկա կայսրության մեջ ամենուր կարգուկանոն էր տիրում, քանի որ ամենքը Հռոմի խստագոյն օրենքի տակ էին: Ե՛վ պետությունը, և՛ հասարակությունը կայուն էին կուսակալների հսկողության շնորհիվ: Մակայն այդ ամենի հետ մեկտեղ անարդարություն էր տիրում, ճնշման և հալածանքների էին ենթարկվում նրանք, ովքեր կայսրի կողմնակիցները չէին: Կյանքը՝ ծանր ու դժվարին, *ավարտվում էր մահվամբ:*

Հռոմի հզորության գոհասեղանին գոհաբերվում էր ամեն ինչ. հալածվում էին մարդիկ, ովքեր համարձակվում էին այլ կերպ մտածել, ստորացվում էին նրանք, ովքեր Հռոմից չէին սերում, անտեսվում էին անձինք, ովքեր տարբեր էին կերպարանքով, լեզվով և մշակույթով: Մակայն ամենից առավել արժեգրկվել էր մարդկային կյանքը: Իշխանավորի համար ի՞նչ արժեք ուներ մարդու կյանքը բազմամարդ այդ աշխարհում: *Ե՛վ կյանքն ավարտվում էր մահվամբ:*

Եվ հանկարծ ողջ աշխարհով մեկ Լույս ծագեց (Ես եմ Լույսն աշխարհի). Սուրբ կույս Մարիամից Բեթղեհեմում ծնված Գալիլիացին, Հորդանան գետում աղավնակերպ Սուրբ Հոգու վկայությամբ, որպես Աստծո Միածին Որդի հայտնվեց աշխարհին՝ ասելով. «Գնացե՛ք, տվե՛ք կայսրինը՝ կայսեր և Աստծունը՝ Աստծուն» (Մատթ. ԻԲ 21):

Գալիլիայից հնչող ձայնը խոսեց նոր Թագավորության մասին, ուր յուրաքանչյուր մարդ կարող էր գլուխը բարձր քայլել և խոնարհվել միայն ճշմարիտ Աստծուն: Կյան-

քի նոր արահետ, նոր ապագա առաջարկեց այդ ձայնը մարդուն. «Եկե՛ք ինձ մոտ, բռնոր հոգնածներդ ու բեռնավորվածներդ, և ես ձեզ կհանգստացնեմ» (Մատթ. ԺԱ 28), «...Մարդու Որդին եկավ փրկելու կորածը» (Մատթ. ԺԸ 11), «Միրի՛ր քո ընկերոջը, ինչպես քո անձը» (Մատթ. ԻԲ 39), «Միրեցե՛ք ձեր թշնամիներին, օրհնեցե՛ք ձեզ անիծողներին, բարություն արեք ձեզ ատողներին» (Մատթ. Ե 44), «Մի՛ վախեցիր, այլ միայն հավատա՛» (Մարկ. Ե 36): Եվ Ավետարանի քարոզումով Ձայնը տարածվեց աշխարհի բոլոր կողմերում, և Քրիստոսի հարությամբ պատմության մեջ առաջին անգամ **կյանքը չավարտվեց մահվամբ:**

### Ի Քրիստոս՝ կլինեք կյանք հետմահու:

Այսպիսով, ողջ աշխարհում մարդկանց միտքն ու հոգին ողողվեց Լույսով, իսկ նրանք, ովքեր ապրում էին խավարի մեջ, որոնց կյանքի նպատակն ուրիշների դժբախտությամբ երջանկություն կառուցելն էր, սարսափեցին: Նրանք փորձեցին քողարկել Ճշմարտությունը, որպեսզի մարդկությունը շարունակի հավատալ, որ իրենց փրկությունը այս աշխարհի տիրակալների ձեռքում է:

Եվ չնայած խավարում բնակվողներն ամեն կերպ փորձում էին վերացնել այդ Լույսը, Ձայնը հասավ բոլոր ժողովուրդներին. շատ վայրերում մարդիկ ընդունեցին, որ Ճշմարտությունն ազատում է մարդուն: Նույն ձայնը առաքյալների և Լուսավորչի շրթունքներով լսելի եղավ նաև հայ ազգի զավակներին. «Թեպետև մի ժամանակ խավար էիք, հիմա լույս եք ի Տեր. ընթացե՛ք ինչպես լուսո որդիներ»: (Եփես. Ե.8):

Դամասկոսի ճանապարհին Լույսը պայծառ էր շողում: Մակայն հալածողից առաքյալի վերածված Պողոսն զգուշացնում է նաև Լույսից հեռանալու մասին: Նա մտահոգ էր, որ ապագայի կայսրերն ու սուտ մարգարեները կհամոզեն մարդկանց, որ մարդ արարածը ոչ այլ ինչ է, քան իրենց ծառան, որ մարդիկ մի բուռ այլուրի համար կիրառվեն Աստծուց և այլևս չեն ընթանա լույսի ու ազատության մեջ: Նա մտահոգ էր, որ մի օր ողջ աշխարհում նորից խավար կտիրի, և մարդիկ կմտածեն միմիայն, թե ինչ պիտի ուտեն, ինչ պիտի խմեն, թե ինչ պիտի հագնեն, գնեն և վաճառեն և կծառայեն նոր Հռոմի ու նոր կայսր-աստվածների: Օրերից մի օր մարդիկ այլևս չեն փորձի ձմեռվա գիշերային երկնքում փնտրել Արևելքի աստղը, և զարնան պայծառ առավոտում տեսնել թափուր գերեզմանը, և Լույսն այդպես էլ չի ցրի խավարը: Կգա ժամանակ, երբ մարդիկ կրկին կսկսեն հավատալ, որ ծանր, ողբերգություններով լի կյանքն ավարտվում է մահվամբ:

Տիրոջ առաքյալ Պողոսի քարոզությունից շուրջ երկու հազար տարի է անցել: Երկու հազար տարի է՝ Լույսի քարոզիչները ձգտում են փարատել մարդկանց հոգու խավարը: Արևմուտքի նշանավոր պատմաբաններից մեկը գեղեցիկ կերպով բանաձևում է՝ ասելով. «Այն, ինչ չկարողացան անել հռոմեական ահեղ լեգեոնները, արեցին մի քանի պարզ ձևերով դատարկ գերեզմանի քարոզությամբ, այն է՝ աշխարհը նվաճեցին»: Հարուցյալ Տիրոջ օրինակով նրանք ցույց տվեցին, որ կյանքն իսկապես չի ավարտվում մահով, որ մահվամբ իրականում նոր կյանքն է սկսվում, որ ցանկա-

ցած մարդ խավարից դեպի լույս կարող է քայլել և Լուսո որդի դառնալ միայն Քրիստոսի միջոցով: Որովհետև Ի Քրիստոս է կյանք հետմահու:

Մարդու Որդու առաքյալը՝ Հովհաննես ավետարանիչը, գրի առավ մեր Տիրոջ այն խոսքերը, որոնք այսօրվա ավետարանական ընթերցվածի մեջ հիշվեցին. «Այս է Իմ Հոր կամքը. ամեն ոք, ով տեսնի Որդուն և հավատա Նրան, կունենա հավիտենական կյանք: Ոչ ոք չի կարող գալ դեպի Ինձ, եթե նրան չձգի Հայրը, որ Ինձ ուղարկեց, և Ես նրան վերջին օրը հարություն առնել կտամ» (Հովհ. Զ 44):

Քրիստոսի պատվիրանների լույսով քայլող հավատացյալի համար աշխարհի կենտրոնը երկրի վրա չէ. ոչ Հռոմն է, ոչ էլ մեկ այլ քաղաք, այլ բոլոր հնարավոր ուղիները դեպի երկինք են տանում և բարիք գործելը դառնում է կենսակերպ: Հայրերը պատմում են, որ երբ հարուստ մեկը մահվանից հետո դրախտ է ընկնում, տեսնում է, որ իր ծառան, ով ավելի վաղ էր վախճանվել, դրախտում մի գեղեցիկ ու շքեղ տան մեջ է ապրում: Այդ տեսնելով՝ հարուստը մտածում է, որ եթե իր ծառան նման շքեղ տան մեջ է ապրում, ապա իրեն շատ ավելի ընդարձակ ու ճոխ տուն կտան: Սակայն մեծ է լինում հիասթափությունը, երբ մի խարխուլ խրճիթ են տալիս բնակվելու համար: Նրա հարցին ուղեկցող հրեշտակը պատասխանում է. «Մի՛ զարմացիր, որ ծառադ շքեղ տանն է բնակվում, իսկ դու աղքատիկ խրճիթում. յուրաքանչյուրդ ինչ շինանյութ որ ուղարկել է, դրանով էլ նրա համար բնակարան ենք պատրաստել: Ձեր բարի գործերն էին այդ շինանյութը»:

Միքելիներ, այսօր, ինչպես ամեն կիրակի, մեր եկեղեցու սուրբ խորաններից ավետում ենք, որ Լույսը փարատեց խավարը, որ Չայնը հաղթեց աշխարհին: Մենք ուրախությամբ ենք հայտնում այդ բարի ավետիսը Քրիստոսի զինվորյալ Եկեղեցուն՝ մեր հարազատներին, բոլոր նրանց, ովքեր ապրում են և փորձում են ապրել Քրիստոսի Ավետարանի պատգամներով ու պատվիրաններով և մեր Առաքելական Մայր Եկեղեցու սուրբ հավատով:

Մեր այս կյանքը ժամանակավոր է և անցողիկ: Հետևաբար, լցվենք հույսով, քանզի հավատում ենք, որ մահը վերջը չէ, որ լույսը կարող է լուսավորել աշխարհի ամենամութ անկյունները, որ Չայնը լսվում է նույնիսկ անապատում: Եվ քանի որ Աստված արդար լինելուց առավել ողորմած է մեր հանդեպ, աղոթում ենք, հավատում ենք և հույսն ունենք հավիտենական կյանքի: Հիրավի՝ Քրիստոսով է կյանք հետմահու: Ամեն:

# ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Տ. ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀԱԿՈՒՅԱՆ

Ս. Գայանե վանքի վանահայր

## ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑԻՆ ԵՎ ՁԱԳԱՎԱՆԻՑ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Երբ Հայոց Հայրապետին հանձնվեց Մեծ դատավարության գործակալությունն ու արդարադատությունն իրականացնելու գործառույթը, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին նախանձախնդիր ու հետևողական իրականացնողը դարձավ նոր իրավական հարաբերությունների ու նորմերի ներդրմանը հայ հասարակական ու պետական համակարգում: Մեր սուրբ հայրերը նախանձահույզ եղան հայոց ազգային Եկեղեցու պահպանման գործում. նրանք փորձեցին մեր Եկեղեցին ամրապնդել որպես հուսալի պատվար թե՛ ընդդեմ կեղծ «եղբայրների» ի Քրիստոս և թե՛ ընդդեմ թշնամյաց առ Քրիստոս:

Հայ իրավական միտքն իր բյուրեղացմանը հասավ ԺԲ-ԺԳ դարերում, երբ ստեղծվեցին Դավիթ Ալավկատրոսի և հատկապես Մխիթար Գոշի ու Սմբատ Սպարապետի հոչակավոր «Դատաստանագրքեր»-ը: Սակայն միջնադարի հայ իրավական մտքի ուսումնասիրությունը թերի կլիներ, եթե չանդրադառնայինք մեր Եկեղեցու ականավոր հայրերից մեկի՝ Վարդան Արևելցու իրավական-կանոնական ժառանգությանը:

Լինելով Մխիթար Գոշի և Հովհաննես Վանականի ամենափայլուն աշակերտներից մեկը՝ Վարդան Արևելցին ընդգծված հետք թողեց հայ մատենագրության մեջ, և նրա հոգևոր, գիտական և մանկավարժական ժառանգությունը հայ մատենագրության գագաթներից է: Դեռևս երջանակահիշատակ Գարեգին Հովսեփյանն իր «Ձագավանից ժողովը» աշխատության մեջ հատուկ առանձնացնում է Վարդան վարդապետի յուրօրինակ իրավամտաձողությունը<sup>1</sup>: Նույնն է պնդում նաև Վարդան Արևելցու գիտական ժառանգությանը քաջաձանթ Փ. Անթապյանը<sup>2</sup>:

Ինչպես հայտնի է, Սսի (1246 թ.) և Ձագավանի (1270 թ.) եկեղեցական ժողովներում մշակվել են մի շարք իրավական փաստաթղթեր, կանոններ, որոնք վերաբերում են եկեղեցավարչական, վանական-տնտեսական, կրոնադավանաբանական, նվիրապետական, ծիսական, միջեկեղեցական, ներեկեղեցական իրավահարաբերություններին: Դրանցում կանոնակարգվում են նաև հայ հասարակության կյանքի մի շարք նորմեր, որոնք առաջին հայացքից կենցաղային հարթության վրա են, սակայն հաշվի առնելով Հայաստանյայց Եկեղեցու ուսերին ծանրացած պարտականությունը՝ հասկանալի է, որ մեր սրբազան հայրերին էր տրված կարգավորելու նույնիսկ մեր ժողովրդի ներքին կյանքի համար կարևոր այս խնդիրները: Հարկ է նշել, որ վերը հիշատակված ժողովների ընդունած փաստաթղթերն ինչ-ինչ պատճառներով չեն ընդգրկվել հայոց կանոնական և ո՛չ մի ժողովածուի մեջ<sup>3</sup>: Սակայն սա երբեք էլ չի նշանակել, որ սրանցում ընդունված

<sup>1</sup> Ձագավանից ժողովը, «Շողակաթ», Ա, Վաղարշապատ, 1913, էջ 30:

<sup>2</sup> Անթապյան Փ., Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը, գիրք Բ, Երևան, 1989, էջ 105:

<sup>3</sup> Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, էջ 327:

կանոնները կյանքի չեն կոչվել և չեն եղել պարտադիր Կիլիկիայում և բուն Հայաստանում: Այս կանոնները չափազանց կոնկրետ էին հասցեագրված և բխում էին ոչ թե ապրիորի և ընդհանրական իրավահարաբերություններից, այլ տվյալ ժամանակի պահանջներից և ուղղակի պատասխաններ էին պարունակում օրվա հրամայականներին: Առաջին հայացքից սրանք հիմնարար իրավական նորմեր չէին կարող դիտվել, սակայն ԺԳ դարում Հայաստանում և Կիլիկիայում ծավալվող իրադարձությունների ֆոնի վրա դիտելիս պարզ է դառնում դրանց ընդունման հրամայականը:

Այն, որ Ձագավանի կանոնների, ինչպես նաև իրավական տարրեր պարունակող «Շրջաբերական թղթի» և «Նրատական թղթի» հեղինակը (վերջին երկուսի համահեղինակ համարվում է Կոնստանդին Բարձրբերդցի հայոց հայրապետը<sup>4</sup>) Վարդան Արևելցին է, այլևս կասկած չի առաջացնում հետազոտողների շրջանում:

«Մահմանք»-ի մեջ արտահայտված է Վարդան վարդապետի առողջ իրավամտաճողությունը, որի աղբյուրները Սուրբգրային իրավադատողությունն է, ինչպես նաև Հայոց Եկեղեցու կանոնական ժառանգությունն ու ծիսադավանաբանական ուսմունքը: Վարդան վարդապետի համար ամենաբարձր իրավադատն Աստված է: «Իրավադատության սանդղակի» երկրորդ աստիճանին կանգնած են Հայոց Հայրապետն ու թագավորը, որոնք օժտված են Աստծուց շնորհված իշխանությամբ: Երրորդ աստիճանին կանգնած են եպիսկոպոսները և նրանցից կազմված եկեղեցական ժողովները, որոնք գործնականում իրականացնում են իրավադատական գործառնությունները, այսինքն կյանքի են կոչում ի վերուստ տրված և սահմանված նորմերը: Վերջիններից է կախված, ըստ Վարդան Արևելցու, իրավահարաբերությունների կարգավորման անխաթար իրականացումը: Ականավոր հոգևոր գործիչը հասկանում էր, որ Հայոց Սուրբ Եկեղեցին, պատմական զարգացման ընթացքում հայ հասարակության մեջ դառնալով իրավաստեղծն ու իրավունքը գործնականում կիրառողը, պետք է առաջնորդվեր ազգային-եկեղեցական ժողովների որոշումներով, որոնք բխում էին Սուրբգրային ավանդություններից: Վարդան Արևելցին համոզված էր, որ իր մշակած սահմանք-կանոններն ու դրանցում նախատեսված պատժամիջոցներն անպայման կունենան ներգործիչ և հատկապես կանխարգելիչ ուժ<sup>5</sup>: Իրավագետի համոզմամբ կանոններին հետևողներն ինքնամաքրվում են, որի միջոցով կարող են արժանանալ Տիրոջ տեսությանը. «Զի այս է ճանապարհ քրիստոնեից, որք առ Քրիստոս կամին գնալ»,- գրում է Վարդան Արևելցին<sup>6</sup>:

Հետևելով Վարդան Արևելցու տրամաբանությանը՝ կարելի է փաստել, որ «իրավարար գերագույն իշխանությունը գործնականում ազգային-եկեղեցական ժողովն է»<sup>7</sup>: Իսկ ովքե՞ր պետք է իրականացնեն բուն դատական գործընթացները: Այստեղ Վարդանի պատասխանը հստակ է. սրանք իրականացնում են թեմակալ եպիսկոպոսների նախագահությամբ ստեղծված դատական ատյանները, որտեղ քննվում էին իրավական հարաբերությունների ողջ սպեկտրը ներկայացնող խնդիրները: Մա ևս մեկ անգամ

<sup>4</sup> Անթապյան Փ., նշվ. աշխ., էջ 104:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 121:

<sup>6</sup> Ձագավանից կանոնները, էջ 45:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 121:

փաստում է այն գաղափարը, որ Ձագավանից ժողովի «Սահմանքը» կիրառական մի փաստաթուղթ է՝ ուղղված իրավադատությունն իրականացնող հոգևոր և աշխարհիկ դասերը ներկայացնող անձանց: Սահմանք-կանոնները սուկ քարոզներ և խրատներ չէին, այլ իրավական ռեալ ուժ ունեցող գործնական որոշումներ՝ իրենց իրավագիտական և վարչարարական կուռ կառուցվածքով, որոնց կարիքն ուներ ոչ միայն Հայոց Եկեղեցին, այլև հայ հասարակությունը թե՛ բուն Հայաստանում և թե՛ Կիլիկիայում:

Քննենք սահմանք-կանոններում ամրագրված մի քանի խնդիրներ, որոնք առնչվում են մեր ատենախոսության թեմային: Առաջին հերթին դա հոգևոր տարբեր դասերի իրավունքների և պարտականությունների սահմանումն է: Լինելով լայնախոհ հոգևոր գործիչ և հավատարիմ մնալով իր որդեգրած իրավամտաճողության սկզբունքին՝ Վարդան Արևելցին առանձնացնում է քահանայական դասը՝ որպես կամրջող օղակ Եկեղեցի-հասարակություն շղթայում: Քահանայի ուսերին դրված է բազմաթիվ, առաջին հայացքից ոչ այնքան մեծամասշտաբ, բայց ժողովրդի կյանքի համար խիստ կարևոր նշանակություն ունեցող հոգսերի և խնդիրների կարգավորման բեռ: «Սահմանք»-ում Վարդան Արևելցին քահանայական դասի իրավունքներին ու պարտականություններին նվիրել է հինգ կանոն (Զ-Ժ)<sup>8</sup>: Ահա թե ինչ պահանջներ է ներկայացված քահանային Զ կանոնում. «քահանայն զժողովուրդն ինամ է որպես հայր, կոչուած գողայս խրատել և սգուշացուցանել, որ խալատին ոչ, լինել հովիւ քաջ, յարատի և ի փարսիսի պահել յեկեղեցի և ուսմամբ կերակրել (ընդգծումը մերն է- Մակար արեղա)»<sup>9</sup>: Կանոնական իրավունքը քահանային հնարավորություն է ընձեռում լինել դաստիարակ իր հոտի համար և հետևել իրեն վստահված ծխի կյանքի բոլոր անցքերին, քանզի նա սուկ ծխակատար չէ, այլ հայրն է հոտի (տե՛ս. Թ կանոն-Մակար արեղա): Ժողովուրդն իր հերթին պետք է որպես հայր ընդունի քահանային, լսի և կատարի նրա խորհուրդները, որպեսզի զերծ մնա խոտորնակ ճանապարհից, լինի մաքուր և ազնիվ հավատացյալ: Քահանայության ինստիտուտի իրավական-կանոնական ամրակայումը բարձրացնում էր հոգևոր այս դասի դերը և ընձեռում նրան որոշակի իրավունքներ ու պարտականություններ:

«Սահմանք»-ում մեծ տեղ է հատկացված վանական կյանքին և միաբնությունն առնչվող խնդիրներին: Ձագավանից ժողովի ընդունած կանոններում փորձ է արվում կանոնավորել Հայ Եկեղեցու կարևոր և անքակտելի մասը կազմող այս ինստիտուտին վերաբերող մի շարք խնդիրներ, որոնց հիմնական նպատակն այն զերծ պահելն է տարաբնույթ անհարիր երևույթներից: Այս հարցերին նվիրված է ինը կանոն (տե՛ս. Ա-Ժ կանոնները- Մակար արեղա), որոնցից հենց առաջինը՝ Ա կանոնը հրամայական-արգելական բնույթի է. «բնակուին ոչ մայրագիր, ոչ քորագիր բնաւ, և ոչ մայր և քոր ումեք և ոչ ազգական ի վանքն», այստեղ չպետք է լինեն նաև այլ «պատճառ գայթակղութեան»<sup>10</sup>: Հաջորդ կարևոր խնդիրը, որին անդրադառնում է Վարդան Արևելցին, վանական միաբնության ղեկավարման գործում մի տեսակ «երկիշխանության» սահմանումն է:

<sup>8</sup> Ձագավանից ժողովը, էջ 43-44:

<sup>9</sup> Նույն տեղում:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 45:



Պարզաբանենք մեր միտքը: Ըստ «Սահմանք»-ից բխող տրամաբանության՝ վանահոր կողքին պետք է գործեր միաբանների կողմից ընտրված խոստովանահայրը, որին էր տրվում նույնիսկ արեղաներին և վարդապետներին վանքի սահմաններից դուրս գալու թույլատրության իրավունքը: Ըստ այս կանոնի՝ խոստովանահայրը պետք է տեղյակ լիներ վանքի ներսում կատարվող բոլոր իրադարձություններին, նրա առաջ բոլորը պարտավոր էին ասել միայն ճշմարտությունը, որքան էլ այն դառը և անցանկալի լիներ<sup>11</sup>: Խոստովանահոր ինստիտուտի ներմուծումը վանական կյանք փաստորեն նշանակում էր իրական և խիստ իրավունքներով օժտված վերակացուի գոյությունը միաբանություններում:

Վանական մաքրակենցաղությունը չափազանց հուզել է մեր հոգևոր հայրերին հնագույն ժամանակներից ի վեր, սակայն Ջագավանից ժողովի սահման-կանոններում դրանք առավել ցայտուն են արտահայտված: Այս խնդրին են վերաբերվում Գ-Դ և Ե միացյալ կանոնները, որոնցում արգելվում են փոքրավոր պահելը, ինչպես նաև կաշառքով կամ նվերով նոր միաբաններ կամ էլ մշակ-գործավորներ ընդունելը<sup>12</sup>: Վանական կյանքի և միաբանների վարվեցողության կանոնների ուսումնասիրության առումով չափազանց կարևոր ենք համարում հատկապես Թ կանոնը, որը ցանկանում ենք մեջբերել ամբողջությամբ. «Թ. Առանց մեծ հարկի արեղայի մատուցող գեղ չալթե, և ոչ կին՝ ի վանքն: Արեղա, որ ի քաղաք կամ ի գեղ գնա, անուշահոտ կենա և երկիրդի, որպես ի կրչակում, մինչ դառնա ի վանս իւր: Ջրնդրածքն և վկայածքն (*նկատի ունի խոստովանահոր թույլտվությունը ստացածներին-Մակար արեղա*) և զանգայթակղսն յուրարկեն յայգի, ի գեղ և յայգեգործ վանիցն, և բացերես կենա յԱստուծոյ և ի մարդկանե վանից մարդն. ի փառս Աստուծոյ արնելոյն, յաւիտեան»<sup>13</sup>:

Կանոնի նպատակը, հարկավ, բխում էր վանական միաբանության շահերից, քանզի խստագույն արգելքները հետապնդում էին մեկ գլխավոր նպատակ՝ գերծ պահել միաբաններին ավելորդ աշխարհիկ գայթակղություններից և մեղավոր գործերից: Սրանով կանոնագիր-իրավագետ Վարդան Արևելցին հանդես է գալիս որպես կանխարգելիչ միջոցներ կիրառելու կողմնակից, որի նպատակն էր նույնիսկ խստիվ արգելանքների միջոցով ապահովել վանական միաբանության մաքրակենցաղությունը:

Ջագավանից ժողովի կանոններից հարկ է առանձնացնել նաև «յիշոցանատուութեան»՝ հայիոյանքի կամ հայիոյախոսության դատապարտմանը նվիրված հատվածը: Պարզվում է, որ հայ հասարակությունը ԺԲ-ԺԳ դարերում կանգնած էր հոգևոր և բարոյական վերասերման վտանգավոր ուղում և տարբեր մարդիկ կարող էին իջնել ստորացման այն աստիճանին, որ հիշոցներ ուղղեին նույնիսկ սրբերին, հրեշտակներին, «զբրիստոնեական անունն և խորհուրդ քրիստոնեության» և այլն: Այս տեսակի մարդկանց մեղքերին չէին կարող թողություն տալ ո՛չ քահանան, ո՛չ եպիսկոպոսը և ո՛չ էլ կայթողիկոսը<sup>14</sup>: Սրանց մեղքն անսահման է, և Վարդանի կանոններում նրանց համար

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 45-46:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 46:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 42:

նախատեսված են իր ժամանակի համար ամենադժվար պատիժները՝ արգելելով հայոցաբաններին. «աւրինել կամ հաղորդել, կամ թաղել, կամ զողայսն կնքել կամ պսակել»<sup>15</sup>: Հիշյալ պատժամիջոցները մեղավորներին մեկուսացնում էին հասարակական կյանքից, նրանց վերածում էին բոլորի կողմից մերժված, եղկելի արարածների: Բայց ամենակարևորն այն է, որ այս կանոնով Վարդան վարդապետը ձգտում էր պատնեշել Մայր Եկեղեցին ամենայն բարոյական ոտնձգություններից ու վայրահաշտություններից, որոնք ուղղակի հարված էին հասցնում նրա սրբակրոն վարկին: Իրավաբանորեն ամրագրելով պատժամիջոցը՝ Ձագավանի ժողովը մեկ անգամ ևս ցուցաբերում էր մեր Եկեղեցու հայրերի անհանգստությունն իր հոտի բարքերի և մաքրակրոն վարքի համար:

Ձագավանից կանոնները ճիշտ է չունեն Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» իրավա-օրենսդրական նշանակությունը, բայց իրենց կոնկրետությամբ և ժամանակի համար հույժ հրատապությամբ արժանի տեղ են գրավում Մայր Եկեղեցու հայրերի իրավաստեղծագործության անդաստանում: Հիշյալ կանոնների օրգանական շարունակությունը և շատ դեպքերում նաև կրկնաբան ընդօրինակումներն են համարվում նաև վերը հիշատակված «Շրջաբերական թուղթն» ու «Խրատական թուղթը»: Մրանցում կան բազմաթիվ դրույթներ, որոնք ինչպես և Ձագավանից «Մահմանք»-ը ուղղակի և կոնկրետ նպատակի են ծառայել՝ մաքուր և անաղարտ պահել Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու վարկը: Օրինակ «Շրջաբերականում» հատուկ սահմանվում է ձեռնադրության կարգը, քանզի դրանից էր կախված Եկեղեցու նվիրապետության և հոգևոր դասերի ներկայացուցիչների ընտրության կարգը: Ա կանոնը արգելում էր «արծաթով» (*իսկ կաշառքով-Մակար արեղա*) ձեռնադրությունը, իսկ Բ կանոնը խստորեն հրահանգում էր ձեռնադրել միայն արժանավորներին և գիտությունների մեջ հմտացածներին, եթե առկա էր թեմի վկայությունը:

ԺԳ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին, որի մատյանով են վկայված այս կանոնները, հիացմունքով է խոսում իր դասընկերոջ՝ Վարդան Արևելցու լայնախոհության մասին, որը ջանք չէր խնայում մեր Եկեղեցին ու նրա վարկը բարձր պահելու համար<sup>16</sup>: Ինչպես վերը նշեցինք, մեր Եկեղեցու հայրերը չափազանց մտահոգված էին հասարակության հոգևոր անվտանգության խնդիրներով և այստեղ ևս («Շրջաբերականում») հատուկ կանոն է սահմանվում պոռնիկների, շնացողների, հմայողների և աստղագուշակների դեմ, որոնք մտնելով մոլորյալ հայ ընտանիքներ՝ քայքայում և աղտոտում են դրանք: Կանոնագիրը հատուկ նշում է, որ սա ոչ միայն Հայոց Եկեղեցու մտահոգության առարկան պետք է լինի, այլև պետք է լուրջ հետևությունների տեղիք տա աշխարհիկ իշխաններին ու թագավորներին, քանզի խարխլվում էր նրանց հպատակների բարոյա-հոգեբանական կերպարը: Այսպիսի հանցանքների համար որպես պատիժ կանոնը սահմանում է նույնիսկ «մարմնատր պատուհասություն»: Նմանատիպ մոտեցում է որդեգրված նաև «Խրատական թղթում»<sup>17</sup>:

Կանոնական այս ժողովածուում ևս հատուկ դեր է հատկացվում քահանային, որպես դաստիարակի, որը տարին երեք անգամ պետք է եկեղեցի հրավիրի «զարս և զկա-

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն..., աշխտ. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1962, էջ 302:

<sup>17</sup> Տե՛ս Խաչիկյան Լ., Կոստանդին Բարձրբերդցու «Խրատական թուղթը»..., էջ 283:

նայս, և զկուսան աղջկունս և զկուսան կտրիճներն» ու նրանց խրատ տա ըստ իրենց հասակի ու վարքի<sup>18</sup>:

Հայոց Եկեղեցու ներքին կյանքի և եկեղեցական տուրքերի ու «հասերի» (նկատի ունի հաս- ըստ Հայկազյան բառարանի «նուիրելի Աստուծոյ մասն»<sup>19</sup>) բաշխման և ստացման խնդիրներին են նվիրված որոշակի և կոնկրետ կանոններ: ԻԱ կանոնը սահմանում է, օրինակ, որ քահանան պետք է հաս ստանա միայն հոծարությամբ և ոչ հարկադրաբար: Այս խնդրին վերաբերվող կանոնները՝ ԻԲ և ԻԳ, նպատակ ունեն տնտեսապես միշտ կայուն պահել Եկեղեցին և ամրացնել նրա կենսատու հիմքերը. «...աթոռքն հաստատ և անկարիք մնան և եկեղեցիքն պայծառ», - գրում է կանոնագիրը<sup>20</sup>: Իսկ ո՞րն է սրան հասնելու ճանապարհը: Քահանան պետք է սահմանված հասերով և ընծաներով ծառայի եպիսկոպոսներին, որպեսզի նրանք էլ իրենց հերթին «ծառայեսցեն հայրապետական աթոռն»<sup>21</sup>: Հիշյալ թղթերում սահմանվում են որոշակի կանոններ, որոնք առնչվում են մկրտության խորհրդին: Սրանցից ամենահետաքրքիրն այն է, որ կանոնագիրը խստիվ արգելում է կանանց՝ կնքամայր, և այլազգիներին՝ կնքահայր դառնալ<sup>22</sup>: Հաջորդ կարևոր կանոնը վերաբերվում է հաղորդության խորհրդին: Համաձայն «Խրատական թղթի» Չ կանոնի, հաղորդվողը հաղորդությունից առաջ պետք է երեք օր անկողինը մաքուր պահի, չհայհոյի, չմատնի և այլ պատվիրաններին «չոստնի»<sup>23</sup>:

Ամփոփելով կարող ենք փաստել, որ հիշյալ կանոնական փաստաթղթերը, որոնք չէին ընդգրկվել մինչ այդ կազմված Կանոնական ժողովածուներում, մեծ դեր խաղացին ԺԳ դարի հայ իրավամտաճողության զարգացման գործում և նպաստեցին Հայաստանյայց Եկեղեցու անաղարտ վարկի պահպանմանը:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 284:

<sup>19</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, հ. Բ, էջ 49:

<sup>20</sup> **Կիրակոս Գանձակեցի**, Պատմություն, էջ 308-309:

<sup>21</sup> Նույն տեղում:

<sup>22</sup> **Խաչիկյան Լ.**, էջ 282:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 283:

*Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ*

*Ս. Հոփփսիմե վանքի վանահայր*

## ՀՈՎԱՍԱՓ ՍԵՔԱՍՏԱՑՈՒ «ՎԱՍՆ ԼԻՆԵԼՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԱԾՈՑ» ԵՎ ՏՆՕՐԻՆԱԿԱՆՔԻ ՉԱՓԱԾՈ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայ բանաստեղծության XVI դարի նշանավոր դեմքերից է Հովասափ Սեբաստացին, ով հեղինակ է մի շարք կրոնա-բարոյական, պատմական և քնարական բանաստեղծությունների ու պոեմների, «Ալեքսանդրի վարքի», կաֆաների, իր ընդօրինակած ձեռագրերի մի շարք հեղինակային հավելումների, տոմարական բնույթի չափածո ստեղծագործությունների:

Հովասափ Սեբաստացու, սակայն, ամենաձավալուն գործն է «Վասն լինելութեան Արարածոց ստեղծմանէ յառաջ, երկնայնոց, Վեցարեից, կարճ ի կարճոյ» ստեղծագործությունը: Ինչպես վերնագրից իսկ երևում է, այն գրված է միջնադարյան «Արարածոց մեկնություն»-ների և «Վեցորեից» անվանվող գործերի հետևողությամբ, որոնք, սակայն, միայն բուն Արարչագործությունը և կամ էլ անգամ միայն Հնգամատյանը չէ, որ ներկայացնում են, այլ հասնում են մինչև Քրիստոսի ծնունդը և մանկությունը: Վեցորեից և Արարածոց մեկնություններից առավել լայն նման ընդգրկում ունենալը բացատրվում է այն հանգամանքով, որ Քրիստոս որպես երկրորդ Ադամ եկավ փրկելու առաջին Ադամին, ուստի միջնադարյան հեղինակները, ներկայացնելով Ադամի ստեղծումը, ապա և մեղքի պտուղի ճաշակումը, Վեցորյան հասցնում են մինչև Քրիստոսի ծնունդը, որպեսզի Ադամը չպատկերվի մեղքի անհուսության մեջ, այլ շղթան Արարչագործությունից հասցվի մինչև փրկագործություն:

Ահա այս պատճառով Վեցորյայի գրական և հատկապես չափածո մեկնություններում բավականին քիչ տեղ է տրվում Արարչության վեց օրերի բացատրությանը, այնինչ դասական մեկնություններում և հատկապես Բարսեղ Կեսարացու Վեցորյայում մանրամասն ներկայացվում են Արարչության վեց օրերը, համաձայն «Ծննդոց գրքի»:

Հովասափի ամենաձավալուն այս ստեղծագործությունը գտնվում է թե՛ Մաշտոցյան մատենադարանի 1661 ձեռագրում և թե՛ Բեռլինի ազգային գրադարանի հայկական ձեռագրերի բաժնում պահվող ինքնագրում:

Հմր 1661 ձեռագիրը, որպես այս գործի մուտք, նախերգանք ունի «Յիսուս Միածին և Հայրն երկնային, բխում Սուրբ Հոգին» սկզբնատողով մի բանաստեղծություն, որը, սակայն, չկա Բեռլինի ինքնագրում: Այս բանաստեղծության սկզբում միջնադարում ընդունված կարգով հեղինակը դիմում է Սուրբ Երրորդությանը, որպեսզի համայնի՝ երկրի և երկնքի Ստեղծողն իրեն ուժ և կարողություն տա.

*Քննել զվերինն, դասս լուսեղին, զանհասանելին,*

*Այլն գներքին, զԴ(4) տարերին, զաներևութին:*

Այսինքն, ցանկանում է ներկայացնել Արարչությունը:

Արարածոց չափածո այս մեկնության սկզբում որպես մուտք բերված հայցված-խնդրանքը հիշեցնում է Հովասափի բարոյախրատական բանաստեղծությունները: Որպեսզի իրեն չմեղադրեն, թե ինչպես է հանդգնում գրել Արարչագործության մասին, նա վկայակոչում է քանքարների առակը, թե ունեցած քանքարները պետք է շահեցնել, այսինքն մարդուն տրված իմացությամբ ներկայացնել կատարվածը և ոչ թե այդ իմացությունը անօգուտ պահել, ինչպես որ վարվեց քանքարաթաքույց ծառան:

Հովասափը, ինչպես ասացինք, իր բարոյախրատական բանաստեղծություններում իրեն ներկայացնելով որպես մի մեղավոր, ներման արժանանալու համար Տիրոջն է դիմում և փրկության հույսով վկայակոչում Աստվածային ողորմածությանն արժանացած ավագակին, մեղավոր կնոջը, մաքսավորին, թե ինչպես նրանց Տերը ներեց, այնպես էլ իրեն ների: Այստեղ, սակայն, վկայակոչումների շարքը որոշ չափով արհեստական է դառնում, քանի որ նա ոչ թե ներողամտություն է հայցում իր մեղքերի համար, այլ Սուրբ Երրորդությանն է ապավինում, որ ուժ և կարողություն ստանա՝ իրականացնելու իր ծրագրած մեկնությունը:

Այս մուտք-խնդրանքը քանի որ չկա բեռլինյան ինքնագրում, ուստի կարելի է եզրակացնել, որ այն մասնակիորեն է կապվել բուն մեկնությանը: Ասվածի օգտին է խոսում և այն հանգամանքը, որ անգամ հմր 1661 ձեռագրում այս ստեղծագործության վերնագիրը դարձյալ դրված է մուտքի հիշյալ խոսքից հետո: Թե ինչին է նվիրված իր ստեղծագործությունը, Հովասափը ներկայացրել է իր ծավալուն վերնագրում, որից հստակորեն երևում է, որ այն բանաստեղծական, չափածո վերաշարադրանքն է Վեցօրյայի մեկնության:

Հայ թարգմանական և ինքնուրույն գրականությունը հարուստ է Վեցօրյայի մեկնություններով, որոնց շարքում առանձնանում է հատկապես Բարսեղ Կեսարացու «Յաղագս Վեցալրեայ Արարչութեան» գործը<sup>1</sup>:

Վեցօրյայի գրական մշակումները և չափածո մեկնությունները ևս, ինչպես ասացինք, տարածված են եղել մեր միջնադարյան գրականության մեջ, որոնցից կցանկանայինք հիշատակել Կոստանդին Երզնկացու «Օրհնեալ է Հայրն անսկիզբ» սկսվածքով<sup>2</sup>, Հովհաննես Թլկուրանցու «Մեկնութիւն արարածոց»<sup>3</sup>, և Կարապետ Բաղիշեցու «Տաղ արարածոց»<sup>4</sup> ստեղծագործությունները:

Հովասափի գործը, սակայն, երբ համեմատում ենք հիշյալ ստեղծագործությունների հետ, նկատելի է, որ այն, ի տարբերություն այս հեղինակների երկերի, ավելի պատմողական և թեմատիկ-սյուժետային բնույթ ունի: Երզնկացու գործը ավելի շատ նկարագրա-

<sup>1</sup> Տե՛ս **Բարսեղ Կեսարացի**, Յաղագս Վեցալրեայ Արարչութեան, աշխտ. Կ. Մուրադյան, Երևան, 1984: Այս ստեղծագործության՝ հայ մատենագրության վրա ունեցած ազդեցության մասին տե՛ս **Կ. Մուրադյան**, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976:

<sup>2</sup> Տե՛ս **Կոստանդին Երզնկացի**, Տաղեր, աշխտ. Ա. Սրապյանի, Երևան, 1962, էջ 220-230:

<sup>3</sup> Տե՛ս «Բագմավեպ», 1938, էջ 118-198:

<sup>4</sup> Տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1937, էջ 328-338:

կան և թվարկման բնույթ ունի, Թլկուրանցունը՝ առավել խորհրդածական-մեկնաբանական, իսկ Բաղիշեցունը՝ առավել աշխարհագրական: Այնինչ, Հովասափը ոչ միայն վերաշարադրել է Սուրբ Գրքի պատմությունը, այլև առանձին դեպքերում այդ պատմությանը հավելել մի շարք պարականոն դրվագներ՝ առավել հարստացնելով և տպավորիչ ու ընթերցելի դարձնելով թեմատիկ սյուժետային առումով:

Մինչ հիշյալ գործի բուն քննությանը անցնելը հարկավոր է նշել, որ այն թեև մի ամբողջություն է ընդհանուր զարգացմամբ, սակայն տարբեր գլուխները ունեն հարաբերական ինքնուրույնություն և կարող են հանդես գալ որպես ինքնուրույն միավորներ՝ նվիրված տվյալ գլխում արծարծված հարցերին: Եվ պատահական չէ, որ այս ստեղծագործության երկրորդ և երրորդ գլուխները, որոնք նվիրված են 12 կենդանակերպերին և յոթ մոլորակներին, ձեռագրերում հանդես են գալիս նաև որպես առանձին ստեղծագործություններ: Դրանք որպես տոմարագիտական չափածո գործեր առանձին հրատարակել է նաև Վ. Գևորգյանը Հովասափ Մեբաստացուն նվիրված իր գործի բնագրերի բաժնում<sup>5</sup>:

Ինչպես կտեսնենք հետագա քննությունից, հաջորդ գլուխները ևս կարող էին համարվել ինքնուրույն գործեր և հանդես գալ որպես Ադամին, Նոյին, Մովսեսին, Մոդոմոնին նվիրված չափածո փոքրիկ ստեղծագործություններ, սակայն միայն այս երկուսն են առանձնացվել, որովհետև նրանք սյուժետային ներքին զարգացում չունեն, այսինքն չունեն նախորդող և հաջորդող պատմողական թեմա, ինչպես ասենք Նոյից առաջ խոսվում է Ենովքի մասին, իսկ Նոյից հետո՝ նրա որդիներին: Այնինչ, հիշյալ երկու գլուխները, նվիրված լինելով ժամանակի տոմարագիտական ամենատարածված և տարբեր ձևերով ներկայացվող հարցերին, ձեռագրերի գրիչների կողմից բերվել են նաև որպես ինքնուրույն ստեղծագործություններ: Գ. Հովսեփյանը գտնում է, որ Հովասափը այս գործը գրել է մինչև իր հիշյալ չափածո մեկնությունը, ապա դարձրել նրա համապատասխան երկու գլուխները<sup>6</sup>:

«Վասն լինելութեան Արարածոց» ստեղծագործության առաջին գլխում ևս, ինչպես որ նրան նախորդող մուտքի բանաստեղծությունում, Հովասափը դարձյալ փառաբանում է Սուրբ Երրորդությունը և որպես գետնամած մի մեղավոր «Անկեալ մոխրաթաւալ յերկրի լալագին» խնդրում է իրեն՝ հողածնին, կարողություն տալ ներկայացնելու «գանհաս գործ Նորին»: Արարածոց մեկնություններին բնորոշ ձևով նախ ներկայացնում է երկինքը հրեշտակների դասերով, ապա աստվածային քառակերպյան Աթոռը, այնուհետև անցնում չորս տարրերին և երկնային կամարին, հետո անդրադառնում երկինք-երկիր հարաբերակցությանը: Իրար զուգորդելով երկրի գնդաձևության մասին հայ միջնադարյան մատենագրության մեջ առկա ըմբռնումները՝ Անանիա Շիրակացուց մինչև ձվի հետ համեմատության՝ Տաթևացու նշանավոր տողերը, երկրի գնդաձև լինելու և իր առանցքի շուրջը պտտվելու մասին, գրում է.

*Որպէս ձու հաւի է բոլոր սմին,*

*Շուրջ գայ նա ու անխափան կամաւք Արարչին,*

<sup>5</sup> Տե՛ս Վ. Գևորգյան, Հովասափ Մեբաստացի, Բանաստեղծություններ, Երևան, էջ 151-153, 154-159:

<sup>6</sup> Տե՛ս Գ. Հովսեփյան, Հովասափ Մեբաստացի, «Արարատ», 1918, էջ 231:

*ՅԱրևելից ելնէ դէպ յԱրևմտին,  
Դեպի Հիսուս պատէ վերա բնեռին:*

Երկիրը որպէս Աստվածային Արարչագործության արդյունք այսպէս է ներկայացնում.

*Ձարդարեց ըզերկիր տունկք զանագանին,  
Աղբիւր ջրոց էհան ի պետրս նոցին,  
Ի ջուր և ի ցամաք և յաւղքս վերին,  
Էստեղծ բանիւ ըզազգ հազար կենդանին:*

Ի դեպ, Հովասափի գործի այս առաջին գլուխը բավականին նման է Կոստանդին Երզնկացու վերը հիշված գործի առաջին վեց տներին, ուր թե՛ Արարչագործության համապատասխան նույն ընթացքն է ներկայացվում և թե՛ բանաստեղծական պատկերներն են նման միմյանց<sup>7</sup>:

Բուն Արարչագործությունը ներկայացնելը համարելով մի մեղք՝ այս գլխի վերջում ասում է, թե վա՛յ ասեք Հովասափին, այսինքն իրեն, թե ինչպէս իշխեց «գրել ըզհրաշս Արարչին»:

Միջնադարում եղած տիեզերագիտական ըմբռնումների խտացված արտահայտությունն է 12 կենդանակերպերին նվիրված հիշյալ երկրորդ գլուխը:

Հետևելով միջնադարյան ըմբռնումներին՝ Հովասափն ասում է, որ երկնային այդ նշաններից յուրաքանչյուրը որոշակի մի բաժանմամբ երկրի մի տարածքի հետ է հարաբերվում և կապվում: Այսինքն, երկիրը աշխարհագրորեն բաժանվում է 12 մասի և նրանցից յուրաքանչյուրը մի կենդանակերպի հետ է հարաբերվում:

Այս կենդանակերպերի և երկնային պարունակների մասին գրելիս որպէս իր աղբյուր հիշատակում է Արիստոտելին, Դիոնիսիոս Արիսպագացուն և «այլք արտաքնին», այսինքն՝ մինչև Քրիստոսն ընկած հեղինակներին, որոնք թեև քրիստոնյա չէին և ապրել էին մինչև Փրկչի աշխարհ գալը, սակայն կարողացել են ճիշտ գրել Սուրբ Հոգու ազդմամբ:

Հովասափը, սակայն, ոչ թե ուղղակիորեն նրանց է հետևել, այլ նրանց գործերի հիման վրա գրված հայկական մեկնություններին և տիեզերագիտական ըմբռնումներին և հատկապէս Անանիա Շիրակացուն և Հովհաննէս Երզնկացուն, որն ակնհայտորեն երևում է այս գլխի և հիշյալ գործերի համեմատությունից: Ստորև կներկայացնենք 12 կենդանակերպերի մասին Հովասափի գրածը՝ այն համեմատելով Շիրակացու և Երզնկացու համապատասխան բնորոշումների հետ: Դրանք ոչ միայն համընկնում են, այլև քանի որ Հովասափը այնքան սեղմ է գրում, որ դժվար է լինում հասկանալ առանց այդ հարցի մասին լրացուցիչ գիտելիքներ ունենալու, ուստի Հովասափի այս տողերն իսկ առավել հասկանալի են դառնում շնորհիվ հենց Շիրակացու և Երզնկացու:

Հովասափի Արարածոց այս մեկնությունը կազմված է 19 գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն էլ բաղկացած է մի շարք քառատներից: Այս գլխում նա յուրաքանչյուր կենդանակերպը ներկայացնում է երկու տողով, որով յուրաքանչյուր տուն նվիրվում է երկու կենդանակերպի:

<sup>7</sup> Տե՛ս Կոստանդին Երզնկացի, Տաղեր, էջ 220-221:

Միջնադարյան բնագիտական ըմբռնումներով մարդու մարմինը կազմված էր 12 անդամներից, ինչպես նաև տիեզերագիտական ըմբռնումներով էլ տիեզերքը մարդակերպ էր, ուստի 12 կենդանակերպերից յուրաքանչյուրը խորհրդանշում էր տիեզերական մարմնի մի անդամը: Ինչպես գրում է Հովհաննես Երզնկացին. «Եւ է աշխարհս մարդակերպ»<sup>8</sup>:

Ինչպես որ կենդանակերպերի թվարկումը միջնադարում ընդունված շարքով և հերթականությամբ սկսվում էր Խոյով և Յուլով, այնպես էլ Հովասափն է իր չափածո նկարագրությունը սկսում այս երկուսով.

#### Հովասափ

«Զի և զԽոյն գլուխ ըսկիզբն, որ եղին  
Ունի զՊարս և զԱռան մինչև յեզր երկրին  
Յուլն՝ Բաբելացոց է պարանոցին,  
Աղեկսանտր և զԵաման մինչև Կոստանտին»:

#### Հովհաննես Երզնկացի

«Խոյն ունի գլուխ մարդոյն և զՊարսից աշխարհն:  
Յուլն՝ զպարանոցն և աշխարհ զԲաբելացիս»<sup>9</sup>:

Համանման ձևով է գրում և Շիրակացին. «Խոյն, որ է գլուխն, իշխե Պարսից: Յուլն՝ մտանէ արեգակն ի ցուլն, իշխե Բաբելացոց»<sup>10</sup>: Ինչպես տեսնում ենք, այստեղ Հովասափը ճշտորեն հետևում է առկա ըմբռնումների ընթացքին, որով մարդակերպ տիեզերքի և աշխարհի գլուխը Խոյ կենդանակերպն է և Յուլը՝ պարանոցը:

Գլխով սկսվող մարդակազմական այս ընթացքը շարունակվում է մարմնի մյուս մասերով.

#### Հովասափ

Եկաւորն՝ ձեռունք է՝ Գամիրք կոչին,  
Մտրուզ և զԿիլան՝ մինչև ի Քրմանին,  
Խեցգետինն լանջաց՝ է տուն Հայկազին,  
Մինչև յաշխարհ Մուղան և Խորասանին:

#### Երզնկացի

«Եկաւորն՝ զձեռքն և զուսքն, և ունի զաշխարհն Գամրաց:  
Խեցգետինն զլանջքն և աշխարհ զՀայաստան»:

Ինչպես տեսնում ենք, Հովասափը այստեղ Եկավորի համար միայն ձեռքն է հիշում, առանց ուսի, ըստ երևույթին ուսը համարելով ձեռքի մասը: Զարմանալիորեն նա այնքան էլ շեշտված չի գրում Հայաստանի համար՝ «տուն հայկազին», այնինչ Երզնկացին գրում է «աշխարհ զՀայաստան», իսկ Շիրակացին՝ Հայոց:

Առյուծը և Կույսը ներկայացնող հաջորդ զույգի համար էլ Հովասափն ու Երզնկացին համապատասխանաբար գրում են.

#### Հովասափ

Առիւծն՝ ողն է կերպիւ Ասիականին,

#### Երզնկացի

«Առիւծն՝ ողն և կողքն և աշխարհ զԱսիա:

<sup>8</sup> **Հովհաննես Երզնկացի**, Յաղագս երկնային շարժմանն, Երևան, 2001, էջ 73:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 73:

<sup>10</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, աշխտ. Ա. Ա. Աբրահամյան, Երևան, 1944, էջ 314:



Մաքրան և զթուրմուզ յաճուճ-մաճուճին,  
Կոյսն՝ որովայն, որ է Ելլադայ երկրին,  
Ունի զՇամբ և զՀապաշ, մինչև ի Հնտին:

Կոյսն՝ զներքին որովայնն և զաշխարհ զԵլ-  
լադացիս»:

Այստեղ էլ Հովասափը Առյուծի համար չի հիշում կողքը և Կույսի համար միայն որովայն է ասում առանց **ներքին**-ի, որը ևս որոշակի թերիություն է ստեղծում, սակայն այն բացատրվում է չափաձոյի ընթացքով, ուր ամբողջական թվարկումը կծանրացներ բանաստեղծական շարադրանքը:

Հաջորդ գույզի՝ Կշիռի և Կարիճի համար էլ ասվում է.

#### Հովասափ

Կշիռն երկուց կշտից Հոռոմք և Մատին  
Հրէ և ըզՔիշմիր և Չինումաչին.  
Կարիճն՝ անտամք՝ Կրետես է և Մադրիպին,  
Մինչև յՕման, Հեճաս և հետ Մաքային:

#### Երզնկացի

«Կշիռն՝ երկու կուշտն և աշխարհ Լիբիայ:  
Կարիճն՝ անդամքն և աշխարհ Կրետացիք»:

Այստեղ Հովասափը օգտագործում է **կուշտ** բառի **կշտից** ձևը, որը բարբառային արժեքավոր գրառում է՝ կատարված 16-րդ դարի առաջին կեսում:

Աղեղնավորի և Այծեղջյուրի համար էլ համապատասխան հաջորդականությամբ ասվում է.

#### Հովասափ

Աղեղնաւորն Ալան՝ է բարձքն վերին,  
Արևմուտք վերին Ապ և Իսպահանին,  
Այծեղջիւրն՝ ծընկունք՝ Ասորեստանին  
Մաքրան և զՔանան և Մայիմանին:

#### Երզնկացի

«Աղեղնաւորն՝ բարձքն և երանքն և աշխարհ  
զԻտալիոյ: Այծեղջիւրն՝ զերկու ծունկան և  
զաշխարհ զԱսորեստան»:

Վերջին երկու գույզն են կազմում Ջրիտար և Ձուկը.

#### Հովասափ

Ջրիտան, որ է սրունք ի Մսրայ կերպին,  
ԶՔուֆայ մինչև ի Չին յաւագուտ տեղին.  
Եւ Ձուկն՝ Թաթք կոչին հնտիկք և Սնտին,  
Մինչև ի Սմրդանտ, զաշխարհ Բուխարին:

#### Երզնկացի

«Ջրիտան՝ սրունքն և զաշխարհ զԵգիպտոս  
և զԿաֆա:  
Ձուկն՝ զերկու թաթ ոտիցն և աշխարհ  
զՀնդուստան»:

Թե՛ Հովասափը և թե՛ Երզնկացին արեգակի՝ երկնքի պարունակներով անցնելու և ըստ այդմ յուրաքանչյուր ամսին մի կենդանակերպի համապատասխանեցնելու մասին գրելուց հետո, որպես ամփոփում ներկայացնում են արեգակի տարեկան ընթացքը, որը ևս գրեթե բառացի ընդհանրություն ունի երկուսի մոտ էլ, և եթե Երզնկացու արձակ տողերը տողատենք, ապա կարող է համընկնել Հովասափի չափաձոյի հետ.

Հովասափ	Երզնկացի
Բայց սոքայ երկոտասան կերպերս ի յերկին՝ Երեսուն-երեսուն աստիճան ունին, Զոր և արևն երթայ ամեն արբ ի մին Եւ մէկ տարին հասնի գլուխն ի Խոյին:	«Եւ է երկոտասան կենդանակերպքն յեր- կինս՝ երկոտասան ամիս տարւոյն, և ամեն կենդանակերպ է երեսուն աստիճան»:

Նույն այս համապատասխանությունն ենք գտնում և յոթ մոլորակներին նվիրված հաջորդ գլխում. «Վասն եօթ մոլորական աստեղացն և բնութեան և անւանցն՝ չորս ազգի լեզուս ոտանաւոր»: Ինչպէս վերնագրում է ասվում, այս գլխում ներկայացվում են յոթ մոլորակները իրենց բնորոշ հատկանիշներով և նրանց անվանումները չորս լեզուներով:

Այստեղ ևս գտնում ենք նույն համապատասխանությունը թե՛ Շիրակացու և թե՛ հատկապէս Հովհաննես Երզնկացու հետ: Այս գլուխը ունի հետևյալ կառուցվածքը. մեկական տներով ներկայացվում է մոլորակներից յուրաքանչյուրին տրվող անվանումը եվրոպացիների, «տաճիկների», արաբների և հույների կողմից: Երզնկացին արաբերեն անվանումը չի հիշում: Նա միշտ երեք լեզվով է ներկայացնում, որոնցից մեկը տաճկերեն, իսկ մյուս երկուսը եվրոպական լեզուներով, ու անվանումների այս շարքը ևս հիմնականում համընկնում է Հովասափի թվարկումների հետ: Ասվածը ներկայացնենք լուսնի օրինակով.

Հովասափ	Երզնկացի
Ներքին աստիսն պայծառ, որ կոչի Լուսին, Ֆռանկք Լունայ կոչեն, տաճկաց՝ Դամարին, Եւ յոյնքն Սելինէ, արևն՝ Երկուշաբթին <sup>11</sup> :	«Լուսինն է, որ կոչի հռոմերէն Սիլինոս. Ֆռանկերէն՝ Լունայ, տաճկերէն՝ Դամար և հայերէն՝ Լուսին»:

Մոլորակների ընթացքը, ըստ հին աստղաբաշխական ըմբռնումների, պայմանավորում էր նաև իրադարձությունների ընթացքը և ըստ այդմ գուշակություններ էին արվում դեպքերի հնարավոր ընթացքի մասին: Մերժելով և հեթանոսական համարելով նման ըմբռնումները՝ Շիրակացին գրում է, որ մոլորակների ընթացքի համար «ասէն հեթանոսք ի սոցանէ զոմանս բարերարս և զոմանս թշուառացուցիչս»<sup>12</sup>: Մոլորակներին վերագրվող այս բնույթի մասին գրում է նաև Հովասափը: Լուսնթագի՝ Յուպիտերի համար Հովասափը համանման ձևով գրում է. «Սորա բնութիւն բարի և քաղցր լինին»: Երևակի՝ Սատուրնի համար էլ գրում է. «Բնութեամբ աւիրող է և ցրտային»:

Երկնքի ու երկրի արարումը ներկայացնելուց հետո հաջորդ չորրորդ գլուխը Հովասափը արդեն նվիրում է դրախտին և մարդու արարմանը՝ «Վասն ըստեղծման յԱդամայ և դրախտին»: Թե՛ այս և թե՛ հաջորդող գլուխների գրության՝ Հովասափի գլխավոր աղբյուրը բնականաբար եղել է «Աստվածաշունչը» և վերջինիս կանոնական մեկնությունները: Անհրաժեշտ է սակայն, նշել, որ Հովասափի գործի վրա նկատելի ազդեցություն են թողել նաև տարբեր ավանդություններ և Աստվածաշնչի պարականոն պատմություններն ու

<sup>11</sup> **Հովհաննես Երզնկացի**, նշվ. աշխտ., էջ 80:

<sup>12</sup> Անանիա Շիրակացու մատենագրությունը, էջ 323:

գրույցները: Միաժամանակ, Հովասափը հետևել է նաև իրենից առաջ գրված չափածո մեկնություններին, որոնք եթե ուղղակիորեն էլ չի վկայակոչել, ապա նրանց ազդեցությունը, այնուամենայնիվ, նկատելի է այս երկը համապատասխան գլխաբաժանմամբ ներկայացնելու և համապատասխան թեմաների ու սյուժեների ընտրության գործում:

Թե՛ այս գործի և թե՛ Քրիստոսի Տնօրինականներին նվիրված մյուս չափածո ստեղծագործության (որին կանդրադառնանք հաջորդ գլխում) աղբյուրների մասին Գ. Հովսեփյանը գրում է. «Հին և Նոր կտակարանների բովանդակության հետ կապուած քերթուածներն ամենից ընդարձակներն են. առաջինը՝ «Վասն լինելութեան արարածոց» սկս. Արինենք զանեղ բնութիւն. 275<sup>3</sup> և երկրորդը՝ «Տնարինականաք Քրիստոսի». սկս. Արինենք զՀայրն Աստուած. 292<sup>3</sup>: Ընդհանուր առմամբ այդ աշխատութիւնները Ս. Գրքի համառօտագրութիւններն են, բայց հեղինակը յաճախ շեղում է վաւերական աղբիւրներից և ժողովրդական ասանդութիւններով կամ անվաւերականներով, ինչպէս և մեկնութիւններով և խորհրդածութիւններով, երբեմն և պատկերաւոր նկարագրութիւններով համեմատում իւր պատմուածքը: Հրեշտակների ստեղծագործութիւնն ու դասակարգութիւնը, երկնքի պարունակների և մոլորակների մասին առնում է Դիոնեսիոս Արիսպագացուց, Արիստոտելից և այլ տոմարական աղբիւրներից, որոնց մասին յիշում է Բ և ԻԷ գլուխներում: Այս բոլորը նա քաղում է նախնեաց թարգմանական մատենագրութիւնից, յիշելով և Անանիա Շիրակացու անունը: Մեզ հեռու կտանէր մի առ մի համեմատութեան ենթարկել և ցոյց տալ աղբիւրները. այդպիսի մի աշխատանք հարկ կլինի կատարել այն ժամանակ, երբ հնարաւոր լինի հրատարակել Յովասափի գրութիւնների ամբողջութիւնը»<sup>13</sup>:

Քանի որ մեր այս աշխատանքին կից հավելվածում ներկայացնում ենք հիշյալ երկու գործերը, ուստի նպատակահարմար գտանք կատարել և դրանց վերլուծությունը, Հովասափի աղբյուրների գրության վկայակոչմամբ: Նման աշխատանքը կարևորվում է կրկնակիորեն. նախ, որ այս երկու աշխատանքները ընդհանրապես որևէ վերլուծության չեն ենթարկվել և երկրորդ, որ նրանցում օգտագործված պարականոնները գալիս են՝ լրացնելու հայ միջնադարյան պարականոնների մասին առկա ըմբռնումները:

Դրախտին և Ադամի ստեղծմանն ու դրախտից վտարմանը նվիրված այս գլխի բուն աղբյուրը եթե Օննդոց գրքի Բ 8-Գ 24 հատվածն է, ապա գեղարվեստական պատկերավորման ու թեմատիկ լրացուցիչ դրվագների համար աղբյուր են ծառայել Առաքել Սյունեցու «Ադամգիրքը» և Աստվածաշնչի պարականոնները, և դարձյալ առանց վերջիններիս իմացության հնարավոր չէ հասկանալ Հովասափի այս գործի մի շարք հատվածներ, քանի որ դրանցում ոչ թե չափածո վերաշարադրվում են հիշյալ պատմությունները, այլ պարզապես ամենահամառոտ ձևով, երբեմն մի ակնարկով ու բնորոշմամբ հիշատակվում են դրանք:

Հովասափը Հին կտակարանի շատ պատմություններ ամենասեղմ ձևով է ներկայացնում, սակայն դրախտը հանգամանալից և ամենապայծառ գույներով է պատկերում՝ որոշակիորեն հետևելով հատկապես Առաքել Սյունեցուն.

### Հովասափ

### Սյունեցի

<sup>13</sup> Գարեգին Հովսեփյան, նշվ. աշխտ, էջ 243-244:

Անպատմելի ծառօք, ծաղկօք զարդարին, Անմահ տնկօք ելից, որ լոյս կու հոսին: Ծառ և տունկ դրախտին որպէս ըզլուսին, Եւ քան զարեւ պայծառ պտուղն ի ճղին, Անուշահոտ բուրումն և անմահութիւնն, Որ չէ անկել ի միտ և սիրտ հողածնին:	Ծառս և ծաղկունս ի նմա անհուն, Պէսպէս կերպիւ լուսափայլուն: Էր փառք դրախտին անպատմելի, Չըքնաղատես և սըխրալի, Ծաղկունքըն տայր փայլըս փայլի՝ Արեգական նման և լուսնի <sup>14</sup> :
------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Հովասափը «Ծննդոց գրքի» հետևողությամբ գրելով «Արար ըզմարդն Ադամ ի յԻր պատկերին», Ադամի ու Եվայի ստեղծումը, սակայն, բացատրում է մի մեկնաբանությամբ, որը չկա Աստվածաշնչում, և այնուհետև նույն այս բացատրությամբ է պայմանավորում բանասարկուի չարությունը և ցանկությունը նրանց դրախտից վտարելու:

Միջնադարյան կանոնական մեկնություններում ասվում է, որ սատանան էլ սկզբնապես հրեշտակների մի դասն է եղել և երբ խրոխտանալով փորձել է ըմբոստանալ Աստծո դեմ, Աստված նրան երկնքից վայր է նետել և հրեշտակների թիվը իննից վերստին տասը դաձնելու համար արարել մարդուն: Նույն այս մեկնաբանությունը գտնում ենք նաև Հովասափի երկում, թե Աստված Ադամին ու Եվային ստեղծեց, որպեսզի

*Լնուլ զտեղ անկելոց հրեշտակաց դասին:*

Այնուհետև, սակայն, դրախտից վտարմանը նա տալիս է այն մեկնաբանությունը, թե ահա այս պատճառով բանասարկուն չարությամբ լցվեց և որոշեց խաբել Ադամին:

Նույն այս բացատրությունն ենք գտնում նաև պարականոն «Պատմութիւն ստեղծման և յանցմանն Ադամայ» գործում, ուր ասվում է. «Իսկ բարերան Աստուած, վասն հպարտութեանն սատանայի ստեղծ զԱդամ հողեղէն, զի լցուցեն զտեղի անկելոց հրեշտակացն»<sup>15</sup>:

Այս պարականոնի պատմությամբ է հավելված նաև Հովասափի շարադրանքի հատվածը, որում ասվում է, թե դրախտից վտարվելուց հետո

Երբ յիրիկուն եղև կրկին խոցեին,  
Զի չկայր տիւ և գիշեր ի մէջ դրախտին,  
Կրկին խաբեալ չարին լոյս խոստանային,  
Զհոգին և զծնրնտոց զրկեցին:

Այս տողերը անընկալելի են առանց մեկ այլ՝ «Պատմութիւն ելանելոյն Ադամայ ի դրախտէն» պարականոնի, որում ասվում է, թե Ադամն ու Եվան երբ դրախտից հանվում են, մինչև երեկո ուրախ են լինում, քանի որ կար նախ արեգակի, ապա և լուսնի լույսը, իսկ գիշերը «Երբ որ արեգակն մտաւ, նոքա գիտացին թէ խաւար կալաւ գնտաւ և այլ ոչ տեսանէն զլոյս, քանզի դրախտն հանապազ լոյս էր»: Նրանք չգիտեին, որ աշխարհում գիշեր ու ցերեկ կա: Ահա այս պատճառով, երբ արշալույսին՝ հավախոսին, լույսը պետք է

<sup>14</sup> **Առաքել Միսնեցի**, Ադամգիրք, աշխտ. Ա. Մադոյանի, Երևան, 1989, էջ 14, 17:

<sup>15</sup> Թանգարան. Հին և նոր նախնեաց, Ա Անկանոն գիրք Հին կտակարանաց, Վենետիկ, 1896, էջ 308:

բացվեր, գալիս է սատանան և ասում, թե ինչ կտաք, եթե ձեզ լույս տամ: Ադամն ասում է. «Եթե մի անգամ լոյս տեսանիցեմք, քեզ ծառա լինիմք մեք և ամենայն ծնունդքն մեր»: Եվ երբ Ադամը տեսնում է լույսը, ուրախացած ասում է, թե թող քո ասածը լինի, և սատանան մի քար է բերում և ասում՝ վրան գրիր քո հանձնառության խոսքերը, այլապես «խոր խաւար բերեմ ի վերա քո»: Սակայն երբ նորից գիշերն է իջնում, հասկանում են, որ «խաբեցան ի սատանայէ, լացին և ողբացին»<sup>16</sup>:

Հաջորդ գլուխը նվիրված է Ադամի հաջորդներին մինչև Նոյը և Աշտարակաշինությունը: Մեթի որդի Ենովսի համար Աստվածաշնչում ասվում է. «Եւ անուանեաց զանուն նորա Ենովս. նա յուսացաւ կոչել զանուն Տեառն Աստուծոյ» (Օսնդ. Դ 26): Այս տողերի հետևողությամբ Հովասափը գրում է.

*Մինչև Ենովս կոչեաց ըզՏէր յաւգնութիւն,  
Յուսացաւ և էառ մարգարէութիւն:*

«Էառ մարգարէութիւն» խոսքերով էլ նկատի ունի Հուդա առաքյալի թղթի հետևյալ խոսքերը. «Մարգարէացաւ վասն նոցա եւ եւթներորդն յԱդամայ Ենոք» (Հուդա 14):  
Հովասափը Ենովսի մասին նաև գրում է.

*Իսկ սաղավարտ ի գլուխն եդեալ կապարի,  
Ոչ նայել ի յերկինս՝ ուխտեաց իւր անձին,  
Եւ ոչ եկեր բընաւ ի պտղոյ դրախտին...*

Այս մասին Աստվածաշնչում ոչինչ չկա գրված, սակայն «Վասն Աւետեաց Մեթայ» պարականոն պատմության մեջ ասվում է, թե Ենովքը հորը՝ Մեթին հարցնում է, թե «պապն մեր Ադամ ընդէ՞ր տրտմե՞»<sup>17</sup>: Մեթն ասում է, թե դրախտի պտուղը ճաշակելու և այդ պատճառով դրախտից վտարվելու համար: Այդժամ Ենովքն ասում է Մեթին. «Հօր պարտքն պիտի որդին վճարիլ»: Այնուհետև ասվում է, որ այս պատճառով Ենովքը չի ամուսնանում: Այգի է հիմնում, որը լի էր ամենայն բարիքներով. «Ամենայն մարդ ճաշակէր ի պտղոյն, իսկ Ենովք ոչ ճաշակեաց ամեննին, այլ երկաթի սաղաւարտ ի գլուխն եդեալ, զի մի բարձր հայեցի ի պտուղն ծառերոյն»<sup>18</sup>: Եթե չլինէր այս պարականոնը, ապա Հովասափի գրածից պարզ չէր լինի, թե ինչու է Ենովքը, ինչպես Հովասափն է ասում, կապարե սաղավարտ դրել:

Նույն այս պատմության հետևողությամբ Ենովքի կրած սաղավարտի մասին գրում է նաև Հովհաննես Թլկուրանցին, ընդ որում նա ևս ոչ թե Ենովքի սաղավարտ կրելու պատմությունն է բերում, այլ այդ պատմության հիման վրա գրում է.

*Ոչ միս եւ ոչ պտուղ եկեր, բայց միայն ըզխտտ բուսական,*

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 313:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 320:

<sup>18</sup> Նույն տեղում:

*Եւ չափ եղ ի գլուխն, ասէ՛ չեմ արժան երկնից արքայութեան<sup>19</sup>:*

Այս տողերը ևս ընկալելի չէին լինի առանց հիշյալ պարականոնն իմանալու: Ինչպես, սակայն, երևում է մեջբերված հատվածից, Թլկուրանցին ըստ երևույթին հետևել է այս պարականոնի մի այլ տարբերակին, որում Ենովքի սաղավարտ դնելը բացատրվել է ոչ թե այն բանով, որ նա ծառերի պտուղներին չնայի և այդպիսով քավի Ադամի մեղքը, այլ որովհետև իրեն արժանի չի համարում երկնքի արքայությանը:

Հովասափը եթե թեմատիկ տարբեր դրվագներում հետևում է պարականոններին ու ավանդություններին, բուն գլխավոր իրադարձությունները, սակայն, ներկայացնում է Աստվածաշնչի բառացի վկայակոչմամբ: Այսպես, Աստվածաշնչում ջրհեղեղի մասին ասվում է. «Եւ պատառեցան ամենայն աղբիւրք անդնդոց բազմաց, եւ սահանք երկնից բացան, եւ եղեւ անձրեւ ի վերայ երկրի» (Օննդ. Է 12): Համանման ձևով Հովասափը գրում է.

*Սահանք երկնից բացան և ջուրք հոսեցան,  
Ջրասոյգ ընկղմեցան աշխարհ միաբան:*

Հովասափի հավելումները պայմանավորված են նաև քրիստոնեական խորհրդաբանությամբ, որով զուգահեռի մեջ են դիտվում Հին և Նոր կտակարանները: Քանի որ ավեծուփ ջրերի վրա լողացող փրկության տապանը համեմատվում է կյանքի ծովում փրկության նավ եղող Եկեղեցու հետ, ուստի Օննդոց գրքի «Եւ շրջէր տապանն ի վերայ ջրոյ» (Է 17) խոսքերը Հովասափը ներկայացնում է որպես Եկեղեցու խորհուրդը՝ հավելելով խաչանման բառը.

*Տապանն ի վրա ջրին խաչանման...*

Նոյյան տապան-եկեղեցի զուգահեռը գտնում ենք նաև Հովհաննես Թլկուրանցու մոտ: Թլկուրանցին այն ներկայացնում է տապանից տարածվող խնկահոտի պատկերով, թե այդ հոտը զգացին երեները, սակայն շատ մարդիկ՝ ոչ:

*Յետ այսր և ի տապանէն անոյշ խընկոց բուրեցան,  
Երէք դիմեցին առ նա, մարդիք չարք զայն ոչ իմացան<sup>20</sup>:*

Հովասափը այս չափածո մեկնության մեջ օգտագործել է նաև ազգային այն տարածված ավանդությունը, թե Նախիջևան բառը կապվում է Նոյի հետ, որպես Նախ իջևան, և Երևանը՝ որպես երևաց.

*Ելեալ Նոյ և շինեաց յառաջ Նաղչրւան  
Եւ գերկիր բաժանեց որդոցն յԵրևան:*

<sup>19</sup> **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր և գանձեր, աշխտ. Վ. Եղիազարյանի, Վանաձոր, 2004, էջ 99:

<sup>20</sup> Նոյն տեղում, էջ 102:

Ծննդոց գրքում Քամի համար ասվում է, որ նա հարբած Նոյին մերկ տեսավ և պատմեց իր երկու եղբայրներին, որոնք իրենց հոր վրա թիկնոց նետեցին: Նոյը, իմանալով այս մասին, ասում է, թող անիծյալ լինի Քամը և ծառա դառնա իր երկու եղբայրներին: Դարձյալ պարականոն մի պատմության հետևողությամբ Հովասափը տրված այս անեծքի մասին գրում է.

*Իսկ մեծ որդին, որ ծաղր արաւ ըզՆոյեան,  
Անիծեալ սևացաւ մարմնով միաբան:*

Եթե Հովասափը միայն գրում է, որ Քամը անեծքից սևացավ, ապա Հովհաննես Թլկուրանցին առավել առարկայական ձևով է ներկայացնում անեծքից սևանալը, ասելով, թե Քամը այնուհետև դարձավ հաբեշների նախահայրը և Նոյի անեծքի պատճառով են նրանք այդպես սև.

*Յանիծելլըն սեւ եղեւ հայր Եթովպացւոցն է Քանան,  
Ի յագգս են չար եւ բարի, անէծքն չարեացն է միայն<sup>21</sup>:*

Աշտարակաշինության մասին Աստվածաշնչում ասվում է. «Եկայք շինեցուք մեզ քաղաք եւ աշտարակ, որոյ լինիցի գլուխն մինչեւ յերկինս և արասցուք մեզ անուն յառաջ քան զսփռել ի վերա երեսաց ամենայն երկրի» (Ծննդ. ԺԱ 4): Հովասափը, սակայն, ջրհեղեղի մասին այլ գրույցների օգտագործմամբ, աշտարակաշինության համար ասում է, թե Նոյից հետո մարդիկ վերստին մեղքերի մեջ են թաղվում և վախենալով, որ Աստված նոր ջրհեղեղով կպատժի իրենց, կառուցում են աշտարակը, որպեսզի փրկվեն այն բարձրանալով, որ ջրհեղեղի ջրերի տակ չմնան.

*Ասեն ալվի աշխարհ, մեղօք զեխեցան,  
Կրկին պիտի լինի ջրհեղեղ մարդկան,  
Յետ Նոյի հինգ հարիւր ամ, հինկ և քսան,  
Կամեցան աշտարակ շինել միաբան:*

Աշտարակաշինությունը նույն ձևով է բացատրում և Հովհաննես Թլկուրանցին.

*Յերկիւղէ ջրհեղեղին հայցէին հրնար փրկութեան<sup>22</sup>:*

Աշտարակաշինությունից հետո Սուրբ Գրքում ներկայացվում է Սեմի որդիների ծննդաբանությունը մինչև Աբրահամ: Մովսես Խորենացին ևս հայ ժողովրդի ծննդաբանությունը նույն սկզբունքով կազմելով՝ այն բխեցնում է դարձյալ Ծննդոց գրքից (Խոր. Ա,

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 108:

զլ. Զ-Է): Այստեղ հիշվող Նեբրովթը (Ժ 8-9) Բելն է, որտեղից և սկսվում է Հայկի ու Բելի պատմությունը և ըստ այդմ հայ ժողովրդի ազգաբանությունն է սկսվում: Հայկից բխեցնելով հայ և Հայք անունները՝ Խորենացին գրում է. «Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնույն մերոյ Հայկայ՝ Հայք» (Խոր. Ա, զլ. ԺԲ):

Հայկի և Բելի պատմությունը Հովասափը ևս ներկայացնում է աշտարակաշինությունից անմիջապես հետո, սակայն զարմանալիորեն անհաղորդ Խորենացու Պատմության ոգուն: Ինչպես ինքն է գրում.

*Միուսուն անուն Բել էր Կ(60) կանկնեան,  
Մեկին Հայկ կոչէին, էր նայ քառասնեան,  
Մարտեան ընդ միմեանս և աղմկեցան,  
Ամեն ազգ իր տոհմօքն յիւր յաշխարհ դարձան:*

Թլկուրանցին, սակայն, թե՛ հետևում է Խորենացու՝ հայոց նահապետների ներկայացվող ծննդաբանությանը և թե՛ Խորենացու նման օտարների կողմից հայերին տրված Արմեն և Արմենիա անվանումները բխեցնում է Արամ նահապետից (Խոր. Ա, զլ. ԺԲ): Նույն ձևով Հովասափն է գրում.

*Եւ այս են որդիք Յաբեթի՝ Գամիր եւ Թիրաս թըրական,  
Թորգոմ, Հայկ եւ Արմանեկ, Արամիս՝ հայրն Ամասիայն:  
Գեղամ եւ Հարմայ, Արամ, որով **Հայք Արմեն կոչեցան...**<sup>23</sup>*

Այս գլուխը ավարտվում է Մելքիսեդեկի և Աբրահամի հիշատակությամբ, որով վերստին խորհրդաբանական գուգահեռ է տարվում Հին և Նոր ուխտերի միջև, քանի որ Մելքիսեդեկից հետո էլ Փրկչին է փառաբանում:

Աբրահամի համար թե՛ Հովասափը և թե՛ Հովհաննես Թլկուրանցին հիշում են եբրայական մի ավանդություն, որը հայկական աղբյուրներում հանդիպում է Աբրահամի հիշատակության օրվա՝ հունվարի չորսի ներքո:

Այդ ավանդության մեջ ասվում է, որ տասնհինգամյա Աբրահամը բնակվում էր Քաղդեացիների երկրում, որը պարարտ էր, և նրանք լիության մեջ էին ապրում, որից շփանում և անօրինություններ են սկսում գործել: Աստված նրանց պատժում է՝ «Վասն որոյ ետ նոցա Աստուած պատուհաս զերամս ճայից, որ ուտէին ըզբերս երկրին զարտոյ և զայգոյ»: Աբրահամը աղոթում է քաղդեացիների աստվածներին, որ վերանան այդ թռչունները, սակայն նրա ձայնը լսելի չի լինում, որից հետո դիմում է Աստծուն և ասում. «Անձանօթ Աստուած և շարժիչ ամենայնի և այս թռչնոցս ստեղծիչ, հալածեա զոսսա և ծանո մեզ զկամս Քո: Եւ ընդ ասելն՝ վաղվաղակի տարմն հաւուցն ի չիք դարձան և անյայտ եղեն»<sup>24</sup>:

Աբրահամի՝ Աստծուն դիմելով ճայերի, որպես աստվածային պատժի վերացման այս պատմությունը Հովասափը ներկայացրել է հետևյալ երկու տողերով, որոնք դարձյալ ան-

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 107:

<sup>24</sup> Գիրք որ կոչի Այսմաուրք, Կ. Պոլիս, 1720, էջ ԲՃՂԳ (293):



ընկալելի կլինեին, եթե հայտնի չլիներ բուն պատմությունը.

*Վասն երամից ճայից, որ յարտորանին,  
Յիշել գվերինն Աստուած ճայքն հալածին:*

Թլկուրանցին, այնինչ, այս պատմությունը ներկայացնում է հինգ տների միջոցով, որոնցից առաջինում ասում է, թե Աբրահամը երբ էր «ի յԱսորիս, երամակ հաուց շատացան»: Այնուհետև գրում է, թե ինչպես հավքերը ուտում էին «գվաստակ նոցա, եւ չլիներ հընար փըրկութեան»: Թլկուրանցին գեղեցիկ բանաստեղծականությամբ ներկայացնում է անգամ Աբրահամի՝ առ Աստված ուղղված աղոթքը, որից հետո «հաուց տարմըն սատակեցան»<sup>25</sup>:

Հովասափը, սակայն, նաև բերում է մեկ այլ պատմություն՝ կապված ջորիների հետ, որը սակայն, չգտանք ոչ մի աղբյուրում, այն չկա նաև Թլկուրանցու մոտ: Հովասափը գրում է.

*Կոոց տունն այրեալ գաղտնի գիշերին,  
Եւ հնարող ջորոյն կորաւ ընդ նմին:*

Հին և Նոր կտակարանների ընդունված գուգահեռով Հովասափը ևս Աբրահամի հյուրասիրությունը Մամբրեի կաղնու մոտ, ուր Տերն երևաց երկու հրեշտակների հետ, ներկայացնում է որպես Ս. Պատարագի ճաշակում, երբ հյուրասիրության ժամանակ.

*Բաղարջ, գինի և որթ գենեալ ի ճաշին,  
Յօրինակ բաղարջոյ բաժակ խորհրդին:*

Իսահակի զոհաբերություն-Քրիստոսի խաչելություն գուգահեռով գրում է.

*Իսկ նա բառնայր ըզփայտ իւր ողջակիզին  
Հանեալ ի Գողգոթայ օրինակ խաչին:*

Հակոբ նահապետի և Հովսեփի Գեղեցիկի պատմությունը, սակայն, որին նվիրված է հաջորդ յոթերորդ գլուխը, ներկայացվում է համաձայն Աստվածաշնչի պատմության: Անհրաժեշտ է սակայն նշել, որ կանոնական ընթացքը ևս Հովասափը ներկայացնում է խիստ համառոտ՝ բավականանալով իրադարձությունների թվարկմամբ, առանց համապատասխան պլուսետային ընթացքի: Այսպես, Հովսեփի կողմից Փարավոնի երագի բացատրությունը և ողջ այդ պատմությունը ներկայացված է միայն հետևյալ մեկ տան միջոցով.

*Տեսիլ փարաւոնին եւ զիւր իշխանին,*

<sup>25</sup> **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր և գանձեր, էջ 109:

*Վասն էրընջուց հասակին և ըզնիխարին,  
Ասաց թէ եօթ ամ լինի անչափ լիութիւն,  
Յետոյ եօթ ամ լինի հասկի սղութիւն:*

Ինչպէս նշել ենք, այս գործի յուրաքանչյուր գլխի վերջում Հովասափը բերում է մեկ կամ երկու տուն հիշատակարանատիպ ամփոփում բնորոշումներ և փառաբանություններ, որոնցում տվյալ գլխի բովանդակության և խորհրդի հետ հարաբերվող ձևով է ներկայացնում իր ասելիքը: Եվ Հովսեփ Գեղեցիկին նվիրված այս գլխում, որը կապվում է նրա և նրա եղբայրների հետ, եղբայրության այդ մտտիվը ընտրելով, Հովասափն անորդառնում է իր վաղամեռիկ Գրիգոր եղբորը և սգալով նրա համար՝ գրում է.

*Եւ եղբայրն իմ Գրիգոր ետ մեզ սուգ կրկին,  
Եւ դեզերալ եղէ քան զնաւ ծովին,  
Չանիմաստ Յովասափի Սերաստացին,  
Աղաչեմք յիշել ձեր սուրբ բերանին:*

Զարգացնելով ունայնության և մահվան այս գաղափարը՝ այնուհետև աշխարհը համեմատում է երկդռնանի մի քաղաքի հետ. մի դռնից մտնում են ծնվելիս և մյուսից ելնում մահանալիս՝ աշխարհ մերկ գալով և գնալով:

Հաջորդ՝ ութերորդ գլուխը նվիրված է Հոբին: Ի տարբերություն նախորդ գլուխների, այս մեկը ունի զարգացող սյուժետային ընթացք և ներկայացվում է Հոբի բարեպաշտության, չարչարանքների, համբերության և Աստծուց վարձահատույց լինելու ողջ պատմությունը: Մինչ Հոբի պատմության շարադրումը, այս գլխի առաջին տան մեջ Հովասափը այսպէս է ներկայացնում Հոբի՝ բոլոր փորձություններին դիմանալը, ապա և Աստծո կողմից վարձահատույց լինելը.

*Բարին բարի բնութեամբ սիրէ զբարին  
Եւ Տէրն ուրախանայ ի վերա նորին,  
Որպէս Յոբ երանեալ այն նահապետին,  
Համբերութեամբն էհաս ի յանճառ բարին:*

Հոբի պատմությունը նաև ինչ-որ տեղ հարաբերվում է աշխարհի ունայնության գաղափարի հետ, որն էլ իր հերթին զուգահեռ է գծում կաֆաների հետ: Եվ այդ գլխում Հոբի պատմությանը հաջորդող Հովասափի խորհրդածությունները ներկայացված են երկու տնով, որոնք երկուսն էլ կաֆաներ են հիշեցնում, որոնցից երկրորդը անմիջականորեն հիշեցնում է Հովասափի «Աշխարհիս սահմանն է հանց» կաֆան.

*Ջի անցաւոր աշխարհս նրման երազին,  
Լալ աստէն խընտութիւն անտէն բազմածին,  
Ով աստ ուրախ կենայ անտ է նեղութիւն,  
Մշակ որ գործեալ է վարձ նմայ տացին:*

Սուրբ Գրքի պատմությունների ընթացքի տեղաշարժմամբ Հովասափը Հոբից հետո գրում է Մովսեսի մասին, այնինչ հակառակը պետք է լիներ: Նման տեղաշարժը բացատրվում է աստվածաշնչյան պատմությունը որոշակի թեմատիկ խմբավորմամբ ներկայացնելու Հովասափի ձգտմամբ: Մովսեսի համար ասվում է նախամարգարե և նույն ձևով Հովասափն է գրում, թե մարգարեների շարքը Մովսեսով է սկսվում.

*Գլուխ մարգարեից նախ և առաջին,  
Մովսէս աստուածախաւսն յիշենք ի կարգին,  
Թէ որպէս ծնանի և սնունտ լինին,  
Եւ զագատել նորա զագգն Իսրայէլին:*

Հովասափի բանաստեղծական բնորոշումներում երևում է նաև նրա քաջածանոթությունը Սուրբ Գրքին և իր բնորոշումների համար Սուրբ Գրքից համապատասխան ամենաբնորոշ արտահայտությունները վերցնելու վարպետությունը: Այսպես, Մովսեսի համար ասվում է, որ երբ նա ծնվեց, «տեսանէին զնա կայտառ» (Ելք Բ 2): Համանման ձևով է Մովսեսը բնորոշվում նաև «Գործք Առաքելոց»-ում. «Եւ էր կայտառ առաջի Աստուծոյ» (Է 10, տե՛ս նաև Եբր. ԺԱ 23): Համանման ձևով Հովասափը ոչ թե գրում է, որ Մովսեսը ծնվեց, այլ կայտառը.

*Յորժամ ծրնաւ կայտառն ոչ սպանանեցին...*

Հովասափը Մովսեսի՝ ջուրը նետվելու, ապա և փարավոնի դստեր կողմից հանվելու և որդեգրվելու պատմությունը եթե շարադրում է ըստ Աստվածաշնչի, ապա այնուհետև հիշվող փարավոնի մորուքից քաշելու և ոսկով ու հրով փորձվելու պատմությունը արդեն վերցնում է «Հին կտակարանի» պարականոններից: «Պատմութիւն Մովսեսի» գործում ասվում է, թե երբ փարավոնի դուստրը նրան տանում է փարավոնի մոտ, վերջինս գրկում է մանկանը «եւ նոյն ժամայն բուռն եհար Մովսէս տասն մատամբ զմորուացն փարաւոնի, ընդ որ բարկացեալ թագաւորն հրամայեաց սպանանել զտղայն»<sup>26</sup>: Այս պատմության հետևողությամբ Հովասափը գրում է.

*Էառ արքան ի գիրկն զՄովսէս պատանին,  
Նա զձեռն ձգեալ զմորուսըն փարաւոնին,  
Չոր բարկացեալ արքայն էզարկ ի գետին,  
Ասաց թշնամի են սոքայ մեր ազգին:*

Պարականոնում այնուհետև ասվում է, թե իմաստունները չեն թողնում սպանել մանկանը, ասելով, թե երեխա է և չի հասկանում, թե ինչ է անում:

Փարավոնին ասում են որ կրակ և ոսկի բերի: Եթե կրակին ձեռք տա, ուրեմն իրապես

<sup>26</sup> Թանգարան հին և նոր նախնեաց. Անկանոն գիրք Հին կտակարանաց, էջ 200:

չի հասկանում և երեխա է. «Եւ բերին առաջի տղային սկուտեղ մի կայծակունս հրոյ, և սկուտեղամբ մի ոսկի կարմիր, որպէս զհուր, ասելով. եթէ զոսկին առցէ՝ յայտ է, զի խորամանկութեամբ էարկ զձեռն իւր ի մօրունս արքայի: Իսկ եթէ զհուրն առցէ՝ երեւի թէ անմեղութեամբ արար»։ Երբ բերում են ոսկին և հուրը «ձգեաց Մովսէս զձեռն իւր ի հուրն և կափուցաւ կայծակն ի ձեռն տղային. և նա տարեալ վաղվաղակի լալով ի բերանն զձեռն կափուցեալ կայծին զոր ի մասն էր մածեալ՝ եղ ի վերայ լեզուին՝ եւ լեզուն եւս այրեցաւ»։ Ճիշտ նույն ձևով է գրում և Հովասափը.

*Երկու աման ոսկի և կրքակ լըցին,  
Եւ ըզտղայութիւն այնով փորձեցին,  
Ետես տղայն զկրակն պայծառ քան զոսկին,  
Առեալ ձեռամբ լալով եղ ի բերանին:*

Կրակով և ոսկով փորձվելու այս պատմությունը գտնում ենք նաև «Մասնա ծոերում»։ Հիշյալ պարականոնում Մովսէսը ծանրալեզու է անվանվում այն պատճառով, որ իբրև թե այսպես այրել էր լեզուն. «Վասն այնորիկ ծանրալեզու և թոթովախօս էր Մովսէս»<sup>27</sup>: Նույն ձևով Դավիթն է թլոր անվանվում լեզուն վառելու համար<sup>28</sup>:

Ավետյաց երկիրը Հովասափը Պարզևի երկիր է անվանում, իսկ անապատում քառասուն տարի մանանայով ապրելը համեմատում է դրախտային անհոգ կյանքի հետ.

*Առեալ [Մովսէսը] զընաց զնոսա երկիր Պարզևին,  
Քառասուն ամ անաշխատ նըման դրախտին,  
Կերակուր մանանայ և լորմարգին,  
Տէր զուխտըն կատարեաց հայր Աբրահամին:*

Ընդունված կարգով այս գլխի վերջում ևս հոգևոր վերափնաստավորման է ենթարկում պատմածը և որպես բարեխոսական հայցված՝ դիմում Տիրոջը: Փարավոնի համար ասում է.

*Աղաչանօք սրբոյ մեծին Մովսէսին  
Փրկեայ աներևոյթի Փարաւոնին:*

Փարավոնի՝ հրեաներին հալածելն ու բռնել ցանկանալը համեմատում է բանասրկուի լարած ծուղակների հետ, իսկ Կարմիր ծովը ճեղքելով անցնելը՝ մեղքերի ծովը պատռելու և փրկության ափ հասնելու հետ:

Հաջորդ՝ տասներորդ գլուխը նվիրված է Հեսու Նավեին և Սամսոնին: Երկուսի դեպքում էլ նա հավատարիմ է մնում ավետարանական պատմությանը: Սամսոնի մասին գրելիս նրա տողերը դարձյալ հարաբերվում են ունայնության գաղափարի հետ և այն

<sup>27</sup> Թանգարան հին և նոր նախնեաց կտակարանաց. Անկանոն գիրք հին կտակարանաց, էջ 201:

<sup>28</sup> Մասնա Ծոեր, աշխտ. Ս. Հարությունյանի, Երևան, 1977, էջ 107-108:

միտքն է շեշտվում, որ այդքան քաջագործություններ կատարած անձնավորությունը խաբվեց մի կնոջ կողմից և այս խորհրդածություններին համահունչ ձևով որպես այս գլխի եզրափակում Տիրոջն է դիմում, որ «փրկեսցե՛ գմեզ ի խաբման չարին»:

Հաջորդ գլուխն էլ նվիրելով Դավիթ մարգարեին՝ ներկայացնում է նրա հովվության շրջանը և Սամուել մարգարեի կողմից օծվելը, ապա թվարկում է Դավիթի սաղմոսներում Փրկչին վերաբերվող կանխասացությունները.

*Եւ վասն գայրստեան Տեառն ի սաղմոսին,  
Իջցէ որպէս զանձրն ի վերա գեղմին,  
Եւ ի խորհուրդ խաչին մարգարէութիւն,  
Ծակեցին զձեռս և զոտս և գայլն ի կարգին:*

Դավիթից հետո հաջորդ գլուխը բնականաբար նվիրում է Սողոմոնին՝ գովելով հատկապես նրա իմաստությունը. «Համբաւ իմաստութեան յաշխարհ տարածին»:

Բավականին հետաքրքիր դասակարգմամբ է ներկայացնում Սողոմոնի Առակաց և Ժողովողի գրքերն ու «Երգ երգոցը»: Ըստ Հովասափի Առակաց գիրքը Սողոմոնը գրեց պատանիների համար, որ ճանաչեն բարին, Ժողովողի գիրքը՝ երիտասարդության համար, որ իմանան, թե ամենայն ինչ ունայն է և Երգ երգոցը՝ ծերերի համար: Երգ երգոցը թեև ամենագեղարվեստական ու պատկերավոր գիրքն է Աստվածաշնչի, սակայն եկեղեցու հայրերը այն այլաբանորեն են մեկնել որպես հարսի՝ եկեղեցու և փեսայի՝ Քրիստոսի մասին, և նույն այս մեկնաբանմամբ էլ Հովասափն է գրում, թե ծերերին, տարեցներին այս գրքով ներկայացրեց այդ խորհուրդը:

Հաջորդ գլուխը նվիրված է Եսայի, Եղիա և Եղիսե մարգարեներին, որոնց համար ևս ասում է, թե նրանք գուշակեցին Փրկչի գալուստը, որ երբ Տերը գա ի խնդիր մոլորյալ ոչխարի՝ մեղուցյալ մարդկության, մարդկությունը չմոլորվի, այլ իմանա եղած կանխասացությունների միջոցով:

Եսայի մարգարեի նշանավոր «Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի» (Է 14) խոսքերը այսպես է ներկայացնում.

*Ասաց զհրաշափառ ծրնունդն Յիսուսին,  
Թէ կոյս առանց սերման յղասցի զորդին,  
Ծրնանի ընդ մեզ Աստուած անճառ, անքննին:*

Նույն այս ընթացքով էլ հաջորդ գլուխը նվիրում է Երեմիա մարգարեին: Մինչ Երեմիային վերաբերվող պատմությունները ներկայացնելը, առաջին քառատնում բնորոշում է մարգարեին, բնորոշման իր խոսքը կառուցելով Երեմիայի՝ Երուսաղեմի համար ասված ողբը նկատի ունենալով.

*Յոյժ դառնացեալ տրտում կայր ի տաճարին,  
Չի խտտրեալ էր ազգն ի ճանապարհին,  
Արտասուելով առ Տէր հայցէր փրկութիւն:*

Եզեկիելով քանի որ ավարտվում են չորս մեծ մարգարեները, ուստի հաջորդ գլուխը նվիրում է նրան՝ միաժամանակ հիշելով Ամբակումին ու Հունան մարգարեին: Ինչպես Երեմիային նվիրված գլուխը սկսում է Երուսաղեմի ողբի հիշատակությամբ, այնպես էլ Եսայուն նվիրված գլուխն է սկսում չորեքկերայան կառքի այլաբանական խորհրդի վերհանմամբ: Հին և Նոր կտակարանների զուգահեռով ասվում է, որ այս տեսիլում չորս կենդանիները ներկայացնում են չորս ավետարանիչների խորհրդանշանները:

Հին կտակարանը ինչպես որ ավարտվում է 12 փոքր մարգարեներով, այնպես էլ Հովասափի այս գործի՝ Հին կտակարանն ընդգրկող բաժինը, որը գրեթե ողջ ստեղծագործությունն է կազմում, դարձյալ ավարտվում է 12 փոքր մարգարեներին նվիրված գլխով: Քանի որ մարգարեական կանխասացությունները իրենց լրումին էին հասնելու Փրկչի մարդեղացմամբ և աշխարհ գալով, ուստի այս գլխում առանձին տներով թվարկում է 12 մարգարեներին՝ հիշելով և նրանց կանխասացությունները, թե դրանցից որը փրկչական որ տնօրինության հետ էր կապվում: Մարգարեությունների ավարտից հետո «Վասն լինելութեան աշխարհին» գործը շարունակվում է, ունենալով ևս երեք գլուխ, որոնք նվիրված են Հիսուսի աշխարհ գալուն, որպես մարգարեությունների լրման:

Ինչպես երևում է հիշյալ երեք գլուխներից երկուսի թեմաներից իսկ՝ Տիրամոր ծնվելու և Քրիստոսի մանկության, այս գլուխները գրված են եկեղեցական ավանդության և տարբեր պարականոնների հիման վրա:

Եկեղեցական ավանդությամբ և մի շարք տարբեր պատմությունների մեջ ասվում է, որ Տիրամոր ծնողներն էին Հովակիմը և Աննան: Տիրամոր ծնվելուն նվիրված տարբեր պատմություններից, եկեղեցական մատենագիրների քարոզներից, ճառերից և ներբողներից մի քանիսին թեև Հովասափը կարող էր ծանոթ լինել, սակայն վստահաբար նրա գլխավոր աղբյուրը եղել է «Հայսմավուրքը», և վերջինիս սեպտեմբերի ութի ներքո գետեղված «Տոն է ծննդեան Սուրբ Կուսին Մարիամու Աստուածածնին» պատմության հիման վրա է նա գրել հիշյալ գլուխը հետևյալ երկու պատճառներով. նախ, որ Հովասափը քաջածանոթ էր «Հայսմավուրքին» և կատարել է վերջինիս երկու ընդօրինակություններ, ինչպես նաև «Հայսմավուրքի» բնույթը այնպիսին է, որ նրանում ընդհանրացված ձևով ներկայացվում են տարբեր ճառագրական և ներբողական գործերի բուն պատմական ատաղձները, սյուժեի ամփոփ և հավաք ներկայացմամբ: Ասվածը լիովին վերաբերվում է Տիրամոր ծնվելու պատմությանը, որի հիման վրա էլ Հովասափն այն չափածոյի է վերածել իր հիշյալ գործում:

Այժմ ըստ եկեղեցական ավանդության և «Հայսմավուրքի»՝ սեպտեմբերի ութի ներքո գետեղված ընթերցման ներկայացնենք Տիրամոր ծնվելու պատմությունը և թե ինչպես է այն բանաստեղծական չափածոյի վերածել Հովասափը:

Տիրամոր ծնողները՝ Հովակիմը և Աննան, բարեպաշտ կյանքով ապրելով հասել էին առաջացած տարիքի, սակայն զավակ չունեին: Տիրոջ տոնին էր Իսրայելի բոլոր կողմերից Երուսաղեմի տաճար էին գալիս հրեաները՝ իրենց ընծան մատուցելու, տաճարի Ռուփիմ քահանան չի թողնում, որ Հովակիմը մատուցի իր ընծան, ասելով. «Քեզ չէ

պարտ յառաջ մատուցանել զընծայսն, վասն զի ոչ ունիս զաւակ ի մէջ Իսրայէլի»<sup>29</sup>:

Այս խոսքերի հետևողությամբ Հովասափը գրում է.

*Ընծայս բերեալ յանուն Տեառն ի տաճարին,  
Զընծայս չընդունեցան վասն անգաւակին:*

Լսելով այս խոսքերը՝ Հովակիմը հեռանում է մի վայր և պահքով առանձնության տրվում, իսկ Աննան էլ տանն է կրկնակիորեն ողբում թե՛ ամուսնու չգալու և թե՛ անգավակության համար: Մի օր, երբ այսպես պարտեզում Աննան լալահառաչ առանձնացել էր, լսում է թոշունների ձագերի ձայնը և արտասվելով ասում. «Եւ ոչ թոշնոց անգամ նմանեցայ ես. զի և թոշունք երկնից ձագս հանցեն առաջի Քո Տէր»:

Պատմության այս հատվածի հետևողությամբ էլ Հովասափը գրում է.

*Խիստ մորմոքեալ նոցա ի տուն գընացին,  
Տեսին զձագ հաւուն և զմայրն ի ծառին,  
Փրղցկեալ ի սրտի Տեառնէ հայցէին,  
Ոչ եմք ի յաշխարհի, զինչ ձագ մի հաւին:*

Որից հետո ներկայացվում է Տիրամոր ծնվելը, երեք տարեկանում տաճարին ընծայվելը, Հովսեփի խնամքին հանձնվելը, ապա և Գաբրիելի ավետումը:

Ավետման ավետարանական պատմության մեջ ասվում է, որ երբ Գաբրիել հրեշտակապետը տալիս է ծննդյան ավետիսը, Մարիամը «ընդ բանսն խոովեցաւ» (Ղուկ Ա 29), որից հետո Գաբրիելը ասում է. «Մի երկնչիբ Մարիամ»: Մարիամը սակայն, հարցնում է. «Զիարդ լինիցի ինձ արդ», որին դարձյալ հաջորդում են Գաբրիելի խոսքերը, որոնցից հետո Մարիամը արդեն խոնարհությամբ պատասխանում է. «Եղիցի ինձ ըստ բանի քում»:

Եկեղեցու հայրերը տարբեր ճառագրական և ներբողական գործերում բավականին ընդարձակ և ճոխ ձևով են ներկայացրել Գաբրիելի և Մարիամի այս երկխոսությունը, որը սակայն, որոշակիորեն համառոտված է «Հայսմավորքի»՝ Ավետման տոնին վերաբերվող ապրիլի 7-ի ընթերցման մեջ, որը դարձյալ Հովասափի բուն գրական սկզբնաղբյուրն է եղել: Եկեղեցու հայրերը և նրանց հետևողությամբ էլ «Հայսմավորքում» վերաշարադրված պատմության հեղինակը գրում են, որ Մարիամը տարակուսում է և խոովվում է Գաբրիելի խոսքերից՝ մտածելով, որ բանսարկուն ինչպես օձի միջոցով խաբեց Եվային, այնպես էլ այժմ ուղարկված անձանոթի միջոցով ցանկանում է գայթակղեցնել իրեն և ասում է. «Ի բաց երթ և գնայ յինէն խաբողական այր. եկեալ ես կողոպտել զիս, որպէս զմայր ամենայնի զԵւայ»<sup>30</sup>:

Տիրամոր տարակուսին նույն այս մեկնաբանությունն է տվել նաև Հովասափը.

*Մարիամ ոչ լսէր բանի հրեշտակին,*

<sup>29</sup> Յայսմավորք, էջ 70:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 651:

*Թէ զիս պատրել կամիս նըման Եւային:*

Հիսուսի ծնունդը, սակայն, արդէն ներկայացվում է ըստ Ղուկասու Ավետարանի: «Պատեցաւ ի խանձարուրս եւ եղ զնա ի մտուր» (Ղուկ. Բ 7) խոսքերի հետևողությամբ Հովասափը գրում է.

*Խանձարրով պատեցաւ զանձն աստուածային,  
Յանբանից մտուր եղաւ կամօք Բւրային:*

Հրեշտակների փառաբանության և հովիվների՝ Բեթղեհեմ գնալու Ավետարանական հատվածի բանաստեղծական վերաշարադրմամբ գրում է.

*Բսկ բազմութիւնք վերնոցն եղանակէին,  
Եւ հովիւք ընդ նոսին ձայնակից լինին,  
Փառք ի բարձունս տային, զԱստուած արհնէին,  
Որ հաշտեցաւ Որդւովն ըստ Բւր պատկերին:*

Քրիստոսի, որպես երկրորդ Ադամի ծննդյամբ առաջին Ադամի և Տիրամոր միջոցով Եվայի մեղքի քավման ըմբռնումը վաղ շրջանի պարականոններում ներկայացված է մի պատմությամբ, թե իբրև Եվան գալիս և մանկաբարձություն է անում Բեթղեհեմի ծննդյան այրում: «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոնում ասվում է, որ Հիսուսի ծնվելուց անմիջապես հետո Հովսեփը «տեսանէր կին մի, որ գայր ի լեռնէ անտի և կտաւ մի մեծ զուտվն արկեալ»: Երբ Հովսեփը հարցնում է, թե դու ով ես, կինը պատասխանում է. «Ես եմ նախամայրն ամենեցուն Եւա, և եկի տեսանել աչօք իմովք զփրկութիւն իմ, որ գործեցաւ ինձ»<sup>31</sup>:

Այս պատմության հետևողությամբ էլ Հովասափը գրում է.

*Երեւեալ նախամայրն կտաւ մի յուսին,  
Էառ զՏէրն ի գրկին զգւէր տենչային:*

Այս ստեղծագործության վերջին՝ 19-րդ գլուխը՝ «Վասն գնալոյ յԵգիպտոս և գործ տղակութեան Յիսուսի ըսքանչելեաց փոքր ի շատէ սքանչելի», ինչպես վերնագրից իսկ երևում է, լիովին հիմնված է Քրիստոսի մանկության պարականոն պատմությունների վրա: Վերնագրի «Գործ տղակութեան Յիսուսի» կապակցությունը մի փոքր ձևափոխված տարբերակն է «Գիրք տղայութեան Քրիստոսի» պարականոն գործի:

Այս պարականոնում բազմաթիվ հրաշապատումներով ճոխացված են Քրիստոսի մանկությանը վերաբերվող ավետարանական տեղեկությունները, ինչպես նաև բերված են մի շարք հնարովի պատմություններ:

Այսպես, Եգիպտոս փախստյան ավետարանական վկայությանը պարականոններում

<sup>31</sup> Անկանոն գիրք Նոր կտակարանաց, Վենետիկ, 1898, էջ 37-38:



հաջորդում է մանուկ Հիսուսի գործած հրաշքները այնտեղ, ինչպես նաև ասվում է, որ տեղի քաղաքների դարպասներից մեկի վրա առյուծի և արծիվի կախարդական քանդակներ և պատկերներ կային, որոնք ձայն էին արձակում, երբ պետք է մի անսովոր երևույթ տեղի ունենար: Եվ երբ մանուկ Հիսուսի հետ ծնողները ներս են մտնում քաղաքի դարպասներից, նույն պահին «ի գոչել երկու առիւծոցն՝ հնչեաց արծիւն»<sup>32</sup>:

Այս դրվագը նկատի ունենալով՝ Հովասափը գրում է, որ երբ Հիսուս քաղաքից ներս է մտնում

*Առիւծքն որ ի վերա դրան քաղաքին,  
Գոչեցին թէ՛ Եկաւ մեծ արքայորդին:*

«Գիրք տղայութեանի» և այս գլխի համեմատությունը ցույց է տալիս, որ Հովասափը իրեն բնորոշ համառոտությամբ չափածոյի է վերածել այս գործը՝ պահելով նրա թեմատիկ գլխավոր պատմությունները: Անհրաժեշտ է սակայն նշել, որ Հովասափը, ըստ երևույթին, միայն «Գիրք տղայութեան» գործով չի առաջնորդվել, քանի որ նրա՝ այս գործից ընտրած պատմությունները միաժամանակ տարածված պարականոններ էին հայ միջնադարյան գրականության մեջ, ուստի նա թեմատիկ ընտրության ժամանակ պետք է հաշվի առներ առկա գրական ավանդույթը, թե հատկապես որ թեմաներն էին, որ առավել տարածված էին:

Այս գլխում այնուհետև պատմվում է, թե ինչպես Եղիազար ծերունին հասկանալով, որ Հիսուս մարդկության փրկիչն է, նրան լողացնում է հատուկ պատվով և Հիսուսին լողացրած ջուրը երբ թափում են, աճում է այն ծառը, որից բալասանի յուղն է ստացվում:

Հաջորդը Ապոլլոնի բազիլիկ կործանման պատմությունն է, ապա գալիս է Գամաղիելի մոտ սովորելու, նրան իր գիտությամբ զարմացնելու պատմությունը, որին հաջորդում են հիվանդների բժշկության, մահացած տղային հարություն տալու և նրանից ճշմարտությունը իմանալու պատմությունները: Պարականոն սյուժեների թվարկման այս շարքը եզրափակվում է մանուկ Հիսուսի ներկարարություն սովորելու պատմությամբ, երբ Հիսուս մի կաթսայի մեջ բոլոր կտավները ներկում է համապատասխան գույներով, իսկ ներկարարը կարծելով, թե նա իրար է խառնել և փչացրել ներկերն ու կտավները, զայրացած նրա ետևից է շարժում անթրոցը:

Հովասափի կողմից այս պատմությունների չափածոյի վերածումը ցույց է տալիս ավետարանական պարականոնների կենսունակությունը հայ գրականության մեջ նաև 16-րդ դարի առաջին կեսին<sup>33</sup>:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 62:

<sup>33</sup> Ավետարանական պարականոնների՝ հայ միջնադարյան գրականության մեջ արտացոլման մասին տե՛ս Զ. Տեր-Ղավթյան, Թովմայի ավետարանի հետքերը հայ միջնադարյան գրույցներում, «Էջմիածին», 1998, Դ, էջ 109-115:

*ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

*Պատմական գիտությունների թեկնածու*

## **ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ III-IV ԴԱՐԵՐՈՒՄ**

III-IV դարերն Ընդհանրական Եկեղեցու պատմության կարևորագույն ժամանակահատվածներից են, քանի որ այս շրջանից սկսած Եկեղեցու շրջանակներում հստակորեն սահմանազատվեցին ուղղադավան ու հետերոդոքս ուղղությունները, որոնք անհաշտ պայքար սկսեցին քրիստոնեության դիսցիպլինար, կանոնական և, հատկապես, դոգմատիկական հարցերի շուրջ: Դոգմատիկայի շուրջ ծավալված պայքարի շրջանակներում ուրույն տեղ գրավեցին քրիստոսաբանական վիճաբանությունները, որոնք էլ, ի վերջո, հանգեցրին Ընդհանրական Եկեղեցու պատմական: Քրիստոսաբանական վիճաբանությունների սկզբնավորումն ու պատմական ընթացքն օրգանապես կապված են III-IV դարերի ներեկեղեցական կյանքում տեղ գտած տարամիտությունների հետ ու հանդիսանում են դրանց օրինաչափ արդյունքը:

Եկեղեցու պատմությանը նվիրված մատենագրական երկերի, ինչպես նաև առաջին դարերի տարաբնույթ այլ աշխատությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ դոգմատիկական բնույթի վիճաբանությունները ներեկեղեցական կյանքին բնորոշ են եղել հետառաքելական շրջանից սկսած: Այդ վիճաբանություններն ունեցել են ինչպես հոգևոր, այնպես էլ տեսական ու մշակութային պատճառներ և մեկ անգամ չէ, որ ծանր կացության առջև են կանգնեցրել ուղղադավանությանը և ծնունդ տվել տարաբնույթ հերետիկոսությունների:

Ուղղադավան Եկեղեցու և հերետիկոսությունների միջև տարաձայնությունները գերազանցապես ծավալվել են դոգմատիկական բանաձևումների, մասնավորապես Ս. Երրորդության էության, Ս. Երրորդության անձերի փոխհարաբերության, ինքնաբացահայտման ու գործառնության և դրանց հետ կապված բազմաթիվ այլ բանաձևումների շուրջ: Եկեղեցուն ընդդիմադիր այդ տեսությունները հակադիր էին ուղղադավանությանը և մերժում էին Ս. Երրորդության դավանանքը, Քրիստոսի անձնավորումը, փրկագործության, քավության և հավատքային բազմաթիվ այլ սկզբունքներ: II դարում և III դարի առաջին կեսին հետերոդոքս վարդապետությունն առավել ամբողջական ձևով հանդես եկավ գնոստիկյան տարբեր համակարգերի, դոկետիզմի, հայրաչարչարության, ադոպտացիոնիզմի, ալոգների և այլ հերետիկոսությունների ձևով: Միանգամայն նոր իրավիճակ ձևավորվեց III դարի երկրորդ կեսին, երբ ներեկեղեցական վիճաբանություններ ծավալվեց միապետական հետերոդոքսիայի և ուղղադավանության միջև:

Միապետական հերետիկոսության գործառնության առաջին իսկ պահերից սկսած՝ ներեկեղեցական վիճաբանություններն ընթացան «Theantropos» («Աստվածամարդ») տերմինի շուրջ, որը գերազանցապես ընթացավ երրորդաբանության շրջանակներում:

«Theantropos» տերմինի ըմբռնման և մեկնության պատմությունն անցել է զարգաց-

ման երկու փուլ՝ աստվածաբանական և քրիստոսաբանական (թեև սկզբնական շրջանում աստվածաբանական ու քրիստոսաբանական փուլերը հստակորեն ձևակերպել հնարավոր չէր)<sup>1</sup>:

<sup>1</sup> Հիշատակված հետերոդոքսիաների կրոնագիտական-եկեղեցաբանական վերլուծությունը դուրս է այս հետազոտության շրջանակներից: Նշենք միայն, որ դրանցից մի քանիսն ուղղակի հարաբերակցվել են աստվածաբանական-քրիստոսաբանական վիճաբանությունների այս կամ այն տեսանկյան հետ: Այսպես, II-III դդ. «Theantropos» տերմինի աստվածաբանական վիճաբանությունների շրջանակներում հստակորեն ընդգծված հերետիկոսություններից են ադոպտացիոնիզմը (լատ.՝ adoptare – ընդունել, որդեգրել), որի հետևորդները, մերժելով Ս. Երրորդության անձերի համագոյությունը, պնդում էին, թե իբր Հայր Աստված և Որդի Աստված գտնվում են այնպիսի հարաբերության մեջ, ինչպես «առաջնային հայրը» և «երկրորդային որդին», քանի որ Հիսուս Քրիստոս լոկ Հայր Աստծո որդեգիրն է: Տե՛ս **James Hastings**, *Encyclopedia of Religion and Ethics*, V. I, New York, 1964, p. 103-105.

Գնոստիկները (հուն.՝ γνῶσις - գիտելիք) ռացիոնալ մտածողությամբ առաջնորդվող տեսական մտքի ներկայացուցիչներ էին, որոնք փորձում էին քրիստոնեական դոգմաներն ու ճշմարտությունները հասկանալ փիլիսոփայական կատեգորիաների տեսանկյունից: Այդ մասին տե՛ս **Гусев Д.**, *Ересь антитринитариев третьего века*, Казань, 1872, с. 29-30; **Ганс Йонас**, *Гностицизм*, СПб, 1998, **Поснов М. Э.**, *Гностицизм II века и победа Христианской Церкви над ним*, Киев, 1917 և այլն:

Դոկտելիզմի ջատագովները Հիսուս Քրիստոսին համարում էին միայն «հոգի», իսկ նրա երկրային գոյությունը՝ երևութական: Երևութական էին համարվում նաև նրա չարչարանքները և մահը: Դոկետները մերժում էին նաև Քրիստոսի անձնավորումը, քավությունը, Հարությունը և այլն:

Հայրաչարչարության (լատ.՝ particeps – մասնակից, հաղորդակից) հետևորդները նույնպես մերժում էին Հիսուս Քրիստոսի իրական անձնավորումը և նրան համարում Հայր Աստծու մի «մոդուլը»՝ դրսևորման ձևը: Հերետիկոսության հիմնական սկզբունքները ձևավորվել են դոգմատիկական վիճաբանությունների ընթացքում: Տե՛ս **Христианство**, Т. 1, М., 1993, с. 483-484; **James Hastings**, *Encyclopedia of Religion and Ethics*, V. VIII, p. 779-781.

Ալոզները (հուն.՝ ἄλοος – լոզու մերժողներ կամ չընդունողներ) մերժում էին Լոզոսի աստվածությունը, Աստված-Բանի մասին եկեղեցական ուսմունքը, Պարակլետ-Մխիթարիչի մասին Հովհաննես առաքյալի ուսմունքը, Սուրբ Հոգու շնորհը, ինչպես նաև Հովհաննեսի Ավետարանը: Նրանք Քրիստոսին համարում էին «երկրորդ Աստված» և պնդում, որ միայն Ս. Հոգու էջքից հետո նա «որդեգրվեց Հայր Աստծու կողմից»:

Եթե Հիսուս Քրիստոսի մասին մյուս առաքյալների ուսմունքն ալոզները կարողանում էին հարմարեցնել իրենց հայացքներին և մեկնաբանել հոգուտ սեփական ուսմունքի, ապա նրանք մերժում էին նույնը կատարել Հովհաննես Ավետարանի գրվածքների նկատմամբ, քանի որ Հիսուս Քրիստոսի հավիտենական աստվածության մասին նրա գրվածքները կատարյալ էին: Հասկանալով դա, ալոզները, առանց երկար քննարկումների, մերժեցին նրա գրվածքները՝ իբրև ոչ կանոնական: Այդ ամենով հանդերձ ալոզները հանգեցին այլ ծայրահեղության և զգալի հարված հասցրեցին Լոզոսի աստվածաբանական ուսմունքին: Նրանք մերժեցին նաև Հովհաննեսի Հայտնությունն այն հիման վրա, թե, իբր, Լոզոսի տեսությունն անհայտ է եղել նաև առաքյալներին: Դրանով ալոզները մերժեցին նաև Աստվածորդու հավիտենական կեցությունը և հանգեցին այն եզրակացությանը, թե Ավետարաններում խոսվում է լոկ այն մասին, որ Հորդանանի ջրերում Ս. Հոգու էջքից հետո միայն Հիսուսը հոչակվեց «սիրեցյալ որդի», հետևաբար և «երկրորդ Աստված»: Եպիփանեսի տրակտատում միանգամայն պարզ կերպով ցույց է տրվում նաև, որ ալոզների ուսմունքն էության միապետական էր, այսինքն՝ նրանք ևս մերժում էին Որդու Աստվածությունը և չէին ընդունում նաև Սուրբ Հոգուն: Այդ ամենն էլ հիմք են տալիս վատահորեն պնդել, որ II դ. վերջերին Աստված-Բանի մասին եկեղեցական ուսմունքի ամենամուլի հակառակորդները հանդիսանում էին ալոզները:

Եկեղեցագիտության և աստվածաբանության բազմաթիվ ներկայացուցիչներ ենթադրում են նաև, որ ալոզները հանդիսանում էին Ս. Երրորդության և, հատկապես, Հիսուս Քրիստոսի, որպես Բան-Աստծո եկեղեցական ուսմունքի դեմ II դարավերջում պայքար ծավալած հերետիկոսական հոսանքի մի ճյուղը

Աստվածաբանական փուլում (III դար – IV դ. I կես) հիմնականում քննարկվել և մշակվել են հավատքային այն հարցերն ու բանաձևումները, որոնք վերաբերվում են Ս. Երրորդության անձերից մեկի՝ Հիսուս Քրիստոսի աստվածային էության հետ կապված սկզբունքներին: Դոգմատիկայի ձևավորման տեսակետից այս փուլը նշանավորվեց մի շարք նոր հերետիկոսությունների ձևավորմամբ, որոնց դեմ մղված պայքարում էլ բյուրեղացավ ուղղադավան աստվածաբանությունը: Ժամանակագրական հաջորդականությամբ այդ հետերոդոքսիաներից առավել ազդեցիկ դեր են կատարել միապետականությունը, Լոգոսի մինչնիկեական ըմբռումները և, վերջապես, արիոսականությունը:

Սակայն, միայն հակամոնոսանական պոզիցիաները չէին, որոնք Հիսուս Քրիստոսին դիտարկում էին իբրև «երկրորդ Աստծու» կեցություն, որը, իբրև, հակասում էր «Աստվածային միակության» քրիստոնեական վարդապետությանը: II դարավերջին և III դարասկզբին եկեղեցու շրջանակներում հրապարակ իջավ հետերոդոքս մի այլ շարժում, որը պատմությանը հայտնի է միապետականություն<sup>2</sup> անվամբ:

միայն: Պնդում են նաև, որ այդ հոսանքը կազմված էր պոզիցիոնի և էփոնիստական ուղղության առաջին միապետականներից, որոնք միանման էին վերաբերվում թե՛ Ս. Գրքին և թե՛ Ս. Երրորդության վերաբերյալ եկեղեցական ուսմունքին:

Վրոցների մասին տեղեկությունները բավականին աղքատիկ են, իսկ աղբյուրներն ու գիտական հետազոտությունները հայտնում են միևնույն տեղեկությունները: Տե՛ս **Սարգսյան Գ.**, II դարավերջի հակաերոդոքսական հերձվածների հոգևոր հիմքերը՝ պոզիցիոն, «Հայ Աստվածաբան» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2007, էջ 123-130: **Бологов В. В.**, Лекции по истории древней Церкви, Т. 2, М., 1995, с. 305-306; **Гусев Д.**, Ересь антиринитариив третьего века, с. 82-87; **Поснов М. Э.**, История христианской церкви (до разделения Церквей – 1054 г.), Брюссель, 1964, с. 148-149; **Philip Schaff**, History of the Christian Church, V. 2, Massachusetts, 1996, p. 572-573; **Wand J. W. C.**, A History of the Early Church, Great Britain, 1963, p. 59; **Abbe Duchesne**, The Early History of the Church. London, 1950. V. 1, p. 102, 220, 243; **Frend W. H. C.**, The Early Church, London 1991, p. 73, **Hanson R. P. C.** Tradition in the Early Church, London, 1962, p. 195, **Swete H. B.**, The Holy spirit in the Ancient Church, London, 1917, p. 74; **Tixeront J.**, Historie des Dogmes, T. I, Paris, 1909, p. 216-217 և այլն:

<sup>2</sup> Միապետականները պատմությանը հայտնի են նաև «հակաերոդոքսականներ» (անտիտրինիտարներ) անվամբ: Պահպանված վավերագրերը և սկզբնաղբյուրները ցույց են տալիս, որ «միապետական» տերմինը բավականին հին է: Ընտրելով այդ անունը՝ հերետիկոսությունը ձգտում էր մատնանշել իր հավատարմությունը «միակ Աստծո» դավանանքին, քանի որ նախկինում «միապետականություն» տերմինով ցույց էր տրվում քրիստոնեության հակադրությունը բազմաստվածությանը: Ընդհանրական եկեղեցու պատմության մեջ միապետական հերձվածի ունեցած բացասական դերի վկայությունը Տերտուլիանոսի հայտնի արժեքավորումն է՝ նրանց «չարամիտ ու դատարկամիտ միապետականներ» կոչելը, քանի որ նրանց խորհրդանիշն էր՝ «մենք հետևում ենք «միակ Աստծո» ուսմունքին»:

Ընդհանրապես, III դ. միապետական հերձվածի ծագման հիմնահարցը հանդիսանում է եկեղեցական-աստվածաբանական մտքի ամենակնճռոտ խնդիրներից մեկը, և պատահական չէ, որ որոշ գիտնականներ աշխատում են խուսափել դրա պարզաբանումից: Եվ, չնայած դրան, հատկանշական է մեկ փաստ: Թե՛ արևելյան և թե՛ արևմտյան եկեղեցագիտության ու աստվածաբանական մտքի շրջանակներում հանրաճանաչ է դառնում, որ միապետական հերձվածը հանդես էր գալիս իբրև Ս. Երրորդության եկեղեցական ուսմունքի հակոտնյա: Դա պատճառաբանվում էր նրանով, որ, իբրև, առաջին հերթին, «μοναρχία»-ն այնպիսի ուսմունք է, որն ուղղակի ընդդիմադիր էր հեթանոսությանը, իսկ «οιχονομα»-ն՝ ուսմունք, որը պահպանվում էր միայն եկեղեցու ներսում: Երկրորդ, «μοναρχία»-յի մասին ուսմունքն ուսմունք է միակ Աստծո մասին և այն էլ այնքան լուսավոր, որ նրա մասին մտահոգված են և լավագույն հեթանոսները:

Մյուս կողմից ցույց է տրվում, որ միապետական հետերոդոքսիան հրապարակ է իջել իբրև Հայր և Որդի

Հայտնի է, որ III դ. եկեղեցական-աստվածաբանական գրականության մեջ միակ Աստծո գաղափարը լրացվեց Աստված-Լոգոսի՝ Հիսուս Քրիստոսի մասին ուսմունքով: Բայց հրապարակ իջած այդ վարդապետությունը դեռևս ամբողջական ու կատարյալ չէր, այդ իսկ պատճառով էլ որոշ նվիրապետներ գտնում էին, որ հավատացյալներին այդ ուսմունքին պետք է ծանոթացնել միայն այն ժամանակ, երբ նրանք արդեն բավականաչափ հաստատուն կանգնած կլինեին քրիստոնեական Ս. Երրորդության գլխավոր անձի ուղղադավան հավատքի դիրքերում և անառարկելիորեն կրնալուներին, որ քրիստոնեական Աստվածը միակն է, իսկ հեթանոսական «աստվածները» գոյություն ունենալ չեն կարող:

Նման մոտեցումը հետապնդում էր մի այլ նպատակ ևս՝ նորադարձ հավատացյալներին աստիճանաբար հաղորդակից դարձնել նոր հավատքի խորհուրդներին և վարդապետական հասկացություններին: Բայց քանի որ աստվածաբանական այդ թյուր եզրահանգման կողմնակիցները բավականին աղավաղված էին ընկալում Ս. Երրորդության ուղղադավան ուսմունքը, իրենց հայացքները հիմնավորելու նպատակով ընթացան երկու ճանապարհով. ա) նախ «ջնջեցին» Քրիստոսի նկատմամբ ձևավորված աստվածաբանությունը՝ ասելով, որ Քրիստոսը մարդ է և եթե մարդ է, ապա նրա մասին աստվածաբանելու ոչ մի անհրաժեշտություն չկա, ուստի մնում է միապետությունը, բ) մյուսները դժվարությունը հաղթահարելու ելքը տեսնում էին «Հորը և Որդուն նույնացնելու մեջ և այդ պարագայում ևս անիմաստ էր դառնում Հոր և Որդու մասին աստվածաբանելը և, այդպիսով, կրկին մնում էր միապետություն»<sup>3</sup>:

Սակայն այդ ձգտումները հանգեցնում էին նաև հակադիր արդյունքի: Դա ևս ուներ իր օբյեկտիվ պատճառները: Դեռևս ամբողջական տեսք չէր ստացել քրիստոնեության աստվածաբանական համակարգը: Հավատացյալ զանգվածների և, հատկապես, նորադարձների համար անհասանելի էր Ս. Երրորդության խորհուրդը: Եվ ամեննին էլ պատահական չէր, որ սկզբից եթե «խիստ միաստվածության» ոգով դաստիարակված նո-

Աստվածների սուբորդինացիոն (որի համաձայն Հիսուս Քրիստոսը թեև Հայր Աստծո նկատմամբ «ինքնուրույն Աստվածային էություն է», այնուամենայնիվ, ստորադաս է նրա նկատմամբ) վարդապետության ձևախեղում: Այդ ամենով հանդերձ միապետականության ծագումը դիտարկվում է իբրև II դարավերջի և III դարասկզբի հետերոդոքս աստվածաբանության հետևություն:

Միապետական հերետիկոսության մասին մանրամասները տե՛ս **Տէր-Մինասեանց Ե.**, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա (Հին եկեղեցին), Ս. Էջմիածին, 1909, էջ 154-160, **Սարգսյան Գ.**, Միապետական հերձվածի քննական արժեքավորման հարցի շուրջ, «Աճեմյան մատենաշար», Ա, Երևան, 2002, էջ 322-338, **Спасский А.**, История догматических движений в эпоху Вселенских Соборов // Тринитарный Вопрос. Сергиев Посад, 1914, с. 30-31, 79-82, 162-165; **Бологов В. В.**, Лекции по истории древней Церкви, Т. 2, с. 306-307; **Гусев Д.**, Ересь антитринитариев третьего века, с. 7-12, 79-81, 168-175; **Христианство** (энцикл. словарь), Т. 2, с. 145-146; **James Hastings**, Encyclopedia of Religion and Ethics, V. VII. p. 779; **Abbe Duchesne.**, The Early History of the Church, V. 1, p. 225, 397; **Hans Lietzmann**, The Founding of the Church Universal, V. 2. London, 1953, p. 190; *ibid.* A History of the early Church, V. 1, Cambridge, 1993, p. 458; **Williston Walker**, A History of the Christian church, New York, 1985, p. 81, 84-86, 119, 133-140; **Philip Schaff**, History of the Christian Church. V. 2, p. 571; **James Hastings**, Encyclopedia of Religion and Ethics, V. VIII, p. 779-781; **Tixeront J.**, Historie des Dogmes, T. I, p. 309-310 և այլն:

<sup>3</sup> **Бологов В. В.**, Лекции по истории древней Церкви, Т. 2, с. 307; Տե՛ս նաև **Христианство** (энцикл. словарь), Т. 2, с. 146; **Տէր-Մինասեանց Ե.**, Ընդհանուր եկեղեցական պատմութիւն, հ. Ա (Հին եկեղեցին), էջ 154-155 և այլն:

բաղարձների ճնշող մեծամասնության համար միանգամայն անընդունելի էր Աստված-Լոգոսի մասին եկեղեցական ուսմունքը: Մեծ թիվ էին կազմում նաև նրանք, ովքեր Աստված-Լոգոսի ուսմունքը հակադիր էին համարում միաստվածության վարդապետությանը և նույնացնում էին հեթանոսական բազմաստվածության հետ: Եվ ամեննին էլ պատահական չէր, որ հենց այդ հավատացյալների մեջ էլ ընդդիմություն ծագեց Ս. Երրորդության վարդապետության նկատմամբ:

«Միապետական» հետերոդոքսիայի մասին պահպանված տեղեկությունները թույլ են տալիս պնդել, որ նրա հիմքում ընկած են քրիստոնեական ուղղադավանությանը հակադիր աստվածաբանական - տեսական կանխադրյալներ: Դրանցից առաջինը միաստվածության հրեական (հակաքրիստոնեական) ըմբռնումն է, իսկ մյուսը՝ այդ «առաջինալ միաստվածության» փիլիսոփայական-տրամաբանական հիմնավորումը: Մեթոդաբանական այդ մեկնակետերի հակաքրիստոնեական ուղղվածությունն ի հայտ եկավ անմիջապես, երբ միապետականներն անդրադարձան «Theantropos»-ի ըմբռնման և մեկնության հարցերին:

Ռացիոնալ («թվաբանական») միաստվածության» ելակետային կանխադրյալի դիրքերից միապետականները փորձեցին «ուղղադավան» մեկնության ենթարկել քրիստոսաբանական հարցերը և քրիստոնեությունից «դուրս մղել բազմաստվածության տարրերը», ինչպիսին նրանք համարում էին երրորդաբանական լուծումները: Բոլոր միապետականների համար փորձաքար հանդիսացավ Հիսուս Քրիստոսի անձնավորման հավատքային ըմբռնումը: «Խոչընդոտները» հաղթահարելու նպատակով միապետականները ընտրեցին միանգամայն պարզունակ տրամաբանական ճանապարհ՝ հրաժարվեցին անձնավորման դոգմայից և իրենց տեսակետը հիմնավորելու համար ընտրեցին երկու ճանապարհ, ըստ որի բաժանվեցին երկու ուղղության.

1) Հիսուս Քրիստոսին համարեցին «կատարյալ բարոյական մարդ» և այդ հիման վրա մերժեցին Ս. Երրորդությունն ու հանգեցին «Միակ Աստծու» («dinamis») գաղափարին (դինամիստ միապետականներ),

2) փորձեցին հիմնավորել, թե իբր Հայրն ու Որդին նույնն են, որ «Որդին այլ բան չէ, քան Հոր «modus»-ը, և եզրակացրին, որ մնում է միայն «Մեկ Աստված», այսինքն՝ միապետականություն (մոդալիստ միապետականներ):

Միապետական հերձվածի ծագման վերաբերյալ այս տեսակետի իրավացիությունը փաստարկելու համար գերմանացի գիտնականներ Նեանդերը, Բաուրը և ուրիշներ բերում են Տերտուլիանոսի և Որոգինեսի վկայությունները: Տերտուլիանոսը «Ընդդեմ Պրակսեոսի» գրքում գրում է. «Հավատացյալների մեծ մասը կազմող հասարակ, սգետ և անուսում մարդիկ, դաստիարակված լինելով միաստվածային հավատքով՝ պաշտում էին միայն մեկ ճշմարիտ Աստծու և, բնականաբար, կաշկանդվում են երրորդություն բառի հանդեպ և մեզ մեղադրում երկաստվածության, եռաստվածության մեջ և միայն իրենց են համարում միակ ճշմարիտ Աստծո դավանողներ: Նրանք կարծում են, որ Հիսուս Քրիստոսի՝ իբրև Աստված-Լոգոսի մասին ուսմունքը պարտավորեցնում է իրենց հավատալ երկու Աստվածների»<sup>4</sup>: Գրեթե նույն հետևությանն է հանգում նաև Որոգինե-

<sup>4</sup> Մեջբերումն ըստ **Гусев Д.**, Ересь антитринитариев третьего века, с. 8-9.

սը՝ Հովհաննու Ավետարանի իր մեկնություններում<sup>5</sup>: Բացահայտելով միապետականության պատճառները՝ թե՛ անցյալի ուղղադավան հայրերը և թե՛ նոր ու նորագույն շրջանի եկեղեցագետներն ու աստվածաբանները նրանում առանձնացնում են երկու ուղղություններ՝ դինամիստական-էբիոնիտական և մոդալիստական-պատրիպասիանական (հայրաչարչարություն): Հիմնավորված է համարվում նաև, որ չնայած զգալի տարբերություններին, դրանք երկուսն էլ համաձայնում են նրանում, որ Հիսուս Քրիստոսն ինքնուրույն և Հայր Աստծուն համագո էություն չէ, այլ կերպ ասած՝ Լոգոսը «վիարժեք» Աստված չէ: Առաջին ուղղությունը հանձին Հիսուս Քրիստոսի տեսնում էր միայն կատարյալ մարդու և լիովին անտեսում էր նրա աստվածային բնությունը: Իսկ երկրորդ ուղղությունը, հակառակը, Հիսուս Քրիստոսի մեջ տեսնում էր միայն Հայր Աստծու մի դրսևորումը՝ մոդուսը, որով էլ ուղղակի մերժում էր Աստված-Լոգոսի մարդկային էությունը<sup>6</sup>:

Միապետական հետերոդոքսիայի պատմա-ծագումնաբանական հարցերով զբաղվող աստվածաբան-գիտնականները եզրակացնում են, որ միապետական հերձվածի ծագումը իրականացել է Ս. Երրորդության քրիստոնեական դոգմայի թյուր ըմբռնումների հիման վրա: Մասնավորապես Աստված-Լոգոսի, իբրև Հայր Աստծուն ենթակա էություն հետերոդոքս ըմբռնման հիման վրա: Այդ կապակցությամբ հարկ ենք համարում անդրադառնալ գերմանական աստվածաբանների կողմից առաջադրված տեսակետներից մեկին, որը, մեր համոզմամբ, միանգամայն անընդունելի է:

Բանն այն է, որ III դ. միապետականներին համարելով եկեղեցու երրորդաբանական ուսմունքի դեմ ռեակցիա, աստվածաբան Նեանդերը միանգամայն անհասկանալի կերպով պնդում է, որ այդ բանին մեծապես նպաստել է սուբորդինատիզմի սկզբունքը<sup>7</sup>: Այդ տեսակետն ունի մի շարք արատներ, որոնք քննադատության չեն դիմանում: Հիմնական բացթողումներից է այն, որ խախտվում է ժամանակագրությունը: Սուբորդինատիզմի

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 9:

<sup>6</sup> Էբիոնիտական միապետականությունը հետապնդում էր մեկ ընդհանուր նպատակ՝ հրեական ըմբռնման միաստվածության դավանումը: Էբիոնիտների կարծիքով անձնավորված Աստված-Լոգոսի եկեղեցական-աստվածաբանական վարդապետությունը հանիրավի կերպով անտեսում է այն բնական անդունդը, որը գոյություն ունի Աստծո և մարդու միջև: Աստված-Լոգոսի հանդեպ հավատը պահպանելու համար միապետականների այս տարատեսակը բավարար է համարել Քրիստոսին կատարյալ մարդ, որը միակ Աստծո կողմից օժտված է «աստվածային առանձնահատուկ շնորհով», որով էլ՝ «վեր է կանգնած բոլոր մարգարեներից» ըմբռնումը:

Պատրիպասիանական ուղղությունը դատում էր միանգամայն այլ կերպ: Հիսուս Քրիստոսի՝ Հայր Աստծուն ենթակա լինելու վարդապետությունը նրանք համարում էին «նվաստացուցիչ և վիրավորական քրիստոնեության աստվածային հիմնադրի համար»: Այդ իսկ պատճառով էլ կողմնակիցները Աստված Լոգոսին ուղղակի հավասարեցնում, ավելի ճիշտ՝ նույնացնում էին Հայր Աստծո հետ:

Միապետական հերձվածի ուղղությունների դասակարգման մասին մանրամասնությունները տե՛ս **Бологов В. В.**, Лекции по истории древней Церкви, Т. 2, с. 307-308; **Гусев Д.**, Ересь антитринитариев третьего века, с. 168-175; **Поснов М. Э.**, История христианской церкви (до разделения Церквей – 1054 г.), с. 149; **Христианство** (энцикл. словарь), Т. 2, с. 146. Աստվածաբան եկեղեցագետ Ժ. Տիրսերնը միապետական հերձվածի ուղղություններին տալիս է որդեգրական (ադոպտացիոնիստական) և հայրաչարչարական (պատրիպասիանական) անունը: Տե՛ս **Tixeront J.**, Histoire des Dogmes, T. I, p. 309-310

<sup>7</sup> Մանրամասները տե՛ս **Гусев Д.**, Ересь антитринитариев третьего века, с. 7-11.

սկզբունքին Որոգիները ավարտուն տեսք է տվել III դ. առաջին քառորդում, երբ միապետականությունը վաղուց արդեն գործում էր հոգևոր հրապարակում: Անընդունելի ենք համարում նաև աստվածաբան Բաուրի՝ ոչնչով չհիմնավորված այն տեսակետը, թե իբր միապետականությունը ոչ թե հերետիկոսություն է, այլ վաղ ջատագովների մի յուրահատուկ «կուսակցություն»<sup>8</sup>: Այդ երկու ծայրահեղությունների միջև միջին դիրքորոշում է մշակում աստվածաբան Դյորները, որը դինամիստ միապետականության ծագման հարցում կրկնում է Նեանդերին, իսկ մոդալիստների ծագման հարցում՝ Բաուրին<sup>9</sup>:

Ի տարբերություն նման անհետևողական մոտեցումների, ժամանակակից աստվածաբանության և եկեղեցագիտության մեջ հանրաճանաչ է համարվում, որ միապետական հերետիկոսությունը հրեա-քրիստոնեական միաստվածային ըմբռնման բացարձակ հակադեցությունն է քրիստոնեական երրորդաբանական վարդապետության նկատմամբ: Քրիստոնեական աստվածաբանության նկատմամբ միապետական հետերոդոքսիայի արատավոր պատճառներից հաջորդը մեթոդի սխալ ընտրությունն էր, որի պատճառով եկեղեցու վարդապետած «աստվածային երեք անձերի» մասին ումունքը նույնացվում էր «երեք աստվածների» մասին միանգամայն անհեթեթ ուսմունքի հետ, իսկ տեսակետն անընդունելի է ինչպես եկեղեցական տեսության, այնպես էլ՝ պրակտիկայի դիրքերից:

Ցավոք, վավերագրերի սակավության հետևանքով անպատասխան են մնում միապետականության ծագումնաբանությունը լուսաբանող բազմաթիվ հարցեր: Խնդրո առարկա հարցի համակողմանի լուծմանը լիովին չեն նպաստում նաև Տերտուլիանոսի, Որոգիների և Նովատիանոսի հակաճառական տրակտատները, որոնց ընդհանրացման հիման վրա հնարավոր չէ կառուցել ավարտուն տեսություն: Նույնը կարելի է պնդել նաև ավելի ուշ շրջանի մատենագրական և վերլուծական աշխատությունների նկատմամբ, որոնք միապետականության քննադատությանն անդրադառնում են միայն ֆունկցիոնալ առումով և աչքաթող են անում այնպիսի կարևորագույն հարց, ինչպիսին է հետերոդոքսիայի ծագման պատճառների վերլուծությունը, ցույց չեն տրվում քրիստոնեության առաջին դարերի հերետիկոսական այլ ուսմունքների, ինչպես նաև ժամանակաշրջանի տարբեր կրոնափիլիսոփայական շարժումների և հոսանքների հետ նրա ունեցած կապերն ու աղերսները:

Մինչդեռ միապետական հերձվածը բոլորովին էլ եզակի ու մեկուսացված երևույթ չէր ոչ միայն վաղ, այլև IV դ. քրիստոնեության համակարգում և մեծ ազդեցություն է ունեցել մի շարք վտանգավոր հերետիկոսությունների՝ արիոսականության<sup>10</sup>, անումեականության<sup>11</sup> և փոտականության<sup>12</sup> ձևավորման գործում: Այդ իսկ պատճառով էլ հերձ-

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 11-12:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 12:

<sup>10</sup> Մանրամասները տե՛ս **Encyclopedia Britanica**, V. 17. England, 1962, p. 359-360; **James Hastings**, *Encyclopedia of Religion and Ethics*, V. I, p. 770-786; **J. F. Bethune-Baker**, *An introduction to the early history of Christian doctrine*, Great Britain, 1929, p. 155-170; **J. N. D. Kelly**, *Early Christian doctrines*, third edition, London, 1965, p. 223-258; **Abbe Duchesne**, *The Early History of the Church from its foundation to the end of the 5th century*, V. 2, p. 98-124, **Swete H. B.**, *The Holy spirit in the Ancient Church*, p. 163-191.

<sup>11</sup> Մանրամասները տե՛ս **James Hastings**, *Encyclopedia of Religion and Ethics*, V. II, p. 6, **Philip Schaff**,



վածի մասին ճիշտ և ամբողջական պատկերացում կարելի է կազմել միայն այն դեպքում, երբ այն ուսումնասիրվի I-II դդ. հետերոդոքս կրոնափիլիսոփայական այլ շարժումների հետ ունեցած փոխադարձ կապի մեջ: Վերլուծական նման մոտեցման դեպքում միայն հնարավոր կլինի ճիշտ հասկանալ միապետականության պատմական բնույթը, վարդապետության առանձնահատկություններն ու ազդեցությունը: Խիստ կարևորվում է նաև միապետական հերձվածի և հեթանոսական փիլիսոփայության ազդեցությամբ Փիլոն Ալեքսանդրացու կողմից մշակված միսոիկական-ռացիոնալիստական Լոգոսի տեսության միջև առկա կապերի բացահայտումը<sup>13</sup>:

Մեր համոզմամբ միապետական հերձվածի գլխավոր նպատակը միաստվածության կրոնական հավատալիքների և ավանդույթների հետ աշխարհակառույցի փիլիսոփայական ըմբռնումների հաշտեցումն էր: Այդ նպատակով հետերոդոքսիայի վարդապետները ելակետ ընդունեցին այլաբանական ու սինվոլիկ մեթոդը, փորձ կատարեցին քրիստոնեական սուրբգրական հավատամքն ու ծեսերը մեկնաբանել հեթանոսական տեսական մտքի ու առասպելաբանության դիրքերից: Այդ իսկ պատճառով էլ միապետականության համակարգում սինթեզվեցին արևելյան դուալիզմը, հրեական ըմբռնման «քանակական» միաստվածությունը և աղավաղված քրիստոնեական աշխարհընկալումը, որոնք «հարստացվեցին» տեսական-փիլիսոփայական (այլաբանականության, ստոիկների, Արիստոտելի ու պլատոնականության) եզրահանգումներով<sup>14</sup>:

Բայց պետք է նշել, որ այդ յուրահատուկ սինթեզը չհանգեցրեց էկլեկտիզմի: Միապետական տեսաբանների ջանքերով հետերոդոքսիայի սկզբունքները մաքրվեցին զանազան «արատներից», մասնավորապես գնոստիկյան ազդեցությունից: Փորձ կատարվեց նաև առավելագույնս պահպանել քրիստոնեական աշխարհընկալման և վարդապետական տեսության հետ ունեցած արտաքին նմանությունները: Եվ ամենևին էլ պատահական չէր, որ հետերոդոքսիայի վարդապետները սեփական մտահայեցողական կառույցներում ներառան նաև Ս. Երրորդության և Աստված-Լոգոսի մասին ուղղադավան ուսմունքը հիշեցնող հավատքային սկզբունքները: Պահպանված վավերագրերի վերլուծությունը թույլ է տալիս ամենայն վստահությամբ պնդելու, որ հենց այդ խառնաշփոթն ու արհեստականությունն էլ դարձան միապետականության գլխավոր արատներից մեկը:

Այդ առումով կարելի է մատնանշել միապետական հերետիկոսության մի շարք արատներ ևս: Այդ նպատակով հետազոտողների մեծ մասն առաջին հերթին անդրադառնում է միապետականության էության վերլուծությանը՝ ելակետ ընդունելով հետերոդոքսիայի տեսաբանների մեկնությունը: Այդ պարագայում ակնհայտ է դառնում, որ միապետականության ջատագովները փորձում էին ցույց տալ, թե միայն իրենք են հե-

History of the Christian Church, V. 3, p. 618-620; **J. F. Bethune-Baker**, An introduction to the early history of Christian doctrine, p. 178-181, **J. N. D. Kelly**, Early Christian doctrines, third edition, p. 247-251, **Abbe Duchesne**, The Early History of the Church from its foundation to the end of the 5th century, V. 2, p. 228, 234, **Swete H. B.**, The Holy spirit in the Ancient Church, p. 181-184.

<sup>12</sup> Մանրամասները տե՛ս **Encyclopedia Britannica**, V. 17. p. 780.

<sup>13</sup> Մանրամասները տե՛ս **Гуцес Д.**, Ересь антиринитариев третьего века, с. 17.

<sup>14</sup> Տե՛ս նույն տեղում:

տևողական կերպով դավանում «մեկ Աստծու»: Բայց «հետևողական միաստվածությամբ» միապետական ջատագովության սնանկությունն ի հայտ եկավ անմիջապես, երբ նրա տեսաբանները փորձ կատարեցին բանականության (փիլիսոփայության) օգնությամբ վերլուծել և արժեքավորել քրիստոնեական Երրորդության հավատամքը և վեր հանել Ս. Երրորդության անձերի փոխհարաբերությունը: Դա միանգամայն օրինաչափ էր, քանի որ Երրորդության և անձնավորման մասին եկեղեցական ուսմունքը ուղղակի հակադրության մեջ էր գտնվում միապետականության հետ:

Այդ պարագայում ամբողջական աստվածաբանական տեսություն ստեղծելու համար միապետական վարդապետները հարկադրված էին հրաժարվել կա՛մ «միապետականություն» կա՛մ էլ՝ «անձնավորում» տերմիններից: Այդ երկընտրանքը ևս չափազանց պարզունակ լուծում գտավ: Միապետական համակարգի տեսաբաններն, օժտված լինելով աստվածաբանական անհրաժեշտ պատրաստվածությամբ և ինտելեկտուալ կարողություններով, այդ որակները ծառայեցրեցին այլ նպատակի և ընտրեցին կարճ և պարզունակ ճանապարհ՝ պարզապես հրաժարվեցին անձնավորման հավատամքից: Այդ մոտեցումը նրանք բացատրեցին նրանով, թե, իբր, միապետական ուսմունքն ուղղակի հակադրվում է հեթանոսությանը, այն դեպքում, երբ անձնավորման հավատամքը պահպանում է և «նոր որակով» շրջանառության մեջ դնում հեթանոսությանը բնորոշ բազմաստվածության տարրերը: Միապետականները պնդում էին նաև, որ աստվածային միակության մասին «միապետական ուսմունք» այնքան պարզ է, որ նրա մասին ճշմարիտ հետևությունների կարող են հանգել նաև հեթանոսները: Այդ իսկ պատճառով էլ նրանք հոչակեցին սեփական կարգախոսը՝ «մենք պաշտպան ենք կանգնում միապետականությանը անկախ այն բանից, թե ով ինչ կմտածի նրա մասին»<sup>15</sup>:

Այդ ամենից դժվար չէ հետևեցնել, որ միապետականների համար անձնավորման աստվածաբանությունը միանգամայն անհասկանալի էր: Մյուս կողմից, «անձնավորում» հասկացության վերլուծության ընթացքում միապետականները հանդիպեցին նոր դժվարությունների, քանի որ, կամա թե ակամա, հարկադրված էին առնչվել աստվածաբանական այնպիսի հասկացությունների, ինչպիսիք էին «Աստված» և «Տեր», «Հայր» և «Որդի»: «Հայր» կեցության հետ անխուսափելիորեն ենթադրվում էր «Որդի» կեցությունը, այլ կերպ ասած՝ այնտեղ որտեղ չկա Որդի, չի կարող լինել նաև Հայր: Բայց եթե դա այդպես է, ապա պետք է համեմատական վերլուծության ենթարկվեն «անձնավորում» և «միապետականություն» տերմինները: Ինչ էլ մեծ վարպետությամբ կատարում է Տերտուլիանոսը: «Մենք հավատում ենք միապետական Աստծուն, բայց այն առարկությամբ, - հակադրվելով միապետականներին գրում է ջատագովը, - որ Հայր Աստվածն ունի Որդի»<sup>16</sup>:

Ծավալմանը զուգընթաց միապետականության շրջանակներում ձևավորվեց ինտելեկտուալ նոր հոսանք, որը փորձեց այդ հակասությունը լուծել փիլիսոփայության օգնությամբ: Նրանք «Լոգոս» տերմինը համարում էին աստվածաբանական բազմիմաստ տերմին, իբրև Որդի Աստծո վերերկրային կեցությունը վկայող տերմին: Նրանք էլ վճռա-

<sup>15</sup> Болотов В. В., Лекции по истории древней Церкви, Т. 2, с. 306.

<sup>16</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 307:

կան փորձ կատարեցին բարեփոխել միապետական տեսությունը և պահպանել այն սերունդների համար: Սակայն, միապետականների ջանքերը միասնական չէին և առաջադրված նպատակներին հասնելու համար նրանք բաժանվեցին երկու ուղղության: Դրանցից առաջինը գերապատվություն տվեց «ոչ աստվածաբանական ուղուն»: Մշակվեց միապետական ուսմունք, որը ձգտում էր հիմնավորել, թե, իբր, «Քրիստոսը մարդ է»: Այստեղից էլ նրանց եզրակացությունը, թե անհրաժեշտություն չկա Հիսուս Քրիստոսի մասին դատել աստվածաբանական առումով, քանի որ մնում է միայն «մեկ Աստված»: Երկրորդ ուղղությունը պահպանելով աստվածաբանական ավանդույթները՝ այնուհանդերձ, հանգեց այն հետևությանը, թե Հայր Աստված և Որդին նույնական են և, հետևաբար, այս պարագայում ևս ճշմարիտ է միայն մեկ Աստծու մասին միապետական պատկերացումը:

Այսպիսով, միապետականներն արտաքինապես ընդունելով միակ Աստծու վերաբերյալ քրիստոնեական հավատամքը, մերժեցին Քրիստոս-Աստծու մասին ուղղադավան ուսմունքը: Նրանց մի հոսանքը պնդում էր, թե Հիսուս Քրիստոսը ոչ Աստված է և ոչ էլ՝ Աստծո Որդի, այլ միայն կատարյալ մարդ: Իսկ երկրորդ հոսանքի կողմնակիցները պնդում էին, որ ինքը՝ Հայր Աստված հանդես է գալիս իբրև Քրիստոս, ուստի «Հայրն ու Որդին միմյանցից տարբերվում են միայն անունով» և այն դեմքով, որով նրանք ինքնաբացահայտվում են հավատացյալներին:

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ

Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

## ԼԱՍՊՍԱԿԻ ԵՎ ԹԻԱՆԻ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Վավերագրերը փաստում են, որ դոգմատիկական անհաշտ վիճաբանությունների ընթացքում, արդեն IV դարի 60-ական թվականների կեսերից սկսած հակաերրորդաբանական հոսանքների ազդեցությունն աստիճանաբար անկում էր ապրում:

Եկեղեցական պատմագրության ավանդական տեսակետը ժամանակի հոգևոր-դոգմատիկական տարաձայնությունների արմատները որոնում է ոչ թե բուն Եկեղեցում, հավակնորդ դոգմատիկական հոսանքների պայքարի ոլորտում, այլ Բյուզանդական կայսրության կրոնական քաղաքականության, մասնավորապես՝ Վաղես կայսեր օմիականներին հարելու մեջ: Մակայն փաստերի օբյեկտիվ վերլուծությունը թույլ է տալիս պնդել, որ եկեղեցական պատմության այս փուլում պետական իշխանության կրոնական քաղաքականության նկատմամբ այդ պնդումը ճշմարտությանը չի համապատասխանում: Նախ այն պատճառով, որ անհնարին է խոսել հռոմեական արևելքի և արևմուտքի միասեռ կրոնական քաղաքականության մասին, ինչը, բնականաբար, անհնարին է դարձնում ընդհանրական չափանիշներ առաջադրելը: Երկրորդ, կայսրության երկու հատվածներն էլ ներքին և արտաքին քաղաքականության ոլորտում Եկեղեցու օժանդակության կարիքն ունենալով կամա թե ակամա հակվել էին տուլերանտ քաղաքականության: Եվ, վերջապես, ինչպես քրիստոնեական արևելքում, այնպես էլ արևմուտքում հասարակական և ռազմաքաղաքական իրադարձությունների ծավալումը հրամայաբար պահանջում էր կայսրության անվտանգությանը միտված պետության և Եկեղեցու դաշինքի ամրապնդում: Իսկ այդ ամենից տրամաբանորեն հետևում է, որ IV դարի 50-ական թվականների նման 60-ականների կրոնական քաղաքականությունը ևս որոշվում էր դոգմատիկական հոսանքների պայքարի դինամիկայով և, առաջին հերթին, գերիշխող դոգմատիկական «կուսակցության» կողմնորոշումներով:

Վաղենտինիանոսի տուլերանտ քաղաքականության արդյունքում նիկեականության կողմնակիցներն ազատ գործունեություն էին ծավալել արևմուտքում: Վկայությունը Ամբրոսիոսի Միլանի (Մեդիոլան) եպիսկոպոս դառնալն էր<sup>1</sup>: Հարկադրանքներից զերծ լինելն էլ, վերլուծաբանների կարծիքով, այն բանի պատճառը դարձավ, որ քրիստոնեական արևմուտքում դեպի նիկեականություն շրջադարձը ավելի արագ իրականացավ, քանի որ «նիկեականությանն արևմուտքը դավել էր» միայն Կոստանցիոսի հարկադրանքով: Եվ արքունիքի չեզոք քաղաքականությունը հականիկեականներին զրկեց այն հենքից, որը տասնամյակներ շարունակ սնում էր նրանց<sup>2</sup>:

<sup>1</sup> Մանրամասները տե՛ս **Феодорит еписк. Кирский**, Церковная история, СПб., 1852, кн. IV, гл. 7, с. 242-244.

<sup>2</sup> Տե՛ս **Карташев А. В.**, Вселенские Соборы, СПб., 2002, с. 105. Նշված իրադարձությունների վերաբերյալ

Այլ իրավիճակ էր աստվածաբանական-դոգմատիկական մտքի խառնարան հիշեցնող քրիստոնեական արևելքում: Կրոնական տոլերանտությունն այստեղ գործնականում ոչինչ վճռել չէր կարող: Եվ ոչ միայն այն պատճառով, որ վիճաբանող կողմերը բավականին խայտաբղետ էին: Ա. Սպասկին միանգամայն հիմնավորված կերպով պնդում է, որ դա անհնարին էր նախ այն պատճառով, որ վիճաբանող դոգմատիկական հոսանքների շրջանակներում «...չկար և ոչ մեկը, որն իր թվաքանակով, ներքին կազմակերպվածությամբ և բարոյական ուժով կարողանար եկեղեցական խաղաղության համար բնական հիմք դառնալ: Յուրաքանչյուր կողմ իրեն հավասարազոր ուժի տեսքով հակակշիռ էր գտնում ի դեմս երկրորդի կամ երրորդի և, այնուամենայնիվ, ցանկացած հոսանք ձգտում էր բացառիկ գերակշռություն ստանալ մյուսների նկատմամբ»<sup>3</sup>:

IV դարի 60-ական թվականների դոգմատիկական վիճաբանությունների դինամիկական ակնհայտորեն ցույց է տալիս, որ հռոմեական արևելքը դեռևս լիովին չէր հասունացել եկեղեցական միասնություն հաստատելու համար: Թեև արդեն հստակորեն ուրվագծվել էր վայրէջքի անկասելի ուղին բռնած արիոսամետ արմատական հակաերրորդաբանության (անոմեականության) կրախը, իսկ պահպանողական երրորդաբանությունը (համանմանականներ) շարունակական տրոհումների հետևանքով աստիճանաբար անցնում էր նիկեական ուղղադավանության կամ համալրում էր հոգեմարտական հակաերրորդաբանության շարքերը, այնուհանդերձ, ինչպես նկատում է Ա. Սպասկին, «պետական վերահսկողության և ղեկավարության բացակայության պայմաններում գործերի այդպիսի ընթացքը կարող էր հանգեցնել բոլորի դեմ բոլորի անվերջանալի պայքարի, ինչը հավասարապես վտանգավոր էր ինչպես Եկեղեցու, այնպես էլ՝ պետության համար (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»<sup>4</sup>: Այդ ամենն էլ կայսրության արևելյան հատվածի ղեկավարներին օբյեկտիվորեն հարկադրում էին պետականության և Եկեղեցու փխրուն միասնությունը պահպանելու նպատակով միջամտել վիճաբանող կողմերի պայքարին: Ընդ որում, այդ քաղաքականությունը որոշվում էր ոչ թե կայսրերի կամ քաղաքական իշխանության ցանկությամբ (թեև միանգամայն սխալ կլինի բացառել այդ գործոնի դերը), այլ հենվում էր եկեղեցական հոսանքներից որևէ մեկի, որպես կանոն, ազդեցիկ մեծամասնության պաշտպանության վրա:

Քրիստոնեական արևելքում դեպի նիկեականություն նկատվող շրջադարձը դեռևս իր տրամաբանական վախճանին չէր հասել: Այս գործընթացում պատմաեկեղեցական կարևորագույն իրադարձություն թերևս պետք է համարել այն, որ հակաերրորդաբա-

այլ կարծիքի է Ա. Լեբեդևը: Նա գտնում է, որ IV դարի 60-70-ական թվականները մի շրջան է, երբ «... կրոնական խմբերում խոհեմությունը գերակայում է դաժան վիճաբանությունների նկատմամբ: Հուզումները հանդարտվում են: Նախկին թշնամիները բարեկամներ են դառնում: Բոլորի համար պարզ դարձավ, որ կրոնական վեճերը ոչ մի լավ բանի չեն հանգեցնում: Փոխադարձ անբարյացակամությունը թուլանում է», տե՛ս **Лебедев А. П.**, Вселенские Соборы IV и V вековъ, (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениями школъ александрійской и антиохійской). СПб., 1904, с. 123-124.

<sup>3</sup> Проф. **Спасский А.**, История догматическихъ движений въ эпоху Вселенскихъ Соборовъ (В связи съ философскими учениями того времени). Тринитарный вопросъ (История учения о св. Троице). Сергиев Посад, 1914, с. 452-453.

<sup>4</sup> **Նույն տեղում, էջ 453:**

նության դեմ պայքարում Ալեքսանդրիայի աթոռին սկսեց աջակցել փոքրասիական կենտրոններում ձևավորված ուղղադավան երրորդաբանների նորնիկեական հոսանքը: Վերջինս, սակայն, դեռևս հասունացման փուլում էր և կարիք ուներ այնպիսի անհողորդ առաջնորդի, ինչպիսին հին նիկեականության համար Աթանաս Ալեքսանդրացին էր: Իսկ այդ ամենը դարձել էին այն բանի պատճառը, որ IV դարի 60-ական թվականներին նիկեականությունն արևելքում դեռևս եկեղեցական մեծամասնություն չէր կազմում:

Դատելով եկեղեցական պատմագրությունից՝ արևելքում առաջնության համար դեռևս շարունակվում էր դոգմատիկական երկու ազդեցիկ հոսանքների՝ օմիականության և համանմանականների անհաշտ պայքարը: Անումեականները, որոնք եկեղեցական փոքրամասնություն էին կազմում անգամ իրենց պաշտպանների՝ Հովիանոսի և Հովիանոսի իշխանության շրջանում, Անտիոքի 643 թ. ժողովից հետո վերածվել էին ընդդիմադիր փոքրամասնության և ներեկեղեցական կյանքում որևէ ազդեցիկ դեր կատարել այլևս չէին կարող: Գրեթե նույն էր նաև համանմանականների պատմական ընթացքը: Կ. Պոլսի 361 թ. ժողովից հետո դոգմատիկական այս հոսանքը ներքնապես պատակովեց: Նրանց արմատական թնի ներկայացուցիչներն աքսորվեցին, մի մասն անցավ նիկեականության դիրքերը, իսկ որոշակի զիջումների դիմած պահպանողական հատվածը Եկեղեցում հարաբերական փոքրամասնություն կազմեց: IV դարի 60-70-ական թվականների սահմանագծում Եկեղեցուց ներս համեմատաբար ազդեցիկ էին քաղաքական վերնախավի բարեհաճությանն արժանացած օմիականները: Դա էր պատճառը, որ Վաղես կայսրը նույնպես կողմնորոշվեց դեպի օմիականություն:

Սակայն հանդես գալով եկեղեցական հարաբերական մեծամասնության որակով, դոգմատիկական այդ հոսանքին ևս վիճակված չէր ազդեցիկ գերիշխանություն հաստատել ողջ արևելքում: Երրորդաբանական վիճաբանությունների ասպարեզ իջնելով փոխհամաձայնության կողմնակիցների որակով, օմիականներն այդպես էլ չկարողացան արմատական դիրքորոշում որդեգրել, ինչպիսին էին, օրինակ, անումեականները: Այնուհանդերձ, վավերագրերը թույլ են տալիս փաստել, որ օմիականները լիովին բավարարված էին այն դիրքով, որը ձեռք էին բերել կայսերական իշխանության հովանավորությամբ: Այդ տեսանկյունից միանգամայն տրամաբանական պետք է համարել նրանց որդեգրած քաղաքականությունը բնութագրող հետևյալ տողերը. «ձևավորվելով իբրև Արևելքի խայտաբղետ կուսակցությունների փոխհամաձայնություն և իշխանության մեջ հենվելով հաստատված խաղաղությունը (եկեղեցական՝ Ա. Ք.) թանկ գնահատող մարդկանց վրա, օմիականներն, անհրաժեշտությունից ելնելով, պետք է ղեկավարեին զիջումների և կյանքի պահանջների հետ լռելյայն համաձայնությամբ, քանի որ ցանկացած այլ քաղաքականություն կարող էր խարխիլել իրենց սեփական դիրքերը»<sup>5</sup>:

Հիմնահարցի արժևորման գործում ներեկեղեցական կյանքի իրողությունների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել չափազանց կարևոր մի այլ գործոն ևս: Խոսքը վերաբերում է նրան, որ օմիականությունը երբեք եկեղեցական մեծամասնություն չի կազմել: Եկեղեցում նրա «նվաճած» դիրքերը խարխիլված էին ոչ թե դոգմատիկական

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 455:

կողմնորոշման, այլ՝ հակամարտող երրորդաբանական հոսանքների սկզբունքային անհամաձայնության և, անշուշտ, պետական իշխանության աջակցության վրա: Դա էր պատճառը, որ օմիականությունը յուրահաստուկ խուսանավող քաղաքականություն էր որդեգրել վիճաբանող կողմերի միջև և շատ հարցերում ինքն էր հանդես գալիս հրահրողի և անհամաձայնություն սերմանողի որակով: Հակառակ պարագային երրորդաբանական հոսանքների միջև համերաշխություն հաստատելու ամեն մի փորձ անխուսափելի կործանում կնշանակեր իրենց համար: Իսկ այդ ամենը մեկ անգամ ևս հավաստում է, որ նշված բոլոր գործընթացները պայմանավորված էին եկեղեցական կյանքի իրողություններով: Ա. Լեբեդևը, ով այդ իրադարձությունները բնութագրում է որպես «կրոնական-մտային դեգերումների շրջան»<sup>6</sup> գտնում է նաև, որ եկեղեցական համերաշխության վերականգնման հիմքում ընկած էր արիոսականների գործունեությունը. «Եկեղեցական դոգմատիկական բարենորոգելու անպտուղ փորձերն արիոսականության շրջանակներում ռեակցիա ծնեց,- գրում է նա և պնդում, թե դրա արդյունքում,- լարումը փոխարինվեց հանգստությամբ: Խաղաղության կարիքը բոլորն զգացին»<sup>7</sup>:

Հեղինակային այդ մոտեցումներն, անշուշտ, ճշմարտության որոշ ռացիոնալ հատիկ են պարունակում և թեև «մեղմացված տարբերակով», այնուամենայնիվ, մոտենում են դարաշրջանի իրական բնութագրությանը: Սակայն այստեղ պարզ չէ գլխավորը: Հեղինակն ու՛մ նկատի ունի արիոսականներ ասելով: Եթե խոսքը գնում է անումեականների մասին, ապա այդ մոտեցումը հիմնովին մերժելի է: Եթե ավանդական տարբերակով «արիոսականություն» է վերագրվում համանմանականներին, ապա այդ դեպքում լրացուցիչ պարզաբանումների կարիք է զգացվում: Այդ տեսանկյունից միայն մասնակի առումով կարելի է համաձայնել Ա. Լեբեդևի այն պնդման հետ, թե IV դ. «60-ական և 70-ական թվականներին մենք արիոսականների մոտ չենք տեսնում այնպիսի բուռն, կրքոտ ժողովներ, ինչպիսիք Տիրի, Սելևկիայի և այլ ժողովներն էին: Այդ շրջանում ընդհանրապես չենք տեսնում այնպիսի ժողովներ, որոնք նոր տեսքով շարադրեին հավատո հանգանակը»<sup>8</sup>: Իրականում IV դարի 60-ական թվականներին եկեղեցուց ներս առնչվում ենք ն՛ման ժողովների և՛ բուռն վիճաբանությունների: Սակայն չի կարելի չնկատել նաև, որ հետնիկեական դոգմատիկական վիճաբանությունների վաղ փուլի նմանությամբ, այս շրջանում ևս հակամարտող կողմերի գործունեությունն աչքի է ընկնում հականիկեական տրամադրվածությամբ, ինչը սքողվում է դոգմատիկական ձևակերպումներով:

Եվ երկրորդ, երրորդաբանական հոսանքների միջև բացահայտ թշնամական վերաբերմունքը բացառվում էր նաև պետական իշխանության կրոնական քաղաքականության պատճառով, որը ձեռքը «տարաձայնությունների ռիթմի» վրա պահելով՝ կասեցնում էր ցանկացած երանգավորման ծայրահեղականության դրսևորում: Կարծում ենք՝ այդ ամենը նկատի ունի նաև Ա. Սպասկին, որը պնդում է, թե «...XX դարի բարձունքից

<sup>6</sup> Лебедев А. П., Вселенские Соборы IV и V вековъ (Обзор ихъ догматической деятельности въ связи съ направлениями школъ александрійской и антиохійской), СПб., 1904, с. 122.

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 124:

<sup>8</sup> Նույն տեղում:

ժամանակի իրադարձություններին նայելով կարելի է տեսնել, որ տվյալ դեպքում կայսեր անձնական հակումները լիովին համապատասխանում էին եկեղեցական հարաբերությունների առկա կացությանը»<sup>9</sup>: Հարկ է ավելացնել նաև, որ պետական իշխանության կրոնական քաղաքականության ասպարեզում արմատական դեր էր վերապահված հռոմեական արևելքի հասարակական և ռազմաքաղաքական իրավիճակին: Առավել ևս, որ Վաղեսն այս հարցում այդպես էլ չկարողացավ դրսևորել այն վճռականությունը, որով աչքի էին ընկնում իր նախորդները՝ Կոստանցիուսը և Հուլիանոսը:

Այդ ամենից իմպլիցիտ կարելի է բխեցնել, որ քրիստոնեական արևելքում IV դարի 60-ական թվականների դոգմատիկական վիճաբանությունների արմատները պայմանավորված էին ներեկեղեցական կյանքի իրողություններով, այլ ոչ թե արտաքին գործոններով: Այդ եզրահանգումը ամենևին էլ չի նսեմացնում եկեղեցական կյանքում պետության միջամտության դերը: Դա, անշուշտ, եղել է: Սակայն այդ միջամտությունն այլևս վճռական համարել չի կարելի: Այդ իրողությունը կարելի է փաստել Թեոդորետի հաղորդած այն տեղեկություններով, որ Վաղեսի իշխանության շրջանում զանգվածային հակահիկեական ակցիաներ չեն իրականացվել<sup>10</sup>: Պատմիչի հաղորդած այդ տեղեկության հիմնավորման ամենաազդեցիկ կովանք պետք է համարել այն, որ ինչպես Աթանաս Ալեքսանդրացին, այնպես էլ Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Աստվածաբանը հալածանքների չենթարկվեցին: Եվ, վերջապես, դրանով կարելի է բացատրել և այն, որ Վաղեսի իշխանության վաղ շրջանում արևելյան Եկեղեցու շրջանակներում բավականին աշխուժացավ նաև օմիականության դեմ համանմանականների հակագործունեությունը:

Եկեղեցական պատմագրության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ օմիականների դեմ օգտագործելով ընձեռնված հնարավորությունը, Պերինփայի և Իրակլեայի եպիսկոպոս Իպատիանի գլխավորությամբ համանմանականները հանձնախումբ են ուղարկում կայսեր (Վաղեստիանոսի) մոտ՝ խնդրելով «ուսմունքը ճշգրտելու համար» թույլ տալ ժողով գումարել: Եվ Վաղեսի համաձայնությունից հետո նրանց ընտրությունը կանգ առավ Լամպսակ քաղաքի վրա, որտեղ 364 թ. հրավիրվեց երկու ամիս

<sup>9</sup> Проф. **Спаский А.**, История догматических движений в эпоху Вселенских Соборов (В связи с философскими учениями того времени), Тринитарный вопрос (История учения о св. Троице), с. 455.

<sup>10</sup> Թեոդորետը հիշատակում է արտրված ընդամենը 4 նիկեականների՝ Մելետիոս Անտիոքացի, Պելագետոս Լատոնիկեցի, Եվսեբիոս Սամոսացի և Բարսումա Եղեսացի, տե՛ս **Феодорит еписк. Кирский**, Церковная история, кн. IV, гл. 13, с. 255, гл. 16, с. 261: Իսկ Սոզոմենոսը և Սոկրատեսը հավաստում են, որ Պավլինոս եպիսկոպոսի «սրբակեցության նկատմամբ ունեցած հարգանքի պատճառով» Վաղեսը նրան չարտրեց, տե՛ս **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 7, с. 391, **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 2, с. 170.

Ա. Կարտաշևը, հիմք ընդունելով Սոկրատեսի պատմությունը (տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 13, с. 180-181), գրում է, որ Ալեքսանդրիայում Եվդոքսիոսի ինտրիգների հետևանքով խառնակություններ առաջ եկան, որի պատճառով Աթանաս Մեծը հարկադրված 5 ամիս լքեց աթոռը և թաքնվեց անապատում: «Եվ պետք է արժանին մատուցել Վաղեսի վարչական բարեմտությանն այն բանի համար, - գրում է եկեղեցագետը, - որ նա Եվդոկսիոսի ինտրիգը անմիտ համարեց և առանձնահատուկ շնորհագրով Աթանասին վերադարձրեց Ալեքսանդրիայի աթոռին, որտեղ էլ նա մնաց մինչև իր մահը՝ 373 թ.»», **Карташев А. В.**, Вселенские Соборы, с. 107.



շարունակվող եպիսկոպոսական ժողով<sup>11</sup>:

Սոզոմենոսի հաղորդած տեղեկությունների համաձայն Իպատիան եպիսկոպոսի կողմից ղեկավարվող Լամպսակի ժողովում երկարատև քննարկումներից հետո որոշվեց մերժել ակակիոսականների և եղորքսիոսականների ջանքերով 361 թ. Կ. Պոլսի ժողովում «արևմտյան եպիսկոպոսների դավանանքի անվան տակ» ներկայացված դավանագիրն ու մյուս որոշումները: Ժողովը որոշեց Հայր և Որդի Աստծու հարաբերությունը բնութագրել «էպպես նման» (Φμοιος χατ' οσσιαυ) եզրով այն հավելումով, թե վերջինս անհրաժեշտ է Ս. Երրորդության հիպոստասները (υποσταςζ) զանազանելու համար: Դավանաբանական հարցերում Լամպսակի ժողովը «Ղուկիանոսի հանգանակի» դիրքերից մերժեց Բավարական Սելևկիայի (Նիկի) դավանագիրը և այդ դիրքերից աթոռագուրկ հռչակեց բոլոր նրանց, ովքեր պնդում էին, թե «Որդին էպպես նման չէ Հայր Աստծուն»: Համանմանականները ժողովական որոշմամբ պահանջեցին նաև վերադարձնել Կ. Պոլսի հիշյալ ժողովից հետո իրենցից «անօրինական կերպով խլված աթոռները»: Իսկ ովքեր կցանկանան մեղադրել իրենց, պարզաբանում էին ժողովականները, իրենք «հավասար վտանգի կենթարկվեն»: այդ դեպքում դատավորի իրավունքներ էր վերապահվում տեղական և հարևան թեմերի ուղղադավան եպիսկոպոսներին: Ժողովականներն եվորքսիականներին առաջարկեցին «ապաշխարել», և քանի որ նրանք չհետևեցին այդ կոչին, ընդունված դավանաբանական և կանոնական որոշումների մասին տեղյակ պահեցին բոլոր եկեղեցիներին<sup>12</sup>:

Այդ ամենից հետևում է, որ հավատքային հարցերում Լամպսակի ժողովականները մնացին նախկին դիրքերում: Նրանք դատապարտեցին Արիմիոնում Հայր և Որդի Աստծու «նմանության» մասին ընդունված որոշումը, սակայն կրկին պաշտպան կանգնեցին Ղուկիանոսի հանգանակին՝ «էպպես նման» հավելումով: Ժողովականները քննարկեցին նաև Ս. Հոգու աստվածաբանության հետ կապված մի շարք հարցեր: Սակայն

<sup>11</sup> Ժողովի հրավիրման շարժառիթների մասին եկեղեցական պատմագրության տեղեկությունները հակասական են: Այսպես, Սոզոմենոսը պնդում է, որ Իպատիան եպիսկոպոսը այցելում է Վաղենտինիանոսին, որը պատգամաբերներին պատասխանում է, թե ինքն աշխարհիկ մարդ է և անբարո և համարում խառնվել հավատի գործերին: Նա առաջարկում է, որ այդ հարցով պետք է զբաղվեն նրանք, ում վերապահված է հոգ տանել հավատի մասին, և հոգևորականներին արտոնում է հարցը քննարկելու համար «զնայ ուր ցանկանում են», մանրամասները տե՛ս **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 7, с. 389-390.

Սոկրատես պատմիչը պնդում է հակառակը: Ըստ նրա այդ շրջանում Վաղենտինիանոսը «տեղական գործերով» արդեն մեկնել էր կայսրության արևմտյան մարզեր, իսկ կարճատև ժամանակով Կ. Պոլսում գտնվող Վաղենս ընդունում է «մակեդոնական դավանանքի բազմաթիվ եպիսկոպոսների», որոնք նրան խնդրում են «հավատքը ճշգրտելու համար» թույլ տալ նոր ժողով գումարել: Համարելով, որ այդ եպիսկոպոսները «համաձայնության մեջ են Ակակիոսի և Եվորքսիոսի հետ», կայսրը թույլ է տվել ժողով գումարել և եպիսկոպոսները հավաքվում են հելլեսպոնտական նեղուցի մոտ գտնվող Լամպսակում: Նա պնդում է նաև, որ ժողովը եղել է «մակեդոնական» (հոգեմարտական) և հավելում, որ իր կարծիքով այդ ժողովը պատճառ դարձավ, որ Հելլեսպոնտոսում ավելացավ մակեդոնականների թիվը. «այդպիսին էր այդ ժողովը և այդպիսին են նրա հետևանքները», ամփոփում է պատմիչը, տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 2, с. 170, гл. У, с. 171.

<sup>12</sup> Մանրամասները տե՛ս **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 7, с. 390-391.

նրանց այդպես էլ չհաջողվեց քիչ թե շատ հավասարակշիռ որոշում ընդունել այդ հարցում:

Փորձելով ընդունված որոշումներին համաքրիստոնեական նշանակություն հաղորդել, Լամպսակի ժողովականներն այն ներկայացրեցին Վաղես կայսեր հաստատմանը: Մակայն կայսրը ոչ միայն մերժեց համանմանականների առաջարկը, այլև հարկադրական տոնով պահանջեց հաղորդության մեջ մտնել Եվդոքսիոսի և նրա համախոհների հետ: Եվ երբ ժողովական հանձնախումբը դատապարտեց Եվդոքսիոսին, կայսեր հրամանով նրանք բոլորը զրկվեցին իրենց նվիրապետական աթոռներից (որոնք հանձնվեցին Եվդոքսիոսականներին) և արտրվեցին<sup>13</sup>:

Համանմանականների «անհնազանդությունը», ինչպես նաև ներքին գահակալական կռիվներն էլ դարձան 365 թ. հրապարակված Վաղեսի կրոնական շնորհագրի պատճառը: Վերջինս, որը կարելի է համարել կայսեր կրոնական քաղաքականության իրավական տեքստը, ծանր պատիժների սպառնալիքով պահանջում էր Կոստանցիոսի շրջանում աթոռազրկված և Հուլիանոսի օրոք իրենց նվիրապետական կենտրոններում վերականգնված բոլոր եպիսկոպոսներին քստրել ծառայական կենտրոններից: Դրանով արևելքի եկեղեցական կյանքը գործնականում վերադարձավ էլակետին՝ Կոստանցիոսի վերջին տարիների կացությանը:

Անսպասելի շրջադարձը ծանր անդրադարձավ հատկապես համանմանականների համար: Սպասվող հալածանքներին դիմագրավելու միտումով նրանք սկսեցին հանձնախմբեր ուղարկել տարբեր քաղաքներ և, ինչպես Սոկրատեսն է վկայում, «գործողությունների ընդհանուր պլան մշակելու միտումով» ժողովներ գումարեցին Չուստանիայում, Պիսիդիայում, Բսավրիայում, Պամփյուլեում, Լիկիայում և Լամպսակում<sup>14</sup>: Իսկ այն բանից հետո, երբ համանմանականները համոզվեցին, որ արևելքում որևէ մեկից այլևս չեն կարող օգնություն ակնկալել, նրանք դիմեցին արևմուտքի, մասնավորապես Վաղենտինիանոսի օգնությանը: Եվստաթեոս Մեքաստացու, Միլվանոս Տարսոնացու և Թեոփիլոս Կոստովալացու կազմով Միլան մեկնեց համանմանականների հանձնախումբը, որը, սակայն, չկարողանալով հանդիպել Գալիա մեկնած կայսեր հետ, հարկադրված անցավ Հռոմ և դիմեց տեղի եպիսկոպոսի օգնությանը:

Եվ այն, ինչ տեղի ունեցավ Հռոմում, ներդաշնակ ձևով ավանդվում է եկեղեցական պատմագրության կողմից: Ըստ այդ տեղեկությունների՝ Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսը

<sup>13</sup> Մանրամասները տե՛ս **նույն տեղում**, էջ 391:

<sup>14</sup> Տե՛ս **Տոկրատ Տխոլաստիկ**, Церковная история, кн. IV, гл, 12, 177. Տեղական եպիսկոպոսական ժողովների անցկացման, ինչպես նաև Արևելքի տարբեր քաղաքներում համանմանական եպիսկոպոսների ազատ գործունեության մասին Սոկրատես պատմիչի տեղեկությունները (տե՛ս **նույն տեղում**, էջ 176-177) հակադիր են նույն շրջանում Վաղեսի կողմից իրականացված զանգվածային բռնությունների մասին հաղորդած տեղեկություններին (տե՛ս **Տոկրատ Տխոլաստիկ**, Церковная история, кн. IV, гл, 6, с. 172, гл, 9, с. 175, гл, 15, с. 181, гл, 16, с. 182-183, гл, 17, с. 183 և այլն): Իսկ եթե ընդունելի համարենք պատմիչի այն տեղեկությունը, թե հալածանքների են ենթարկվել միայն «համագոյության կողմնակիցները» (նիկեականները), ապա դա անհամապատասխանության մեջ է Թեոդորեոսի պատմության հետ, որը, ինչպես արդեն վերը ցույց է տրվել, հիշատակում է ընդամենը 4 նիկեականների արքայի մասին, ինչը ոչ մի դեպքում չի տեղավորվում «զանգվածային հալածանք» երևույթի շրջանակներում:

արևելյան պատվիրակներին օժանդակելու համար առաջարկեց մեկ հիմնական պայման՝ անառարկելիորեն ընդունել նիկեական հանգանակը: Պատվիրակները կատարեցին այդ պահանջը և համարելով, որ ավելի լավ է միանալ նիկեականներին քան մերձենալ եվդոքսիոսականներին (արիոսականների), Հռոմի նվիրապետին ներկայացրեցին նիկեական դավանագրին էապես մերձեցող «իրենց հավատքի գրավոր տեքստը», որտեղ համագոյության աստվածաբանությունը մեկնաբանվում էր «էապես նման» նշանակությամբ<sup>15</sup>: Նրանում, մասնավորապես հռչակվում էր, որ համանմանական երրորդաբանները «պաշտպանել և պաշտպանում են կաթողիկե այն հավատը, որը 318 հայրերի կողմից հաստատվել է Նիկեայի սուրբ ժողովում և մինչ օրս գտնվում է անաղարտության և անսասանության մեջ, այն հավատը, որում սրբությամբ և բարեպաշտությամբ ընդունվում է համագոյությունը: Հիշյալ ժողովի նման, գրում են պատվիրակները, մենք ևս սեփական ստորագրությամբ հավաստում ենք, որ ունեցել ենք այդ հավատը, ունենք և կպաշտպանենք այն մինչև վերջ»<sup>16</sup>: Ամենին էլ չսահմանափակվելով դեկլարատիվ այդ հայտարարությամբ, համանմանականները նիկեական հավատի դիրքերից բանադրեցին Արիոսին, Սաբելին, հայրաշարժարներին (մոդալիստ միապետականներին), փոտականներին, մարկելականներին, Պողոս Սամոսատցուն, մարկիոնականներին, ինչպես նաև՝ «արիոսական Նիկի ժողովում հաստատված դավանանքը»: Այլ կերպ ասած՝ բոլոր այն հերձվածներին ու հերձվածողներին, որոնք գտնում էին, թե Քրիստոս Աստված ենթակա է փոփոխության: Եվ այդ հիման վրա արևելյան պատվիրակները հայցեցին Հռոմի նվիրապետի օժանդակությունը՝ ցանկացած մեղադրանք քննարկելու համար որոշակի լիազորություններով կամ ուղերձով արևելք ուղարկել որևէ նվիրապետի, որպեսզի նա իրենց օժանդակությամբ տեղում քննարկի եկեղեցական գործերի ընթացքը:

Թեև համանմանականների վերոնշյալ քայլը որոշակի սահմաններում կարելի է հարկադրական համարել, պետք է նկատել նաև, որ Հռոմի Լիբերիոս եպիսկոպոսին ներկայացված նոր դավանագիրը թույլ է տալիս արձանագրել դոգմատիկական այդ հոսանքում տեղ գտած արմատական տեղաշարժերը: Ժամանակի դոգմատիկական զարգացումների համատեքստում նշանակալի իրադարձություն պետք է համարել այն, որ համանմանական 64 եպիսկոպոսների անունից<sup>17</sup> նիկեական հանգանակի երբեմնի հակառակորդները համագոյության երրորդաբանությունն անվանում են «սուրբ» և «բարեպաշտ»: Համանմանականների այդ քայլով իր տրամաբանական վախճանին հասավ նիկեականության անցումը և դրանով կանխորոշվեց հակաերրորդաբանական ցանկացած հոսանքի պատմական ապագան: Գործնականում հետնիկեական դոգմա-

<sup>15</sup> Դավանաբանական այդ փաստաթուղթն ամբողջական տեսքով պահպանվել է ինչպես Սոկրատեսի, այնպես էլ Սոզոմենոսի պատմության մեջ, որոնց համար աղբյուր է հանդիսացել Սաբինոսի «Ժողովական գործունեության ժողովածուն»: Մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с. 176-180, **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 10-11, с. 396-398.

<sup>16</sup> Տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с. 178, **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 11, с. 397-398.

<sup>17</sup> Լիբերիոս եպիսկոպոսի ուղերձում թվարկված 64 ուղղադավան (նիկեական) եպիսկոպոսների անվանացանկը տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с. 178.

տիկական հակամարտությունների պատմության ընթացքում առաջին անգամ եկեղեցում հաստատվեց համագոյության աստվածաբանության կողմնակիցների գերակշռություն:

Եվ չնայած պատմական նշանակության այդ իրադարձությանը, բոլոր հիմքերն ունենք պնդելու, որ այս պարագայում ևս համանմանականներին դեռևս չի կարելի լիակատար կերպով նիկեականներ անվանել: Անառարկելի է, որ նրանք օմիական և նիկեական երրորդաբանությունների միջև ընտրություն կատարելիս հաստատականորեն նախապատվություն են տվել նիկեականությանը: Սակայն մերժելի չէ և այն, որ դրանով հանդերձ համանմանականները մեկ քայլի վրա կանգ առան համագոյության աստվածաբանության շեմին, ինչը կարելի է փաստել նրանց կողմից համագոյության երրորդաբանությունը պահպանողական՝ «Հոր էությունից (εχ χυσιαζ πατροζ)» մեկնությունը մատնանշելով: Եվ չնայած այդ սահմանափակությանը, պետք է ընդունել, որ այդ քայլով անգամ համանմանականներն անուրանալի պատմական դերակատարություն ունեցան նիկեականության վերջնական հաղթանակի գործում: IV դարի դոգմատիկական վիճաբանությունների համատեքստում համանմանականների երրորդաբանական նոր վարդապետությունը պետք է կարևորել ևս երկու տեսանկյունից: Հիսուս Քրիստոսին բնութագրելով «Հոր էությունից» եզրով, նրանք դա բացատրում էին Ս. Երրորդության հիպոստասային տարբերությունները շեշտադրելու անհրաժեշտությամբ, որն արևելքում ուղղադավան էր համարվել Աթանաս Ալեքսանդրացու կողմից դեկավարվող Ալեքսանդրիայի 362 թ. ժողովի կողմից: Սակայն այդ բանաձևումը «կասկածանքով» էր ընդունվում քրիստոնեական արևմուտքում, որտեղ այդ մեկնության մեջ «սաբելական վտանգ» էին տեսնում և նոր նիկեականների հիշյալ բանաձևումը փաստում է, որ արևմուտքը դեռևս մինչև վերջ հասու չէր համագոյության երրորդաբանության նրբություններին: Եվ երկրորդ, նիկեական ուղղադավանության դիրքերից սաբելականների, փոտականների, մարկելականների և մյուս հերձվածողների ուղղակի բանադրումը վկայում է, որ այս նոր նիկեականները համագոյության աստվածաբանությունը ընդունում և մեկնաբանում էին «մեկ հիպոստաս»-ի արևմտյան երրորդաբանությանը հակադիր նշանակությամբ<sup>18</sup>:

<sup>18</sup> Անտիոքացիներին հղված Աթանաս Ալեքսանդրացու ուղերձից տեղեկանում ենք, որ Ալեքսանդրիայի 362 թ. ժողովում հանգամանակից քննության է ենթարկվել նաև երրորդաբանության համար առանցքային նշանակություն ունեցող *οὐσια(ուսիա)* և *πρωοσιαζ(հիպոստասիա)* աստվածաբանական եզրերի ճշգրտման հարցը:

Քանի որ *πρωοσιαζ* եզրն աստվածաշնչական չէր և «կասկած էր հարուցում», հիմնահարցի մեկնության շուրջ սուր բանավեճեր էին ծավալվել հատկապես նիկեականների և համանմանականների միջև: Թյուր ըմբռնումներից և աստվածաբանական նոր վիճաբանություններից գերծ մնալու միտումով՝ նիկեականներն առաջարկեցին սահմանափակվել միայն վերահաստատված ուղղադավան դավանանքով: Դա արդարացված էր համարվում և այն կապակցությամբ, որ «*τα πρωοσιαζ*»-ների (Ս. Երրորդության երեք հիպոստասների՝ Ա. Ք.) մեկնությունը կարող էր հանգեցնել արիոսական հետևությունների՝ եթե հիպոստասներից յուրաքանչյուրին վերագրվեր միմյանցից օտարված կեցություն, կամ էլ կարող էր հանգեցնել եռաստվածության, եթե յուրաքանչյուրին վերագրվեր միմյանց հակադիր էություն (= 3 էություն և 3 աստված): Մերժելով այդ առաջարկը՝ համանմանականները հայտարարեցին, որ իբրև իրական Աստված «դավանում են Սուրբ Երրորդությանը՝ իրական գոյ Հայր Աստծուն, իրական գոյ Աստված Որդուն և

Չնայած երրորդաբանական ըմբռնումների որոշակի տարբերություններին, Լիբե-րիոս եպիսկոպոսը համանմանականների պատվիրակներին եկեղեցական հաղոր-դության ընդունեց: Նա իտալական, աֆրիկյան և արևմտագալիական եպիսկոպոսների անունից արևելյան եպիսկոպոսներին դիմեց «ուղերձով», որտեղ թվարկվող 64 նոր նի-կեական եպիսկոպոսներին և արևելքի մյուս ուղղադավաններին անվանում է «հավա-տի լուսատուներ» և «սիրեցյալ եղբայրներ և ծառայակիցներ»: Անթաքույց ուրախությ-յուն արտահայտելով «եկեղեցական միությունը վերականգնելու» համար, Հռոմի եպիս-կոպոսն արևելյան նվիրապետներին հայտնում էր նաև, որ «Արիմինի ժողովին մասնա-կից արևմտյան գրեթե բոլոր եպիսկոպոսները «հասունանալով» իրենց ստորագրությ-յամբ բանադրել են ժողովական որոշումները և ուղղադավան են ճանաչել նիկեական հանգանակը: Հատուկ պաթոսով նա կոչ է անում բոլոր նրանց, ովքեր «ցանկանում են վերադառնալ աստվածային լույսին»՝ «մի կողմ նետեն Արիոսի լուսանքները և միա-նան նիկեական հանգանակին»: Նա առաջարկում է նաև «համառոտներին եկեղեցա-կան ժողովներում գրկել հաղորդությունից»<sup>19</sup>:

Չբավարարվելով այդքանով՝ արևելյան պատվիրակները Հռոմից անցան Սիցիլիա և այնտեղ հրավիրված տեղական եպիսկոպոսական ժողովում «դավանելով համագո-յության աստվածաբանությունը, նիկեական հավատամքը հռչակեցին իբրև միակը և ճշմարիտը»<sup>20</sup>: Եվս մեկ ուղերձ ստանալով սիցիլիական եպիսկոպոսներից՝ պատվի-րակները վերադարձան Արևելք: Այստեղ նրանց գործունեությունը, հավասարապես նաև արևմուտքի հետ խարխված կապերի (հաղորդության) վերականգնումն ընդուն-վեց մեծ ոգևորությամբ: Այդ կապակցությամբ 367 թ. Թիան քաղաքում հրավիրվեց ա-րևելյան եպիսկոպոսների նոր ժողով, որի աշխատանքներին մասնակցում էին Եվսե-

---

իրական գոյ Սուրբ Հոգուն»: **Երեք աստված կամ երեք սկիզբ չենք դավանում, պնդեցին նրանք, այլ՝ Սուրբ Երրորդություն, միանական Աստծո, միանական Սկզբի և համագոյ Որդուն և Հոր և Որդու Էությանն անօտարելի Սուրբ Հոգուն**: Ավելին, Ս. Երրորդության *σποσασιζ* -ների վերաբերյալ հասակություն մտցնելու միտումով երիտասարդ համանմանականներն իրենց հերթին պահանջեցին *ομοσοσιζ* եզրը փոխարինել *οσσια κατ οσσια* (էապես նման) եզրով: Առաջարկը բուռն վիճաբանություն ծնեց, քանի որ հա-մանմանականները համարում էին, որ մեկ *σποσασιζ* դավանելով ոչ միայն հնարավոր է «ոչնչացնել Որդի Աստծու իրական կեցությունը», այլև, Սաբելիոս Լիբեացու նմանությամբ կարելի է հանգել Ս. Երրորդության դեմքերի միաձուլման (մոդալիստական երրորդաբանության): Դեմ դուրս գալով ընդդիմախոսներին՝ նիկեականները հավաստեցին, որ Ս. Երրորդությունը դավանում են իբրև մեկ *σποσασιζ* (Էություն), քանի որ Որդին Հայր Աստծո Էությունից է և հավատքային այդ հենքի վրա էլ ընդունում են Հայր և Որդի Աստծո նույն Էություն լինելը (ուղղված էր ընդդեմ Սաբելիոսի): Դավանում ենք նաև, պնդեցին նրանք, որ Աստված մեկն է և մեկ է նաև նրա Էությունը (= բնությունը), այսինքն՝ Որդի և Սուրբ Հոգի Աստծու Էությունը օտար չէ (= համագոյ է) Հայր Աստծո Էությանը: **Ի վերջո ընդունվեց փոխդիջումային տարբերակ** և ուղղադավան համարվեց ինչպես *ομοσοσιζ* եզրը «*μια σποσασιζ* » նշանակությամբ, այնպես էլ՝ «*τα σποσασιζ* » եզրը: Մասնանշվեց նաև, որ այդ ամենով հանդերձ «ճիշտ կլինի բավարարվել այն եզրերի օգտագործմամբ, որոնք հաստատված են նիկեական դավանանքով»: Մանրամասները տե՛ս **Սվ. Афанасий Великий**, Свитокъ Аѳанасія, Александрійскаго Архієпископа, къ Антиохійцам / **Творения в четырех томах**. Т. III, М., 1994, с. 169-173.

<sup>19</sup> Մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с. 178-180.

<sup>20</sup> Մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с. 180, **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 12, с. 399.

բիոս Կապադովկիացին, Աթանաս Անկյուրիացին, Պելագետս Լաոդիկեցին, Զենոն Տիրացին, Պողոս Էմեսացին, Օթրետոս Մելիտենացին, Գրիգոր Նազիանզացին, ինչպես նաև Անտիոքի 363 թ. հակաարիոսական-հակաանոմեական ժողովի բոլոր մասնակիցները: Թիանի ժողովականները որոշեցին Հռոմի եպիսկոպոսի ուղերձն ուղարկել բոլոր եկեղեցիներին և առաջարկեցին վերջնական որոշում ընդունելու համար նոր ժողով գումարել Կիլիկիայի Տարսոն քաղաքում: Սակայն նրանց այդպես էլ չհաջողվեց իրականացնել նախատեսվածը, քանի որ Վաղես կայսրն արգելեց նոր ժողովի հրավիրումը: Դա էր պատճառը, որ արևելքում նիկեական հանգանակի վերջնական հաղթանակին միտված ջանքերը ժամանակավորապես կասեցվեցին<sup>21</sup>:

Եվ, այնուհանդերձ, չափազանց ակնհայտ էր մի բան. Թիանի 367 թ. ժողովից մինչև 378 թ. ընկած շրջանը (Վաղեսի մահը), ինչպես նաև Հռոմեական քաղաքական վերնախավի կողմից կրոնական նոր քաղաքականության հռչակումը, դոգմատիկական գործունեության ասպարեզում որևէ նշանավոր իրադարձություն այլևս չի արձանագրվել: Դրանից կարելի է եզրակացնել, որ ինչպես քրիստոնեական արևելքում, այնպես էլ արևմուտքում նիկեականության հաղթանակը ավարտուն և անդառնալի տեսք էր ստացել: Եվ միայն պետական իշխանության ջանքերով էին պահպանվում եկեղեցում այլևս ոչ մի ազդեցություն չունեցող հականիկեական «պալատական օմիականները»:

Այդ ամենն էլ միանգամայն ակնհայտ կերպով վկայում է, որ անցնելով հնարավոր բոլոր հանգրվաններով, IV դարի 60-ական թվականների վերջերին արևելյան աստվածաբանական միտքը շրջանցելով նախորդ տասնամյակին բնորոշ կրքոտ ու անհաշտ դոգմատիկական վեճերի պրակտիկան, մի տեսակ «ներփակվեց իր մեջ»՝ անցնելով «խորքային գործունեության»: Որպես այդ ամենի լրացում արևելյան աստվածաբանական միտքն ասես թե ի մի է բերում «տառապանքի ուղիների» պատմական փորձը և կատարում է դարակազմիկ նշանակության վերջին և վճռական կողմնորոշումային քայլը՝ անցում կատարելով նիկեականության: IV դարի 60-ական թվականների ներեկեղեցական կյանքի դրական տեղաշարժերից հաջորդն անկասկած այն էր, որ Սարդիկեի ժողովից հետո առաջին անգամ քրիստոնեական արևելքն ու արևմուտքն առանց կողմնակի միջամտության վերականգնեցին եկեղեցական հարաբերությունները:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ դժվար չէ նկատել, որ IV դարի 60-ական թվականների ներեկեղեցական հարաբերությունների դինամիկայի կարևորագույն բնութագիրը թեև դանդաղ, բայց անդառնալիորեն նիկեականության անցումն էր և նոր նիկեական շարժման ձևավորումը: Քրիստոնեական արևելքի և արևմուտքի բնականոն հարաբերությունները վերականգնելու և ծավալելու գործում էական դեր կատարեց հատկապես համագոյության աստվածաբանության վերաբերյալ թյուր ըմբռնումների հաղթահարումը: Դա միաժամանակ փաստում է և այն իրողությունը, որ քննարկվող ժամանակահատվածում արմատական հակաերրորդաբանությունը ինչպես դոգմատիկական լուծումների, այնպես էլ այդ հոսանքին տիպական տեսական ըմբռնումների և տրամաբանական զանազան սխեմաներ առաջարկելու տեսանկյունից արդեն լիովին սպառել էր

<sup>21</sup> Մանրամասները տե՛ս **Сократ Схоластик**, Церковная история, кн. IV, гл. 12, с 180, **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. VI, гл. 11-12, с. 397-401.

իրեն: Իսկ արևելյան պահպանողական ընդդիմությունն արմատական հակաերրորդաբանության դեմ պայքարում վերջնական ընտրություն էր կատարել ի օգուտ նիկեական ուղղադավանության: Այդպես կառուցվածքային ամբողջական տեսք ստացավ նոր նիկեական շարժումը, որի ջանքերով երրորդաբանական-դոգմատիկական վիճաբանությունները մեկընդմիջտ դուրս եկան եկեղեցական պրակտիկայից:

Այդ համատեքստում պետք է արժևորել նաև համանմանական երրորդաբանության պատմական դերն ու նշանակությունը: Դոգմատիկական վիճաբանությունների ասպարեզ իջնելով արմատական հակաերրորդաբանության՝ անոմեականության դեմ ուղղված ընդդիմության որակով, համանմանականների կրոնական որոնումների առաջը եկեղեցական շահերն էին: Դա էր պատճառը, որ պատմական կարճ ժամանակահատվածում նրանց շարքերը համալրեցին IV դարի 60-ական թվականների եկեղեցական կենսունակ ուժերի մեծ մասը: Համանմանական հոսանքի կողմից հրապարակ նետված Հայր և Որդի Աստծու «ըստ ամենայնի նման» և «Էությամբ նման» հավատքային ըմբռումները ոչ միայն տրամագծորեն հակադրվեցին արիոսական և արմատական հակաերրորդաբանության այլ վարդապետությունների հիմնարար սկզբունքներին, այլև՝ դոգմատիկական ավարտուն տեսք հաղորդեցին արևելյան պահպանողական աստվածաբանությանը: Եկեղեցական շահերին համանմանականների անմնացորդ նվիրումը նկատի ուներ նաև նիկեական ուղղադավանության ականավոր ներկայացուցիչ Աթանաս Ալեքսանդրացին, ով դրվատանքով է արտահայտվում համանմանականների մասին<sup>22</sup>:

Համանմանականների դոգմատիկական գործունեության պատմական նշանակության իրադարձություններից հաջորդը քրիստոնեական արևելքի և արևմուտքի, ինչպես նաև արևելյան աստվածաբանական դպրոցների միջև տասնամյակներ շարունակ վիճաբանական հանդիսացող «οὐσια» և «ὁμοσιωσιζ» աստվածաբանական եզրերի իմաստային ճշգրտումն էր և համապատասխան մեկնությունների մշակումը: Դրանով ոչ

<sup>22</sup> Քաջ գիտակցելով, որ երրորդաբանական երկու մոտեցումների մեխանիկական միությունը չի կարող ցանկալի արդյունքի հանգեցնել, Աթանաս Ալեքսանդրացին 362 թ. Ալեքսանդրիայի ժողովում կարևորեց **իրական** (հավատքային) միությունը: Այդ նպատակով ականավոր աստվածաբանը հետնիկեական ժողովների քննական արժևորման հենքի վրա միանգամայն հիմնավոր կերպով ցույց տվեց, որ համանմանականների երրորդաբանական վարդապետությունը գործնականում հանդես է գալիս ուղղադավանության (= նիկեականության) դիրքերից: Աթանաս Մեծի համոզմամբ միակ բացառությունն այն է, որ նրանք վերապահ մոտեցում են ցուցաբերում միայն «համագոյություն» եզրի նկատմամբ: Այդ իսկ պատճառով էլ նա Բարսեղ Անկյուրիացու մասին գրում է. «Բարսեղի նման մարդկանց հետ չպետք է վերաբերվել ինչպես թշնամու, որովհետև **նրանք մեզանից տարանջատվում են միայն մեկ բառով**, այլ հարկ է նրանց եղբայր համարել, քանի որ մտածում են այնպես, ինչպես մենք (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)»: Բանն այն է, շարունակում է աստվածաբանը, որ եթե նրանց վարդապետության համաձայն «Որդի Աստված Հայր Աստծո իմաստությունն է, հավիտենական փառքը և էության ծնունդը», ապա դա այլ բան չի նշանակում քան այն, որ համանմանականներն «ինտուիտիվ» կերպով ընդունելի են համարում «համագոյությունը»: «Քանի որ նրանք Որդու մասին պնդում են, որ նա և՛ էությունից է և՛ համանման (Հայր Աստծուն՝ Ա. Ք.), - այդ կապակցությամբ գրում է Ս. Աթանասը, - ապա դրանով այլ բան չեն ասում քան այն, որ **նրանք համագոյ են** (ընդգծումը մերն է՝ Ա. Ք.)», տե՛ս **Свт. Афанасий Великий, Послание о соборахъ, бывшихъ въ Ариминь италійскомъ и въ Селевкіи исаврійскомъ, с. 147.**

միայն վճռական քայլ կատարվեց հակաերրորդաբանության աստվածաբանական «լուծումները» հաղթահարելու, այլև՝ հետնիկեական դոգմատիկական վիճաբանությունների հիմքում ընկած Հայր և Որդի Աստծու համագոյության աստվածաբանության ուղղադավան մեկնության գործում: Բայց էությանը լինելով պահպանողականներ՝ համանմանական երրորդաբանությունը հանդես եկավ «անցումային աստվածաբանության» որակով և դարձավ նոր նիկեական հոսանքի ձևավորման և, հետևաբար՝ նիկեական ուղղադավանության հաղթանակի նախադրյալներից մեկը միայն:

Պատճառն այն էր, որ հոսանքն այդպես էլ չկարողացավ աստվածաբանական կուռ և ամբողջական համակարգային տեսք ստանալ: Համանմանականների պառակտումն ակնհայտ դարձավ արդեն Ալեքսանդրիայի 362 թ. և Անտիոքի 363 թ. ժողովներից հետո: Նրա հետևողական-արմատական թևի ներկայացուցիչները անումեականության (= ակալիոսականներ, եվդոկսիոսականներ) դեմ անհաշտ պայքարում աստիճանաբար անցում կատարեցին նիկեականության դիրքերը: Այդ համանմանականների թվում պետք է հիշատակել Թիանի ժողովի մասնակից 64 նոր նիկեական եպիսկոպոսներին: Մակայն քիչ չէր նաև այն համանմանականների թիվը, ովքեր այդպես էլ մնացին պահպանողական երրորդաբանության դիրքերում<sup>23</sup>: Եվ, վերջապես, չպետք է մոռանալ նաև, որ հոսանքի առավել պահպանողական հատվածը՝ պաշտպանելով Հայր և Որդի Աստծու համագոյության վարդապետությունը, գիտակցաբար մերժեց նույն սկզբունքը Ս. Հոգու վրա տարածել, որով էլ IV դարի 60-ական թվականներին հիմք դրեց երրորդաբանական վիճաբանությունների նոր փուլի, որը պատմությունը հայտնի է հոգեմարտական (մակեդոնական) հակաերրորդաբանություն անունով:

Այդ ամենից հետևում է, որ իրեն վերապահված պատմական առաքելության ճանապարհին համանմանականները եռատվեցին: Հոսանքի մի հատվածն անցում կատարելով նիկեականության դիրքերն՝ էապես խթանեց նոր նիկեական սերնդի գեներացիայի գործընթացը, որն էլ հանդիսանում է երրորդաբանական այդ հոսանքի դրական պատմական դերը<sup>24</sup>: Երկրորդ հատվածը, մերժելով նիկեական երրորդաբանությունը,

<sup>23</sup> Դրա վկայությունը համանմանական 34 եպիսկոպոսների կողմից 367 թ. Կարիական Անտիոքում հրավիրված եպիսկոպոսական ժողովն էր, որը մերժեց ինչպես համագոյության աստվածաբանությունը, այնպես էլ Թիանի ժողովի որոշումները և ուղղադավան հռչակեց անտիոքյան Ղուկիանոսի հանգանակը: Պատմիչը հավաստում է նաև, որ հենց այս շրջանում է հրապարակվել Վաղեսի շնորհագիրը, որով պրեֆեկտներին խստագույնս հանձնարարվում էր եկեղեցիներից վտարել Կոստանցիուսի շրջանում աքսորված (սրանց հիմնական զանգվածը կազմում էին Կ. Պոլսի 361 թ. ժողովից հետո աքսորված համանմանականները) և Հուլիանոսի օրոք իրենց նվիրապետական կենտրոնները վերադարձած բոլոր եպիսկոպոսներին: Մանրամասները տե՛ս **Созомен Эрмий Саламинский**, Церковная история, кн. V, гл. 12, с. 400.

<sup>24</sup> IV դարի 60-ական թվականներին վերջին և 70-ական թվականներին նիկեական երրորդաբանական աստվածաբանության վերջնական հաղթանակի, հավասարապես նաև երրորդաբանական-դոգմատիկական վիճաբանությունների հաղթահարմանը նվիրված պատմաեկեղեցագիտական, դոգմատիկայի պատմության և աստվածաբանական վերլուծական աշխատություններում հանիրավի կերպով անտեսվել է Թեոդորեոսի պատմության մեջ պահպանված և քննարկվող հիմնահարցի լուսաբանման համար առանցքային նշանակություն ունեցող մի փաստաթղթի արժևորումը, որի հանգամանակից վերլուծությունը դուրս է հոդվածի շրջանակներից:



պաշտպան կանգնեց իր դարն ապրած պահպանողական երրորդաբանությանը, իսկ երրորդները հիմք դրեցին դավանաբանական նոր վիճաբանությունների, ինչն էլ իրենով պայմանավորեց երրորդաբանական այդ հոսանքի պատմական բացասական դերը:

---

Խոսքը վերաբերում է Վաղենտինիանոսի, Վաղեսի և Գրատիանոսի «Համագոյության մասին Ասիական մարզին» հղված ուղերձին (տե՛ս **Феодорит еписк. Кирский**. Церковная история, кн. IV, гл. 8, с. 244-247): Ուղերձը պետք է թվագրել 367 թ., կամ՝ հետընկած շրջանով: Նրանում «Ինքնակալ, Հաղթող և Մեծ Վաղենտինիանոս, Վաղես և Գրատիանոս Օգոստոսներն» Ասիական մարզի եպիսկոպոսներին հայտնում են, որ «փրկագործական վարդապետության բազմակի ուսումնասիրությունից հետո Իլլիրիայի մեծաբանակ ժողովի երանելի եպիսկոպոսները որոշել են, որ Երրորդությունը՝ Հայրը, Որդին և Սուրբ Հոգին համագոյ են: Բոլորովին չշեղվելով իրենց վրա իրավամար դրված ծառայությունից, նրանք Երրորդությունը դավանում են մեծ թագավորի Աստվածահարգությանը համապատասխան և մեր մեծությունը լիազորել է հայտարարել այդ մասին»: Այնուհետև կեսարները հավելում են. «Մեծ ու փառավոր ժողովին (Նիկեայի՝ Ա. Ք.) համապատասխան դավանում ենք, որ Որդին համագոյ է Հորը»: Մերժելով հակադիր մոտեցումները, նրանք մատնանշում են հատկապես նմանականների արատավոր երրորդաբանությունը և գրում են, թե բոլոր նրանք, ովքեր պնդում են, որ համագոյությունը կարելի է արտահայտել նմանությամբ, որով Որդին տարբերվում է բոլոր արարվածներից, «մեղսականորեն սովորեցնում են, թե Աստծու Որդին լուրջ գերազանցող արարչագործություն է»: Հակառակ դրան կայսրության ղեկավարները պնդում են, որ իրենք դավանում են հետևյալ կերպ. «Որ Հայր Աստծու, Որդու և Սուրբ Հոգու էությունը նույնն է՝ երեք դեմքով, այսինքն՝ կատարյալ երեք հիպոստասներով: Մենք համաձայն ենք նաև Նիկեական հավատի շարադրանքի հետ և դավանում ենք, որ համագոյ Աստծու Որդին անձնավորվել է Ս. Կոյս Մարիամից, ... մարդկանց կհայտնվի մարմնապես (երկրորդ գալուստ՝ Ա. Ք.) և ցույց կտա իր ուժն իբրև մարմնացյալ Աստված, այլ ոչ իբրև աստվածակիր մարդ»: Եվ ամփոփելով իրենց դավանանքի շարադրումը, կեսարները գրում են. «բոլոր նրանց, ովքեր դրան հակառակ են մտածում, բանադրում ենք: Հավասարապես բանադրում ենք և նրանց, ովքեր ... ասում կամ գրում են, թե մինչև ծնունդ Որդին չի եղել ... և որ մինչև ծնունդը Նա Հոր մոտ գոյություն է ունեցել հնարավորության տեսքով»:

# ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր

## ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 450-451 ԹԹ. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ

450-451 թվականների ժողովրդա-ազատագրական մաքառումները դաժան քննություն էին Հայաստանի բոլոր խավերի համար: Ժողովրդի մեջ դեռ թարմ էր Արշակունյաց Հայոց միասնական պետության մասին հիշողությունը: 428 թ. Հայոց թագավորության բարձումից հետո երկրի պետականությունը հարատևեց ի դեմս նախարարական իշխանությունների, որոնց շնորհիվ Հայաստանը մնում էր աննվաճ, պահպանում իր ազգային արժեքները, Առաքելադրոշմ Եկեղեցին, հոգևոր անկախությունը: Արշակունիների անկումից հետո, գրում է Եղիշեն. «Ի նախարարսն Հայոց անկաներ թագաւորութիւնն... վասն որոյ և աստուածպաշտութիւնն բարձրագլուխ կամակարութեամբ երևելի լինէր յաշխարհին Հայոց...»<sup>1</sup>: Պատմագիրը համոզված է, որ նախարարությունների միասնության պարագայում Հայաստանը կարող է դառնալ հզոր ուժ և պահպանել իր ինքնուրույնությունը: Ուստի նա իր ոսկեղենիկ մատյանում միասնության կոչ է անում, շեշտում, որ միաբանությունը («գուգութիւն»-ը) «է մայր բարեաց» իսկ տարանջատությունը («անգուգութիւն»-ը) ծնում է չարիքներ<sup>2</sup>:

Միասնություն էր պահանջում դյուցազնաշունչ ժամանակը, երբ հարցականի տակ էին դրված ժողովրդի անկախ գոյատևման գորեղ կոմպանները: Երկրի պետականության, միասնության դրոշակակիրը Հայ Առաքելական Եկեղեցին էր, որը գործվիզ էր նախարարական տարանջատ իշխանություններին, սրբազնագործում էր նրանց պետական իրավագործությունը, հոգևորապես միաբանում նրանց ուժերը՝ հնարավոր գոյամաքառումներում ոգուն ապավինելով դիմակայելու համար: Հայոց Եկեղեցին Մահակ-Մաշտոցյան լուսանորոգ ձեռնարկումների շնորհիվ վերածվել էր հոգևոր-գաղափարական և քաղաքական հզոր գործոնի, որը ժողովրդին զինելով ոգու սրերով՝ պաշտպանեց Իրանի պետական գաղափարաբանության վերածված զրադաշտական կրոնի հորձանքից, պահպանեց հայրենավանդ հավատն ու օրինակարգը, ինչը ցայտունորեն դրսևորվեց 447 թ. Շահապիվանի ժողովում ընդունված կանոնական որոշումներում<sup>3</sup>: Եղիշեն, շեշտելով Եկեղեցու և պետական (նախարարական) իշխանությունների միասնության անհրաժեշտությունը, առաջնություն է վերապահում հոգևորին: «Բոլոր մարմնոյս հոգի է կենդանութիւն, իսկ մարմնոյ և հոգւոյ միտք են կառավար...»<sup>4</sup>, - գրում է նա: Ըստ այդմ, առանց

<sup>1</sup> Եղիշէի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեանի, Երևան, 1957, էջ 6:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 4:

<sup>3</sup> Տե՛ս Կանոնագիրը Հայոց, Ա, աշխ. Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 440, 441, 464-465:

<sup>4</sup> Եղիշէ, էջ 15:

հոգևոր-գաղափարական նեցուկի, պետական իշխանությունը թեական է ու անկատար:

Մասանյանները քաջ գիտակցում էին, որ Հայաստանն ի դեմս նախարարական իշխանությունների և Հայոց Եկեղեցու, շարունակում է մնալ որպես ներքին ինքնավարության գաղափարա-քաղաքական հզոր գործոն, որն իր գործությամբ կարող էր ներհակել իրենց քաղաքական ծրագրերին: Երկրի հզորության և անկախության այդ երկու պոլոսների դեմ Հազկերտ Բ ուղղեց գլխավոր հարվածները՝ հասկանալով, որ նրանց ազդեցությունն ի դերն հանելու պարագայում Հայաստանը դյուրությամբ կենթարկվի իր կամքին: Այդ նպատակադրումով հայ ազնվականության ծաղիկը՝ Հայոց այրուձին, նրա հրամանով փակվեց Իրանի հյուսիս-արևմուտքում՝ Պահ անունով կիրճում: Մակայն դժնդակ պայմանները չկոտրեցին հայ ռազմիկների կամքը, չկարողացան հոգևորապես զինաթափել նրանց: Հայոց այրուձին քրիստոնեական հավատի շնորհիվ և հայ հոգևորականության ջանքերով, նրա հոգեկեցույց քարոզչությամբ մնաց հավատարիմ հայրենիքին ու նրա սրբություններին՝ չվարանելով անգամ պարսից զորքի առջև դրսևորել իր հոգևոր հավատամքը և կատարել քրիստոնյայի սրբազան պարտքը՝ պաշտամունքի արարողությունները, «բարձր բարբառով, սաղմոսիք և երգովք հոգևորօք և մեծապայծառ վարդապետությամբ յայտ յանդիման մեծի բանակին», -վկայում է Եղիշեն<sup>5</sup>:

Հայ ազնվականության մեջ պառակտում մտցնելու նպատակով պարսից արքունիքը նպատակասլաց քայլեր ձեռնարկեց: «Հազկերտ արքան, - վկայում է պատմագիրը, - սկսալ այնուհետև յառաջ կոչել զկրտսերս յաւագաց և զանարգս ի պատուականաց և զտգէտս ի գիտնոց և զանարիս ի քաջ արանց...զամենայն զանարժանսն յառաջ մատուցանէր և զամենայն զարժանաւորսն յետս տանէր», խոստանալով առատ պարգևներ, հողատիրություններ, մեծամեծ պատիվներ ու իշխանություն<sup>6</sup>: Պարսից դռանը հաջողվեց Հայաստանի մարզպան Վասակ Սյունեցու դեմ հանել նրա փեսա Վարազվաղանին՝ Սյունյաց վատոգի սեպուհին, որն առջված բուռն թշնամանքով աներոջ հանդէպ, հեռացավ Պարսկաստան և ուրանալով քրիստոնեական հավատը՝ «եղև պատճառ կորստեան բազմաց և կոտորածի աշխարհիս Հայոց»<sup>7</sup>: Նա նաև դարձավ պարսից իշխանությունների խորհրդատուն: Ըստ Ղազար Փարպեցու, հենց նրա խորհրդով էր, որ Միհրներսեսի հազարապետը Հազկերտին համոզեց կրոնափոխ անել հայերին<sup>8</sup>: Անշուշտ, Սյունյաց այս սեպուհի մասին Փարպեցու հաղորդումն ունի իրական-պատմական հիմք<sup>9</sup>: Հավաստի է պատմագրի հաղորդումն այն մասին, որ հետագայում, երբ պարսից արքունի մեծ ատյանում կայացած դատավարության ժամանակ Վասակ Սյունին Հազկերտ Բ-ի հրամանով շնորհազրկվեց, նույն օրը Սյունիքի իշխան կարգվեց «զթշնամին նորա զսեպուհին Միւնի, զուրացողն զՎարազվաղան»<sup>10</sup>: Ղազար Փարպեցին երբեք Վասակ Սյունեցուն չի հիշում ու-

<sup>5</sup> Եղիշե, էջ 16:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 16-17:

<sup>7</sup> Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուրք առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տեր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տփղիս, 1904, II, ԺԹ, էջ 39-40:

<sup>8</sup> Նույն տեղում, II, ԻԱ, էջ 42-43:

<sup>9</sup> Տե՛ս Կ. Յուզբաշյան, Ավարայրի ճակատամարտից դեպի Նվարսակի պայմանադրությունը, Երևան, 1989, էջ 109:

<sup>10</sup> Ղազար Փարպեցի, էջ 85:

րացող մակդիրով, քանի որ գիտեր, որ նա ցկյանս պահպանել է քրիստոնեական հավատը: Մինչդեռ Եղիշեն միշտ նրան հիշում է իբրև հավատորացի՝ մեղանչելով պատմական ճշմարտության առջև: Հավատն ուրանալու պարագայում, անշուշտ, այլ կլիներ Վասակի քաղաքական ճակատագիրը: Նա չդարձավ պարսից դռան հլու և հնազանդ կամակատարը, այլ ելնելով Հայաստանի շահերից՝ կամենում էր ներգործել նրա վրա, ընդունել տալ դրական վճիռներ: Դա հրատապ անհրաժեշտություն էր՝ ստեղծված դժխեմ իրավիճակում, երբ հավատորացությունը խարխլում էր թե՛ նախարարական համակարգի և թե՛ Եկեղեցու հիմքերը: Այդ չարիքի դեմ համադաշն ուժերով ծառացան նախարարներն ու հոգևոր հայրերը: Ղազար Փարպեցին գրում է, որ երբ հավատափոխության վերաբերյալ Հազկերտի հրովարտակը հասավ Հայաստան, «ժողովեցան այնուհետև ըստ հրամանի տանուտերացն Հայոց սուրբ եպիսկոպոսը ըստ գաւառաց աշխարհին Հայոց, և պատուական երիցունք և վանականք»<sup>11</sup>: Ժողովն, այդպիսով, գումարվել է նախարարների նախաձեռնությամբ և հոգևոր դասի մասնակցությամբ: Պատմագիրը բերում է ժողովական նախարարների ցանկը, որտեղ առաջին տեղում Վասակ Սյունեցու անունն է<sup>12</sup>: Ժողովում կազմված պատասխանում վառ կերպով դրսևորվեց հայ ազատանու և հոգևոր դասի միաբանությունը, որը հեցած էր ժողովրդի լայն խավերի աջակցության վրա: Պատասխանում առանցքայինը Հայոց քրիստոնեական հավատին չդիպչելու և նախարարական դասի իրավունքները, երկրի ավանդական իրավակեցությունը պահպանելու խնդիրներն էին, որոնք անտես չառնելու պարագայում հայերը պատրաստակամ էին նախկինի պես օրինապահություն դրսևորել արյաց դռան հանդեպ: Նշվեց նաև, որ քրիստոնեական կրոնը պատվիրում է, որպեսզի ծառաները հնազանդ լինեն մարմնավոր տերերին՝ իշխաններին, և համաձայն են «կամաւ իսկ և յօժարութեամբ յամենայնի զձեր կամս և զհրաման կատարել. և ծառայել ձեզ»<sup>13</sup>: Շեշտվեց, որ ոչ մի ուժ չի կարող խախտել իրենց քրիստոնեական հավատը<sup>14</sup>:

Սասանյան տիրակալը հասկանում էր, որ քրիստոնեական կրոնը հոգևոր-գաղափարական հզոր ուժ է, և այն պետք է արմատախիլ անել, որպեսզի չճարակի նաև իր երկիրը, որտեղ տակավին 422 թվականին նեստորականները հիմնել էին իրենց կաթողիկոսությունը Մելիկիա քաղաքում: Վերջինիս հովվապետն իրեն հորջորջում էր «Պարսկաստանի, Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի կաթողիկոս» տիտղոսով<sup>15</sup>: Հազկերտ Բ առաջին հերթին հարվածն ուղղեց Հայաստանին, որպես Առաջավոր Ասիայում քրիստոնեական կրոնի միջնաբերդի: Նրա հրամանով Հայաստան ժամանած Դենշապուհ պաշտոնյան «զագատութիւն եկեղեցոյն արկանէր ի ծառայութիւն», ակնկալելով, որ այդ կերպ «զուխտն եկեղեցոյն ցրուեսցէ»<sup>16</sup>: Նա վերացրեց Հայաստանի երկու գորավոր ուժերի՝ նախարարների և Եկեղեցու իշխանության կարևորագույն լծակները: Երկրի տնտեսական գործառույթներն իրականացնող հազարապետության գործակալությունը

<sup>11</sup> Նույն փեղում, II, ԻԳ, էջ 44:

<sup>12</sup> Նույն փեղում, II, ԻԳ, էջ 45:

<sup>13</sup> Նույն փեղում, II, ԻԴ, էջ 45:

<sup>14</sup> Եղիշե, էջ 40:

<sup>15</sup> St'ou Synodicon orientale ou Recueil de Synodes nestoriens, publ., trad. et annote J. Chabot, Paris, 1902, p. 276.

<sup>16</sup> Եղիշե, էջ 22-23:

խլվեց Ամատունիներից և դրվեց պարսիկի իրավասության տակ, Եկեղեցին զրկվեց դատաստանական իշխանությունից և ապահարկությունից<sup>17</sup>: Տնտեսապես թուլանալով՝ նախարարները և Եկեղեցին պետք է կատարեին արյաց արքայի կամքը: Բայց վերջինս, ինչպես նշվեց, դիմեց ավելի ազդու քայլերի, գրավոր վերջնագրով կրոնափոխության առաջարկ անելով հայերին: Վերջնագրի պատասխանը կազմեցին հոգևոր հայրերը՝ «հաւանութեամբ մեծամեծ նախարարացն»<sup>18</sup>: Այն արտահայտում էր երկրում լեռնացող ըմբոստահույզ տրամադրությունները: Հովսեփ կաթողիկոսի կամքով հայոց, վրաց և աղվանից նախարարները Ավետարանի վրա ուխտադիր երդում կատարեցին<sup>19</sup>: Այդ ուխտը նրանք չթյուրեցին նաև Հազկերտի պահանջով Տիգրան այցելելուց հետո՝ վերստին Ավետարանի վրա երդվելով հավատարիմ մնալ «ուխտին սրբութեան և հեղլով զարինս...ի վերայ ամենայն աշխարհին փրկութեան»<sup>20</sup>: Առերես ուրացությունը միջոց էր երկրում ալիքվող ժողովրդական շարժումները ցանկալի հունի մեջ դնելու համար: Հոգևորականներն իրենց հերթին տենդագին գործունեություն ծավալեցին ժողովրդի մեջ: «Յայնմ ժամանակի,- հավաստում է պատմագիրը,- սփռեցան եպիսկոպոսքն յիւրաքանչիւր իշխանութիւնս, և առաքեցին զքորեպիսկոպոսս ի գեղոս և յագարակս և ի բագում ամուրս լեռնային գաւառացն: Դրդեցին ժողովեցին զբազմութիւն արանց և կանանց, շինականաց և ազատաց, զքահանայից և զմենակեցաց. խրատ եղին, պնդեցին և արարին զամենեսեան զինուորս Քրիստոսի»<sup>21</sup>: Հոգևոր դասի նվիրագործած նշանաբանն էր՝ «օրէնք աստուածայինք կացցեն թագաւոր ի վերայ ամենայնի»<sup>22</sup>:

Հազկերտ Բ ամեննին հաշվի չառավ Հայաստանի ժողովրդի շահերը, և համոզված լինելով նրան հավատափոխ անելու իր մտահոգացման մեջ՝ նույնիսկ սահմանեց դրա ժամկետը, որպես սկիզբ հաստատելով հին պարսկական տոմարի վեցերորդ ամիսը՝ շահրիարը, որը համընկնում էր օգոստոս-սեպտեմբեր ամիսներին<sup>23</sup>: Հայերի կրոնափոխությունը պետք է ավարտվեր «մինչև ի գլուխ տարւոյ»<sup>24</sup>, այսինքն 450 թ. վերջին: Մակայն Հայ Եկեղեցու նպատակամետ ջանքերը հօդս ցնդեցրին արյաց արքայի ծրագրերը: Եկեղեցու կոչով ժողովուրդը ոտքի ելավ Հայրենի երկրի ազատությունն ու հոգևոր և քաղաքական ինքնագո կեցությունը պաշտպանելու համար, «զինեալք և սաղաւարտեալք, սուր ընդ մէջ և վահան ի ձեռին»<sup>25</sup>, երդվելով չինայել անգամ հավատուրացության դիմաց հորը, եղբորը, զավակներին, ամուսնուն: Այրարատի Ծաղկոտն գավառում, Հայոց սրբազան Արածանի գետի ափերին, Անգղ, ապա նաև Զարեհավան գյուղաքաղաքներում հայերը ուսանելի դաս տվեցին պարսից մոզերին: Ժողովրդական ընդվզումների հուժկու ալիքը տարածվեց երկրի գրեթե բոլոր հորիզոններում: Վասակ մարզպանը, սթափ գնա-

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 23:

<sup>18</sup> Եղիշե, էջ 28:

<sup>19</sup> Ղազար Փարպեցի, II, ԻԵ, էջ 47, Եղիշե, էջ 43:

<sup>20</sup> Եղիշե, էջ 50:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 57:

<sup>22</sup> Նույն տեղում:

<sup>23</sup> Տե՛ս С. Селешников, История календаря и хронология, Москва, 1977, с. 80.

<sup>24</sup> Եղիշե, էջ 52-53:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 58:

հատելով իրավիճակը, ջանաց միաբանել նախարարներին, որպեսզի պարսկական իշխանություններին հարկադրի զիջումների գնալ և չափավորել իրենց նկրտումները: Այդ նպատակով նա Ղևոնդ երեցին նրա երկու կարգակիցների հետ ուղարկեց Բագրևանդի Արամանա (Արաման) գյուղ՝ Վարդան Մամիկոնյանին ետ վերադարձնելու, քանի որ ժողովրդական շարժումն առանց մարտերում փորձված զորավարի չէր կարող հաղթանակի հասնել: Բայց եթե Վարդանն ապավինում էր ժողովրդի ուժերին, Վասակը ի սկզբանե համոզված էր, որ առանց դրսի օժանդակության հնարավոր չէ հաղթանակի հասնել և պահպանել Հայաստանի ինքնավար իրավունքները, քրիստոնեական կրոնն ու Եկեղեցին: Բյուզանդիայի, նաև հռոմեացի զորակցության ակնկալիքով նա Վարդանի հետ միասին անցավ շարժման գլուխ, ապա երդվեցին հավատարիմ մնալ «հաւատոյ ուխտին, և կնքեալ նախ մատանեաւ իշխանին Սիւնեաց Վասակայ և ապա մատանեօք ամենայն տանուտերացն Հայոց և աւագ սեպհացն, և եղեալ ի սուրբ Աւետարանի երդմանն՝ ետուն ցպատուական եպիսկոպոսն և ցաւագ քահանայութիւնն որ էին անդ»<sup>26</sup>: Այդ պահից ժողովրդական տարերային շարժումը մտավ կազմակերպված հունի մեջ: Ապստամբները գրավեցին Արտաշատը, Գառնին, Անի, Արտազերս, Կապույտ, Ողական և Որոտն ամրոցները, Վան քաղաքը և այլ բնակավայրեր, ոչնչացրին պարսից զորքի հենակետերն ու զրադաշտական կրակատները<sup>27</sup>:

Ժողովրդական շարժման գլուխ կանգնած էր նաև Վասակ մարզպանը, որին անգամ Վարդան Մամիկոնյանն ասում էր. «Զոր ինչ հրամայեցես ինձ՝ առնեմ անխափան»<sup>28</sup>: Վասակը նախարարների գիտությամբ օգնության խնդրանքով դիմումներ է ուղղում Բյուզանդիայի կայսրին: Ըստ Եղիշե պատմիչի, կայսեր մոտ է ուղարկվել Ատոմ Գնունին, մինչդեռ, ըստ Ղազար Փարպեցու, Բյուզանդիա մեկնած պատվիրակության կազմում ընդգրկված են եղել Վահան Ամատունին, Հմայակ Մամիկոնյանը (Վարդանի եղբայրը) և Մեհրուժան Արծրունին<sup>29</sup>: Ըստ այդմ հայերը Բյուզանդիա պատվիրակություն են ուղարկել երկու անգամ՝ նախ Թեոդոս Բ կայսեր (408-450), ապա 450 թ. օգոստոսի 24-ից նրան հաջորդած Մարկիանոս կայսեր (450-457) մոտ: Վերջինս հրաժարվել է զինական դաշինք կնքել ապստամբ հայերի հետ՝ չկամենալով խախտել տակավին 422 թ. կնքված պարսկա-բյուզանդական խաղաղության պայմանագիրը: Հոները ևս չկարողացան օգնել հայերին, քանի որ պարսից իշխանությունները կանխավ փակել էին ճորս դուռը (Դերբենտի լեռնանցքը): Ավելին, նրանք երկյուղում էին, որ հայերին կարող են միանալ նաև համադավան վրացիներն ու աղվանները, ուստի զորք մտցրին Աղվանք: Վերջինիս զորապետն ու եպիսկոպոսը ժամանեցին Այրարատ և գուժեցին, որ պարսիկները Աղվանքում ամենուրեք ատրուշաններ են կառուցում, կարգում են «մոզս և մոզպետս օրենսդիր ամենայն աշխարհիդ»<sup>30</sup>: Վարդանը Հայոց այրուձին շարժեց Աղվանք և Խաղխաղ քաղաքի մոտ փայլուն հաղթանակ տարավ պարսից զորքի դեմ: Այնուամենայնիվ, երբ Վասակը համոզվեց, որ դրսից օգնության հույսեր չկան, կտրուկ կերպով փո-

<sup>26</sup> Ղազար Փարպեցի, II, ԼԲ, էջ 62:

<sup>27</sup> Եղիշե, էջ 68-69:

<sup>28</sup> Ղազար Փարպեցի, II, ԼԲ, էջ 62:

<sup>29</sup> Եղիշե, էջ 71, Ղազար Փարպեցի, II, ԼԳ, էջ 63:

<sup>30</sup> Եղիշե, էջ 70-71:

խեց իր դիրքորոշումը՝ անհեռանկար համարելով զինված առճակատումը սասանյան գերակշիռ ուժերի հետ և փորձեց համաձայնության եզրեր գտնել պարսիկների հետ: Նա Միհրներսեհին և Սերուխտ գորապետին տեղեկացրեց, որ գորքի հիմնական մասն իր իշխանության տակ է և բոլորովին էլ չի պատրաստվում պատերազմել պարսից գորքի դեմ<sup>31</sup>: Վասակին կողմնակից էին Բագրատունի, Ապահունի, Խորխոռունի, Վահևունի, Պալունի, Աբեղենից և Ուրծի նախարարներն իրենց գորաբաժիններով<sup>32</sup>: Հավանաբար նրանք ևս սկզբում հարել են ժողովրդական շարժմանը, ապա Վասակի ազդեցությամբ որդեգրել են զգուշավոր ուղեգիծ: Վասակին հաջողվեց հրովարտակ կորզել Հազկերտ Բ-ից, որով արյաց արքան ներում էր ապստամբների բոլոր հանցանքները, անգամ պարսից մոզերի կոտորածը և թույլ էր տալիս ազատ կերպով դավանել քրիստոնեական կրոնը: Վասակն ու իր կուսակիցները հավատում էին ներման հրովարտակին, բայց նրանց չհաջողվեց հանդարտեցնել ապստամբներին, որոնք հավատի գորությամբ դարձել էին «ամենեքեան մի սիրտ և մի հոգի»<sup>33</sup>, պատրաստ իրենց արյամբ նվիրագործելու ազատագրական պայքարը: Նրանք, գրում է Եղիշեն, թեպետ «ոչ ունեին թագաւոր առաջնորդ, և ոչ արտաքուստ օգնական գոք յօտարաց, սակայն անձանց առաքինութեամբ և սուրբ վարդապետացն մխիթարութեամբ»<sup>34</sup>, հավատարիմ մնացին սրբազան ուխտին՝ նետվելով ժողովրդական պատերազմի բոցերի մեջ:

Հայ ապստամբներին զինական աջակցություն չցուցաբերեցին նաև վրաց իշխանները, որոնք, ինչպես նշվեց, Ավետարանի վրա երդվել էին գորակից լինել նրանց: Այն պահին, երբ Վարդան Մամիկոնյանը հաղթանակ տարավ Խաղխաղում, որը գտնվում էր «մերձ ի սահմանս Վրաց»<sup>35</sup>, վրացի իշխանները որևէ օգնություն ցույց չտվեցին նրան: Մինչդեռ աղվանները ոգի առնելով Վարդանի տարած հաղթանակով, միացան նրա գորքին և «միաբանք և հաւասարք կցորդք լինէին գործոյն նահատակութեան»<sup>36</sup>: Բայց աղվանները ևս անհեռանկար համարելով պատերազմի հետագա ծավալումը, չչարունակեցին պայքարը: Եղիշեի վկայությամբ Բաղասականի տիրոջ որդիները նույնիսկ պարսիկներին միացած պատերազմում էին հայ ապստամբների դեմ<sup>37</sup>:

Ապստամբության հրդեհը մարելու հույսով Վասակը ջանում էր իր կողմը գրավել նաև Եկեղեցու սպասավորներին: Դա մասամբ հաջողվեց նրան<sup>38</sup>: Վասակը նաև այդ կերպ կամենում էր պարսից վերնախավին համոզել, որ եկեղեցականների մի մասը դեմ է ապստամբությանը: Այդ նպատակով նա Միհրներսեհին ներկայացրեց իր կողմնակից հոգևորականներին<sup>39</sup>, թերևս հուսալով այդ կերպ Եկեղեցին զերծ պահել հետապնդումներից: Միհրներսեհը, համոզված Վասակի օրինապահության մեջ, նրան թագավորի

<sup>31</sup> Ղազար Փարպեցի, II, ԼԴ, էջ 64:

<sup>32</sup> Եղիշե, էջ 74, Ղազար Փարպեցի, II, ԼԶ, էջ 67:

<sup>33</sup> Ղազար Փարպեցի, II, ԼԴ, էջ 68:

<sup>34</sup> Եղիշե, էջ 73-74:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 75:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 78:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 76:

<sup>38</sup> Նույն տեղում, էջ 91:

<sup>39</sup> Եղիշե, էջ 95:

տիտղոս էր խոստանում, եթե, իհարկե, նա կարողանար մարել ապստամբության հրդեհը<sup>40</sup>: Նկատենք, որ Պարսկաստանում ընդունված կարգի համաձայն, սասանյան գահակալները մեծ ծառայություններ մատուցած մարզպաններին շնորհում էին թագավորի տիտղոս<sup>41</sup>:

Վասակի կողմնակից հոգևորականները գործուն քայլերի դիմեցին ժողովրդին հանդարտեցնելու նպատակով: Նրանք, ինչպես հաղորդում է Եղիշեն, շրջում էին ապստամբների մեջ՝ «Սուրբ Աւետարանան երդնուին և ասէին, եթէ «ի թագաւորէն շնորհեսցի ամենեցունց քրիստոնէութիւնդ»<sup>42</sup>: Սակայն Վասակը չկարողացավ իր ազատությունների, ազգային արժեքների, հավատի պաշտպանության համար ոտքի ելած ժողովրդին հանդարտեցնել, ուստի նրան չէին հավատում նաև պարսիկները: Միհրնեսէն անգամ Հազկերտի առջև մեղադրեց Վասակին իբրև խաբեբայի, իսկ արքան խոստացավ՝ Հայաստանը հնազանդեցնելուց հետո «մեծաւ անարգանօք տամ ըմպել նմա զբաժակն դառնութեան մահու»<sup>43</sup>: Գուցե դրանում որոշակի դեր են խաղացել նաև աներոջ դեմ Վարազվաղանի խարդավանքները, որոնց շնորհիվ նա, ինչպես նշվեց, հասավ քաղաքական բարձունքների: Բացի այդ, Հայաստանում այլևս լիիշխան իրավագործություն չունէր Վասակն իբրև մարզպան, քանի որ Վարդան Մամիկոնյանն արդեն իր ազդեցությանն էր ենթարկել «զամենայն աշխարհն»<sup>44</sup>, այդպիսով պահապան դառնալով երկրի ներքին ինքնավարության և ազգային արժեքների: Վարդանին և իր գորակիցներին նեցուկ էր կանգնած հզոր մի ուժ՝ Հայ Առաքելական Եկեղեցին: Ղազար Փարպեցու վկայությամբ Ավարայրի ճակատամարտին նախորդող զիշերը մինչև այգաբաց «ամենայն դասք քահանայիցն... վարդապետական բանիք քաջալերէին զբազմութիւն զօրացն՝ վայր մի քաջանալ, և անսպառ բարեացն լինել ժառանգաւոր...»<sup>45</sup>: Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ Երեցն անձամբ քաջալերում էին գորապետներին ու զինվորներին՝ նրանց զինելով անպարտելի ու անկապտելի հոգևոր զենքով: Ավարայրի ճակատամարտն ամենից առաջ հոգիների պատերազմ էր, որտեղ հաղթանակ տարան հայոց քաջամարտիկները, քանի որ արդարացի էր նրանց ոգորումը: Բոլորը զիտակցում էին, որ նահատակությամբ թույլ չեն տա, որ ոտխր շղթայի հայի հոգին, որ իրենք Հայրենի երկրին պարզևում են հոգևոր ազատություն, ազգային ինքնություն գոյության իրավունք: Իրենց հերթին Եկեղեցու սպասավորները «ցանկային մահակից լինել քաջ նահատակացն»<sup>46</sup>, գրում է Եղիշեն: Եվ Ավարայրի դաշտում, մարտից առաջ, նրանք սեղան կանգնեցնելով՝ «զամենասուրբ խորհուրդն կատարեցան. ուղղեցին և աւազան, և եթէ գոյր ոք երախայ ի բազմութեան զօրուն՝ զզիշերն ամենայն մկրտեցին. և ընդ առաւոտս սուրբ օրինացն հաղորդե-

<sup>40</sup> Ղազար Փարպեցի, II, ԽԲ, էջ 76, Եղիշեն, էջ 90:

<sup>41</sup> St' u այս մասին **А. Колесников**, О термине “марзбан” в сасанидском Иране (“Палестинский Сборник”, вып. 27 (90), Ленинград, 1981, с. 55).

<sup>42</sup> Եղիշեն, էջ 92:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 96-97:

<sup>44</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>45</sup> Ղազար Փարպեցի, II, ԼԸ, էջ 70:

<sup>46</sup> Եղիշեն, էջ 114:



ցան...»<sup>47</sup>: Վարդան Մամիկոնյանը գորքի առջև ելույթ ունենալով հիշեցրեց, որ հայրենի աստվածատուր օրենքների, հավատքի համար իրենք միշտ մարտնչել ու ոչնչացրել են թշնամիներին, «պարծանս անձանց ժառանգեցաք և զքաջ անուն ազգատոհմին մերոյ թողաք եկեղեցոյ»<sup>48</sup>:

Շեշտելով հոգևոր և աշխարհիկ իշխանությունների միաբանությունը, նա կոչ արեց չերկնչել ահեղագոր հակառակորդից, հիշեցրեց աստվաշաշնչական փոքր ժողովրդի՝ մակաբայեցիների գոյամաքառումը սելևկյան արքայի դեմ, ապա գորքը դասավորեց մարտակարգերով: Եվ,- գրում է պատմիչը,- «անդէն ի դաշտին գտեղի առեալ՝ զգօրսն զետեղէր, և յամենայն կողմանց տակաւ զայրուծին կազմէր»<sup>49</sup>: Այդպիսով, նա իր գորքի թևերը ապահովեց վտանգից՝ դրանք բոլոր կողմերից շրջապատելով այրուծիով: Բազում մարտերում փորձված զորավարը հմուտ մարտավարությամբ հայոց ուժերը հակադրեց Ավարայրի դաշտի ամբողջ լայնքով տեղակայված հակառակորդի զորագնդերին<sup>50</sup>: Նրա զորավարական ավյունի շնորհիվ Հայոց զորաբանակը քիչ կորուստներ ունեցավ, դրանում, անշուշտ, մեծ էր նաև հոգևորականների խաղացած դերը: Նրանք բարձրացրին հայ մարտիկների ռազմի կորովն իրենց մարտասնույց կոչերով: Ավարայրում վառ կերպով դրսևորվեց հայ ռազմիկների ու հոգևոր դասի միաբանությունը: Զորքի առջև ելույթ ունենալով՝ Ղևոնդ Երեցն ասաց. «Այսօր եպիսկոպոսք և երիցունք և սարկաւագունք, սաղմոսերգողք և գրակարդացք իւրաքանչիւր կարգեալ կանոնաւ՝ իբրև վառեալք զինու և պատրաստեալք ի պատերազմ, կամին ընդ ձեզ յարձակել հարկանել զթշնամիսն»<sup>51</sup>: Այդպիսով Ավարայրի դաշտում հայերը մարտնչում էին կրկնակի զենքով՝ հոգևոր և մարմնավոր, ուստի հակառակորդը, ունենալով ուժերի բացարձակ գերակշռություն, ավելի քան երեք անգամ մեծ կորուստներ ունեցավ, քան հայերը, որոնք ոգուն ապավինելով՝ մնացին անպարտ ու աներեր և Ավարայրից հետո ևս շարունակեցին մաքառումները՝ տիրելով «բազում գաւառաց և բերդից, զոր և ոչ առնուլ իսկ ոք կարէր»<sup>52</sup>:

Տեսնելով, որ Վասակ Սյունեցին չի արդարացնում իր հույսերը, Հազկերտը նրան ազատեց Հայաստանի մարզպանի պարտականություններից՝ փոխարենը նշանակելով Ատրորմիզդ Արշականին<sup>53</sup>, որն, ըստ երևույթին, ուներ Արշակունի ծագում<sup>54</sup>: Նոր մարզպանը փորձեց խաբեպատիր հնարներով խաղաղեցնել երկիրը: Նա Հազկերտի հրամանով իր մոտ հրավիրեց 37 ուխտապահ նախարարների՝ «սուտ երդմամբ և սնտախ խոստմամբ» համոզելով, որ նրանց չեն պատժելու և ոչ էլ զրկելու են իշխանությունից ու

<sup>47</sup> Նույն տեղում:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>49</sup> **Եղիշե, էջ 105:**

<sup>50</sup> Տե՛ս **Հ. Հակոբյան**, Հայոց մարտավարությունն ու ռազմավարությունն Ավարայրում («Ավարայրի խորհուրդը», Երևան, 2003, էջ 206-209):

<sup>51</sup> **Եղիշե, էջ 113:**

<sup>52</sup> Նույն տեղում, էջ 119:

<sup>53</sup> **Ղազար Փարպեցի, II**, և, էջ 73:

<sup>54</sup> **С. Еремян**, Народное-освободительная борьба армян против персов в 450-451 г.г., "Вестник древней истории", 1951, N 4, с. 60.

պատիվներից<sup>55</sup>: Հովսեփ կաթողիկոսն ու Ղևոնդ Երեցն ուրիշ եկեղեցականների և հայոց մի զորագնդի հետ ապաստանել էին մի ամրոցում: Պաշարվելով պարսից զորականների կողմից և նեղվելով պարենի պակասությունից՝ նրանք հավատացին սևամեջ խոստումներին (նրանց դեռ հավատ էր ընծայում նաև Վասակը) և ամրոցից ցած իջան: Սակայն պարսիկ զինվորները նրանց հանդեպ անարգ վերաբերմունք ցուցաբերեցին, կոտորելով 213 հայ զինվորի: Ցնցված դրանից՝ Հովսեփ կաթողիկոսը, Ղևոնդ Երեցն ու մյուս հոգևորականները կամովին իրենց պարանոցները պահեցին դահճապետի սրի տակ: Բայց նրանց չսպանեցին, հավանաբար, վերին հրամանով, դատական քննությամբ նրանց նկատմամբ Վճիռ կայացնելու նպատակով: Պարսից իշխանությունները հույս ունեին Եկեղեցին գլխատելու միջոցով մարել հույզերը, սակայն «ամենայն մարդ,-գրում է Եղիշեն,-յանձն իւր Եկեղեցի էր...մարմինք իւրաքանչիւր՝ սուրբ սեղան»<sup>56</sup>: Պարսիկները չէին կարող անտես առնել այդ զորավոր իրողությունը: Նրանք զգուշանում էին եկեղեցիներին դիպչելուց<sup>57</sup>, մանավանդ որ «բազումք ի նախարարացն Հայոց դեռ ևս բռնացեալ ունէին զամուրս աշխարհին, և դեռ ևս մարգպանն յերկիւղի էր»<sup>58</sup>: Ատրորմիզդ մարգպանն, անշուշտ, վերին իշխանության հավանությամբ, ստիպված էր մեղմ վերաբերմունք ցուցաբերել հայերի հանդեպ, որպեսզի չայրվի իր ոտքի տակի հողը: Նա նույնիսկ հրամայեց թեթևացնել հարկերը, արտոնեց ազատ կերպով պաշտել քրիստոնեական կրոնը, անգամ, ինչպես հավաստում է Եղիշեն, թույլ տվեց, որպեսզի բռնությամբ հավատն ուրացածները վերստին քրիստոնյա մկրտվեն, վերադարձրեց ազատներից բռնագրաված հողատիրությունները: Մարգպանի բարեհաճ վերաբերմունքը զինաթափեց բերդերում ամրացած նախարարներին, որոնք «իբրև տեսին զշինութիւն երկրին, մանաւանդ զեկեղեցոյն հաստատութիւն, քաջալերեցան համարձակեցան և նոքա յանդիման լինել արքային»: Մարգպանը նաև «զիր ողորանաց և ուխտ հաստատութեան տայր տանել առ նոսա հրամանաւ արքունի»: Թեպետ նախարարները գիտեին «զդառնութիւն տէրութեանն՝ թէ սուտեն յամենայնի, կամեցան չարչարակից լինել սրբոցն»<sup>59</sup>:

Սակայն դա չմեղմացրեց ապստամբություն հարուցելու մեջ մեղադրվող Եկեղեցու հայրերի նկատմամբ սասանյան վերնախավի վերաբերմունքը: Նրանց շղթաների մեջ դրած աքսորեցին Ապար աշխարհ (Խորասան): Աքսորի ճանապարհին նրանց հանդիպում է Վասակ Սյունեցին, որը դեռևս շնորհներ էր ակնկալում սասանյան դռան կողմից: Այլ կերպ էին դատում Ղևոնդ Երեցը և մյուս աքսորականները: Այս առումով ուշագրավ է Փարպեցու վկայությունը: Հազկերտ արքայի մոտ մեկնող Վասակը, հանդիպելով աքսորյալ հոգևոր հայրերին, փութապես ձիուց իջնելով ողջունում է նրանց, երկար ժամանակ ուղեկցում, անգամ հրավիրում է ճաշի: Եվ երբ «Յոյժ խնդալից սիրով» նրան դիմավորած հոգևոր հայրերը տեղեկացան, որ նա գնում է Հազկերտի մոտ, այնժամ Ղևոնդը, որ «անտրտում և զուարթերես...ախորժակ բանիւ լրջմտութեամբ խօսէր երկարս ընդ Վասակայ», չվարանեց ասել, որ Հազկերտը երբեք նրան չի մեծարի «թագաւորութեամբ աշխարհին

<sup>55</sup> Ղազար Փարպեցի, II, ԽԲ, էջ 75:

<sup>56</sup> Եղիշեն, էջ 125:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 127:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 103:

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 131-132:

Հայոց»<sup>60</sup>: Իրոք, 452 թ. սկզբին Տիգրանում թագավորական աստյանի կայացրած վճռով Վասակը դատապարտվեց ցմահ բանտարկության, որպես ապստամբությունը գլխավորողի<sup>61</sup>: Դաժան վճիռ կայացվեց նաև աքսորյալ հոգևոր հայրերի նկատմամբ: Երկու տարի բանտում պահելուց հետո Հովսեփ կաթողիկոսին, Ռշտունյաց Մահակ եպիսկոպոսին, Ղևոնդ Երեցին և ուրիշ հոգևորականների դատապարտեցին մահվան: «Կալանակյաց նախարարները,-գրում է Փարպեցին,- տեղեկանալով, որ նրանց նկատմամբ մահավճիռ է կայացվել, «լային դառնապես...վասն մնալոյ ի նոցանէ որքք և անմխիթարք»<sup>62</sup>: Հոգևոր հայրերն իրենց արյամբ քավեցին աշխարհիկ տերերին մեղսագրվածը: Դենշապուհը նրանց մեղադրեց, ասելով, որ «բազում նախարարք, որ այժմ կան կապանօք չարչաչեալ, վասն ձերոյ յամառութեանդ եղև այդ ամենայն»<sup>63</sup>: Հոգևոր հայրերը նախարարներին դիտում էին որպես իրենց հոգեգավակներ ու քաջալերողներ, ասելով՝ «Մեք այժմ զօրացեալք քաջալերցաք ի բանից շնարհալից հոգևոր ծննդոցս մեր, հարք յորդոց, վարդապետք յաշակերտաց...»<sup>64</sup>: Իսկ նախարարները գտնում էին, որ անգամ բանտում իրենց մեջ լսելի էր Եկեղեցու հայրերի հոգեպարար խոսքը: Նրանք մխիթարվում էին՝ ասելով, որ արժանի եղան «զծնողս մեր և զհոգևոր վարդապետս ի կենդանութեան մերում ի մարմնի իբրև զհրեշտակս տեսանել, և ի վախճանի իբրև զգուարթունս»<sup>65</sup>:

Պարսից իշխանությունները հաշվի էին առնում, թե ինչպիսի գորեղ գործոն է Հայաստանի աշխարհիկ և հոգևոր տերերի միաբանությունը ժողովրդական պատերազմում, որն ուներ ոչ միայն քաղաքական, այլև տվյալ պահին հույժ արմատական հոգևոր-գաղափարական զսպանակներ: Անգամ Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք, գրում է պատմիչը, մոռանալով իրենց կանացի տկարությունը, դարձան «արուք առաքինիք ի հոգևոր պատերազմին»<sup>66</sup>: Եկեղեցու և ազատանու միասնությունը խարխուլելու ուղղությամբ պարսից իշխանությունները ձեռնարկեցին որոշակի քայլեր, պատերազմի մեղքը, ինչպես նշվեց, բարդելով Եկեղեցու հայրերի վրա: Նրանց նկատմամբ կայացած մահվան վճիռն ի կատար ածվեց Հազկերտ Բ-ի գահակալման 16-րդ տարում՝ 454 թ. հուլիսի 7-ին, Ապար աշխարհի Ռևան անունով գյուղի մերձակայքում<sup>67</sup>: Հազկերտը հույս ուներ, որ Եկեղեցին գլխատելով ջլատելու է Հայաստանի դիմադրական կորովն ու զորությունը: Տիգրանի գերագույն աստյանը թեև մահավճիռ էր կայացրել նաև կալանված 37 նախարարների նկատմամբ, բայց 464 թ. նրանց ներում շնորհվեց՝ ավելի քան տասը տարի տևած բանտարգելից հետո: Հազկերտ Բ այդ քայլով կամենում էր հայ ազատանուն հեռու պահել իր ախոյաններից՝ Բյուզանդիայից և հոնական ցեղերից: Ազատ արձակված նախարարները վերստացան իրենց կալվածներն ու իրավունքները<sup>68</sup>, վերականգնվեցին

<sup>60</sup> Ղազար Փարպեցի, II, ԽԲ, էջ 77:

<sup>61</sup> Տեն նույն փեղում, II, ԽԵ, էջ 83-84:

<sup>62</sup> Նույն փեղում, II, ԾԱ, էջ 88:

<sup>63</sup> Եղիշե, էջ 161, փեն նա– Ղազար Փարպեցի, II, ԾԵ, էջ 97:

<sup>64</sup> Ղազար Փարպեցի, II, ԾԱ, էջ 91:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>66</sup> Եղիշե, էջ 202:

<sup>67</sup> Ղազար Փարպեցի, II, ԾԵ, էջ 97-98:

<sup>68</sup> Եղիշե, էջ 199:

նրանց իշխանությունները, որոնց շնորհիվ Հայաստանը պահպանեց իր ներքին իրավական համակարգն ու իրավագործությունը, քրիստոնեական շնորհապանծ հավատը: Եկեղեցին ևս, չնայած կրած ծանր կորուստներին, պահպանեց իր արժեհամակարգը, նվիրապետական կառույցները, վերականգնեց նաև իր ապահարկությունը: Շարունակելով Հայոց պետականությունը մարմնավորողի, ժողովրդին համախմբելու, համերկրային իրավակեցությունն ամրակայելու վեհ առաքելությունը, Հայոց Եկեղեցին մնում էր որպես երկրի ինքնավար իրավունքների հոգևոր պահապանն ու դրոշակակիրը: Նա ամեն տարի տոնում է Ավարայրում կյանքերը զոհաբերած քաջապանծ հայ ռազմիկների, նահատակված հոգևոր հայրերի սուրբ հիշատակը, որն իբրև արնավառ դրոշ, հավետ փողփողալու է երախտապարտ սերունդների սրտերում՝ ոգեկոչելով մեծագործությունների, սխրանքների:



Թարգմանության ժամանակի, թարգմանչի ինքնության և թարգմանության առանձնահատկությունների հետ կապված հարցերը Ի. Աբուլաձեի ուսումնասիրությունների հրապարակմամբ կարելի է այլևս պարզված նկատել<sup>2</sup>: Հայ-վրացական բանասիրության դասականը մինչև հայերեն տեքստի, նրա արդի վրացերեն թարգմանության ու համապատասխան հին վրացերեն գուգընթաց մասերի առկցմամբ խնամյալ հրատարակությունը հանգամանորեն քննության է առել «Վրաց պատմության» հայերեն թարգմանությանը վերաբերող Հ. Ն. Ակինյանի դրույթները<sup>3</sup> և հիմնավորել իր սկզբնական եզրակացությունները.

1. Թարգմանությունը կատարված է Դավիթ Շինարարի կրտսեր ժամանակակցի կողմից, հավանաբար 1151 թվականին<sup>4</sup>, ուրեմն այն կատարողը XIII դ. ապրած Սիմեոն Պղնձահանեցին չէ:
2. Թարգմանիչը սերում է Ստորին Քարթլիից կամ նրա մերձակա հայկական շրջաններից (գիտե *Ռութավիլի* և *Թոեղքի* այն ժամանակվա ոչ պաշտոնական անունները՝ *Ռիշա* (իմա՝ Արեշ) և *Ծալկա*):
3. Թարգմանիչը ազգությամբ հայ է և դավանությամբ միաբնակ. մեղմում է լուսավորչականների հասցեին ասված կոշտ խոսքերը:
4. Նրա թարգմանությամբ վավերացվում է ԺԲ դարի երկրորդ կեսի «Քարթլիս ցխովրեբայի» ընդգրկումը՝ Դավթի պատմությամբ ներառյալ:
5. ԺԳ դարի հայ պատմիչների ետղավթյան շրջանին վերաբերող տեղեկություն-լրացումները քաղված են այլ աղբյուրներից (Մխիթար Անեցի, Մխիթար Այրիվանեցի, Ստ. Օրբելյան):

Այս ամենն այլևս նոր քննության առարկա չպիտի դառնա, թեպետ կարող են լինել նոր դիտարկումներ ու լրացումներ: Ճիշտ այդպիսին պիտի համարել վաղամեռիկ աղբյուրագետ Մաուրմագ Կակաբաձեի հրատարակած հոդվածները «կՏապրՅՈՎրՄՌոռոՏԴՎՌՄ» և «Կովկաս և Բյուզանդիա» տարեգրքերում<sup>5</sup>. նա վրացերեն բնագրի երկու խումբ կամ խմբագրություն է առանձնացնում (այդ բաժանումը չի վիճարկվում), որոնցից առաջինը XVI-XVIII դարերի վեց գրչագրով ներկայացված **նախավախտանգյան** խմբագրությունն է, իսկ նրանց մեջ լիակատարը՝ Մարիամ թագուհու օրինակը (հայտ-

<sup>2</sup> Ի. Աբուլաձե, Քարթլիս ցխովրեբայի կամ Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը. - «Գիտական նյութերի ժողովածու», թիվ 1, Երևան, 1941, էջ 31-40: Տե՛ս նաև նախորդ ծանոթագրության մեջ նշված աշխատության 01-032 էջերը (վրաց.): Հմմտ. **նույն հեղինակի**՝ «Քարթլիս ցխովրեբայի հին հայ թարգմանիչն ու նրա գործունեության ժամանակը» հոդվածը «Կովկասի ժողովուրդների պատմության հարցեր» ժողովածոյում (Թբիլիսի, 1966, էջ 223-233 (վրաց.): Վերահրատարակություն տե՛ս **Իլիա Աբուլաձե**, Աշխատություններ, հատ IV, Թբ. 1985, էջ 109-119 (վրաց.):

<sup>3</sup> Հ. Ներսես վ. Ակինեան, Սիմեոն Պղնձահանեցի և իր թարգմանութիւնները վրացերենէ, Վիեննա, 1951, էջ 161-188:

<sup>4</sup> Փաստը հիշատակված է «Օտար պատմագիրներ» մատենագիտական ցանկում (տե՛ս Հ. Ս. Անանյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ LVII):

<sup>5</sup> Շ. Շ. Կակաբաձե, Установление критического текста начальной части “Картлис цховреба”. - “Палестинский сборник”, вып. 15(78), М.-Л., 1966, с. 172-179. Հմմտ. նույնի՝ Некоторые вопросы изучения древнеармянской версии “Картлис цховреба”. - “Кавказ и Византия”, 1, Ереван, 1979, стр. 73-81.

նի է M ցուցիչով, գրված է 1633-1646 թվականների միջև)<sup>6</sup>: Գրության ժամանակով հնագույնը Աննա թագուհու պատվերով XV դարի ավարտին ընդօրինակված օրինակն է, որ հայտնի է պատվիրատուի անունով: Ընդգրկված հուշարձանների քանակով ու հերթականությամբ այս գրչագիրն առավել մոտ է հայերեն թարգմանությանը (ասել է թե ավարտվում է Դավիթ Շինարարի Պատմությամբ):

Այս համառոտ ներկայացումից պարզ է այլևս, որ հայերեն թարգմանության պահպանված հնագույն ընդօրինակությունը (Մատենադարան, ձեռ. N 1902 գրված է 1276-1311 թվականների միջոցին) երկու դարով կանխում է վրացերեն հնագույնին: Մ. Ս. Կակաբաձեն նաև այս իրողությունը նկատի առնելով է, որ հայերենը կոչում է **խմբագրություն** և ոչ սոսկ **թարգմանություն**:

«Վրաց պատմության» այս խմբագրությունը գնահատելիս Մ. Կակաբաձեն համոզված չէ, թե հայկական խմբագրության տեքստում Դավիթ Շինարարի և Հովհ. Սարկավազի հարաբերությանը վերաբերող դրվագը ընդմիջարկություն է, ինչպես կարծում էր Ի. Աբովյանը: Նա գտնում է, որ դավանական համաձայնություն սատարող արքան կարող էր Հաղբասի անվանի վարդապետին խոստովանահայր ճանաչել: Կարդանք հայերեն թարգմանության այդ դրվագը.

«Այլ ինքն սիրեր զագգն Հայոց և զեկեղեցիսն և զոմն հռետոր վարդապետ ի Հաղբատ[այ] Սարկաւազ անուն. խոստովանէր նմա զյանցանս իւր և կորացուցեալ զպատուական զլուխն՝ արհնէր (կարդա՛ արհնիր – Պ. Մ.) ի նմանէ: Եւ նստէր ընդ նմա և փարէր զպարանոցսւ նորա, և նա ասէր. «Լուծեալ եմ և հոտեալ ի ծերութենէս, ի բաց գնա յինէն՝ զի մի՛ աշխատ լինիցիս»:

Եւ թագաւորն համբուրէր և ասէր. «Անպակաս լիցի հոտս այս յինէն, հայր պատուական»։ Եւ պարգևեաց նմա զեաւղ առնթեր վանացն՝ ի ծառայութիւն նմա: Եւ յարհնելն զթագաւորն զայն ասէր եղեալ զձեռս ի վերայ գլխոյն. «Գտի զԴաւիթ ծառայ և եւրով սրբով իմով ւածի զնա» մինչև ցտասներորդ տունն: Եւ զուարճանայր արքայն և զովէր զգեղեցկակերպ թարգմանութիւնն Հայոց»<sup>7</sup>:

Նախ ասենք, որ սուրբագրական քաղումը («գտի զԴաւիթ...») կատարված է ՁԸ սաղմուսի 21 համարից: Հետաքրքիր է ճանաչել շարունակության «ցտասներորդ տունն», որ այնքան հաճո է թվացել արքային. **«Ձեռն Իմ ընկալցի զնա, և բազուկ Իմ զօրացուցէ զնա: Մի՛ մեղիցէ նմա թշնամի, և որդի անօրէնութեան մի չարչարեսցէ զնա: Հարից առաջի նորա զթշնամիս նորա, և գատելիս նորա ի պարտութիւն մատնեցից: Ճշմարտութիւն Իմ և ողորմութիւն Իմ ընդ նմա, և յանուն Իմ բարձր եղիցի եղջեր նորա: Եղից ի ծովու զձեռն նորա, ի վերայ գետոց զաջ նորա: Նա կարդասցէ առ իս՝ Հայր իմ ես դու, Աստուած ընդունելի փրկութեան իմոյ: Ես անդրանիկ արարից զնա և բարձր**

<sup>6</sup> Վրացերեն գրչագրերի նկարագրությունը տե՛ս ակադ. Մ. Ղաուխչիշվիլու համահավաք հրատարակության առաջաբանում.– յարտղոս Երեւոյց, ցցղոս ժորտոսղոս եղղնա՛՛ցրղոս ժոեղղոսոս ցոմոսն և. ցո՛ցնո՛՛ցղոս, տձ., 1955, ցո. 014-021: «Քարթլիս ցլտվրեբա» ըստ բոլոր հիմնական ձեռագրերի Մ. Ղաուխչիշվիլու կողմից կազմված բնագիր, հատ. I, Թբ., 1955, էջ 014-021:

<sup>7</sup> «Քարթլիս ցլտվրեբայի» կամ «Վրաց պատմության» հին հայերեն թարգմանությունը, էջ 255: Քաղումը կատարել ենք մասնակի սրբագրումներով:

**քան զամենայն թագաւորս երկրի: Յաւիտեան պահեցից նմա զողորմութեան Իմ, և ուխտ Իմ հաւատարիմ ընդ նմա: Հաստատեցից յաւիտեանս յաւիտենից զգաւակ նորա, և զաթոռ նորա որպէս զաւուրս երկնից»<sup>8</sup>:**

Ինչպէս կարելի է ընթերցմամբ հավաստիանալ, իրոք «գեղեցկակերպ թարգմանություն» է, որ «Վրաց պատմության» փոխադրողը չի բերել, բայց և չի կարողացել ձեռնպահ մնալ շարունակության հասցեն տալուց: Դժվար է ապացուցել, որ Դավթի վերաբերող դրվագը եղել է վրացերեն սկզբնական բնագրում և հետագայում դուրս մնացել ընդօրինակություններից, ինչպէս փաստորեն հակված է կարծել Ս. Կակաբաձեն: Ավելի մոտ կլինենք ճշմարտության, եթե ասենք, որ Դավթի և Սարկավագի մտերմության պատմությանը Կիրակոս Գանձակեցին ծանոթացել է ոչ թե բանավոր աղբյուրից, այլ ճիշտ և ճիշտ «Վրաց պատմության» հայկական խմբագրության վերոբերյալ տեղեկությունից: Ոչ պատահականորեն նրա մոտ կան քաղում հուշող բառեր ու արտահայտություններ<sup>9</sup>, որոնք իրենց հերթին ապացույց են թարգմանության՝ նախորդ դարում կատարված լինելու: Այդպիսիք նկատելի են նաև Մատթեոս Ուռուխայեցու «Ժամանակագրության» տեքստում: «Եւ էր Դաւիթ արքայ սուրբ և առաքինի, զարդարեալ ամենայն աստուածապաշտութեամբ և բարի արդարութեամբ, և սա երևեցաւ ընդունող և սիրող ազգին Հայոց: Առ սա ժողովեցան մնացեալ զօրքն Հայոց. և սա շինեաց քաղաք Հայոց յաշխարհն Վրաց և հաստատեաց եկեղեցիս և վանորայս բազումս, և անուանեաց զանուն քաղաքին Գօռա, և ուներ մեծաւ ուրախութեամբ և ցնծութեամբ զամենայն ազգն Հայոց: Կայր և հարազատ որդի մի թագաւորին Դաւթի, որում անուն ասէին Դեմետրե, ի հայ կնոջէ, և եղբօր թագաւորին ասէին Թօտորմէ (Թօտորէ)»<sup>10</sup>:

Որ պատմողական աղբյուրներում ավանդվածը իրական հիմք ունի՝ կարելի է հավաստիանալ Հաղբատի Ս. Նշանի արևմտյան մուտքի ճակատին Մեծ գավթի մեջ պահպանված և ընդհատումներ ունեցող արձանագրության հաղորդումից, ուր խոսվում է ի ձեռն Դավթի Շինարարի Հաղբատը ազատագրելու, ապահարկ դարձնելու և «գեաւղ առընթեր վանացն» նվիրելու մասին: Հովհ. Արիմեցու ընդօրինակության մեջ ավելի պարզորոշ է ասված. «...Եղև խնամող Հաղբատայ և Սանահինի... ընթացեալ քաղցր և բարեսէր աստուածապաշտութեամբ... զՀաղբատ ի մթնութենէ աւերութեանն ազա-

<sup>8</sup> Մաղմ. ԶԸ, 21-30: Հիրավի սքանչելի օրհնանք ու ձոն է և լիովին արժանի հայոց միաջավայրում ևս սիրո և ճանաչման արժանացած Դավթի Շինարարին: Պարզ է, որ հայ թարգմանչի ձեռքի տակ եղել է համարակալ տներ ունեցող Մաղմուսարան:

<sup>9</sup> Հմմտ. «Եւ կարի յոյժ սիրէր զսա (իմա զՍարկաւագ - Պ.Ս.) թագաւորն Վրաց Դաւիթ, հայրն Դեմետրեայ, պապն Դաւթի և Գիորգեայ, այնքան, զի մինչ լսէր զգալուստ նորա, և խոնարհեցուցեալ զզլուխն՝ ինդրէր ի նմանէ օրհնութիւն: Եւ նա եղեալ զձեռն ի վերայ գլխոյ նորա, զայս սաղմոս ասէր. «Գտի զԴաւիթ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա... Եւ ի պատճառս սորա սիրէր թագաւորն զազգս Հայոց».- *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 114:

<sup>10</sup> *Մատթ. Ուռուխայեցի*, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 356-357, էջ 365-ում Դավթի մահվան կապակցությամբ դարձյալ նա կոչված է «բարեպաշտ սուրբ թագաւոր», իսկ Դմիտրե որդին՝ «այր քաջ և աստուածասէր, նմանեալ հօր իւրոյ» և «որ էր Հայ կնոջէն»: Անհաջող կետադրության պատճառով գրաբար բնագրում ու նրա աշխարհաբար թարգմանության մեջ (1973 թ.) Դավթը ներկայացված է իբրև Բագրատի որդի (էջ 349, աշխ. թարգմ. էջ 234), մինչդեռ նա Գեորգիի որդին է, Բագրատի թոռը:



տեաց, գրով և վճռով ընծայեաց ի սուրբ եկեղեցիս զայգիս ...զգիւղն... և ամենայն հողով և վիճակովն... զեղեալ կալուածս ամենայն վերահաստատեաց...»<sup>11</sup>:

Ինչ վերաբերում է վրաց միջավայրում Սարկավագի ճանաչումին, ապա, ինչպես վաղուց արդեն նկատված է<sup>12</sup>, այդ կարելի է վկայված համարել նրա «Վասն շարժման և սասանութեան երկրի» աշխատության առաջին տողերի ծանուցումից՝ «Հարցմունք Վրաց եպիսկոպոսի ի Հայոց վարդապետե Սարկավագէն՝ զիր գոլով յաղագս ամենայն, եթե՝ զի՞ արդ ունի երգ սաղմոսին ասացեալ. «Դու խորտակեցեր զգլուխ վիշապաց ի վերայ ջուրց, դու փշրեցեր զգլուխ վիշապին և ետուր զնա կերակուր զաւրացն Հնդկաց»<sup>13</sup>: Այս փաստից կարելի է հետևեցնել, թե Դավիթ Շինարարի և Հովհ. Սարկավագի հարաբերություններին վերաբերող դրվագը, անկախ նրա ընդմիջարկություն լինելուց կամ ոչ, պատմական հիմք ունեցող հաղորդում է: Ինչպես երևում է, Դավթի օրոք և նրա իսկ վարած քաղաքականության շնորհիվ հայ-վրացական դավանական վեճերը բավական մեղմվել էին, ուստի Սարկավագի առաջ արքան կարող էր խոստովանել, իսկ վրացի հոգևորականը՝ նրան դիմել տիեզերագիտական-օդերևութաբանական մեկնություն ստանալու համար, դարձյալ նկատի ունենալով սաղմոսից քաղված վկայությունը:

«Վրաց պատմության» հայկական խմբագրության ավարտին, կորած հիշատակարանից առաջ եղած այս դրվագը ինքնին թարգմանություն ձեռնարկելու խթանող պարագա կարող է նկատվել՝ միաժամանակ մատնացուցելով վրաց թագավորի մղած կռիվների վերաբերմամբ հայոց միջավայրում եղած համակրությունն ու ակնկալությունները:

Ավելորդ չէ նկատել, թե հայերեն խմբագրության կազմողն ու թարգմանիչը «Վրաց պատմությունը» դիտում է իբրև միասնական-ամբողջական պատմագրական հուշար-

<sup>11</sup> Տե՛ս **Կ. Ղաֆաղարյան**, Հաղբատ, Երևան, 1963, էջ 144-145: Հմտ. *ղ. յեթե մեջլոյկեցո-ձեցո*, «Ֆրեզոլո մեճրցո» ևճմցեոճ մեճլցոճրեո» ևճ մեճո յոճեճոճ, ԹՅ. 1928, թՅ. 136-137. Կ. Ղաֆաղարյանը թվագրում է «1110 թվից հետո», մինչդեռ Լ. Մելիքսեթ-Քեկը վերականգնում է հայոց ՇՀ[Բ. Գ. Դ.] թվականը, որ է 57[2-3-4], իմա՛ 112[3-4-5]:

<sup>12</sup> *ղ. մեջլոյկեցո - ձեցո*, նշվ. աշխ., էջ 137:

<sup>13</sup> Սաղմ. 2Գ, 13-14: Սարկավագի բնագրի հրատարակությունը տես՝ **Լ. Մելիքսեթ-Քեկ**, Հովհաննես Սարկավագ վարդապետ Հաղբատացու «Վասն շարժման և սասանութեան երկրի», Արմֆանի, Տեղեկագիր, 1943, N 1, էջ 73-83: Նան՝ **Ա. Գ. Աբրահամյան**, Հովհաննես Բնաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 302-305: Ընդարձակ խմբագրության բոլոր հրապարակումների աղբյուրը նույնն է՝ Սրբոց Հակոբյանց հավաքածոյի N 1272 ձեռագիրը (Տոնապատճառ, 1290 թ., էջ 376r - 379v): Մինչև «Յիշատակարան ձեռագրացում» այս բնագրի հրապարակումը (հատոր Ա, Անթալիա, 1951, էջ 343-348) Գ. Հովսեփյանը իր ունեցած ընդօրինակումը տրամադրել է Լևոն Մելիքսեթ-Քեկին (տես «Ֆրեզոլո մեճրցոճ...» էջ 137, ծան. 2), որը տարիներ անց ստացածն հրատարակել է («Արմֆանի տեղեկագիր», 1943, N 1, էջ 73-83): Այստեղից վերցնելով վերահրատարակել է Ա. Աբրահամյանը («Հովհաննես իմաստասերի մատենագրությունը», Երևան, 1956, էջ 302-304): Գ. Հովսեփյանի օրինակում եղած վրիպյալ ընթերցումները, որոնց մասին խոսք է ասել Ն. Պողարյանը («Մայր ցուցակ...», էջ 451), հաջորդաբար կրկնվել են: Ստուգյալ հրատարակություն տես **Ա. Յ. Մրճունի**, Հարցմունք վրաց եպիսկոպոսի, «Միոն», 1972, թիվ 9-10, էջ 341-343: Սարկավագի այս աշխատության համառոտ խմբագրությունը պահպանվել է Վիեննայի Մխիթարյան միաբանություն, թիվ 324 ձեռագրում և հրատարակվել Հ. Հ. Ոսկյանի «Հովհաննես Սարկավագի գրութիւնները».- Հանդես ամսօրեայ, 1925, թիւ 5-6, էջ 238-239:

ձան, ուստի այն ներքին թեմատիկ կամ հեղինակային բաժանում չունի<sup>14</sup>: Նրա թարգմանության-խմբագրման եղանակն ու մեթոդը պարզ դարձնելու համար կարելի է համեմատության առնել Դավիթ Շինարարի հորդորով հրավիրված հայ-վրացական դավանական քննարկմանը վերաբերող դրվագի վրացերեն բնագիրն ու նրա հայերեն ամփոփ թարգմանությունը<sup>15</sup>: Լիովին գեղջված են հայերին վերաբերող «նենգ» ու «չար» բնութագրումները, քննարկման ընթացքը ներկայացված է «ոչ հաւանէին միմեանց (կարդա՛ գմիմեանս – Պ.Մ.)» և «ինքն պարզ և յայտնի բանի խաղաղացուցեալ գերկոսին կողկողմանսն՝ արձակեաց գժողովն» ամփոփմամբ (էջ 255):

Հայկական խմբագրության հավելումների շարքում մասնավոր ուշադրության է արժանի այն հատվածը, ուր պատմվում է Աստծուն տեսնելու համար աշտարակաշինության և իրենց իմացած յոթ լեզուն մոռանալու և «աւտար լեզուս ըստ թոյոյ իւրեանց» առնելու մասին<sup>16</sup>:

#### «Քարթլիս ցխովրեբա»

«...Իսկ Նեբրովթին պարսկերեն լեզվով ասաց. Ես Միքայել հրեշտակն եմ, որս Աստծու կողմից նշանակված եմ Արևելքի իշխանության վերակացության]: Դուքս արի այդ քաղաքից, քանզի Աստված է հովանավորում այդ քաղաքը՝ մինչև դրախտի հայտնվելը, որը քո այդ կառույցների մոտ է գտնվում, որի մեջ է արև ճառագող և երկու գետ՝ Նեղոս և Գեհոն, հորդող լեռը...»

...Եվ բոլորը թողին քաղաքն ու գնացին. հնդկերեն խոսողները տեղավորվեցին Հնդկաստանում, սինդերը՝ Մինդեթում, հռոմեացիները՝ Հռոմում, հույները՝ Հունաստանում, Ազ ու Մագուգը՝ Մագուգեթում, պարսիկները՝ Պարսկաստանում: Իսկ առաջին լեզուն ասորերենն էր, և այս յոթ լեզուներն են, որոնցով մինչ Նեբրովթը խոսում

#### «Վրաց պատմություն»

«Եւ ի պարսիկ լեզու գայր ապա ձայն առ Նեբրովթ, որ ասէր ցնա՝ Ես եմ Միքայել, որ ասեմ քեզ բանի Տեառն. ել և գնա այտի, զի ահա ձեռագործդ այդ հասաւ հանդէպ դրախտին, բայց լեառնս այս, ուր կամ ես, միայն անջրպետե գորախտն, ընդ որոյ ստորոտն ելանէ արեգակն: Եւ ընդ այս ելանեն գետքն Նեղոս և Փիսոն. Գեհոն բերէ...»

...Եւ թողեալ զքաղաքն և զաշտարակն, գոր շինէին, գնացին յաշխարհն իւրեանց. **Թորգոմասս ի Թորգոմեանսն**, Սիդոն՝ ի Սիդեթ, Բերձեանք ի՝ Բերձեանս, Յոյնք՝ ի Յունեթ, Ազ ու Մագ՝ յԱզմագուգեթ, Պարսք՝ ի Պարսս և այլք՝ յայլս: Եւ այս բանք չեղև յայտնապէս աւացեալ, այլ գրեցաւ և պահեցաւ ի ծա-

<sup>14</sup> Ի. Աբուլաձեի հրատարակության մեջ եղած 5 բաժանումները կատարված են աշխատասիրողի կողմից՝ ելակետ ունենալով վրացերեն բնագրին ակադ. Իվ. Ջավախիշվիլու տված սահմանումներն ու գնահատությունները: Հմմտ. С. Карабадзе, նշվ. աշխ., էջ 75-76:

<sup>15</sup> Բնագրերի գուգաղիբ հրատարակությունը տե՛ս պրոֆ. դր. **Լ. Մելիքսեթ-Քեկ**, «Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հատ. Ա, Երևան, 1934, էջ 219-220:

<sup>16</sup> Դրվագն ընդգրկված է Ջուանշերի «Վարք և քաղաքավարություն Վախտանգ Գորգասուլի» բնագիր (տես՝ յ. Ե., I, 33. 161-163, «Վրաց պատմություն», էջ 158-159): Վկայակոչվող հատվածի սկզբի մասը, ներառյալ կրճատվածը, նույնությամբ կրկնված է Լեոնտի Մրովելու երկի տեքստում՝ Միրանի հետ կապված (էջ 105, 16-12): Այդ դրվագը քաղված է «Քարթլիի դարձ»-ից, Աբիթար քահանայի հեղինակությունը կրող մասից:

էին:

Այս վերաբերմամբ պիտի ասեմ ձեզ, որ մեր հայրերը այս գիրը թաքուն էին պահում, իսկ ինձ աստվածային խանդը ստիպեց այն ասել, այսու մեր հայր Միրիանը ընդունեց Նինոյի կողմից Քրիստոսի Ավետարանը: Թե չէ մինչև Քրիստոսի գալուստը մեր հայրերը հարկ էին վերցնում, և այն ժամանակվանից անգորացանք, այնքան, որ հույներն են մեր վերաբերմամբ հրամայում:

Եվ նա տեսավ Նեբրովթին դժոխքում և ազատեց. նա է բոլոր թագավորներից առաջինը, և Դանիելն էլ վկայում է, որ Միքայելը կարգված է պարսիկներին գորելու: Եւ դուք բոլոր վրացիներդ տեսաք այս հրաշքները, որ կատարեց Նինոն: Կամ հիշեք, [թե] Աստված ինչպես զոհեց հույներին»<sup>17</sup>:

Ընդգծված մասի կապակցությամբ նախ ասենք, որ թարգմանիչ-խմբագիրը Բելին, Նեբրովթին ու Կոռնոսին նույնացնելիս աչքի առաջ ունի Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը», որտեղ գրեթե բառացիորեն նույնն է ասված. «զԲելայ, առ որով նախնին մեր Հայկ՝ բազումք բազում ինչ այլ ընդ այլոյ պատմեն, բայց ես ասեմ զԿոռնոսոյ անուն և զԲել՝ Նեբրովթ լեալ» (I, Է): Ինչպես երևում է՝ Խորենացու ակնարկած «բազում ինչ այլ ընդ այլոյ» պատմածներից մեկն էլ անանուն թարգմանչի վկայությունն է, թե պարսիկների նախնի Նեվբրովթին դժոխքից ազատողը Քրիստոսն է եղել, այդ իսկ պատճառով էլ «դուք՝ Պարսքդ, եթե չէք աստարք ի Քրիստոսեն մերոյ»: Իհարկե, միտքը օտար չէ և վրացերեն բնագրին՝ «թե չէ մինչ Քրիստոսի գալուստը... և նա (իմա Քրիստոսը) տեսավ Նեբրովթին դժոխքում և ազատեց», սակայն համատեքստը խրթնացված է անհաջող միջամտությամբ: Պարսիկների՝ «մեր Քրիստոս օտարք չլինելը», ինչպես հայ թարգմանիչն է ձևակերպել, թույլ է տալիս ենթադրել, թե նա «Գիրք թղթոցից» գիտե Պարսկաստանի քրիստոնեական եպիսկոպոսական թեմերի ու աթոռների գոյության մասին, ինչպես նաև մայրենի լեզվով կարդացել է պարսիկ նահատակների վարքերն ու վկայաբանությունները (Դավիթ Դվնացի, Եզդիբուզիդ, Գուլանդուխտ և այլն), տեղյակ եղել եկեղեցական ժողովների պատմությանը<sup>19</sup>:

Ուշագրավ տարբերություններ կան աշտարակ կառուցողների էթնիկական անվա-

<sup>17</sup> Վկայակոչվող հատվածը համահավաք բնագրում ներկայացված է ըստ տարբեր ձեռագրերի ընթերցումների (ՃԳ., I, 162-163): Նրանք բավական անհաջող են միմյանց շարունակում: Խրթնությունն ակներև է:

<sup>18</sup> «Վրաց պատմության հին հայերեն թարգմանությունը», էջ 157-159:

<sup>19</sup> Այսպես կոչված Պարսից ժողովի մասին տե՛ս **Ե. Գ. Տեր-Մինասյան**, Պատմա-բանասիրական հետազոտություններ, Երևան, 1971, էջ 45-58:

ծուկ որպես խորհուրդ. և ես պատմեցի ձեզ յազուտ, զի զիտասջիք և դուք՝ Պարսքդ, եթե չէք աստարք ի Քրիստոսեն մերոյ. և նախնին ձեր Բել, որ նա ինքն է Նեբրովթ, որ Կոռնոսն կոչի, ազատեալ է ի դժոխոց յԱստուծոյ մերոյ Քրիստոսէ, և դուք ինչպեցեք յամենեսեան, որք բարձեալ բերեցին զանուն նորա սուրբ, և մի ակերեք զսուրբ տաճար նորա, զի մի բարկութիւն նորա բորբոքեցցի ի մեզ»<sup>18</sup>:

նումների և նրանց բնակատեղերի տեղորոշման բաժնում: Վրացերեն բնագրի հնդիկների և Հնդկաստանի փոխարեն հայերենում առաջինը **Թորգոմոսն** ու **Թորգոմյաններն** են: Փոխադրողի համար հռոմեացիները նույն հռոմեներն են, այսինքն փոքրասիացի հույները, բայց քանի որ շարունակության մեջ հույներն ու Հունաստանը հիշատակվում են, նա գերադասել է կրկնությունից խուսափելու համար վրացական էթնոնիմ ու երկրանուն գործածել՝ **«Բերձեանք՝ ի Բերձեանս»**, դրա տակ հասկանալով Բյուզանդիան և բյուզանդացիներին (բերձենի և Սաբերձներթի): Մինդերի մասին նա որոշ տեղեկություններ պիտի ունենար դարձյալ Խորենացու երկից (II, Ի, ԻԳ), սակայն դժվարության առաջ է կանգնել նրանց երկիրն անվանելիս, ուստի գերադասել է պարզապես գրադարձել վրացերենի **Մի/ն/դէթ**, և այս իրողությունը արդարացնելու համար էլ իրեն քաջ հայտնի Յունաստանը արհեստականորեն դարձրել **Յունէթ**:

Վերոշարադրյալը հուշում է, թե «Վրաց պատմության» 1151 թվականին կատարված հայերեն թարգմանությունը նկատառելի է մի քանի առումներով:

1. Հյուսիսային Հայաստանի գրչության նշանավոր կենտրոններից մեկում միաբանող այս **անանուն միաբնակ թարգմանիչը** ընդառաջել է ժամանակի հայոց միջավայրում ձևավորված կենդանի հետաքրքրությանը վրաց անցյալի վերաբերմամբ և ձեռնամուխ եղել հարևան ու բախտակից ժողովրդի մինչ իր ժամանակները գոյություն ունեցող ամբողջական պատմական փաստորեն միակ ժողովածուի թարգմանության:
2. Որքան էլ թարգմանիչը վրացերեն բնագրի համառոտումներ ու ընդմիջարկումներ կատարած լինի, նրա փոխադրած տեքստը պատմականության ու ստուգության առաջ չի մեղանշում, ուստի «Քարթլիս ցխովրեբայի» վրացական ձեռագրական խմբերն առանձնակի քննարկելիս ու վերականգնումներ կատարելիս հայերենը պիտի դիտել իբրև վրացերեն հնագույն գրչագրերի չափ կարևոր և մասամբ նրանց կանխող տարբերակ:
3. Եվ, վերջապես, թարգմանչի կատարած համառոտումներն ու միջարկումները թույլ են տալիս «Քարթլիս ցխովրեբայի» հայերենը կոչել երկի **տարբերակ** կամ **խմբագրություն**:

\*\*\*

Միջնադարյան կամեցածդ մատենագրական երկի թարգմանություն, առավել ևս պատմագրական հուշարձանի, թելադրված է տեղական պատմա-մշակութային պահանջմունքով: Հարկավ այդ վերաբերում է և XII դարում կազմավորված «Վրաց պատմությանն» ու Միխայել Ասորու «Ժամանակագրության» XIII դարի հայերեն թարգմանություններին, ընդ որում երկրորդը կրկին վերամշակմամբ: Թարգմանություններն իրենց վրա կրում են բնագրի լեզվամտածողության և միաժամանակ հայրենի գրավոր ավանդների կնիքը:

Հայոց իշխանաց-իշխանին հասցեագրված լատիներեն նամակում Հռոմի Նիկողայոս Ա պապը կոչ էր անում. «Բայց այս նամակին համար մի՛ վարանիք այն պատճառով, որ նոյն չէ Քաղկեդոնի ժողովքին մեջ եղած թարգմանութեան հետ. որովհետև ան եղած է

յունաց լեզուին յատկություններուն պահանջին համաձայն, և բառին դիմաց բառ չեն դրած. սակայն իմաստին ճշտությունը պահելով՝ ջանացած են յստակութեան ուշ դնել, ինչ որ վերինին ալ չի պակսիր: Եւ ինչպէս ձեր մօտ, այսպէս մեր մօտն ալ ընդունելի է: Եւ ոչ ալ հարկաւոր է երկու լեզուներու յատկություններով գրել՝ ցոյց տալով երկու տարբեր եզրերու համաձայնությունը, երբ բառին դիմաց բառ դնենք, ինչպէս մեր հին դիւաններուն մէջ կը գտնուին»<sup>20</sup>:

«Քարթլիս ցխովրեբայի» հայերեն թարգմանության մեջ նույնպէս «*բառին դիմաց բառ չեն դրած, սակայն իմաստին ճշտությունը պահելով՝ ջանացած են յստակութեան ուշ դնել*»:

<sup>20</sup> Տե՛ս Հ. Պօղոս Անանեան, Զարբարիա Հայոց Կաթողիկոսի և Աշոտ իշխանաց իշխանի թղթակցությունը Փոստ պատրիարքի և Նիկողայոս Ա. պապի հետ, Վենետիկ – Ս. Ղազար, 1992, էջ 89 (լատիներեն բնագիրը տե՛ս անդ, էջ 92):

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

## ՅՈՂԱՆ ԳՐԶԻ ԸՆԴՕՐԻՆԱԿԱԾ ՊԱՏՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ԵՎ ԿԱՏԱՐԱԾ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Մերոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող հազարավոր ձեռագրերի մեջ կան գիտության և արվեստի տարբեր բնագավառների համար բացառիկ նշանակություն ունեցող մատյաններ: Պատմագիտության համար այդպիսի եզակի արժեք է Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը, որը ձեռագրացուցակում անվանված է «Պատմագիրք Հայոց» և պարունակում է Մովսես Խորենացու Հայոց պատմության հնագույն ընդօրինակություններից մեկը (էջ 2բ-135ա), Ստեփանոս Տարնեցի Ասողիկի պատմության (էջ 137ա-242ա) և Արիստակես Լաստիվերցու պատմության (էջ 242ա-311բ)<sup>1</sup> առայժմ հայտնի ամենավաղ ընդօրինակությունները:

Ձեռագիրը գրված է թղթի վրա, ունի 312 թերթ (33,5x25 սմ), գրչությունը՝ բոլորգիր, երկայուն: Մատենադարանի ձեռագրացուցակում ենթադրաբար համարվում է 14-րդ դարի մատյան<sup>2</sup>: Ձեռագրի գրիչը հիշատակարաններում իրեն անվանում է Յոհան: Նրա ընդօրինակած մատյանը սկզբից, Մովսես Խորենացու պատմության մասում վնասվել, թերթատվել է, և 1567 թ. Խիզանի Ղարասու գյուղում Ներսես վարդապետ Գնունեցու պատվերով այն լրացրել է Իգնատիոս գրիչը<sup>3</sup>:

Մովսես Խորենացու պատմության քննական բնագիրը հրատարակած Մ. Աբեղյանն ու Ս. Հարությունյանը ձեռագիրը նկարագրելով նշում են մի քանի ձեռագրացուցակային տվյալներ, որից հետո գրում են. «Այս ձեռագիրը Խ (խառնուրդ - Կ. Մ.) խմբին պատկանող բոլոր ձեռագրերի ընդհանուր մայրն է և մեզ յայտնի բոլոր ձեռագիրներից ամենահինը: Յիշատակարաններից երևում է, որ երկու անգամ նորոգուած է, մեկ՝ 1567 թուին Ներսես վարդապետի պատուերով Իգնատիոս գրչի ձեռով. մեկ էլ՝ 1684 թուին Բաղիշոյ առաջնորդ Աւետիք վարդապետի պատուերով Դաւիթ Ճնճղուկ գրչի ձեռով: Գրքի հին

<sup>1</sup> Ձեռագրի 3բ էջում Մովսես Խորենացու և նրա պատվիրատու Սահակ Բագրատունու հայտնի մանրանկարն է (տե՛ս Ա. Գևորգյան, Հայկական մանրանկարչություն. դիմանկար, Երևան, 1982, նկ. 63), 135ա-136բ էջերում 1567 թ. եւ 1684 թ. նորոգման հիշատակարաններն են, իսկ 312բ էջում ուշ շրջանի մի նյութ՝ «Այս են կարգ վարդապետաց մերոց...»: Ձեռագրի 312ա էջում գրված է. «Սոյն գիրքս Աւելյու վանքինն է» (Ավելյու Ս. Աստվածածին վանքը գտնվում է Բաղեշի մոտ):

<sup>2</sup> Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին՝ Օ. Եգանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաբյան, Երևան, 1965, հ. Ա, էջ 891:

<sup>3</sup> Մովսես Խորենացու Պատմությունն Իգնատիոսը լրացրել է Յոհանի գրածից պակասող թերթերով, որն ըստ հաջորդականության հետևյալ պատկերն է ներկայացնում՝ էջ 2բ-25բ (Իգնատիոս), 26ա-32բ (Յոհան), 33ա-44բ (Իգնատիոս), 45ա-45բ (Յոհան), 46ա-46բ (Իգնատիոս), 47ա-80բ (Յոհան), 81ա-81բ (Իգնատիոս), 82ա-106բ (Յոհան), 107ա-116բ (Իգնատիոս), 117ա-134բ (Յոհան), 135ա-136բ (Իգնատիոս): Հաջորդ՝ 137ա էջից սկսվում է Ասողիկի պատմությունը, որին հաջորդում է Արիստակես Լաստիվերցու պատմությունը, որն ամբողջովին Յոհանի ընդօրինակությունն է:

մասի գրչի անունն է Յոհան, իսկ գրության տեղն ու թուականն անյայտ են: Գրքի մեծագույն մասը հին է եւ կարող է 14-րդ, գուցէ եւ 13-րդ դարու լինել»<sup>4</sup>: Այնուհետև բերվում են Իզնատիոսի 1567 թ. նորոգման 1684 թ. հիշատակարանների կարևոր մասերը, նշվում են մի շարք այլ տվյալներ: Յոհանի որևէ հիշատակարան չի մեջբերվում: Ձեռագրի հին մասի վերաբերյալ ասվում է, որ այն «գրուած է հին ուղղագրութեամբ. օձայնաւորի փոխանակ ունի աւ, իւ երկբարբառի տեղ՝ էւ (ինչպէս՝ առեւծ, արեւն...)» և այլն<sup>5</sup>:

Արիստակէս Լաստիվերցու պատմության համեմատական բնագիրը հրատարակելիս Կ. Յուզբաշյանն ավելի մանրամասնորեն է նկարագրում ձեռագիրը, հատվածներ ներկայացնում Յոհանի հիշատակարաններից (այդ մասին կխոսվի ստորև): Ձեռագրի հնագրական և ուղղագրական առանձնահատկությունները նշելուց հետո նա գրում է. «Նկատի ունենալով այդ հանգամանքները և հատկապէս գրչության ձևը, կարելի է համոզված ասել, որ ձեռագիրը ԺԳ, ամենաուշը ԺԴ դարից է և հանդիսանում է, այսպիսով, պատմության (Արիստակէս Լաստիվերցու – Կ.Մ.) մեզ հասած հնագույն օրինակը»<sup>6</sup>:

Աստղիկի պատմության սանկտպետերբուրգյան հրատարակության ժամանակ Յոհանի ընդօրինակած մատյանը ծանոթ չի եղել Մտ. Մալխասյանցին: Բայց այս ձեռագիրը որպէս նախօրինակ է ծառայել հրատարակության համար օգտագործված մի շարք մատյանների համար:

Մեր անդրադարձն այս մատյանին պայմանավորված է նրանով, որ Յոհան գրիչը հիմնականում Ստեփանոս Աստղիկի և մասամբ Արիստակէս Լաստիվերցու երկերի մեջ լուսանցքներում մի շարք հավելումներ է կատարել: Դրանց մեծ մասը հետագայի գրիչները մոռել են անմիջապէս բնագրերի մեջ: Ձեռագրի ուսումնասիրությունը թույլ է տալիս Յոհանի կատարած ընդմիջարկությունները տարանջատել բնագրերից, միաժամանակ դրանց միջոցով մոտավոր պատկերացում կազմել Յոհանի ընդօրինակած մատյանի գրչության տեղի ու ժամանակի մասին:

## ՅՈՂԱՆ ԳՐԻՉԸ

Յոհան գրիչը, որն իր գործի հմուտ վարպետն էր<sup>7</sup>, ձեռագրում ունի երեք հիշատակարան՝ մեկը մեծ և երկուսը փոքր: Մեծ հիշատակարանի վերջին հատվածը («ընդ նմին» բառերից սկսած) և փոքրերից երկրորդը հրատարակել է Կ. Յուզբաշյանը<sup>8</sup>:

Մեծ հիշատակարանը Յոհանը գրել է Աստղիկի պատմության վերջում, պատմիչի

<sup>4</sup> **Մովսէս Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913 (նմանահանութիւն, Երեւան, 1991), էջ ԺԹ:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ ԻԱ:

<sup>6</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցույ, աշխատասիրությամբ Կ. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 9:

<sup>7</sup> Յոհանը փայլուն կերպով տիրապետում էր գրչության արվեստին: Մի շարք էջերի վերջին տողերում (որից ներքև ստորին լուսանցքն է) նա ցուցադրում է իր գեղագրական կարողությունները, տառերի վերջավորություններով ներդաշնակ հորինվածքներ կազմելով (էջ 67բ, 96ա, 102բ, 190ա, 193ա, 206ա, 206բ, 209ա, 240բ, 265բ, 285ա, 292ա):

<sup>8</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցույ..., էջ 9:

հիշատակարանից անմիջապես հետո: Ինչպես որ Ասողիկի հիշատակարանն է նրա պատմության մյուս հատվածների վերնագրերի պես կարմիր թանաքով վերնագրված՝ «Բան վախճանի փառատրական սպառուած յիշատակարանիս» (էջ 241ա), այնպես էլ Յոհանն իր հիշատակարանն է օժտել կարմրագիր վերնագրով. «Յաղագս գրչի յիշատակ» (էջ 242ա), որին հաջորդում է տեքստը: Այն ստորև ներկայացնում ենք ամբողջությամբ՝ պահպանելով հեղինակի կիրառած կետադրությունը: Նա օգտագործել է մեկ կետ, որպես ստորակետ (մենք դնում ենք ստորակետ), շեշտ, բավական շատ, և վերջակետ, որը նախադասությունների իմաստից էլնելով՝ հաճախ կարելի է փոխարինել ստորակետով, սակայն հեղինակի ոճն ու իմաստային շեշտադրումներն ամբողջությամբ արտահայտելու համար կետադրությունն անփոփոխ ենք թողնում: Հիշատակարանը հետևյալն է.

էջ 242ա «Արդարութեան եւ իմանալի արեգակն, ի գարնանաբեր ծոցածաւալ ծագողութեանն, ի յադին աստուածակերտ ծառաստանս, Տանս Ասքանազեան Թորգոմապէ՛տ գրոհի: Ի ձեռն երկաքանչիւրոց դասուց սրբազանից եւթանասնի՛ց եւ երկոտասն՛աց, զԲարթոլիմէոս եւ զԹադէոս հոգիակի՛ր տածողութեամբ սերմանեցին զԲանն Կենաց: Ակնարկելով քաջ հովուապետին Քրիստոսի, զարթուցանել զՏէր արեգակին ի խորափի՛տ գրին: Որոյ արե՛ան վտակաւք ձայնէ՛ր առ նահատակն, արի որ ննջեսո, զի մի՛ թշնամին որոմնացան յանդգնեցի՛ զիրն: Վասն որոյ ելանէր բազմատանջ հայրն, հաստահեղուս հիմամբ արեամբ վկայիցն, որոյ շաղեալ էր երկիրն այնու շինել զՍուրբ Կաթողիկէ:

Անդո՛ւստ եւ ա՛յսր որ եարք աստուածայինք հովուապետեալք: Եւ ի կատարել ընթացից արեգականն ընդ ի՛ւր տարաւ զնշոյլս լուսոյ իւրոյ: Նաեւ չքացա՛ւ Գիշերավարն, եւ Արուսեակն ո՛չ երեւի: Բայց եւ միգապատեալս որ զնոցայցն յիշատակ երկրորդեցի ձեզ ո՛վ ծնունդք սրբութեան, ողորմութիւնն ի ձեռս ձե՛ր է, զի

էջ 242բ եւ հատա՛յ տապարատանջ: Այդ ձե՛ր է ա՛յր փրկու/թեան եւ ժամանակ ընդունելի: Ողորմեցարո՛ւք շանս սովամահի: Տո՛ւք ողորմութիւն, ի՛նձ եւ եղբա՛րց իմոց, եւ ծնողա՛ց: Եւ Քրիստոս Աստուած ի մեծի սոսկալի աուրն զնա որ զմեզ յիշելոյ արժանի արասցէ, Սրբոց Առաքելո՛ցն եւ Մարգարէիցն, եւ Մարտիրոսացն մասին արժանի արասցէ: Ամէն:

Աղաչեմ մի՛ անփոյթ առնէր եւ Տէ՛ր հատուցէ քեզ զվա՛րձս քո: Ընդ նմին եւ ե՛ւ յետինս յամենեսեան եւ քան զբնաւս յանցաւո՛րս, եւ անթի՛ւ մեղաւք ծանրաբեռնեալս, եւ արժանիս բազո՛ւմ մահուց եւ ո՛չ մի կենաց, խաւարամա՛ծս ոգւով **Յոհա՛ն** գրիչ: Աղաչեմ<sup>9</sup> յիշե՛լ յաղաթս առաջի Քրիստոսի զի՛ս եւ զծնա՛ւդսն իմ, եւ զեղբայրն իմ: Եւ **զԲամբկոցն**, որ յուսո՛վ սատարեաց ինձ ի գործառնութիւնս: Որպէս զի աղաթիւք ձեր գտցո՛ւք ողորմութիւն ի Քրիստոսէ: Եւ Տէ՛ր տացէ գտրիտուրն ձեզ բազո՛ւմս, ամէն»<sup>10</sup>:

<sup>9</sup> Բնագրում՝ «աղաչել»:

<sup>10</sup> Այս և հաջորդ մեջբերումներում ընդգծումները մերն են – Կ. Մ.:



Փոքր հիշատակարաններից առաջինը գրված է սրանից առաջ, Ասողիկի պատմության երկրորդ հանդեսի վերջում. «Հայր, մի մոռանար զաշխատությունս իմ որ գրեցի, շա՛տս ի լի՛ սրտէ առ Աստուած: Ի Քրիստոս ողորմե՛ա **Յոհանայ** քարոզի սորա յանկաշառղ դատաւորութեան, եւ յանակնունելի<sup>11</sup> ատենին: Յորժամ (դ)ատես զտիեզերս»<sup>12</sup> (էջ 189ա):

Երրորդ հիշատակագրությունը պահպանվել է Լաստիվերցու պատմության վերջին՝ ԻԵ գլխից հետո. «Քրիստոս Աստուած, որ հատուցանես ամենեցուն զվարձս: Հետո՛ **Բամբկոցին** հարիւրապատիկ եւ հազարապատիկ: Ջի ի Քէ՛ն եմք եղեալ եւ Քո՛ ողորմութեանդ սպասեալ մնամք, մի՛ ճշմարտութեամբ Քո քննեսցուք այդ գթութեամբ Քո քաւեսցուք: Եւ Քեզ փառս վերառաքեսցուք յաւիտեա՛նս յ(աւիտենից)» (էջ 309ա):

Ինչպէս տեսնում ենք, Յոհան գրչի հիշատակարանները տեղեկություններ չեն պարունակում ձեռագրի գրչության տեղի և ժամանակի մասին, չունեն նաև դրանց մոտավոր որոշմանը նպաստող տվյալներ: Չի բացառվում, որ ձեռագրի վերջում եղել է նաև այդ տեղեկություններն ունեցող գլխավոր հիշատակարան, որը չի պահպանվել: Այնուամենայնիվ, առկա հիշատակարանները որոշակի պատկերացում են տալիս գրչի մասին: Նախ երևում է, որ նա բանիմաց անձնավորություն է: Մեծ հիշատակարանի սկիզբը, որը խորհրդաբանորեն ներկայացնում է քրիստոնեության հաստատումը Հայաստանում, շատ ինքնատիպ է, և թվում է, որ պատրաստի ձևակերպումների կրկնություն (շարքուն) չէ: Հատկապես պատկերավոր է Գրիգոր Լուսավորչին վերաբերող մասը, ուր առանց անունը տալու՝ «բազմատանջ հայրն» և այլ հատկանշական արտահայտություններով հեղինակն ակնարկում է նրա գործունեությունը և անգամ Էջմիածնի Կաթողիկեի կառուցումը:

Ճատարաբանությամբ գրված՝ Լուսավորչի ժամանակներին վերաբերող հատվածին ներդաշնակորեն հաջորդում է գրչի ապրած ժամանակի մասին ակնարկը («Անդո՛ւստ եւ ա յսր որ եարք աստուածայինք հովուապետեալք»): Դա մի մոռյալ ժամանակ էր, որի մասին հեղինակը շարունակում է արտահայտվել փոխաբերության խորհրդաբանական եղանակով. Արեգակն իր շրջանը կատարելով մայր է մտել, այլ լուսատու ևս չի երևում («չքացա՛ւ Գիշերավարն, եւ Արուսեակն ո՛չ երեւի»)՝<sup>13</sup> բայց ինքը՝ «միզապատեալ», պատմագրքերն ընդօրինակելով պահպանում է հին ու նոր «աստվածային հովվապետներին» հիշատակը, («զնոցայցն յիշատակ երկրորդեցի»): Այս հատվածից երևում է, որ Յոհանի հիշատակարանը հեղինակային գործ է և նրա խոհերի արտահայտությունը:

<sup>11</sup> Բնագրում՝ «յանակնանելի»:

<sup>12</sup> Այս հիշատակարանը Ասողիկի բնագրի հետ արտագրել են մի շարք գրիչներ (Ստեփանոսի Տարոնեցոյ Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանցի, Սանկտ-Պետերբուրգ, 1885, էջ 145):

<sup>13</sup> Վեներա մուրակի երկու անուններն են Գիշերավար ու Արուսյակ: Երբ այն երկնքում երևում է լուսաբացին, կոչվում է Արուսյակ, իսկ մայրամուտին՝ Գիշերավար: Այստեղ հիշատակվում են հոգևոր լուսավորության խորհրդաբանական իմաստով (օրինակ. «Ժբբեւ զգիշերավարն պայծառացո՛ւք հոգևով խաւարային կողմ աշխարհիս» (Գր. Նարեկացի), տե՛ս Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Կ. Ա. Վենետիկ, 1836, (սմանահանություն, Երևան, 1979), 374, 555):

Այն սկսվում ու ավարտվում է նույն ոճով<sup>14</sup>, շարադրված է հարուստ լեզվով, անգամ բանականական նորություններ ունի («ծոցածաւալ», «տապարատանջ» բառերը չկան Հայկազյան բառարանում) :

Հիշատակարաններից երևում է, որ Յոհան գրիչն ապրել է վանական միջավայրում: Փոքր հիշատակարաններից առաջինը նա սկսում է «Հայր մի մոռանար զաշխատութիւնս իմ» բառերով, որ հավանորեն վերաբերում է վանահորը: Իսկ մեծ հիշատակարանի մեջ, երբ գրում է «Տո՛ւք ողորմութիւն, ի՛նձ եւ եղբա՛րց իմոց, եւ ծնողա՛ց», ամենայն հավանականությամբ նկատի ունի իր վանական հոգևոր եղբայրներին (ազգականներին հիշատակելիս սովորաբար նախ նշում են ծնողներին, ապա մյուսներին), քանի որ շարունակության մեջ, երբ ավելի անձնական բնույթի տեղեկություններ է հայտնում, խնդրում է հիշել իրեն, ծնողներին և եղբորը («զի՛ս եւ զծնա՛ղոսն, իմ եւ զեղբայրն իմ»), այսինքն՝ մեկ եղբայր ուներ:

Հիշատակարաններում Յոհանից բացի հիշվող երկրորդ անձը Բամբկոցն է, որը սատարել է նրան: Այդ անունը չկա Աճառյանի անձնանունների բառարանում, բայց կա հետևյալը. «**Բամբկոց**, թվի իգական անուն, անշուշտ Բամբկոց (բամբակ) ձեռից»<sup>15</sup>: Հետաքրքիր է, որ մեծ հիշատակարանում Յոհանն այդ անունը գրել է Բամբկոց և մոռացված «բ» տառն ավելացրել է բառի ներքևի մասում:

Կ. Յուզբաշյանը կարծում է, որ Բամբկոցը Յոհանի եղբայրն է: Մեծ հիշատակարանի համապատասխան հատվածը նա հրատարակել է հետևյալ կերպ. «զծնաղոսն իմ եւ զեղբայրն իմ **զԲամբկոցն...**»<sup>16</sup>: Սակայն ձեռագրում այլ կերպ է. «զծնա՛ղոսն իմ, եւ զեղբայրն իմ: Եւ **զԲամբկոցն**, որ յուստ՛վ սատարեաց ինձ...»:

Երկրորդ անգամ Բամբկոցի անունը նշվում է առանձին հիշատակարանում և այնպիսի ձևակերպմամբ, որով կարելի էր հիշատակել ձեռագրի ստացողին («Քրիստոս Աստուած, որ հատուցանես ամենեցուն զվարձս: Հետո՛ **Բամբկոցին** հարիրապատիկ եւ հազարապատիկ»): Եթե Բամբկոց անունն իսկապես բամբակ բառից է ծագում, այդ դեպքում իրոք պատշաճելով կնոջ, ուրեմն Յոհանին ձեռագիրը գրելու համար սատարած (հավանաբար նյութական ծախսը հոգացած) Բամբկոցը կին է: Համենայն դեպս, Բամբկոցի՝ Յոհանի եղբայրը լինելու վարկածը շատ ավելի խոցելի է, որովհետև նման ազգակցության դեպքում վերոհիշյալ փոքր հիշատակարանում գրիչը պետք է որ նշեր այդ մասին, կամ առնվազն կրկին հիշեր իր ծնողներին: Իսկ մեծ հիշատակարանում, անուններ տալու մեջ ժլատ գրիչը հստակ տարանջատում է մի կողմից՝ իր ծնողներին ու եղբորը, և մյուս կողմից՝ «յուստվ» (հոգու փրկության հույսով) իրեն սատարած Բամբկոցին:

<sup>14</sup> Յոհանի հիշատակարանների ընդհանուր ոճը բավական հնաբույր է, վանական խստակեցության շունչը կրող: Այստեղ և հավելումների մեջ նա օգտագործում է որոշ անվանումների հին գրելաձևեր (օրինակ՝ «Կաթուղիկե», «Պալիաունի»):

<sup>15</sup> **Չ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ա, Երևան, 1942, էջ 379:

<sup>16</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերացոյ..., էջ 9:

### ՅՈՂԱՆ ԳՐԶԻ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐԸ

Հայտնի է, որ պատմական երկերում, ավելի հաճախ՝ ժամանակագրություններում, հետագայի ընդօրինակող գրիչները կամ տարբեր մարդիկ, զանազան ընդմիջարկություններ ու լրացումներ են կատարել: Մատենադարանի թիվ 2865 ձեռագրում առկա լրացումներն ու հավելումները պատկանում են հենց Յոհան գրչին: Դա երևում է գրչի ձեռագրից. հավելումները նույն գրչությամբ են, միայն թե ավելի մանրատառ: Դրանցից մեկը, որը վերաբերում է Անիի Գազկաշեն եկեղեցու ճարտարապետ Տրդատին, գրված է վերնագրերին հատուկ կարմիր թանաքով և ինչպես մյուս հավելումներից մի քանիսը, վերցված է զարդագիծ շրջանակի մեջ:

Հիմնականում Յոհան գրչի հավելումները գրված են լուսանցքներում, հազվադեպ գրասյունների միջև, վերաբերում են անիջապես կից տեքստին, կամ ունեն տարբերանշան (փոքրիկ օղակի կամ լատինական *v* տառի նմանությամբ), որը կրկնվում է տեքստի համապատասխան մասում՝ ցույց տալով ընդմիջարկության գետեղման տեղը: Յոհանի մատյանը որպես նախօրինակ է ծառայել այլ ձեռագրերի համար, որոնց գրիչները երբեմն հավելումները տեղադրել են սխալ տեղերում՝ որոշակի շփոթ առաջացնելով:

Յոհանի կատարած հավելումներն ավելի շատ են Ասողիկի պատմության մեջ և քիչ՝ Լաստիվերցու պատմությունում: Վերջինիս հրատարակիչ Կ. Յուզբաշյանը ձեռագիրը նկարագրելիս նշում է. «Գրչագիրը արտագրվել է հմուտ ձեռքով, առանց տառասխալների: Որոշ տեղերում կան ուղղումներ և լրացումներ, որոնք, թվում է, պատկանում են իրեն՝ գրչին, ուստի համեմատության ժամանակ հատուկ չեն նշվել»<sup>17</sup>: Ճիշտ դիտարկում է, որ լրացումները գրչինն են, բայց ցավալի է, որ համեմատության ժամանակ դրանք համարվելով Արիստակես Լաստիվերցուն պատկանած, գրչի վրիպած, ապա նրա ձեռքով լուսանցքում լրացված, հրատարակության մեջ չեն ընդգծվել: Միանգամայն հնարավոր է, որ լուսանցքում գրված փոքրիկ լրացումների մի մասն, իրոք, գրիչը վրիպել է, ապա նկատելով՝ ավելացրել: Բայց կան նաև հավելումներ, որոնց այդպիսին լինելն այս հրատարակության մեջ չի արտացոլվել: Կ. Յուզբաշյանը տողատակում նշել է միայն դրանցից ամենաակնառուն, որը վերաբերում է 12-13-րդ դարերի դեպքերին:

Ստ. Մալխասյանցն Ասողիկի պատմությունը հրատարակելիս հիմք է ընդունել պատմագրի՝ Կ. Շահնազարյանցի 1859 թ. Փարիզում կատարած հրատարակությունը և իրեն ծանոթ մի շարք ձեռագրեր (թվով 9) և դրանցից զուգահեռաբար օգտվելով՝ փորձել վերականգնել հեղինակային տեքստը<sup>18</sup>: Տողատակում տարբերությունները նշելիս նա հիմնականում գրում է՝ «Տ», այսինքն՝ տպագիր, կամ «Զ», այսինքն՝ ձեռագրեր՝ առանց որոշակիացնելու մատյանը:

Ասողիկի պատմության առաջիկա հրատարակության ժամանակ, անկասկած, գլխավոր տեղում է լինելու Յոհանի ընդօրինակած մատյանը: Ստորև մենք նպատակ չունենք

<sup>17</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ... , էջ 9:

<sup>18</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ ԼԹ: Գրքի առաջաբանում Ստ. Մալխասյանցը պատշաճ կերպով անդրադառնում է նաև Ասողիկի երկի թարգմանություններին:

ցույց տալու Յոհանի բոլոր նշումներն ու գրառումները<sup>19</sup>, քանի որ դրանց մեջ կան նաև մեկ կամ մի քանի բառերից կազմվածները: Դրանք վրիպումներ են Աստղիկի բնագրից, որը նկատելով ավելացրել է գրիչը, իսկ եթե Յոհանի գրածն են, պարզ կլինի մյուս ձեռագրերի հետ համեմատությունից: Բնականաբար, այդպիսի ծավալուն քննությունը դուրս է մեր նպատակից և հողվածի նյութ չէ: Մենք կներկայացնենք միայն առավել ակնառու հավելումները, որոնք նաև պատմագիտական որոշ արժեք ունեն և կարող են օգտակար լինել մասնագետներին, մինչև որ հրապարակ կգա պատմիչի երկի նոր գիտական հրատարակությունը: Հավելումները ներկայացնելիս, ինչպես հիշատակարաններում, պահպանում ենք գրչի կիրառած կետադրությունը:

Կաթողիկոս Հովհան Մանդակունու (478-490) աթոռակալության մասին գրելուց հետո Աստղիկը նշում է. «Յայսմ ժամանակի երանելին Տեառնթագ, որ էր ի գաւառէն Արշարունեաց ի Կալոց գեղջէ՝ վկայեալ վասն Քրիստոսի քաջութեամբ՝ կատարեցաւ ի Ջառմիհրն Հազարաուխտոյ, ի գորավարէն Պարսից»<sup>20</sup>, որից հետո Յոհան գրիչը ձեռագրի ստորին լուսանցքում ավելացրել է. «**Նշխարք սորա հանգուցան ի Շիրա՛կ գաւառի ի գեղն որ Բեռնա՛ւնս կոչի, յեկեղեցոջն որ Տեառնթա՛գ ասեն**» (էջ 162բ):

Վահան Մամիկոնյանին (Հայոց սպարապետ և մարզպան, մոտ 487-505 թթ.) և նրա ձեռամբ Էջմիածնի տաճարի նորոգմանը նվիրված հատվածում դարձյալ ստորին լուսանցքում Յոհանն ավելացրել է. «**Յաւուրս Վահանայ յայտնեցան նշխարք Սուրբ Առաքելոյն Թաղէոսի եւ Սանդիստոյ եւ Սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ**» (էջ 163ա)<sup>21</sup>:

Աստղիկի պատմության այն հատվածում, ուր ասվում է, որ Պարսից թագավորը . «ի խնդրոյ նախարարացն իշխան հաստատէ Հայոց գԴաւիթ Սահառունի, որ կալաւ զհազարապետութիւն Հայոց ամս Լ (30)»<sup>22</sup>, Յոհանը երկու սյունյակների միջև ավելացրել է. «**Ի Մրեն գեկեղեցին սա շինեաց**» (165ա, նկ. 1)<sup>23</sup>: Յոհանի ձեռագրից ընդօրինակություն կատարած գրիչներն այս հատվածը մուծել են սխալ տեղում, ուր խոսվում է Կոմիտաս Աղեցցի (615-628) կաթողիկոսի, ապա Հովհան Մայրագումեցու գործունեության մասին, այդպես էլ նշված է հրատարակության տողատակում<sup>24</sup>, որն իր հերթին թյուրիմացութե-

<sup>19</sup> Դրանցից մի քանիսը նկատել է նաև Ստ. Մալխասյանը: Մասնավորապես Սեբեոսի պատմությունից Աստղիկի քաղած մի հատվածում կա Սեբեոսի մոտ չեղած և նյութի հետ այնքան էլ չկապվող մի փոքրիկ ընդմիջարկություն, որը տարբեր ձեռագրերում եղել է տարբեր տեղերում, և հրատարակիչն իրավամբ եզրակացնում է, թե հատվածը «անշուշտ ի լուսանցից ձեռագրի իրիք մուծեալ է ի բնագիրն» (Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն..., էջ 95-96, 350): Միայն թե նրան ծանոթ չի եղել մայր ձեռագիրը, որը Յոհանի ընդօրինակածն է, վերջինիս կատարած լուսանցագիր հավելումով (Մատենադարան, ձեռ. թիվ 2865, էջ 168բ):

<sup>20</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 80:

<sup>21</sup> Ստ. Մալխասյանցն այստեղ տողատակում ծանոթագրել է. «Ի Ձ. աստ եղեալ էր հատուածն յաղագս յայտնութեան նշխարաց Ս. Թաղէոսի, Ս. Սանդիստոյ եւ Ս. Լուսաւորչին, գոր մէք թողաք ըստ կարգին, որպէս Տ. ունէր» (Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 81): Այսինքն, հրատարակիչը կռահել է, որ դա հավելում է եղել:

<sup>22</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 86: Դավիթ Սահառունին Հայաստանի բյուզանդական մասի կառավարիչ է եղել 635-638 թթ.:

<sup>23</sup> Դավիթ Սահառունու կողմից Մրենի եկեղեցու կառուցման մասին տե՛ս **Հովհաննէս կաթողիկոս Դրասխանակերտցի**, Հայոց պատմություն, Երևան, 1996, էջ 82-85:

<sup>24</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 87, ծան. 5:

յան մեջ է գցել Սրենի ճարտարապետության հետազոտողին<sup>25</sup>:

Պատմության այն հատվածում, ուր Ասողիկը պատմում է, որ Աբաս Բագրատունի (թզվ. 929-953 թթ.) թագավորը կառուցել է Կարսի եկեղեցին, Յոհանը ձախ լուսանցքում ավելացրել է հետեւյալը. «Սա շինեւ ի զՓոքր Կաթողիկէն Անույ: Եւ զՍուրբ Գրիգոր, ի Քաղաքոյ դաշտին»<sup>26</sup> (էջ 196բ, նկ. 2):

Անիի պատմության համար այս վկայությունը չափազանց կարևոր է, քանի որ այդ եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, փաստորեն, կառուցվել է մինչև Անիի մայրաքաղաք հռչակվելը: 953 թվականից հորը՝ Աբասին փոխարինած Աշոտ Ողորմածը 961-ին ոչ միայն Անին մայրաքաղաք հռչակեց, այլև այդտեղ թագադրվեց, մի արարողություն, որը կատարվում էր կաթողիկոսի ձեռքով՝ եկեղեցում: Դրանից հետո Աշոտը ձեռնարկեց քաղաքի առաջին պարսպի կառուցումը, բայց իր նստավայրում եկեղեցի չկառուցեց (ի տարբերություն Բագրատունի նախորդ և հաջորդ թագավորների), քանի որ իր հոր հիմնած եկեղեցին՝ Փոքր Կաթողիկէն, արդեն կանգուն էր ինքն էլ այդտեղ էր թագադրվել<sup>27</sup>:

Ինչ վերաբերում է Աբասի կողմից Քաղաքադաշտի Ս. Գրիգորը (Զվարթնոցը), «շինելուն», այն պետք է հասկանալ որպես նորոգում, որի մասին նշվում է նաև այլ աղբյուրում<sup>28</sup>:

Յոհանի հաջորդ ընդմիջարկությունը վերբերում է 998 թ. Մամլան ամիրայի դեմ մղված ճակատամարտի ժամանակ Անիի թագավորության վեց հազարանոց զորաբանակը գլխավորող զորավարներին: Ասողիկը գրում է, որ հայկական զորաբանակը հանձնվել էր. «...ի ձեռն ի իշխանաց ի իշխանին Վահրամայ որդոյ Գրիգորոյ, եւ Սմբատայ մաժիստոռոսի որդոյ Վահրամայ, եւ մարզպանին Աշոտոյ»: Այս հատվածից աջ, լուսանցքում, Յոհանն ավելացրել է. «Պալիաունոյ որ զՄարմաշէն շինեց: Որ զԲզներն շինեց» (էջ 236ա, նկ. 3): Գրիչը ցանկացել է նշել իրեն հայտնի փաստն այն մասին, որ Վահրամ Պալիաունին Մարմաշենն է կառուցել, իսկ Սմբատ Մագիստրոսը՝ Բզնայրը, այդ պատճառով երկու տվյալներն առանձնացրել է վերջակետով: Բայց հետագայի ընթացիկներն այդ տողերը, որպես միասնական միտք, ներմուծել են բնագրի մեջ մի դեպքում Վահրամի հոր անունից հետո (ինչպես Ասողիկի հրատարակության մեջ է), մյուս դեպքում՝ Աշոտ մարզպանի (ինչպես հրատարակության տողատակում նշված օրինակում)<sup>29</sup>, որը տարբեր կարգի շփոթությունների առիթ է տվել<sup>30</sup>:

Յոհանի մյուս հավելումը մեծ նշանակություն ունի հայ ճարտարապետության պատմ-

<sup>25</sup> Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 2, Երևան, 2002, էջ 244-245:

<sup>26</sup> Այս տեղեկությունը եղել է նաև Յոհանի ձեռագրից ընթրինակված մատյաններում և զետեղվել Ասողիկի հրատարակության տողատակում, ուր Անիի եկեղեցու անունը գրված է «Կաթողիկէ» (Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 172), մինչդեռ Յոհանը գրում է «Կաթողիկէ» (այդպես է նաև նրա հիշատակարանում՝ «զՍուրբ Կաթողիկէ»):

<sup>27</sup> Գ. Մաթևոսյան, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 155-158: Հատկանշական է, որ Աշոտ Ողորմածի որդու՝ Սմբատ Բ-ի Անիում կառուցած Մայր տաճարը աղբյուրներում սովորաբար կոչվում է Մեծ Կաթողիկէ:

<sup>28</sup> Գ. Յովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 87, Գ. Մաթևոսյան, Անի, էջ 156, 338:

<sup>29</sup> Ստեփանոսի Տարօնեցոյ Պատմութիւն, էջ 270:

<sup>30</sup> Այս մասին տե՛ս Գ. Մաթևոսյան, Սմբատ Մագիստրոս, «Հանդէս ամսօրեայ», 2008:

մության համար: Ասողիկի պատմության համապատասխան հատվածի վերնագիրը՝ «Յաղագս շինելոյն Գագկայ արքային ի քաղաքն Անույ զեկեղեցին մեծ անուամբ Սրբոյն Գրիգորի» (էջ 240բ-241ա) Յոհանը լրացրել է նույն կարմիր թանաքով, զարդագիծ շրջանակի մեջ գրված հետևյալ բառերով. «**Տրդատ վարդպետ եկեղեցոյն**» (էջ 241ա, նկ. 4): Անհում Զվարթնոցի նմանությամբ կառուցված Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու ճարտարապետի վերաբերյալ չեն պահպանվել վիճակագիր և մատենագրական այլ տեղեկություններ: Մասնագետները միայն ենթադրել են, որ ճարտարապետը կարող էր Տրդատը լինել՝ աչքի առաջ ունենալով Ասողիկի պատմության հրատարակությունը, ուր Յոհանի ընդմիջարկությունն արտագրող գրիչները, որոշ բառեր էլ իրենք ավելացնելով, ստացել են Սո. Մալխասյանցի՝ տողատակում բերած հետևյալ գրառումը. «2.՝ որ անուամբ սրբոյն գեորգեա. միդատ (ընթերցիր՝ տրդատ) վարպետ եկեղեցոյն»<sup>31</sup>: Ինչպես տեսնում ենք, Յոհանը ոչ միայն ստույգ նշել է Տրդատի անունը, այլև նրա ճարտարապետ՝ «**վարդպետ**» լինելը:

Հաջորդ երկու հավելումը վերաբերում են Արիստակես Լաստիվերցու պատմությանը:

Այստեղ Յոհանի կատարած բոլոր հավելումները կարող են բացահայտվել նրա ընդօրինակած ձեռագրի և պատմիչի մեկ այլ ձեռագրի (Մատենադարան, ձեռ. թիվ 6457) համեմատությունից, որը թեև 19-րդ դարից է, բայց ընդօրինակվել է «ի հին ձեռագրե գրելոյն ի թվին Հայոց ՌԿԳ (1214)»<sup>32</sup>: Այս ձեռագիրը, որ Կ. Յուզբաշյանը համեմատական բնագիրը կազմելիս նշել է լատիներեն «I» տառով, ավելի հին է, քան Յոհանի ընդօրինակածը: Բնականաբար Յոհանի հավելումները չկան այդ օրինակում:

Դրանցից առաջինը վերաբերում է Սարգիս Սևանցուն (կաթողիկոս՝ 992-1019 թթ., մահ՝ 1022 թ.): Այս կաթողիկոսի գործունեությունն ամփոփող և նրա մահվան մասին վկայող Արիստակես Լաստիվերցու գրած հատվածի մոտ Յոհանն ավելացրել է. «**Գեբեզման նորա ի Հոռոմոսի վանքն**» (էջ 248բ, նկ. 5): Հետաքրքիր է, որ Յոհանի ձեռագրից ընդօրինակված մի քանի ձեռագրում այս վկայությունը պահպանվել է հենց լուսանցքում<sup>33</sup>:

«Վասն տիեզերահոջակ քաղաքին Անույ խողխողմանն սրով» գլխի վերջում, ուր Արիստակես Լաստիվերցին գրելով «Այս է բաժին անիրաւ քաղաքաց», ապա շարունակում է և հարցնում՝ «եւ արդ զին չ լինի նոցա ի հասանել բարկութեանն Տէառն»<sup>34</sup>, աջ լուսանցքում ավելացված է հետևյալը. «**Երկրորդ Դաւիթ թուականն ՇՀԳ (1124): Երրորդ Գեորգի թւ ՌԺ (1161): Ի ՌՁԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս**»<sup>35</sup> (306 ա, նկ. 6):

Յոհան գրիչն այստեղ, Ալփալանի (Ալփ Արսլան) կողմից Անիի գրավումը համարե-

<sup>31</sup> Ստեփանոսի Տարսնեցույ Պատմութիւն, էջ 282:

<sup>32</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ..., էջ 14:

<sup>33</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ..., էջ 32:

<sup>34</sup> Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ..., էջ 136:

<sup>35</sup> Յոհանի այս հավելումը նշված է հրատարակության տողատակում, որոշ տարբերություններով և առաջին թվականի սխալով՝ «ՁՀԳ» (Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերցոյ..., էջ 136):

լով քաղաքի առաջին առումը, համարակալելով հաջորդները՝ միանգամայն ճիշտ թվագրմամբ նշում է, որ երկրորդ անգամ Անին գրավել է վրաց Դավիթ թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին քաղաքը գրավել են թաթարները:

### ՁԵՌԱԳՐԻ ԳՐԶՈՒԹՅԱՆ ՏԵՂԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ինչպես վերևում տեսանք, նախորդ հետազոտողները Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը համարում են 13-րդ կամ 14-րդ դարի մատյան: Ա. Մաթևոսյանը ձեռագիրը 13-րդ դարի է համարել և հայերեն ձեռագրերի հիշատակարանները հրատարակելիս Ստեփանոս Ասողիկի և Արիստակես Լաստիվերցու հիշատակարանները քաղել է հենց այս մատյանից<sup>36</sup>:

Յոհան գրչի հիշատակարանները և Ասողիկի ու Արիստակես Լաստիվերցու երկերում նրա կատարած հավելումները միմյանց լրացնելով թույլ են տալիս որոշ ենթադրություններ կատարել ձեռագրի գրչության տեղի և ժամանակի վերաբերյալ:

Նախ, հենց վերջին հավելումը թույլ է տալիս որոշակի դարձնել գրչության ժամանակի ստորին սահմանը, որը 1236 թվականն է, քանի որ Յոհանը նշում է, թե այդ թվականին թաթարները գրավեցին Անին: Ժամանակագրական վերին սահմանը ավելի դժվար է որոշել, սակայն դատելով նույն վկայությունից, այն չի անցել մոնղոլների տիրապետության շրջանից: Յոհանի խոսքը թեև կարճ, բայց արտահայտիչ է՝ «Ի ՈՁԵ (1236) թաթարն էառ զԱնի եւ **զամենայն տիեզերս**»: Թվում է, որ գրիչը բնակիչն էր թաթարներից առնված այդ տիեզերքի, որի դժնի ու հոգեկեղեք մթնոլորտի արձագանքը կարելի է գտնել նաև նրա հիշատակարաններում: Մոնղոլների անակնկալ ներխուժումն ու համատարած նվաճումները ժամանակակիցների վրա սարսափելի տպավորություն թողեցին: Ճիշտ է, Յոհանն իր հիշատակարաններում պատմական փաստեր ու նկարագրություններ չի բերում (որը պայմանավորված է նրա ոճով), բայց ստեղծում է որոշակի տպավորություն: Նա չի տեսնում «լույսի նշույլ», իրեն համարում է հոգով խավարամած, «միզապատեալ» ու «տապարատանջ» և այլն, ասես ձայնակցելով մոնղոլական արհավիրքի ակնատես Կիրակոս Գաձակեցուն՝ «իբրեւ խաւարաւ մաճեալ էր ամենայն աշխարհ»<sup>37</sup>: Կարելի է ենթադրել, որ այդ հոգեվիճակը և թաթարների՝ «ողջ տիեզերքը» նվաճած լինելու տպավորությունը Յոհանի մոտ կարող էր ծնվել մոնղոլների տիրապետության առաջին տասնամյակներին՝ 1240-1250-ական թվականներին, որն էլ համարում ենք մատյանի գրության մոտավոր ժամանակը:

Այն հարցը, թե որն է եղել Յոհանի բնակության տարածքը, կարող է պատասխան գտնել հավելումների պարունակած տեղագրական տվյալների միջոցով: Դրանցում

<sup>36</sup> Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դդ., աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 79, 112: Ասողիկի բնագրին անդրադառնալով՝ ձեռագիրը 13-րդ դարի է համարում նաև Գ. Գրիգորյանը (Գ. Գրիգորյան, Տարոնի Բագրատունիների ֆեոդալական իշխանությունը 9-10-րդ դարերում, Երևան, 1983, էջ 147):

<sup>37</sup> **Կիրակոս Գաձակեցի**, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 240:

մատնանշվում է, որ նահատակ Տեառնթագի նշխարները գտնվում են **Շիրակ գավառի Բեռնոն գյուղի** եկեղեցում (որը հենց **Տեառնթագ** է կոչվում), որ Դավիթ Մահառունին կառուցել է **Սրենի** եկեղեցին, իսկ Աբաս Բագրատունին կառուցել է **Անիի Փոքր Կաթողիկեն**, և **Քաղաքադաշտի Ս. Գրիգորը**, Վահրամ Պահլավունին կառուցել է **Մարմաշենը**, Սմբատ Մագիստրոսը՝ **Բագնայրը**, որ Տրդատը **Անիի Գագկաշեն Ս. Գրիգոր եկեղեցու** ճարտարապետն է, Սարգիս Սևանցի կաթողիկոսը թաղվել է **Հռոմոսում** և վերջապես, որ Ալփապանից հետո **Անին** երկրորդ անգամ գրավել է Դավիթ թագավորը՝ 1124 թ., երրորդ անգամ՝ Գեորգին՝ 1161 թ., իսկ 1236-ին թաթարները գրավել են **Անին** և ողջ աշխարհը: Դժվար է անգամ պատկերացնել, որ այս տեղեկությունները կարող էր փոխանցել, ասենք, Վասպուրականում, Սյունիքում, Գուգարքում կամ վերը թվարկված բնակավայրերից հեռու գտնվող մեկ այլ տեղում ապրող մի գրիչ: Մա զուտ Շիրակի, իսկ ավելի ստույգ՝ Անիի շրջանի բնակչին հասու տեղեկությունների պաշար է, և կարծում ենք, որ սխալված չենք լինի Յոհանին Անիի շրջանում ապրած գրիչ համարելով: Հավանաբար նա գործել է Անիի մերձակա վանքերից մեկում:

Յոհան գրիչը հավելումները կատարել է հիմնականում հայրենի գավառի վանքերի ու եկեղեցիների մասին իրեն հայտնի մի քանի տվյալները պատմությանը փոխանցելու նպատակով (տեսնելով, որ դրանք չկան իր ընդօրինակած պատմագրքերում): Տեղեկությունների մի մասը նա կարող էր քաղել այլ հեղինակներից, ինչպես օրինակ՝ Սրենի եկեղեցու կառուցողի հարցում՝ Հովհաննես Դրասխանակերտցուց, Մարմաշենի ու Բագնայրի դեպքում՝ Մամվել Անեցուց: Մակայն, հավանաբար, եղել են տվյալներ, որ նա ինքն է իմացել, ինչպես օրինակ Անիի Փոքր Կաթողիկեի կառուցման, Տրդատ ճարտարապետի կամ Սարգիս Սևանցու մասին տեղեկությունները, որոնք առայժմ այլ աղբյուրներից հայտնի չեն:

Ի միջի այլոց, Յոհանի՝ Անիին մոտ լինելու հանգամանքը որոշ լույս է սփռում նաև Բամբկոցի պարագայի վրա, քանի որ այս քաղաքում, առավել քան հայկական մեկ այլ բնակավայրում, կանայք սոցիալական որոշակի դիրք էին զբաղեցնում, և անեցի ունևոր մի կին անարգել կարող էր նյութապես սատարել վանական գրչին:

Այսպիսով, Մատենադարանի թիվ 2865 ձեռագիրը, որ պատմական երկերի բացառիկ արժեքավոր ժողովածու է, Յոհան գրիչն ընդօրինակել է Անիի շրջանում, 1236 թվականից հետո, ենթադրաբար՝ մոնղոլների տիրապետության առաջին շրջանում: Յոհան գրիչը Ստեփանոս Ասողիկի և մասամբ Արիստակես Լաստիվերցու երկերում, լուսանցքներում հակիրճ հավելումներ է կատարել, որոնք ուշագրավ տեղեկություններ են պարունակում մի քանի պատմական գործիչների և հատկապես Անիի ու Շիրակի մի շարք վանքերի և եկեղեցիների վերաբերյալ: Կարևոր հանգամանք է նաև, որ այդ հավելումները, որոնց մի մասը տարրալուծված էր պատմիչների երկերի մեջ, մյուսները՝ զետեղված հրատարակությունների տողատակերում, այլևս չեն ընկալվի իբրև անորոշ ծագում ունեցող ընդմիջարկություններ, այլ որպես բանիմաց հեղինակի՝ որոշակի նպատակով կատարած լրացումներ, որոնք պարունակում են արժանահավատ տեղեկություններ:



## ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

**«ՄԱՍՆԱ ԾՌԵՐԻ» ՊԱՏՈՒՄՆԵՐԻ  
ՄՇՈՍՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ  
ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Բանահյուսական տեքստերի և հատկապես վիպական ստեղծագործությունների դեպքում առավել կայուն և տարբերակայնության ընթացքում փոփոխությունների քիչ ենթակա է տեքստի կառուցվածքային մակարդակը: Բնչպես հայտնի է, «Մասնա ծռեր»-ում կառուցվածքային հիմնական միավորը ճյուղն է, որն էլ կենտրոնացնում է վիպական չորս սերունդներ ընդգրկող դիպաշարը: «Ճյուղ» ասելով ասացողները սովորաբար հասկանում են որոշակիորեն ավարտված և ամփոփ, մեկ գլխավոր հերոսի շուրջ ամբողջացող մոտիվների և դրանք իրացնող միջադեպերի խումբ: Խոսելով վեպի կառուցվածքի մասին՝ Մ. Աբեղյանը, հաշվի առնելով Մասնա ծռերի պատմական, առասպելական, վիպական շերտերը, արձանագրում է, որ էպոսն ըստ կառուցվածքի և դիպաշարի զարգացման բավական բարդ է. «Մասնա ծռերի» մեջ ի մի են հավաքված բազմազան և՛ շատ սյուժետներ ու մոտիվներ, և՛ պատմական և առասպելական, և՛ հայկական, և՛ միջազգային, և կազմվել է մի մեծ վիպասանություն: Ուստի վեպն, այդ վիպական մեծ նյութի պատճառով, ունի բարդ արխիտեկտոնիկա և բարդ զարգացում: Դա ոչ թե կենտրոնանում է մի եղելության շուրջ, այլ բաժանված է երեք-չորս, երբեմն և ավելի սերունդների մեջ, որոնցից յուրաքանչյուրի վրա պատմվում են երկու-երեք վեպեր կամ տարբեր-տարբեր սյուժետներ: «Մասնա ծռերն», ուրեմն, կազմված է բազմաթիվ վեպերից, որ ասացողներն անվանում են «ճյուղ»<sup>1</sup>: Նույն տեղում Աբեղյանը նշում է նաև, որ «ճյուղը» կայուն և ամփոփ միավոր չէ և տարբեր ասացողների դեպքում տարբեր սահմաններ ու ընկալում ունի, ինչի հետևանքով էլ ասացողները ճյուղերի քանակը ըստ հիշողության և ընկալման կարող են ավելացնել՝ հասցնելով յոթի կամ քառասունի և ընդհակառակը՝ սահմանափակվել մեկով: Գիտնականը նաև կարևոր դիտողություն է կատարում էպոսի կառուցվածքային ընդունված համակարգի ձևավորման վերաբերյալ, ինչն էլ անմիջականորեն կապվում է պատումների տիպաբանական խմբերի առաջացման հետ. «Մինչ ուրիշ ազգերի մեջ վիպական ավանդությունը գրավոր գեղարվեստական մշակության է ենթարկված մեկ կամ մի քանի բանաստեղծների ձեռքով և ստեղծվել են ամբողջական գեղարվեստական վիպասանություններ, մեր Վեպը մշակված է միայն բերանացի պատմվելով և հետզհետե այսպիսի մշակության հետևանքով է, որ «Մասնա ծռերը» հանդես է գալիս երկու կամ երեք խմբերով՝ Մուշ ու Մասունի, Մոկաց ու պարսկահայոց ու խառնուրդ խմբերով»<sup>2</sup>:

Բանավոր ավանդման և տարբերակայնության գործընթացի առանձնահատկություններով էլ պայմանավորված են տարբեր խմբերի պատումների կառուցվածքային մո-

<sup>1</sup> Մ. Աբեղյան, Երկեր, հատ. Ա, Երևան, 1966, էջ 466:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 467:

դելիների յուրահատկությունները և այն հանգամանքը, որ չկա մեկ անգամ հաստատված, կոնկրետ և միասնական կառուցվածքային մոդել: Այս դեպքում պատումների տարբեր խմբերում և ենթախմբերում որոշակի օրինաչափություններ են արձանագրվում: Մյուս կողմից անկախ իրացման կոնկրետ առանձնահատկությունները, կա ընդունված և ավանդական, բայց վերացարկված պատումների ճյուղային քառաճյուղ համակարգ, որը, սակայն, պատումների երեք տիպաբանական խմբերում՝ Մշո, Մոկաց և Մասնա, տարբեր պատումներում իրացման գործընթացում որոշակի ինչպես յուրահատկությունների, այնպես էլ օրինաչափությունների արձանագրության հնարավորություն է տալիս:

Մշո պատումների ճյուղային կառույցների տիպաբանությունը թեև ընդհանուր կարգով, սակայն ի հայտ է բերում որոշ օրինաչափություններ, որոնք էլ հաջորդիվ վիպական տեքստի մյուս մակարդակներում արտահայտվում են մասնավոր տարբերակիչ հատկանիշների միջոցով: Ի տարբերություն Մոկաց պատումների՝ Մշո տիպաբանական խմբի պատումները, կապված տարբերակայնության գործընթացի, վիպասացման, նաև տեղայնացման ու վիպաստեղծման առանձնահատկությունների հետ, մեծ մասամբ կառուցվածքայնորեն խաթարված են: Կայուն և ավանդական կառուցվածքով հատկապես աչքի են ընկնում Ալաշկերտից սերող պատումները, ինչն էլ կապված է Ալաշկերտի Խաստուրի գյուղի հայտնի վիպասանական դպրոցի վիպասանական ավանդույթների և նրանց պահպանման հետ: Այս վիպասանական դպրոցի հետ ուղղակի կամ անուղղակիորեն առնչվում է վիպասանների մի ամբողջ խումբ. Դըրմե, Ռես Գսպո և Քոչե Վարդան, Մանուկ Թորոյան (ՄԾ, հատ. Բ, Ը պատում) և Կարապետ Թամոյան (հատ. Բ, Թ պատում), Հակոբ Տեր-Մարտիրոսյան, Մարգիս Հակոբյան (հատ. Բ, մաս Բ, ԺԲ) Փրե Աբրո, Սեդրակ Աբաջյան (հատ Գ, Զ պատում) և Մմբատ Գևորգյան:

Ալաշկերտի պատումների կառուցվածքային հիմնական առանձնահատկությունը դրանց քառաճյուղ և եռաճյուղ բնույթն է՝ երկրորդ՝ Մեծ Մհեր ճյուղի շեշտված արտահայտությամբ: Ընդհանրապես Մեծ Մհերի ճյուղը իր ամենաընդարձակ ու բազմամիջադեպ արտահայտությունը գտնում է հենց այս տիպաբանական խմբում: Ի տարբերություն երկրորդ ճյուղի՝ Մշո խմբում ակտիվ գործառնականության, էպոսի առաջին ճյուղը այստեղ բավական թույլ, հաճախ էլ խեղաթյուրված արտահայտություն ունի: Բացի այդ, այստեղ այն առանձին հանդես չի գալիս:

Էպոսի երրորդ՝ Մասունցի Դավթի ճյուղը պատումների բոլոր խմբերում համեմատաբար կայուն արտահայտություն ունի: Չհաշված Մոկաց տիպաբանական խմբի հինգ՝ միայն առաջին ճյուղն ունեցող պատումները, մյուս տիպաբանական խմբերում Դավթի ճյուղն իր հիմնական միջադեպերով բավական ավանդական իրացում ունի: Ի տարբերություն մյուս խմբերի պատումների Մշո խմբում Դավթի ճյուղն առանձին (երկրորդ ճյուղի շատ սեղմ հիշատակությամբ) հանդես է գալիս ընդամենը մեկ՝ Գր. Գրիգորյանի կողմից 1969 թվականին մշեցի Ազատ Մալխասյանից գրառված պատումում: Մյուս դեպքերում երկրորդ ճյուղն հանդես է գալիս մյուս ճյուղերի համադրությամբ:

Բացի այս ընդհանուր յուրահատկություններն ու դրանց մասնավոր արտահայտությունները, Մշո տիպաբանական խմբի պատումների կառուցվածքային համակարգն ունի մի քանի ուշագրավ առանձնահատկություն, որոնցից մեկն առնչվում է պատումների ճյուղային համամասնության և հաջորդականության հետ:

Եթե Մոկաց և Մասնա տիպաբանական խմբերում քառաձյուղ, եռաձյուղ և երկձյուղ պատումներում ճյուղերն հանդես են գալիս ավանդական հաջորդականությամբ, ապա Մշո որոշ պատումներում այդ հաջորդականությունը խախտված է: Կառուցվածքային նման յուրահատկությունն իր անխուսափելի և տրամաբանական արտահայտությունն է գտել նաև տեքստի մյուս մակարդակներում՝ մոտիվային և միջադեպային համակարգերում:

Ըստ ճյուղային հարացույցի՝ Մշո պատումներում ամենից տարածված են պատումների քառաձյուղ և եռաձյուղ Մանասար և Բաղդասար-Մասունցի Դավիթ-Փոքր Մհեր համամասնությամբ կազմված մոդելները: Եթե քառաձյուղ պատումները բավական տարածված են նաև Մոկաց պատումներում, ապա եռաձյուղ Մանասար և Բաղդասար-Մասունցի Դավիթ-Փոքր Մհեր կապակցությունը հանդիպում է միայն Մշո պատումներում: Այս եռաձյուղ պատումներում ոչ միայն բացակայում է երկրորդ ճյուղը, այլև չկա հիշատակություն Մեծ Մհերի մասին: Այս դեպքում հետաքրքիր է, թե ինչպես են ամբողջանում Մշո այս ենթախմբի պատումների դիպաշարերը և ինչպես են առաջին և երրորդ ճյուղերը առանձին մոտիվներ և միջադեպեր կապում միմյանց: Նաև խնդրառու է, թե կառուցվածքային այս մոդելը խեղաթյուրման, թե համակարգային յուրահատկության արդյունք է:

Եռաձյուղ այս պատումները ծագմամբ հիմնականում վիպասանական երկու՝ Մշո (հատ Բ՝ Ա, Գ, ԻԲ) և Ալաշկերտի (հատ Բ, մաս Բ՝ Ժ, ԺԲ) կենտրոններից են: Մեկական պատում ծագում են Խլաթից (հատ Բ՝ Է) և Բայազետից (հատ Գ՝ ԺԲ): Մեկ՝ Նոր Բայազետից սերող ԺԴ (հատ Գ) պատում, նույնպես տեղադրում ենք այս ենթախմբում, թեև այն երկձյուղ է և չկա նաև չորրորդ ճյուղը:

Մշո ենթախմբի պատումներից երկուսը՝ Գարեգին Սրվանձոյանինը և Հայրապետ Համամձյանինը գրառվել են էպոսի հայրենիքում՝ Մուշում: Թեև այս պատումները էպոսի պատումների ժողովածուների խմբագրակազմի հետևողությամբ տեղադրում ենք միևնույն եռաձյուղ պատումների ենթախմբում, սակայն դրանք տարբեր են ինչպես ճյուղերի դասավորությամբ և համամասնությամբ, այնպես էլ մոտիվներով, դրանց իրացման հերթագայությամբ և միջոցներով: Գարեգին Սրվանձոյանի պատումը մոտ է էպոսի ավանդական և ընդհանրական համակարգին այն դեպքում, երբ Հայրապետ Համամձյանի պատումը Մոկաց և Մշո տիպաբանական խմբերի յուրօրինակ համադրությունն է: Այստեղ ակնհայտ շփոթ կա ինչպես ճյուղերի դասավորության, այնպես էլ միջադեպերի իրացման ու հերոսների անունների դեպքում: Ընդորում տեսանելի է, որ շեղումները կապված են ոչ թե ավանդման, այլ գրառման հետ: Ի տարբերություն այս պատումի Մշո ԻԲ պատումը, անկախ միջադեպերի կրկնություններն ու դիպաշարի ձգձգվածությունը, կառուցվածքով համապատասխանում է եռաձյուղ պատումների մոդելին: Գ. Սրվանձոյանի Ա և Վարդ Բդոյանի ԻԲ պատումներում կառուցվածքային այս յուրահատկությունը պատումների ներսում, միջադեպային համակարգում պատճառաբանված և տրամաբանական է: Ա պատումում Մհերի հետ կապված *Մսրրում որդի ունենալու* և *Մելիքի հետ պայման կապելու* միջադեպերը իրացնում է Աբամելիքը՝ երկվորյակ եղբայրներից ավագը: ԻԲ պատումում նույնպես Դավթի հայրը երկվորյակներից ավագն է՝ Սինամ-Մարիմը: Թեև այստեղ առանձին հիշատակություն չկա Մհերի մասին, բայց ուշագրավ է, որ Դավթի պապի, այսինքն երկվորյակների հոր անունը Համ-

դա-Մհեր է, ինչն էլ ենթադրել է տալիս, որ այս պատումում նախապես եղել է Մեծ Մհեր ճյուղ, կամ գոնե իրացվել են առանձին միջադեպեր: Բացի այս Մեծ Մհերի բացակայության պատճառով այս պատումում ըստ էության բացակայում է նաև չորրորդ ճյուղն ու գլխավոր հերոս Փոքր Մհերը: Թեև այստեղ հիշատակվում է չորրորդ ճյուղի կենտրոնական *կրտսեր հերոսի հեռացման* մոտիվը, բայց այն անտրամաբանական լուծում է ստացել: Նախ հերոսի անունը ոչ թե Մհեր է, այլ Հովհաննես և երկրորդ, նա այրի մեջ փակվում է Ձենով Հովանի և Քեռի Թորոսի հետ միասին: Այսինքն երկրորդ ճյուղի բացակայությամբ խեղաթյուրվում է նաև էպոսի ընդհանրական համակարգը: Նույն կերպ, թեև չորրորդ ճյուղը կա նաև Հ. Համամճյանի Գ պատումում, բայց այստեղ այն տրամաբանական լուծում չի ստանում: Ի տարբերություն այս պատումների, Կրպոյի Ա պատումն ունի Փոքր Մհեր ճյուղը՝ բնորոշ միջադեպերով: Այս պատումում դիպաշարը տրամաբանական և ավարտուն է և այստեղ այլ ճյուղերի գոյության խնդիր չի առաջանում:

Իրավիճակը մի փոքր այլ է այս ենթախմբի Ալաշկերտից սերող Ժ և ԺԲ պատումներում: Այս պատումները սերում են նույն աղբյուրից: Երկու ասացողներն էլ՝ Հակոբ Նրգեյանն ու Սարգիս Հակոբյանը վեպը լսել են Ալաշկերտի Խաստուր գյուղից սերող, Երանոս գյուղի տիրացու Հակոբ Տեր-Մարտիրոսյանից: Այս պատումների տարբերության մասին առաջաբանում կարդում ենք. «Տիրացու Սարգիս և Նրգեյի Հակոյի տարբերությունն այն էր, որ Սարգն պատում էր գուտ իր լսածը, իսկ Հակոն իրենից զանազան բաներ էր ավելացնում պատմվածք-հեքիաթների վրա, խախտելով նրա բուն ոգին և էությունը»<sup>3</sup>: Երկու պատումներն էլ գրավոր աղբյուրների ազդեցությամբ խեղաթյուրվել են, հեռացել մեր էպոսի ավանդական կառուցվածքից, մեծացել ի հաշիվ նոր, բայց գրքային պատմությունների: Այս պատումներում բավական գործուն է Դավթի հայր Մենքերիմը, սակայն նրա հետ կապված միջադեպերը բոլորովին նոր են և նման չեն Մեծ Մհերի միջադեպերին: Այստեղ ընդարձակ և նոր միջադեպերով հարուստ է նաև չորրորդ ճյուղը: Ընդհանուր առմամբ պատումները թեև բավական խաթարված են, սակայն չի կարելի ենթադրել, որ նախապես դրանք Մեծ Մհերի ճյուղ են ունեցել, քանի որ դիպաշարը զարգանում է ինքնուրույն և չկա երկրորդ ճյուղի պահանջ:

Խլաթից ծագող Է պատումում նույնպես տարբեր խաթարումներ կան, սակայն պատումն ընդհանուր առմամբ ամբողջական է: Այստեղ ոչ միայն լիովին բացակայում է Մեծ Մհերի ճյուղն, այլև չեն իրացվում նաև Մհերի հետ կապված միջադեպերը: Ուշագրավ է, որ այս պատումում նույնպես Մեծ Մհերի բացակայության հետևանքով այլ է չորրորդ ճյուղի գլխավոր հերոսի անունը: Պատումում իրացվում են չորրորդ ճյուղին բնորոշ որոշ միջադեպեր, սակայն հերոսի անունը ոչ թե Մհեր է, այլ Դավթի: Այլ է Նոր Բայազետի ԺԲ պատումը: Թեև այս պատումը համարում ենք եռաճյուղ, սակայն այստեղ երկրորդ ճյուղի բացակայության պայմաններում ստեղծվել է մի նոր ճյուղ, որտեղ գործողությունները ծավալվում են Դավթի որդի Մհերի շուրջ, ընդ որում իրացվող միջադեպերը բնորոշ են Դավթի ճյուղին: Այս մասից հետո միայն գալիս է չորրորդ Փոքր Մհեր ճյուղը՝ համապատասխան միջադեպերով: Այստեղ Մշո Ա և ԻԲ պատումների պես Մեծ Մհերի ճյուղին բնորոշ *Սարբում որդի ունենալու* միջադեպը, իրացվում է երկվորյակ եղբայրներից ավագի միջոցով, սակայն բացակայում է *Մելիքի հետ պայմանի միջադեպը*: Թեև պատումն ամբողջական է, սակայն ակնհայտ են կառուցվածքային և դիպաշար-

<sup>3</sup> Սասնա ծռեր, հատ Բ, մաս Բ, Երևան, 1951 թ., էջ 175:

րային խաթարումները: Այստեղ թեև կրկին չի զգացվում երկրորդ ճյուղի պահանջ, սակայն ամենայն հավանականությամբ այն ի սկզբանե ունեցել է Մեծ Միեր ճյուղ: Այս մասին է վկայում պատումի՝ Սանասարի Մարր գնալու հատվածի ծանոթագրությունը. «Վիպասացը այստեղ շփոթեց անունները. մերթ Միեր էր ասում, մերթ Սանասար»<sup>4</sup>:

Վերջին շրջանում գրառված պատումների համեմատ բավական ընդարձակ ու բազմամիջադեպ է նաև Նոր Բայազետի ԺԴ պատումը: Ըստ գրառողների՝ ասացող Ձոհրաբ Ավետիսյանը նաև լավ հեքիաթասաց է, ինչի արդյունքում էլ թերևս հեքիաթային շատ միջադեպեր հայտնվել են պատումում: Ակնհայտ հեքիաթային հիմք ունի *աղբյուրը փակած դևի մեջտեղից կիսելու միջադեպը*, թեև այստեղ զգացվում է նաև երկրորդ ճյուղի Մեծ Միերի առյուծաձևման մոտիվի ազդեցությունը: Ուշագրավ է, որ ԺԴ պատումում բացակայում է երկրորդ ճյուղը, սակայն գրառողների վկայությամբ ասացողը որոշ դրվագներ իմացել է նաև երկրորդ ճյուղից: Պատումում առաջին և երրորդ ճյուղերը կապվում են Միերի ճյուղին բնորոշ *ծնողների մահվան* և *որդու ծննդյան միջադեպով*, սակայն այս դեպքում միջադեպը կապվում է Սանասարի հետ: Նույն կերպ Սանասարի հետ են կապվում նաև *Մելիքի և Միերի եղբայրանալու*, *նրանց միջև պայմանի*, *Մարրում երեխա ունենալու*, *վերադարձի և կնոջ ընդդիմության* միջադեպերը:

Պատումների այս ենթախմբի քննությունն էլ կրկին գալիս է փաստելու, որ մեր էպոսը, անկախ ավանդման և գրառման վիճակից, հակված է ամբողջացման և ավարտունության, որի արտահայտությունն էլ էպոսի ավանդական քառաճյուղ համակարգն է՝ ընդունված Սանասար-Բաղդասար, Մեծ Միեր, Մասունցի Դավիթ և Փոքր Միեր ճյուղերի հաջորդականությամբ: Այլ խնդիր է, որ բանավոր ավանդման երկարատև ընթացքում տարբեր պատճառներով խաթարված քառաճյուղ համակարգը ասացողները փորձել են ամբողջացնել երկու կամ երեք ճյուղերում: Պատումների մի մասում դա չի ստացվել, սակայն էպոսը միշտ ձգտել է ամբողջացման. առանցքային մոտիվներն ու կարևոր միջադեպերն իրացվել են ոչ իրենց տեղում, սակայն իրացվել են էպոսի հղացքի պահանջով, քանի որ հերոսների չորս սերունդների հարակցմամբ կազմվող քառաճյուղ համակարգը պատճառաբանված է ու պարտադիր. «Թեպետ յուրաքանչյուր ճյուղ առանձին վերցրած վիպական անկախ ու ամբողջական պատմություն է տվյալ սերնդի մասին, բայց այդ ճյուղերի հարակցումը կատարված է ոչ միայն արտաքնապես, սոսկ սերունդների հաջորդականությամբ, այլև վիպական ներքին տրամաբանությամբ և գեղարվեստական որոշակի պատճառակցությամբ»,- իրավացիորեն նշում է էպոսագետ Ս. Հարությունյանը<sup>5</sup>:

Մշո տիպարնական խմբի կառուցվածքային այս ենթախմբի պատումներն, անկախ առաջացման պատճառները և իրացման տարբերությունները, ներկայացնում են մեր էպոսի տարբերակայնության գործընթացում առաջացող մի յուրօրինակ կառուցվածքային մոդել, որի ուսումնասիրությունը նոր լույս է սփռում ինչպես պատումների այս տիպարնական խմբի, այնպես էլ ամբողջ էպոսի կառուցվածքային ձևավորման գործընթացի վրա:

<sup>4</sup> Սասնա ծռեր, հատ. Գ, Երևան, 1979 թ., էջ 462:

<sup>5</sup> Մասունցի Դավիթ, հայ ժողովրդական հերոսավեպ (առաջաբանը, բառարանը, ծանոթագրությունները՝ Ս. Բ. Հարությունյանի), Երևան, 1981 թ., էջ 6:

## ՀԱՅԿ ԲԱԼԱՍՍԱՆՅԱՆ

Պատմական գիտությունների թեկնածու

ՄԱՐՄԱՇԵՆԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ  
ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ՎԻՄԱԳՐԵՐԸ

Մարմաշենի վանքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Վահրամաբերդ (Ներքին Ղանլիջա)՝ գյուղի հարավարևմտյան ծայրամասում՝ Գյումրի քաղաքից 8 - 9 կիլոմետր դեպի հյուսիս-արևմուտք: Ախուրյան գետի ձախափնյա հարթության վրա գտնվող միջնադարյան Հայաստանի կարևորագույն մենաստանների շարքը համալրող այդ ներդաշնակ կոթողների անսամբլը կառուցվել է Պահլավունիների ավատական ընտանիքի կողմից և մտել Այրարատյան նահանգի Նիգ գավառի (Պահլավունիների ժառանգական տիրույթի) կազմի մեջ, որն այսօր իր գեղարվեստական բարձր ճաշակի ու շինարարական յուրահատուկ կառուցվածքի շնորհիվ դասվում է հայ ճարտարապետության հրաշագեղ կոթողների թվին (նկ.1) :

Մարմաշեն անվան ծագման վերաբերյալ ճարտարապետ Թ. Թորամանյանը գրում է. «Վերջապես, տակավին պարզված չէ, թե ի՞նչ է նշանակում «մարմաշեն» բառը և ու՞մ պետք է վերագրել՝ գյուղի՞ն, թե՞ վանքի՞ն<sup>1</sup>: Ոմանք կարծում են, թե այդ բառն առաջացել է աբխազների թագուհի Մարիամի՝ անունից, մյուսները՝ ճարտարապետի՝<sup>(2)</sup> մեկ ուրիշը՝ սրբի՞<sup>3</sup>: Այս ցանկը կարելի է համալրել նորանոր ենթադրություններով, սակայն, դրանք կարիք են զգում լուրջ հիմնավորման:

Մարմաշենն առաջին անգամ հայ պատմիչների կողմից հիշատակվում է X դարում: Ստեփանոս Ասողիկը, խոսելով արաբ ամիրա Մամլանի դեմ դուրս եկած հայ-վրացական միացյալ բանակի մասին, հաղորդում է հետևյալը. «Եւ Գագկայ յամենայն զօրացն Հայոց հարեալ զգունդ զո (1000) յընտիր վառելոցն՝ զումարէ ի ձեռն իշխանաց իշխանին Վահրամայ, որդւոյ Գրիգորոյ Պահլաւունւոյ, որ զՄարմաշեն և զԲրգներն շինեաց...»<sup>4</sup>: Հաջորդ պատմիչը, որն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Մարմաշենի մասին, X-XI դարի հեղինակ Մամվել Անեցին է: Պատմիչը ոչ միայն նշում է կառուցողի անունը, այլև շինության թվականը. «Սկիզբն շինուածոյ մեծանուն և վայելչաշեն զարմանակերտ և հոյակապ ուխտին Մարմաշինոյ՝ ի քրիստոսասէր իշխանաց իշխանէն Վահրամայ. սկսեալ ի ՆԼԵ. թուին և ավարտեալ ի ՆԽԳ. ին»<sup>5</sup>: Այս վկայությունը ցույց է տալիս, որ եկեղեցու կառուցումը սկսվել է 986 և ավարտվել է 994 թթ.: Սակայն պետք է նշենք, որ Մամվել Անեցու մատնանշած թվականները չեն համապատասխանում Մարմաշենի գլխավոր եկեղեցու հարավային պատի միջին մասում փորագրված

<sup>1</sup> Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, MCMXLII, էջ 315:

<sup>2</sup> Ղ. Ալիշան, Շիրակ, 1881, էջ 147:

<sup>3</sup> Ն. Բ. Նիկողոսեան, Շիրակի գիւղական կեանքից, «Արարատ», 1904, N է-Ը, էջ 702:

<sup>4</sup> Ստեփանոսի Տարսնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 270:

<sup>5</sup> Մամուլեի քահանայի Անեցոյ Հաւաքունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 103:

շինարարական արձանագրության թվականների հետ, ըստ որի եկեղեցու շինարարությունը սկսվել է ՆԼԷ և ավարտվել ՆՀԸ թվականներին<sup>6</sup>: Այսպիսով, շինարարական արձանագրությունը վկայում է, որ եկեղեցու հիմնադրումը սկսվել է 988 և ավարտվել 1029 թթ.: Սակայն, շատ ուսումնասիրողներ արձանագրության մեջ եղած ՆԼԷ թվականի «Է» տառը կարդում են «Ե»՝ փորձելով Վահրամ Պահլավունու թողած արձանագիր թվականը (ՆԼԷ) համապատասխանեցնել Սամվել Անեցու վկայակոչած տարեթվի (ՆԼԵ) հետ:

Շինարարական արձանագրության մաս կազմող ՆԼԷ թվականի «Է» տառը փորագրված է բավական հստակ և իր ձևով չի տարբերվում արձանագրության մեջ կիրառված մյուս «Է» տառերից (նկ. 2): Հետևաբար, կասկած չպետք է հարուցի «Է» թվականի վերծանումը, ինչը անում են հետագա ուսումնասիրողները:

Իսկ ինչ վերաբերում է Սամվել Անեցու վկայակոչած ՆԼԵ (986) թվականի Ե տառին, ապա այն «ձեռագիր գրչական վրիպում կարող է լինել, ու միանիշ Ե-ն պետք է սրբագրել Է»<sup>7</sup>:

Վանքի կառուցման ավարտի վերաբերյալ Սամվել Անեցու և Վահրամ Պահլավունու արձանագիր թվականները ևս տարբերվում են. Սամվել Անեցին հաղորդում է, որ շինարարական աշխատանքներն ավարտվել են 994 թ., իսկ շինարարական արձանագրությունը փաստում է, որ այդ աշխատանքներն ավարտվել են 1029 թ.:

«Երկու փաստաթղթերի մեջ, - ինչպես նշում է Հ. Եղիազարյանը, - որոշակի պարզ չէ, թե Վահրամ Պահլավունին միայն գլխավոր եկեղեցի<sup>8</sup>ն կառուցեց՝ նրա վրա փորագրելով վերը հիշված արձանագրությունը, թե դրա հետ միաժամանակ և ուրիշ շենքեր»<sup>8</sup>: Այս առեղծվածի պատասխանը մասամբ տալիս է մեծանուն ճարտարապետ Թ. Թորամանյանը. «Թեև պետք է խոստովանել, որ շենքը ունի ներքուստ և արտաքուստ ճարտարապետական և գեղարվեստական մասեր, այնուամենայնիվ, այդ բոլորը կարող էին վերջանալ 10-12 տարում, եթե երկար ընդհատումներ չլինեին»<sup>9</sup>: Հետևաբար, պետք է ենթադրենք (ինչպես կարծում են շատ ուսումնասիրողներ, որոնց հետ մենք համերաշխ ենք), որ Սամվել Անեցու վկայությունը վերաբերում է միայն գլխավոր եկեղեցուն, իսկ Վահրամ Պահլավունու արձանագիր տարեթիվը ազդարարում է բոլոր եկեղեցիների՝ համալիրի ավարտը:

Մարմաշենն իրենց աշխատություններում ավելի ուշ հիշատակում են նաև Կիրակոս Գանձակեցի, Վարդան Վարդապետ և Մխիթար Այրիվանեցի պատմիչները, որոնք կառուցողի անունը հիշատակելուց բացի այլ մանրամասներ չեն հաղորդում<sup>10</sup>:

Մենաստանի գլխավոր եկեղեցու (Կաթողիկե) հյուսիսային պատի վրա փորագրված արձանագրության մեջ հիշատակվում են վանքերի երկու խումբ՝ Վերին և Մեծ, որոնք հետագայում Գրիգոր արքեպիսկոպոսի և նրա եղբայր Խարիվի Մագիստրոսի ջանքե-

<sup>6</sup> **И. А. Орбели**, Надписи Мармашена, Петроград, 1914, стр.

<sup>7</sup> **Ս. Մաղումյան**, Մարմաշենի վանք, Էջմիածին, 1998, էջ 16:

<sup>8</sup> **Հ. Եղիազարյան**, Մարմաշենի վանքը և նրա վիմագրությունները, «Էջմիածին», 1957, N 5, էջ 36:

<sup>9</sup> **Թ. Թորամանյան**, նշվ. աշխ., էջ 317:

<sup>10</sup> **Կիրակոս Գանձակեցի**, Հայոց պատմություն, Երևան, 1961, էջ 88: **Վարդան Վարդապետ**, Տիեզերական Պատմություն, Երևան, 2001, էջ 103: **Մխիթարայ Այրիվանեցու** Պատմություն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 56:

րով միավորվում են<sup>11</sup>: Վերին վանքը գտնվում է Մեծ վանքից 200 մետր դեպի հյուսիս գտնվող բլրակի վրա և իր դիրքով ավելի բարձր է նախորդից:

Ի տարբերություն Վերին վանքի՝ Մեծ վանքը պաշտպանված է եղել շրջապարիսպով, որը ձգվել է մինչև գետի եզրերը՝ իր մեջ ներառելով չորս եկեղեցի, գավիթ-ժամատուն, զանգակատուն և գերեզմանոց:

Մեծ վանքի տարածքում XIX դարի 80-ական թվականներից մինչ օրս իրականացված հնագիտական աշխատանքների արդյունքում ուսումնասիրողները դեռևս չեն հայտնաբերել նախաքրիստոնեական կառույցների հետքեր, սակայն, պահպանված հիշատակության համաձայն, Ալեքսանդր Երիցյանը հայտնաբերել է հեթանոսական տաճարի մնացորդներ. «որի կեսը մնում էր քրիստոնեական եկեղեցույ հիմանց տակ»<sup>12</sup>: Պետք է նշենք, որ այս տեղեկությունն իր տեսակի մեջ եզակի է, քանզի վերոհիշյալ վկայությունից բացի, մասնագիտական գրականության մեջ նման տաճարի գոյության մասին ոչ մի հիշատակություն չկա:

Մարմաշենը, ինչպես վկայում է եկեղեցու հարավային պատի վրա Վահրամ Պահլավունու թողած արձանագրությունը, եղել է մեծ սպարապետի տոհմային հանգստարանը, որի համար էլ արժանացել է նրա ու իր սերունդների ուշադրությանը: «Շինեցաք,- ասում է նա,- եւ այլ բազում եկեղեցիս եւ վանորայս. բայց գտեղի հանգստեանս մերոյ առաւել պատուով մեծացուցաք և լիացուցաք ամենայն գոյիք, լերամբք և դաշտաւք, աւանդեցաք ի սա գեղս եւ ագարակս գանձագինս»<sup>13</sup>:

1064 թվականին սելջուկ-թուրքերը Ալի-Ասլանի որդի Մելիք շահի գլխավորությամբ պաշարում և կործանում են Մարմաշենը: Ասվածի վառ ապացույցն է արաբ հեղինակ Իբն ալ-Ասիրի հետևյալ վկայությունը. «Մելիք շահը և Նիզամ ալ-Մուլլը շարժվեցին դեպի Մարիամ Նիշին, ուր շատ վանականներ ու քահանաներ (հոգևորականներ) կային: Քրիստոնյա թագավորներն ու նրանց ժողովուրդը բարյացակամ էին այս քաղաքի բնակիչների նկատմամբ: Սա մի ամրացված քաղաք էր, որի պարիսպները պատրաստված էին հսկայական պինդ քարերով, որոնք կապարի ու երկաթի միջոցով իրար էին կապված, իսկ նրա մոտ կար մի մեծ գետ:

Նիզամ ալ-Մուլլը պատրաստեց կովի համար պետք եղած նավերը և այլ բաներ ու կովի բռնվեց: Կռիվը տևեց զիշեր ու ցերեկ, իսկ նա զինվորներին կովի էր բերում հերթով: Անհավատները հոգնեցին և հուսահատությունը պատեց նրանց: Մահմեդականները հասան նրա պարիսպներին և աստիճաններ դնելով՝ վեր բարձրացան, քանզի բրիչները բթացան քարի կարծրության պատճառով: Երբ բնակիչները մահմեդականներին պարսպի վրա տեսան, թուլացան ու հուսալքվեցին: Մելիք շահը մտավ քաղաք Նիզամ ալ-Մուլլի հետ, և նրանք վառեցին ու կործանեցին եկեղեցիները, բնակիչներից շատերին կոտորեցին և շատերը մահմեդականություն ընդունելով մահվանից փրկվեցին»<sup>14</sup>: Այս նկարագրությունը լիովին համապատասխանում է Ախուրյան գետի ձա-

<sup>11</sup> **И. А. Орбели**, նշվ. աշխ., էջ 2:

<sup>12</sup> **Համբո**, Հինգերորդ հնագիտական ժողովը Թիֆլիսում, «Փորձ», 1881, N 1 էջ 87:

<sup>13</sup> **И. А. Орбели**, նշվ. աշխ., էջ 1:

<sup>14</sup> **Իբն ալ-Ասիր**, Արաբական աղբյուրներ, Բ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981, էջ 218:



խափնյա հարթավայրում գտնվող մերօրյա Վահրամաբերդ գյուղի շրջակայքին, որտեղ կան նաև բերդի ավերակներ, նաև դղյակ հիշեցնող շինություններ, նաև եկեղեցիներ:

Մարիամ Նիշին կոչվող քաղաքը, ինչպես երևում է Գրիգոր Մագիստրոսի՝ Սոսթենես վանահորը գրած նամակի բովանդակությունից, կոչվել է Մարմաշեն. «Ուխտիդ սուրբ եւ մայրաքաղաքիդ Մարմաշինոյ»<sup>15</sup>: Իսկ մեկ այլ նամակի մեջ, որն ուղղված էր Սանահինի վանքին, այն ներկայացվում է որպես պարսպապատ քաղաք. «զեկեղեցեաց զյարդարումն եւ զկերտութիւն սքանչելի եւ ամրապատ պարսպօք եւ աշտարակօք արամանեալ, որ եւ ի մահարձանաց ոք այժմ եթէ հայեցի ոչ ի բնաւ Արամեան գտցէ ոք այնպիսի, եւ գրագմութիւն անապատականաց եւ մայրաքաղաքաց յօրինեալ»<sup>16</sup>:

Սելջուկյան ավերածություններից հետո Մարմաշենը 1225 թ. վերանորոգվում է. Վահրամ Պահլավունու թոռներ Գրիգոր արքեպիսկոպոսը և նրա եղբայր Խարիփ Մագիստրոսը Մարմաշենի գլխավոր եկեղեցու հյուսիսային պատի վրա թողած արձանագրության մեջ հաղորդում են, որ իրենց ջանքերով «վերստին նորոգումն եղև հրաշափառ տաճարի»<sup>17</sup>: Մակայն, ինչպես երևում է «Մարմաշենի առաջնորդությունը շատ չէ տևել. նա էլ Հայաստանի միւս վանքերի հետ ենթարկուել է մոնղոլների ասարառութիւններին և հետըզհետէ քայքայուել, ամայացել է»<sup>18</sup>:

«Միայն 19-րդ դարի 30-ական թվականներին,- գրում է Հ. Եղիազարյանը,- երբ Ռուսաստանը գրավեց Հայաստանի հյուսիսային մասերը, և ռուս-թուրքական սահմանը դարձավ Ախուրյան գետը, Ղարսի հայ գաղթականների մի խումբ բնակություն հաստատեց վանքի շուրջը և գլխավոր եկեղեցին մաքրելով դարձրին գյուղական եկեղեցի»<sup>19</sup>:

**Կաթողիկե եկեղեցին** գտնվում է հիմնական խմբի կենտրոնում. իր ձևերով ու հատկանիշներով կատայալ գմբեթավոր դահլիճ է (12,8 մ X 20 մ): Ամբողջ շենքը կառուցված է գանգվածեղ սուֆ քարերից, որոնց մեծությունը տեղ-տեղ հասնում է մինչև 2 մետրի: Եկեղեցին կանգնած է վեց որմնասյուների վրա, որոնցից երկուսը, կամար կազմելով, միանում են բեմին՝ առջևից փակելով ավանդատների մուտքը: Ավանդատները աստիճաններով միացված են բեմին: Եկեղեցին ունի բավական բարձր և ընդարձակ բեմ, որի արևելյան պատի վրա կան յոթ կամարակապ պատուհաններ:

Դրսից շենքի բոլոր ճակատները հարդարված են զույգ որմնասյուներին հենվող որմնակամարներով: Կենտրոնական որմնակամարները մյուսներից տարբերվում են իրենց մեծությամբ, որոնց տակ ամփոփված են պատուհաններ (հարավային ճակատում կամարաձև, մյուսներում՝ ուղղանկյուն):

Եկեղեցու պատերի ծանրաբեռնվածությունը թեթևացնելու, ինչպես նաև արտաքուստ շքեղ տեսք տալու նպատակով շինարարները արևելյան, հարավային և հյուսիսային պատերի վրա երկուական եռանկյունաձև մեծ խորշեր են թողել:

<sup>15</sup> Գրիգոր Մագիստրոսի թղթերը, բնագիրն յառաջաբանով եւ ծանօթութիւններով առաջին անգամ ի լոյս ընծայեց Կ. Կոստանեանց, Աղեքսանդրապօլ, 1910, էջ 104:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 141:

<sup>17</sup> **И. А. Орбели**, նշվ. աշխ., էջ 2:

<sup>18</sup> **Ն. Զ. Նիկողոսեան**, Շիրակի գիւղական կեանքից, «Արարատ», 1904, N 10, էջ 786-787:

<sup>19</sup> **Հ. Եղիազարյան**, նշվ. աշխ., էջ 36:

Շենքին առանձնահատուկ շուք է տալիս 12 նիստանի թմբուկը, որն ավարտվում է հովանոցաձև վեղարով:

«Մարմաշենի գլխավոր եկեղեցին,- գրում է ճարտարապետ Ս. Խ. Մնացականյանը,- իր հիմնական ձևերով ընդհուպ մոտենում է Անիի Մայր տաճարին և չնայած հատակագծային ձևերի մեջ եղած տարբերությանը, ծավալային լուծման, կերպարի և հատկապես արտաքին հարդարանքի մեջ խիստ ակնհայտ է ընդհանրությունը»<sup>20</sup>: Շիրակի ճարտարապետական դպրոցի ազդեցությունը Պահլավունիների գլուխգործոց հանդիսացող Կաթողիկե եկեղեցու վրա այնքան ակնհայտ է, որ ճարտարապետ Կ. Լ. Հովհաննիսյանը, որն առանձին աշխատություն է նվիրել Անիի Մայր տաճարի ճարտարապետ Տրդատին, կարծում է, որ եկեղեցին նրա ստեղծագործության արդյունք է<sup>21</sup>:

Պահպանված հիշատակության համաձայն XX դարի սկզբին Կաթողիկե եկեղեցին կոչվել է Ս. Ստեփաննոս<sup>22</sup>: Այդ անվանումը տեղացիների շրջանում կենսունակ է նաև այսօր: Բանն այն է, որ Կաթողիկե եկեղեցու հյուսիսային պատի միջին մասում փորագրված ընդարձակ արձանագրության մեջ Մարմաշենի վանքին՝ Գրիգոր արքեպիսկոպոսի և նրա եղբայր Խարիփ Մագիստրոսի նվիրաբերած ընծաների և կալվածքների շարքում հիշատակվում է նաև «ի քաղաքիս գմեր պապենի հայրենիք եկեղեցին զուրբ Ստեփաննոս»<sup>23</sup>:

Առաքելոց եկեղեցու արևելյան պատի կենտրոնական մասում փորագրված արձանագրության մեջ պարզորոշ կերպով զանազանված են Կաթողիկե և Ս. Ստեփաննոս եկեղեցիները.

1. «ՈՁԸ: ՇՆՈՐՀԻՒՆ ԱՅ. ԵՍ ԲԱՐՍԵՂ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ, ՈՐԴԻ ԱՍԻՐ ԵՐԿԱԹԱՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՅՐԱ-

2. ՔԱՂԱՔԻՍ ԱՆՈՅ, ՀԱՍՏԱՏԵՑԱՔ Ի ՄԵՐ [Ս]ԵՓԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆԷՍ ԶՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ ՀԱՅՐԵ-

3. ՆԻՔ ՍՈՒՐԲ ՈՒԽՏԻՆ ՄԱՐՄԱՇԵՆՈՅ ՎԱՆԻՑՆ, ՍԽՐԱՏԵՍԻԼ ՍՈՒՐԲ ԿԱԹՈՂԻԿԵՒՆ, ԶՈՐ ՄԱՔԻՍՏՐՈՍՆ ԳՐԻԳՈՐ ՇՆՈՐ-

4. ՀԵ[Ա]Լ ԵՒ ՀԱՍՏԱՏԵԱԼ ԷՐ, ԸՆԴ ՈՐՈՅ ՀՈՎԱՆԵԱԻ ԻՆՔՆ ԵՒ ԵՂԲԱՅՐ ԻՐԻ ԽԱՐԻՓ ԿԱՆ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻ...»<sup>24</sup>:

**Երկրորդ եկեղեցին** նույնպես զմբեթավոր դահլիճ է և գտնվում է գլխավոր եկեղեցուց 2,5 մետր դեպի հյուսիս, որից հիմնականում պահպանվել են հարավային և արևելյան պատերը և տանիքի որոշ հատվածներ: Սա իր չափերով (9,5 մ X 15 մ) զիջում է գլխավոր եկեղեցուն, սակայն ճարտարապետական ձևերով և արտաքին հարդարանքներով նման է վերջինիս:

Ըստ մեծանուն ճարտարապետ Թ. Թորամանյանի՝ այս եկեղեցին «թերևս ավելի կանուխ է, քան Վահրամաշենը, այնուամենայնիվ դարձյալ նույն դարուն և նույն եր-

<sup>20</sup> Ալնարկ հայ ճարտարապետության պատմության, Երևան, 1964, էջ 205:

<sup>21</sup> **Կ. Լ. Օրանեսյան**, նշվ. աշխ., էջ 102:

<sup>22</sup> **Ն. Ք. Նիկողոսյան**, Շիրակի գիտական կեանքից, «Արարատ», 1904, N է-Ը, էջ 702:

<sup>23</sup> **Ի. Ա. Օրբելի**, նշվ. աշխ., էջ 2:

<sup>24</sup> **Հ. Ա. Օրբելի**, Դիվան հայ վիմագրության, պրակ I, Երևան, 1966, էջ 17:

րորդ վերածնության կպատկանի»<sup>25</sup>: Սակայն, անհրաժեշտ է նշել, որ Մեծ վանքի եկեղեցիները կառուցվել են համալիրային ամբողջականության և ներդաշնակության ակնկալումով, որտեղ անսամբլի մյուս եկեղեցիները գլխավոր եկեղեցու նկատմամբ ունեն ենթակա դեր: Ուստի, վերոհիշյալ համաչափությունները պահպանելու համար անհրաժեշտ էր նախ կառուցել համալիրի գլխավոր կառույցը, իսկ այնուհետև նրա հետ համապատասխանեցնել մնացած (երկրորդական) շինությունները: Հետևաբար, պետք է ենթադրել, որ Վահրամ Պահլավունին երկրորդ եկեղեցին կարող էր կառուցել միայն գլխավոր եկեղեցու ավարտից հետո, այսինքն՝ 994-1029 թթ. ընկած ժամանակահատվածում:

**Երրորդ եկեղեցին** գտնվում է գլխավոր եկեղեցուց 11 մետր դեպի հարավ: 7 մետր լայնություն և 9 մետր երկարություն ունեցող այդ հիասքանչ կառույցը նույնպես անսյուն է և պատկանում է խաչաձև հատակագիծ ունեցող կենտրոնագմբեթ եկեղեցիների տիպին:

Այս շինությունն իր ճարտարապետական լուծումներով ու արտաքին հարդարանքով խիստ տարբերվում է գլխավոր և երկրորդ եկեղեցիներից, սակայն այդ առանձնահատկություններն իրենց հերթին կարողանում են համալիրին ավարտուն տեսք և շքեղություն հաղորդել: Ուստի, կարծում ենք, որ այս եկեղեցին ևս կառուցվել է 994-1029 թթ. ընկած ժամանակահատվածում՝ երկրորդ եկեղեցու հետ միաժամանակ կամ նրա ավարտից հետո:

Եկեղեցու արևմտյան և հարավային պատերին կան մեկական, իսկ արևելյան պատին՝ երեք փոքրիկ պատուհաններ: Նույն չափի երեք պատուհաններ էլ կան թմբուկի արևելյան, հարավային և արևմտյան կողմում:

Եկեղեցին ունի բարձր բեմ, որի երկու կողմերում կան քառակուսի ավանդատներ: Նույնպիսի ավանդատներ կան նաև արևմտյան դռանը հարակից երկու անկյուններում:

Գլխավոր եկեղեցու հարավային պատին՝ Մարիամ թագուհու թողած արձանագրության մեջ, պահպանվել է հիշատակություն այն մասին, որ Մարմաշենի տիեզերական ուխտում եղել է «գսեանն եկեղեցին գտուրբ Պետրոս»<sup>26</sup>: Սույն հանգամանքը տեղիք է տվել ենթադրելու, որ վերոհիշյալ եկեղեցին «իցէ մին յայսց երկուց մատրանց՝ որք են արդարև սինաձև շինուածք»<sup>27</sup>: Ն. Ք Նիկողոսյանը, չտալով որոշակի բացատրություն, նախապատվությունը տալիս է երրորդ եկեղեցուն<sup>28</sup>, որը, կարծում ենք, ավելի տրամաբանական է, որովհետև գլխավոր եկեղեցու հարավային կողմում փորագրված Մարիամ թագուհու արձանագրությունն անմիջապես ուղղված է դեպի այդ կառույցը:

**Գավիթը կամ ժամատունը** գտնվում է գլխավոր եկեղեցու արևմտյան կողմում (13,3 մ X 12,6 մ), որից այժմ պահպանվել են ավերակ վիճակում գտնվող արևմտյան և հյուսիսային պատերը, հարավային պատի ստորին շարվածքը, չորս որմնախարիսխներն ու ութանկյուն սյուների բեկորներ: Սրա մեջ բացվող գլխավոր եկեղեցու արևմտյան դռան երկու կողմում կան տապանաքարեր, որոնցից հյուսիսային կողմի արձանագիրը վկա-

<sup>25</sup> Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 317:

<sup>26</sup> Ի. Ա. Օրբելի, նշվ. աշխ., էջ 3:

<sup>27</sup> Թ. Շահխաթունեանց, Ստորագրություն կաթողիկե Էջմիածնի և հինգ զաւառացն Արարատայ, հտ. II, Էջմիածին, 1842, էջ 276:

<sup>28</sup> Ն. Մ. Նիկողոսեան, Շիրակի գիւղական կեանքից, «Արարատ», 1904, N Թ, էջ 787:

յում է, որ դա Վահրամ Պահլավունու գերեզմանն է (նկ. 3):

«Վահրամի տապանաքարը,- ինչպես նշում է Թ. Թորամանյանը,- չպետք է շփոթել եկեղեցիի արևմտյան դռան մոտ այժմյան գոյություն ունեցող, ավքսանդրապոլիցիների շինած տապանաքարի հետ. իր իսկական տապանաքարը ինքս գտել և լուսանկարել եմ, թեև մեջտեղից երկու կտոր եղած»<sup>29</sup>:

Այնուամենայնիվ, պետք է ենթադրել, որ ավքսանդրապոլիցիների կողմից նոր շիրմաքարը տեղադրվել է հին տապանաքարի տեղում, որովհետև Վահրամ իշխանի թոռ Գրիգոր արքեպիսկոպոսը գլխավոր եկեղեցու հյուսիսային պատին թողած ընդարձակ արձանագրության մեջ հաղորդում է, որ թշնամու դեմ մղած կռվի ժամանակ մարտիրոսացած իր սիրելի եղբայր Խարիփի մարմինը «բերեալ թաղեցաք առ դրան սրբոյ կաթողիկէիս մերձ առ նշխարս հատուն մերոյ Վարհամա[մ] իշխանի»<sup>30</sup>: Այստեղ են գտնվում նաև Վահրամ իշխանի թոռ և Խարիփ Մագիստրոսի եղբայր Գրիգոր արքեպիսկոպոսի և նրա որդի Ապողամրի տապանաքարերը<sup>31</sup>: Այս ամենից կարելի է հետևություն անել, որ Վահրամ Պահլավունու և նրա սերունդների համար գավիթ-ժամատունը ծառայել է հիմնականում որպես տոհմային տապանատուն-հանգստարան:

Գավթի կառուցումն ազդարարող շինարարական արձանագրության բացակայության պայմաններում դժվար է ասել, թե Վահրամ Պահլավունին ե՞րբ սկսեց և ե՞րբ ավարտեց գավթի շինարարական աշխատանքները, սակայն, դժվար չէ կռահել, որ այդ աշխատանքները կարող էին սկսվել միայն գլխավոր եկեղեցու շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո (994 թ.) և ավարտվել ոչ ուշ, քան 1029 թ.:

**Չորրորդ կամ կլոր հատակագծով եկեղեցին** գտնվում է գավթի արևմտյան կողմում (նկ. 4): Արտաքուստ կլոր այս շինությունը ներքուստ ներգծված է չորս կիսակլոր խորաններով, որոնք ընդգծում են կառույցի խաչաձևությունը: Խորանների միջև տեղադրված են մեկական ավանդատներ:

Ավերված եկեղեցուց պահպանվել են պատերի ստորին շարվածքը և միաստիճան բարձր ստիլբատը (հիմնապատը):

Մասնագիտական գրականության մեջ ուսումնասիրողների կողմից այս եկեղեցին թվագրվել է VII դարով, իսկ Ն. Մ. Տոկարսկին այն թվագրում է XI դարի 20-30-ական թվականներով՝ հաշվի առնելով սույն շինության և 1029 թ. կառուցված Խճկոնքի կլոր հատակագծով եկեղեցու նմանությունը<sup>32</sup>: Այս ենթադրությունը մեզ ավելի հոգեհարազատ է թվում, որովհետև Կաթողիկեի հարավային պատին փորագրված շինարարական արձանագրության թվականները (988-1029 թթ) համապատասխանում են X դարի վերջին և XI դարի սկզբին:

**Զանգակատունը** գտնվում է գավթի հարավարևմտյան կողմում: Մյուս շինությունների նման, այս քառանկյուն կառույցը նույնպես կառուցված է տուֆ քարով, որից այժմ պահպանվել են միայն ստորին 2-4 շարքերը: Հ. Եղիազարյանի կարծիքով, այս շինությունը եղել է Պահլավունյաց տոհմի դամբարան, չնայած նրան, որ «ներսում չեն պահ-

<sup>29</sup> Թ. Թորամանյան, նշվ. աշխ., էջ 317:

<sup>30</sup> Ի. Ա. Орбели, նշվ. աշխ., էջ 2-3:

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 3-4:

<sup>32</sup> Ի. Մ. Токарский, Архитектура Армении IV-XIV вв., Ереван, 1961, стр. 217:

պանվել գերեզմանաքարեր»<sup>33</sup>:

«Գավթի հետ միաժամանակ նույն որմածքով կառուցված այս փոքրիկ շենքը,- գրում է Ս. Սաղումյանը,- իմ կարծիքով, զանգակատուն է,...որը, թվում է, պետք է նախօրինակ ծառայեր Սանահնի վանքի զանգակատանը»<sup>34</sup>: Կիսելով այս բավական հետաքրքիր տեսակետը, հարկ ենք համարում նշել, որ գավթի առկայության պայմաններում սույն շինության դամբարան լինելը բացառվում է:

«Սրա կառուցման ժամանակը,- ինչպես նշում է Հ. Եղիազարյանը,- նույնպես որոշ չէ, սակայն գետնի մակերեսի նկատմամբ նրա նստվածքից երևում է, որ պետք է կառուցված լինի ԺԱ դարում՝ գլխավոր եկեղեցու և գավթի կառուցումից հետո»<sup>35</sup>:

Զանգակատունը զբաղեցնում է գավթի և կլոր հատակագծով եկեղեցու միջև ընկած տարածությունը: Սակայն, կարծում ենք, որ այդ փոքրիկ շինության հիմնադրումով ոչ թե լրացվել է գավթի և կլոր եկեղեցու միջև ընկած տարածությունը, այլ հակառակը. նախապես կառուցվել է զանգակատունը, իսկ այնուհետև կլոր եկեղեցին: Այս ենթադրության օգտին է խոսում կլոր եկեղեցու համեմատ զանգակատան զբաղեցրած ավելի նպաստավոր դիրքը: Ուստի, կարծում ենք, որ զանգակատունը ևս կառուցվել է 994-1029 թթ. ընկած ժամանակահատվածում:

**Գերեզմանոցը** գտնվում է վանքի արևելյան մասում: Այստեղ իրականացված հնագիտական պեղումների արդյունքում բացվել են հին գերեզմանների տապանաքարերը, որոնք գտնվում են եկեղեցիների հիմքերին հավասար բարձրության վրա<sup>36</sup>: Վերոհիշյալ հարթությունից վեր գտնվող բազմաթիվ տապանաքարերի վրա պահպանված արձանագիր թվականների առկայությունը հուշում է, որ նոր գերեզմանոցը ձևավորվել է հին գերեզմանոցի վրա:

Այս գերեզմանոցի տարածքում է գտնվում իշխանաց իշխան Վահրամ Պահլավունու կողակցի՝ Սոփիա տիկնոջ արձանագիր տապանաքարը (նկ. 5), որը Վերին վանքից «բերին ՚ի ստորին գիւղն, և եղին ՚ի վերայ գերեզմանի քահանայի միոյ նոր վախճանելոյ (Տէր Ողոտս անուն)»<sup>37</sup>: Հավանաբար, նույն եղանակով Վերին վանքի գերեզմանոցից Մեծ վանքի գերեզմանոց է տեղափոխվել նաև Վահրամ Պահլավունու որդու՝ Ապուղամրի կնոջ տապանաքարը: Ստորին վանքի տարածքում Պահլավունյաց տոհմի կանանց գերեզմանների բացակայության, ինչպես նաև Վերին վանքի տարածքում դրանց առկայության հանգամանքը վկայում է, որ Վերին վանքի տարածքը Վահրամ Պահլավունու և նրա սերունդների կանանց համար հանդիսացել է որպես տոհմային գերեզմանոց: Հակառակ դեպքում Վահրամ Պահլավունու աճյունը չէր ամփոփվի Մեծ վանքի գավթում, իսկ նրա կողակցինը՝ Վերին վանքի գերեզմանոցում:

**Վերին վանքը** գտնվում է Ստորին վանքի կամ Մեծ Մարմաշենի հյուսիսային կողմում՝ Ախուրյանի աջ ափին բարձրացող բլրակի վրա, որը Ստորին վանքի հետ միասին կազմել է մեկ ամբողջություն: Այն իր կազմում ունի մեկ եկեղեցի և գերեզմանոց: Գերեզմանոցի եկեղեցին քառաթև կենտրոնազմբեթ շինություն է, որից պահպանվել է

<sup>33</sup> Հ. Եղիազարյան, նշվ. աշխ., էջ 39:

<sup>34</sup> Ս. Սաղումյան, նշվ. աշխ., էջ 25:

<sup>35</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 39:

<sup>37</sup> Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, 140:

հյուսիսային պատի մեծ մասը (նկ. 6): Մասնագիտական գրականության մեջ այս կառույցը թվագրվում է VII դարով: Սակայն նկատի առնելով եկեղեցու գմբեթի գլանաձև թմբուկի պահպանված մասը՝ Ա. Մանուչարյանը այս հուշարձանը թվագրում է X-XI դարերով<sup>38</sup>, իսկ Վ. Հարությունյանը ժամանակակից է համարում մյուսներին<sup>39</sup>: Մեր կարծիքով Վահրամ Պահլավունին գերեզմանոցի քառաթև եկեղեցին պետք է որ կառուցած լիներ իր վաղամեռիկ կնոջ՝ Սուփիայի մահից (1015 թ.) հետո և ավարտած՝ մինչև 1029 թ:

**Գերեզմանոցը** տարածվում է մատուռանման շինության շուրջը: Այստեղ է թաղված Վահրամ Պահլավունու կին Սուփիա տիկինը. «Արձանագիր Գրիգորի եպիսկոպոսին յայտ առնէ զի երկու վանք էին ՚ի տեղուջս, մին ստորագրեալս Մարմաշէն՝ որ Մեծ կոչի առ միւսովն. իսկ միւսն Վերի վանք, զի կայ ՚ի Ն. Ե. մեծին սակաւութ հետի ՚ի լանջակողման ձորոյն, փոքու վտակաւ անջրպետեալ ՚ի ստորնոյն, այլ աւերեալ է, և միայն որմն հիւսիսային կանգուն կայ. աստանօր էր գերեզման Սուփիայ տիկնոջ»<sup>40</sup>: Ցավոք սրտի այսօր անհնար է գերեզմանոցի տարածքում մատնացույց անել այն վայրը, ուր հանգչում է աստվածապաշտ տիկնոջ աճյունը, որովհետև, ինչպես վերը նշեցինք, իրենց ազգի պատմությունը չիմացող մի խումբ բարբարոսներ նրա շիրմաքարը տեղափոխել էին Մեծ վանքի գերեզմանոց:

Այս գերեզմանոցում պետք է թաղված լիներ նաև Ապուղամր Պահլավունու կինը, որի տապանաքարը, ըստ երևույթին, արժանացել է Սուփիա տիկնոջ շիրմաքարի բախտին:

Այսպիսով, կարող ենք նշել, որ գլխավոր եկեղեցու հարավային պատի միջին մասում Վահրամ Պահլավունու կողմից թողած արձանագրության մեջ հիշատակված թվականները (988-1029 թթ.) լիովին համապատասխանում են իրականությանը, որովհետև տվյալ ժամանակահատվածում (41 տարի) Վերին և Ստորին վանքերի տարածքում, գլխավոր եկեղեցուց բացի, կառուցվել են ևս չորս եկեղեցի, գավիթ-ժամատուն և զանգակատուն:

Վերոհիշյալ ժամանակահատվածում Վահրամ Պահլավունին իրոք կարող էր առաջին հայացքից անհավանական թվացող հսկայածավալ շինարարական աշխատանքներն իրենց ավարտին հասցնել, որովհետև այդ աշխատանքների ընթացքում, ինչպես ինքն է նշում, ներդրվել է ողջ տոհմի կարողությունը. «Եւ կատարեցաք մեծ ջանիւ եւ բազում ծախիւք ես եւ մայր իմ Շուշիկ Հայոց տիկնաց տիկին եւ եղբարք իմ Վասակ իշխանաց իշխան որ նահատակեցաւ ի թուրքաց պատերազմի եւ Աբլխարիբ Հայոց մարգպան և մանուկն Համզէ...»<sup>41</sup>:

<sup>38</sup> Ա. Ա. Մանուչարյան, նշվ. աշխ., էջ 161:

<sup>39</sup> Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 242:

<sup>40</sup> Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 151:

<sup>41</sup> Ի. Ա. Орбели, նշվ. աշխ. էջ 1:

*ԼՅՈՒԴՎԻԳ ՀՈՎԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու*

## **«ՄԵԾ ՎԱՐԴԱՊԵՏՆԵՐԸ» ... ՓՈՔՐԵՐԻ ՄԱՍԻՆ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները**

Պայմանական այս խորագիրը, ըստ էության, մեծ մատենագիրներ, գրող-առակագիր, գիտնական-մանկավարժներ Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու ստեղծագործության «մանկապատանեկան հատվածի» խորհրդանշանական արտահայտությունն է: Իրականում իսկապես կարելի է հաստատագրել, որ հայ առակագրության հիմնադիրների՝ այդ ժանրի ստեղծագործությունները ոչ միայն մանուկների ու պատանիների իրար հաջորդող սերունդների ընթերցանության շրջանակում են մշտապես եղել, այլև դրանց զգալի մասը մեր մանկապատանեկան գրականության սկզբնավորման ակունքներում են՝ Ներսես Շնորհալու «Խրատքի», «Առակք-հանելուկների», Վարդան Այգեկցու առակների հետ միասին: Եվ այս «եռանկյունում» էլ հենց մենք որոշակիորեն կարող ենք տեսնել-հաստատագրել դեռևս 12-13-րդ դարերում հայ մանկագրության՝ որպես այդ տեսակի դեռևս չգիտակցված գրականության արդեն իսկ գոյությունը, մի իրողություն, որ, ցավոք, հետագա դարերում իր տրամաբանական շարունակությունը չունեցավ և... զորացավ միայն 19-րդում՝ Խաչատուր Աբովյանի և Ռաֆայել Պատկանյանի անձնվեր ջանքերի շնորհիվ:

Այս պարագայում միայն հավաստենք, որ Մխիթար Գոշը հայ գրականության նորամուտ իր առակներով իրապես մեծ քայլ կատարեց նաև... հայ մանկանց սերունդների ուսուցման ու դաստիարակության գործում: Բայց նախ այն մասին, թե գնահատանքի ու մեծարումի ինչ խոսքերի է արժանացել նա դարեր ի վեր: Արդեն ասվեց, որ ժամանակի մատենագիր Կիրակոս Գանձակեցին Մխիթար Գոշին անվանել է «մեծ վարդապետ», «գիտությամբ հոչակված այր իմաստուն»<sup>1</sup>: Ղևոնդ Ալիշանը իր «Հայապատում»-ում հատկապես նրա «Հայոց դատաստանագիրքն» ու առակները համարել է «մնայուն արժեքներ հայ դպրության մեջ»: Եվ Մանուկ Աբեղյանն էլ, բարձր գնահատելով նրա ներդրումը հայ մատենագրության մեջ, Հայոց առաջին օրենսգրքի՝ «Դատաստանագրքի» դերը մեր ժողովրդի կյանքում, հատկապես արժևորում են Մխիթար Գոշի առակները. «Հնում... մեզանում չի եղել այնպիսի գեղարվեստական գրականություն, որ ոչ գեղարվեստական տեսակներից անջատ ու անկախ լիներ..., և հայ մատենագրության մեջ նախապես գեղարվեստական արձակը ներհյուսված է եղել պատմագրությանը»: Սակայն մեր պատմիչների նպատակը միայն գրական-գեղարվեստական որոշակի տարրերով իրենց երկերը «համեմելն» էր և այն էլ հատկապես ժողովրդական բանահյուսության նյութերով: Աբեղյանն ընդգծում է, որ Մխիթար Գոշի առականին առաջին արձակ ստեղծագործությունն է, որ ներկայացնում է գեղարվեստական գրականությունը իբրև «ինք-

<sup>1</sup> Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, Եր., 1961, էջ 195:

նությունն բնագավառ»։ Եվ հենց այդ առումով էլ նրան «կնքում» է որպես հայ գրականության մեջ գեղարվեստական արձակի ժանրի հիմնադիր<sup>2</sup>։

Անշուշտ, Մխիթար Գոշից առաջ էլ գրվել են առակային ժանրի ստեղծագործություններ, ինչպես և ընթերցանության շրջանակներում էին 7-րդ դարում հունարենից թարգմանված առակները։ Եվ վերհիշենք նաև Գրիգոր Մագիստրոսի մանկավարժական գրառումներից մեկն այն մասին, որ դպրատներում, քերականությանը և ճարտասանությանը զուգահեռ, սովորողներին ուսուցանում էին նաև «առասպելավարժություն», այսինքն՝ այլաբանական ստեղծագործություններ, որ նույնն է թե՛ առակների մեկնությունն։ Գոշն առաջինն էր, այո՛, որ ժողովրդական բանահյուսության և թարգմանական առակների հենքի վրա գրեց ինքնուրույն առակներ։ «Մխիթար Գոշը իր առակների ժողովածուն կազմել է ուսուցողական նպատակներով, շեշտում է գրականագետ Էմանուել Պիվագյանը։ Դրա համար առակի ժանրը ամենից ավելի հարմարն էր։ Հեղինակի համար առակը ծառայել է որպես միջոց, ուր դրվատվում են առաքինությունները, ծաղրվում պակասությունները, հիմարությունն ու տգիտությունը, արհամարհվում վախկոտությունը, մտրակվում չարիքը...։ Բոլոր դեպքերում նա ցանկացել է իր իսկ խոսքերով՝ «կերպարանել զճմարտութիւն», որ ասել է, թե՛ արտացոլել իրականությունը գեղարվեստորեն, կամ ինչպես հեղինակն է արտահայտվում իր ժողովածուի հիշատակարաններից մեկում՝ «բարոյապես և առասպելորեն», այսինքն՝ այլաբանորեն, իսկ դա իրականության գեղարվեստական արտացոլման ձևերից մեկն է... Այսպիսով, Մխիթարի ձեռքով XII դարում մեր գրականության մեջ մուտք է գործում ժողովրդական բանավեստի տեսակը՝ առակը, որն իր հետ բերել է նաև ժողովրդական ոգի ու մտածողություն, ազդարարելով գրականության աշխարհականացման մի նոր փուլ»<sup>3</sup>։

«Գոշի առակները գրված են պարզ ու հստակ լեզվով, սեղմ ու կենդանի երկխոսություններով և առողջ հումորով...,- նշում է Մկրտիչ Մկրյանը։ Առակներում արտահայտված նուրբ և սուր երգիծանքն ուղղվում է հոգևորականության, ճգնավորության, ֆեոդալ իշխանավորության և նույնիսկ կրոնական հավատալիքների դեմ»<sup>4</sup>։ Այո՛, Մխիթար Գոշը իբրև հոգևոր-հասարակական առաջադեմ գործիչ, իբրև մեծ գիտնական-մանկավարժ և իբրև գրող առաջ է անցել իր ժամանակից՝ իր առակներում ծաղրել ու պարսավել է կյանքում, մարդկային հարաբերություններում, իշխանական, հոգևորական դասերի բարքերում տեղ գտած արատները, լավը, բարին, առաքինին տեսնելով հասարակ, աշխատավոր ժողովրդի մեջ, արտահայտելով նրա տրամադրությունները, նրա ինքնագիտակցության արթնացումը։ Այսպես, «Ոսկին և ցորենը» հայտնի առակում, բարձր դասերով թագավորին՝ ոսկուն, այնուամենայնիվ, ընդգծվում է, որ նրանից ավելի բարձր է ցորենը, և այն արարող մարդու՝ աշխատավոր հողագործի, ավելի մեծ չափանիշով՝ ժողովրդի այլաբանական խորհրդանիշն է։ Իսկ առանց ցորենի, ասել է թե՛ առանց ժողովրդի, աշխարհ ու թագավոր գոյություն ունենալ չեն կարող։ Մեջբերենք այդ առակն ամբողջովին. «Ոսկին թագավորելիս պահանջում էր, որ բոլոր նյութերը երկրպագեն իրեն։ Նա թագավոր էր կոչում իրեն, որովհետև թագավորի պատկեր էր եղել և դրանով

<sup>2</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Եր., 1946, էջ 152-158։

<sup>3</sup> Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Եր., 1976, էջ 292։

<sup>4</sup> Մ. Մկրյան, Գրականության պատմության հարցեր, Եր., 1982, էջ 72։



ամբարտավանում էր արծաթագործների և ուրիշների վրա ևս: Բոլորը եկան երկրպագելու, բայց ցորենը չեկավ՝ ասելով. «Թող ինքը՝ ոսկին գա ինձ երկրպագելու»:

Ինչպես այս կարգի, այնպես էլ մյուս առակները հիմնականում, այո՛, ունեն բարոյախրատական, ուսուցողական-դաստիարակչական նպատակադրում, հատկապես, ի-հարկե, նրանք, որոնք գրող-մանկավարժը, կարելի է նաև ասել, «հասցեագրել» է կրտսեր տարիքի երեխաներին և պատանիներին: Այդպիսի առակների թիվը բավական շատ է, և նյութը մեծ մասամբ քաղված է բնության, կենդանական աշխարհի կյանքից: Իսկ ընդհանրապես Գոշը գրել է շուրջ 200 առակ, որոնք դասդասել է որոշակի կարգով, «գործող անձերի» կամ նյութերի խմբավորումով, երկնային մարմիններ և երկիր, տնկիներ և ծառեր, բույսեր և ծաղիկներ, սերմեր և բանջարեղեն, մրգեր, լեռ, գետ, աղբյուր, ջրային և ցամաքային կենդանիներ, թռչուններ, մարդիկ: Առանձին առակների պատմողական մասում այլաբանական համեմատություններով առավել շեշտվում են բույսերի ու կենդանիների հատկությունները, նրանց «բարքերը», իսկ այնուհետ դրանցից արվում է բարոյախրատական եզրակացություն: Ահա համեմատաբար երկար մի այդպիսի առակ. «Ճնճղուկները երամով գնացին արագիլի մոտ և աղաչելով ասացին նրան.

- Թույլ տուր մեզ ձագեր հանելու քո բույնի մեջ և պաշտպանիր մեր ձագերն օձերից:

- Ինձ ի՞նչ կանեք,- ասաց արագիլը,- որ կատարեմ ձեր կամքը:

- Կաղոթենք,- պատասխանեցին ճնճղուկները,- որ ձեր ձագերը միշտ առողջ մնան և գերծ՝ վնասակար օղից ու եղանակից:

Եվ արագիլը տեղ տվեց նրանց:

Երբ ճնճղուկները ձագ հանեցին, օձը սողաց դեպի բույնը՝ նրանց ձագերն ուտելու: Արագիլն սպանեց այդ օձին և ման էր գալիս ամենուրեք, որ ոչնչացնի բոլոր օձերին՝ ճնճղուկների ձագերին փրկելու համար:

Առակն ուսուցանում է կարեկից լինել տկարներին ու թույլերին և ցանկանալ, որ ազատություն վայելեն նրանք»:

Այս կարգի առակները համեմատաբար մատչելի են երեխաների համար, և եզրակացություն կատարելիս էլ առակագիրը «օգնում» է նրանց:

Ահա ևս մի այդպիսի բարոյախրատական առակ սիրամարգի մասին, որն ամենքին ցուցադրելով իր գեղեցկությունը և արժանանալով գովեստների այնքան է փքվում-գոռոզանում, որ որոշում է թագավոր դառնալ: Իմաստուններից ոմանք խորհուրդ են տալիս հրաժարվել այդ մտքից, բայց սիրամարգը ցանկանում է ամեն գնով հասնել իր նպատակին: Լսելով այդ մասին՝ թռչունների թագավորը կոտորում է նրա ձագերին և փետրահան անելով՝ մերկացնում է սիրամարգին: Հետևում է բարոյախրատական եզրակացությունը. «Այսպես ահա, նրանք, ովքեր հրապուրվելով ցանկանում են հասնել անկարելիին, ոչ միայն ձեռք չեն բերում այն, այլև կորցնում են իրենց ունեցածը»:

Ահա նաև ավելի պարզ ու հակիրճ մի առակ՝ այլաբանական ասելիքով և համապատասխան եզրակացությամբ. «Չղջիկները լույսին նայել չեն կարող, մտնում են քարերի ճեղքը և կամ պատերի խորշերը և որովհետև զարշահոտ են ու վատատես, ցերեկը գունդ ու կծիկ են լինում և զիշերը հարձակվում: Այդպես են բանսարկուներն ու ավազակները, որոնք արդարության լույսից փախչելով՝ սիրում են խավարը»:

Այսպես, բազմաթիվ առակներում Գոշն ընդգծում է կենդանիների, թռչունների, բույ-

սերի և այլ «գործող անձերի» այնպիսի հատկությունները, որոնք արդեն հայտնի են մարդկանց և այդ ճանապարհով խրատում՝ չլինել խորամանկ, ինչպես աղվեսը, վախկոտ, ինչպես նապաստակը, միամիտ, ինչպես աղավնին, հիմար, ինչպես արջը կամ գայլը... և այսպես շարունակ... Նա իր առակներում բարության, խոհեմության, հայրենասիրության, աշխատասիրության, արիության, արդարադատության և մարդկային բարոյական այլ արժեքների հետևողական քարոզիչ է, արժեքներ, որոնք Մխիթար Գոշը «դրել» է իր ուսուցողական-դաստիարակչական խրատների հիմքում:

Հետաքրքիր է, որ հայոց առաջին օրենսգրքի հեղինակը նաև մի շարք առակներում է շոշափում արդարադատության, մարդկանց իրավունքները պաշտպանելու և իրավական այլ կենսական խնդիրներ, որ այժմեական են բոլոր ժամանակներում: Նա շեշտում է, որ իրենց գործունեության մեջ արդարադատ պետք է լինեն թե՛ թագավորներն ու իշխանները, թե՛ դատավորներն ու հոգևորականները, մարդիկ՝ ընդհանրապես: Բոլոր դեպքերում անձնական օրինակը չափազանց կարևոր է: Եվ թագավորն էլ ոչ թե խոսքով, այլ գործով պետք է խրատի իր ենթականերին: Ահա «Ձկները և նրանց թագավորը» առակը: Ձկների թագավորը մեղադրում է մյուս ձկներին, որ ոչնչացնում են իրենցից մանր կենդանիներին: Ձկները համարձակվելով՝ պատասխանում են. «Քեզանից ենք սովորում, որովհետև շատերը գալիս են քեզ երկրպագելու, և դու, կույ տալով նրանց, կերակուր ես դարձնում քեզ համար: Ուստի և մենք քեզանից սովորելով՝ հանդգնում ենք»:

Մի ուրիշ առակ էլ («Արջը և մրջյունը») ասես նախազգուշացում լինի բոլոր այն տերերին ու տիրակալներին, ովքեր անխղճորեն շահագործում են իրենցից սկարներին, իսկում նրանց ունեցվածքը: Մի օր մրջյունի համբերությունը սպառվում է և, օգնության կանչելով իր ազգակիցներին, միասնական ջանքերով խոցոտում են արջին, և վերջինս «տանջահար ցավից ստիպված դիմում է դեպի ջրի հոսանքը և չափից ավելի խորը մտնելով՝ խեղդվում է»: «Կոտրված ոտքով առյուծը և կենդանիները» առակն էլ բարոյախրատական-ուսուցողական ուժեղ շեշտադրում ունի: Երբ առյուծի ոտքը կոտրվում է, նա իր հպատակներից դժգոհում է, թե ինչու գոհաբերություններ չեն անում, որ առողջանա: Եվ կենդանիները պատասխանում են. «Այն պատճառով, որ մենք քեզանից պաշտպանություն չտեսանք ոչ արջի ձեռքից, ոչ գայլի և ոչ էլ գազանների ձեռքից և մինչև անգամ դու ինքդ չխնայեցիր մեզ: Մենք Աստծուն պետք է գոհաբերություն անենք, որ այդպիսի փորձանքի բերեց քեզ»: Եվ, ուրեմն, հզորներն ու տերերը պետք է միշտ պաշտպան կանգնեն իրենց հպատակներին, արդար լինեն նրանց հանդեպ, որ վերջիններս էլ աներաժեշտության դեպքում սատար լինեն նրանց: Այնքան բազմաթեմա ու բազմաշերտ են Գոշի առակները, որ անհնարին է փոքրիկ ակնարկում անդրադառնալ բոլորին: Ասացինք, որ դրանց զգալի մասն ընթերցանության հետաքրքիր նյութ և ուսուցողական-դաստիարակչական խորք ունեցող ստեղծագործություններ են «ուսումնասեր մանկունքի» և պատանիների համար: «Գոշի և Այգեկցու առակների ժամանակակից հրատարակությունները ոչ բոլորովին պատահաբար են հասցեագրվում առավելապես մանուկ և այն էլ կոնկրետ տարիքի ընթերցողներին, - ընդգծում է Խաժակ Գյուլնազարյանը: - Այսպես, մեր ժամանակի դպրոցականի ձեռքը տալով միջնադարյան առակները, հաճախ առանց բարոյախրատական կցորդների, մենք հնարավորություն ենք

տալիս նրան ոչ միայն ծանոթանալու միջնադարի մարդկանց կենցաղին, այլև ժողովրդի առողջ բարոյականությանը, որովհետև կասկած չկա, որ հիշված առակների զգալի մասը դեռևս գրառումից առաջ շրջել է ժողովրդի մեջ հենց այն բարոյախրատական միտումն ունենալով, որին հանգում է ժամանակակից ընթերցողը դրանք կարդալիս»<sup>5</sup>:

... Եվ դարերի հեռվից «մեծ վարդապետը» այսօր էլ շարունակում է մարդկային մնալուն արժեքները փառաբանող իր դասերը:

«Մի անգամ աստղերը հավաքվեցին իմի, և նրանցից ամենաձերերն ասացին.

- Մենք բազում ենք ու շատ, ուրեմն, ինչո՞ւ չենք կարողանում լուսավորել ցերեկն ու գիշերը արեգակի ու լուսնի նման:

- Որովհետև միաբանությամբ չենք վարվում,- պատասխանեց մեկը:

Եվ որոշեցին նախ հալածել ու փախցնել արեգակին, բայց երբ լուսինը ծագեց, հաղթվելով նրանից՝ աստղերը ասացին.

- Եթե մենք լուսնի լույսից այսպես աղոտացանք, ապա ի՞նչ կլինենք, եթե արևը ծագի:

Ջոջացին աստղերը և խոստովանեցին իրենց «պարտությունը»:

Ասվածը լիովին վերաբերում է նաև միջնադարյան Հայաստանի մյուս մեծ առակագրին՝ Վարդան Այգեկցուն, ով դիմելով հաջորդող սերունդներին, գրում է. «Վա՛յ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհ պիտի գաք ինձանից հետո, որովհետև ցանկանում եմ ձեզ տեսնել և չեմ կարող, քանի որ գերեզմանի մեջ արդեն հող եմ դարձել: Ապա ուրեմն այս գրքով կխոսեմ ձեզ հետ մինչև հինգ, մինչև յոթ սերունդ և հոգով կմնամ ձեր մեջ...»:

Միրո, ցավի, ափսոսանքի այսպիսի զգացումներով է սերունդների հետ «խոսել» միջնադարի հայ ականավոր մատենագիր-առակաբանը, ով «հոգով մնացել է մեր մեջ» արդեն քանի՜-քանի սերունդ ու դեռ կմնա երկա՛ր-երկար, քանի ապրում են հայոց գիրը և իրեն մեծարող հայ ժողովուրդը: Եվ հայ մանկանց ու պատանեկան սերունդների հոգում էլ, ահա, դարեր ի վեր ապրում է Վարդան Այգեկցի մեծանուն առակագիրը, ում «Աղվեսագիրք» (այդպես է կոչվել, որովհետև առակների մեծ մասում իբրև գլխավոր գործող «անձ» հանդես է գալիս աղվեսը) ժողովածուն «սեփականացվել է նաև որպես մանկական ընթերցարան, և ում առակների զգալի մասը Մխիթար Գոշի առակների, Ներսես Շնորհալու «Խրատքի», հանելուկների հետ «գրանցվել» են մեր մանկապատանեկան գրականության 12-13-րդ դարերի «ծննդյան» տարեգրամատյանում՝ մեզ վերստին մտորել տալով այն մասին, որ հայ մանկագրությունը ակունքվում է դեռևս այդ դարերից և Վարդան Այգեկցին արդեն դարեր առաջ հայ մանկանց սերունդների ուսուցման և դաստիարակության գործին փորձել է ծառայեցնել ի՛ր գրականությունը առակների ժանրատեսակով: Ճիշտ է նաև, որ Վարդան Այգեկցու անունով հետագայում կազմվել, «կնքվել», մեզ են հասել առակների այլ ժողովածուներ, որոնցում տեղ գտած շատ առակների հեղինակն ինքը չէ և, ըստ ականավոր հայագետ Նիկողայոս Մառի, այդ ժողովածուներում տեղ են գտել դեռ հնում հունարենից թարգմանված Եզոպոսի առակներից, «Բարոյախոս» կոչվող առակագրից, Մխիթար Գոշի առակներից, հին կենդանական էպոսից և ժողովրդական բանահյուսության այլ նյութերից:

<sup>5</sup> Խ. Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր., 1960, էջ 33:

Եվ, այնուամենայնիվ, այն, ինչ արել է Վարդան Այգեկցին, նրա համար մնայուն տեղ է ապահովել մեր միջնադարյան գրականության տարեգրամատյանում:

Մանուկ Աբեղյանը, Բարձր գնահատելով Այգեկցու քարոզներն ու խրատները, այլաբանական առակներով ու զրույցներով համեմված ճառերի ճանաչողական-իմացական արժեքը՝ որպես ժամանակի իրականության ու բարքերի, սոցիալական խորացած հակասությունների և կյանքի այլ կողմերի արտացոլման հավաստի աղբյուրներ, միաժամանակ շեշտադրում է Վարդան Այգեկցու մեծ ծառայությունը հայ գրականությանը՝ իբրև «նոր ժանրատեսակի՝ առակավոր ճառերի հիմնադիր»<sup>6</sup>:

Մկրտիչ Մկրյանն էլ նշում է, որ «Վարդան Այգեկցու անունով միջնադարից մեզ մնացած գրական ժառանգության մեջ, գեղարվեստական մշակվածության տեսակետից, ամենաբարձր աստիճանի վրա են գտնվում առակները: Վարդան Այգեկցին և մյուս գրառողներն ու մշակողները պահպանել են առակների ոչ միայն ժողովրդական բովանդակությունը, այլև ոճը: Առակներում նյութը մատուցվում է դասական սեղմությամբ, առանց ավելորդաբանությունների, միայն թե պատմողական մասին հաճախ ավելացվել են կրոնաբարոյական մեկնաբանություններ ու եզրակացություններ... Առակներում արտացոլվել են միջնադարյան հայ հասարակական հարաբերությունները և ցայտուն կերպով արտահայտվել են ֆեոդալական հասարակության պայմաններում ապրող աշխատավոր ժողովրդի տրամադրություններն ու առաջավոր հայացքները: Բուն ժողովրդական առակները ժողովրդի իմաստության և սրամտության փայլուն նմուշներ են»<sup>7</sup>:

Այգեկցու ստեղծագործության մեկ ուրիշ հետազոտող՝ Էմանուել Պիվազյանն էլ հավաստում է, որ իրենց գործնական նշանակության, ուսուցողական-ճանաչողական-դաստիարակչական բնույթի շնորհիվ, ինչպես Մխիթար Գոշի, այնպես էլ Վարդան Այգեկցու առակները «դպրոցներում օգտագործվում էին «Առասպելավարժություն» դասընթացի համար, որի ժամանակ աշակերտներին առակներ մեկնել սովորեցնելով վարժեցնում էին դառնալու մեկնաբաններ...»<sup>8</sup>: Մեջբերելով Այգեկցու «Վա՛յ ինձ, ով իմ որդիներ, որ աշխարհ պիտի գաք ինձանից հետո...» խոստովանանքը, Խաժակ Գյուլնազարյանը նշում է, որ «սերունդների հետ խոսելու այս ազնիվ ցանկությունը համահունչ է նրա խրատական և միաժամանակ կենսալի առակների ուսուցողական ու դաստիարակչական պատգամներին՝ նույնիսկ գալիք սերունդների համար»<sup>9</sup>:

Բարձր գնահատելով Վարդան Այգեկցու՝ իր ժամանակի առաջադեմ մատենագիր-գրողի ստեղծագործությունը, նրա քարոզների, ճառերի, հատկապես նրա «Աղվեսազրքի» նշանակությունն ու արժեքը՝ իբրև միջնադարի այդ ժամանակահատվածի հասարակական հարաբերությունների, ժողովրդի կյանքի ու կենցաղի ճշմարիտ հայելապատկեր և ապա՝ մեր գրականության մեջ այդ ժանրի հետագա զարգացման ակունք, գնահատանքի խոսքերի հեղինակները, ինչպես տեսանք, շեշտը դնում են նրա առակների ճանաչողական-ուսուցողական-դաստիարակչական շերտերի վրա: Իսկ դա ուղ-

<sup>6</sup> Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, հ. 2, Եր., 1946, էջ 164:

<sup>7</sup> Մ. Մկրյան, Գրականության պատմության հարցեր, Եր., 1982, էջ 75:

<sup>8</sup> Հայ մշակույթի նշանավոր գործիչները, Եր., 1976, էջ 299:

<sup>9</sup> Խ. Գյուլնազարյան, Ակնարկներ հայ մանկական գրականության պատմության, Եր., 1960, էջ 33:

դակիորեն առնչվում է մանկանց ու պատանեկան սերունդների կրթության ու դաստիարակության գործում առակային ժանրի ստեղծագործությունների տպավորիչ դերակատարությանը: Առակների գործող անձինք մարդիկ են՝ իրենց վարք ու բարքով, իրենց դրվատվող առաքինություններով և ծաղրվող թերություններով, և կամ կենդանիներ, թռչուններ, իրեր ու երևույթներ՝ առակագրությանը հատուկ այլաբանական արտացոլումով, «անձնավորված-մարդկայնացված տեսքով»: Ինչպես շատ առակների գլխավոր «հերոսը»՝ աղվեսը, այնպես էլ մյուս կենդանիներն ու թռչունները, առակներում հանդես են գալիս ոչ միայն իրենց բնորոշ հատկանիշներով, այլև վարքի, վարմունքի տարբեր, բայց նույնպես իրենց համար բնութագրական այլ կողմերով: Բոլոր դեպքերում նրանք այլաբանորեն անձնավորված են, ընթերցողը ի դեմս նրանց տեսնում է մարդկանց, նրանց հատկանիշների մեջ՝ մարդկային հատկանիշներ, հարաբերությունների մեջ՝ մարդկային հարաբերություններ»: Այս պարագայում պահանջվում է մանուկ ու պատանի ընթերցողների գիտելիքների որոշակի մակարդակ՝ այդ ամենը ըմբռնելու և մեկնաբանելու համար: Տարբեր ժամանակների դպրոցական դասագրքերում «վարդանյան» բազմաթիվ առակների ընդգրկումը և դրանց հասցեագրումը հատկապես կրտսեր ու միջին տարիքի երեխաներին, վկայում է այդ առակների կենսունակության, մանկապատանեկան ընթերցանության շրջանակներում դրանք ներառելու կարևորության մասին:

Մերնդեսերունդ են ավանդվել Այգեկցու այնպիսի հանրահայտ առակներ ու առակամերձ գրույցներ, ինչպիսիք են՝ «Եզր և ձին», «Ջրաղացը և եկեղեցին», «Առյուծը և մարդը», «Վարազն ու աղվեսը», «Իմաստուն զինվորը», «Գող քահանան և այրի կինը», «Իշխանը և այրի կինը», «Այծեր և գայլեր», «Առյուծը, գայլը և աղվեսը», «Թագավորն ու օձը», «Մի կաթիլ մեղրը պատերազմի պատճառ», «Աղվեսն ու որսորդը», «Մուկը և ուղտը» և այլն:


Վարդան Այգեկցու առակները բազմաթեմա են ու բազմազան և՛ բովանդակությամբ, և՛ քննադատական լիցքով ու նպատակաուղղվածությամբ: Իր շատ առակներում, հատկապես ժողովրդական բանահյուսության մշակումներում, ծաղրված են նաև իրենց հպատակներին խաբող, շահագործող տերերը, կաշառակեր իշխանավորները, նենգ, արծաթասեր, որովայնամուկ և այլ արատներ ունեցող մարդիկ: Դրան զուգահեռ դրվատվում է աշխատավոր մարդը, բարությունը, մեղքերից խուսափելը, ապաշխարանքը... Այդ ամենը արտահայտված է նաև նրա քարոզներում ու խրատներում, իսկ առակներում՝ մեծ մասամբ այլաբանական ենթատեքստով: Բոլոր դեպքերում Այգեկցու համակրանքը, ինչպես Մխիթար Գոշի պարագայում տեսանք, աշխատող, արարող, աշխարհը շենացնող մարդու կողմն է: «Եզր և ձին» առակի այս երկու «հերոսները» վիճաբանում են, թե իրենցից ով է ավելի օգտակար գործ անում: Ձին պարծենում է, որ աշխարհի տիրակալները՝ թագավորները, իշխանները, հարուստ մարդիկ զարդարում են իրեն ոսկով և արծաթով ու բազմում են իր վրա: Իսկ եզն այսպես է պատասխանում. «Ամբողջ աշխարհի բարեկեցությունն են ես, որովհետև ես եմ վաստակում, չարչարվում և հոգնում, իսկ դու և քո թագավորն ուտում եք: Բոլոր մարդիկ ուտում են իմ վաստակը: Եթե չվաստակեմ, դու և քո թագավորն իսկույն կմեռնեք: Եվ դու երախտամոռ մի՛ եղիր»:

Մանուկ և պատանի ընթերցողի համար ավելի մատչելի ու հոգեհարազատ են, ի-

հարկե, կենդանական աշխարհից «վերցված», ինչպես և կենդանական աշխարհ-մարդ փոխհարաբերությունները ներկայացնող առակներն ու գրույցները: Այդ «հարաբերությունները» ներկայացնելիս, առակագիրը փառաբանում է մարդուն, նրա իմաստությունները, հնարամտությունը: «Առյուծը և մարդը» առակում պատմվում է այն մասին, թե ինչպես ճանապարհին նստած զորավոր առյուծը զարմանում է, որ իր առջևից դողալով տարբեր գազաններ են գալիս ու անցնում: Նրա հարցին, թե ինչո՞ւ և ումի՞ց են փախչում, նրանք պատասխանում են. «Փախիր և դու, որովհետև ահա գալիս է մարդը»: Առյուծն արհամարհանքով է լսում նրանց և, երբ հայտնվում է մարդը, նրան առաջարկում է կռվել: Եվ մարդն ասում է. «Այո՛, բայց քո զենքերը քեզ հետ են, իսկ իմը տանն է: Եկ նախ կապեմ քեզ, որ չփախչես, մինչև ես գնամ, առնեմ իմ զենքը, և ապա կռվենք»: Մարդը, առյուծի պահանջով, երդվում է, որ կգա, կապում է նրան կաղնու ծառին ու սկսում է հարվածել: Առյուծը գոչում է. «Եթե դու մարդ ես, ավելի խիստ և անխնա զարկ իմ կողերին, որովհետև այս խելքին այդպես է վայել»:

Ուսուցողական-դաստիարակչական այս տարերքը բնորոշ է նրա այլաթեմա ուրիշ առակներին ևս: Աղվեսի խորամանկությունն ու գայլի հիմարությունն է ներկայացնում «Աղվեսը և թղթատար գայլը» առակը: «Կտակ գանձի մասին» առակ-գրույցը աշխատասիրության մի ուսանելի դաս է ավանդում: Ծույլ որդիներ ունեցող իմաստուն և աղքատ հայրը, նրանց դաստիարակելու հնարամիտ ձև է գտնում. իբրև թե իրենց այգում նախնիների թողած գանձը գտնելու համար նրանք պետք է փորեն հողը, և ով շատ աշխատի ու խորը փորի՝ գանձը նա կգտնի: Հոր մահից հետո որդիները եռանդով փորում են հողը, և յուրաքանչյուրն աշխատում է, որ ինքը գտնի գանձը: Եվ վերջին նախադասության մեջ հենց «թաքնված» է... գանձը: «Այգին սկսեց աճել ու զորանալ, առատ բերք տվեց և նրանց հարստացրեց գանձերով»: Եվ, ուրեմն, հենց աշխատանքով է ծնվում գանձը, ու խրատն այս արդեն մեկնաբանության կարիք չունի... «Իմաստուն զինվորը» առակն էլ մարդու վարքագծի ու հոգեբանության մի հետաքրքիր կողմ է ներկայացնում. «Երկու ոտքով կաղ զինվորը պատերազմ է գնում, մեկ ուրիշ զինվոր հեզանքով նրան ասում է. «Ո՛վ ողորմելի, ո՞ւր ես գնում: Քեզ իսկույն կսպանեն»: Իմաստուն զինվորը հպարտ պատասխանում է. «Ո՛վ անմիտ, ես չեմ գնում պատերազմ՝ փախչելու, այլ կանգնելու, կռվելու և հաղթելու»: Ընթերցողի համար դաստիարակչական հիանալի դաս:

Այգեկցին ժողովրդական ատաղձ ունեցող «Մի կաթիլ մեղրը պատերազմի պատճառ» առակ-գրույցում նույնպես անդրադառնում է պատերազմի թեմային, բայց արդեն՝ զավեշտալի հյուսվածքով՝ ընդդեմ անիմաստ, չնչին ու փուչ պատճառով ծագող պատերազմների: Մի կաթիլ մեղրի պատճառով երկու գյուղերի միջև ծագած վեճ-պատերազմում սպանվում են բոլորը և կենդանի է մնում միայն մի մարդ: Հանրահայտ այս թեման մեծ վարպետությամբ մշակել է նաև Հովհաննես Թումանյանը («Մի կաթիլ մեղրը» բալլադը): Ավարտելով մեր խոսքը Վարդան Այգեկցու և Գոշի մասին, նշենք, որ հատկապես ժողովրդական բանահյուսությունից ակունքված առակների և գրույցների զգալի մասը հետագայում մշակվել են ոչ միայն Խաչատուր Աբովյանի, Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Խնկո-Ապոբ, այլև ժամանակակից հայ մանկագիրների կողմից (Արշավիր Դարբնի, Մկրտիչ Կորյուն և ուրիշներ): Ահա նաև այսպես է հավերժացվել հայոց միջնադարի այս երկու մեծ առակագիրների անունն ու գործը մեր գրականության մեջ:



## ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

**Հունիսի 5-ին** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) տեղի ունեցավ ավարտաճառերի պաշտպանություն:

Հինգ ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Բանադարձումները Վազգեն Ա Կաթողիկոսի քարոզներում» (Ավետիք սրկ. Հովհաննիսյան), «Գրաբարի բայի ժամանակային ձևերի իմաստային-ոճական կիրառությունները քառավետարաններում» (Հովհաննես սրկ. Ազնավուրյան), «Հայ Առաքելական Եկեղեցու ազգապահ դերի իմաստավորումը Լևոն Շանթի «Օշին Պայլ» դրամայում» (Դավիթ սրկ. Սարգսյան), «Ֆոսքը և նրա նշանակությունը հոգևորականի կյանքում» (Կարեն սրկ. Հովհաննիսյան), «Նախադրությունների իմաստային առումներն ըստ քառյակ Ավետարանների» (Արմեն սրկ. Հմայակյան):

**Հուլիսի 17-ին** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) վեց ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Պետրոս Հռոմկլայեցի Կաթողիկոսի 1747-1748 թթ. կյանքն ու գործունեությունը» (Էդգար սրկ. Հովհաննիսյան), «Մատենագիտություն «Միօն» ամսագրի 1981-1990 թթ.» (Մհեր սրկ. Մուրադյան), «Մատենագիտություն «Միօն» ամսագրի 1991-2000 թթ.» (Պետրոս սրկ. Գումբալյան), «Միմեռն Ա Երևանցին (կթղ. 1763-1780 թթ.) և Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչական գործունեությունը 1771-1794 թթ.» (Հայկ սրկ. Թաղևոսյան), «Հայ-ասորական առնչությունները Զ դարում» (Ցոլակ սրկ. Հարությունյան), «Արարատյան Հայրապետական թեմի թեմապատկան եկեղեցիները» (Արտակ սրկ. Նուրիջանյան):

**Հունիսի 23-ին** Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարանում (Աստվածաբանական համալսարան) երեք ճեմարանավարտ սարկավագներ հաջողությամբ պաշտպանեցին իրենց ավարտաճառերը հետևյալ թեմաներով. «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Հայաստանի Հանրապետության իրավական փոխհարաբերությունները» (Թաթուլ սրկ. Համբարձումյան), «Հուդա Իսկարիովտացին հայ եկեղեցական մեկնողական-աստվածաբանական մտքի մեջ» (Միհրան սրկ. Գաբրիելյան), «Ամուսնության պայմաններն ու ամուսնալուծությունը Հայ Եկեղեցում» (Մհեր սրկ. Եսայան):

Այսուհետ շրջանավարտ այս բոլոր սարկավագները կհամալրեն Սուրբ Էջմիածնի միաբանության շարքերը:

*ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՄԵԿՆԱՐԿԵՑ «ԱՆՂՐԱՆԻԿ» ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Հուլիսի 24-ին Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության նախաձեռնությամբ Լոռու մարզում մեկնարկեց «Անդրանիկ» սկսնական բանակումը: Բանակումին մասնակցում են Հայաստանի, Իրանի, Իրաքի, Սիրիայի և Լիբանանի շուրջ 165 երիտասարդներ:

Բանակումի բացման արարողության ընթացքում հայ սկսնակներին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը փոխանցեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսարարապետ Ս. Արարատ եպիսկոպոս Գալթագճյանը: Միջոցառման կազմակերպիչներին գնահատանքի խոսք ուղղեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանը:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հուլիսի 8-10-ը Ծաղկաձորում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի Հայաստանյան Կլոր Սեղան Բարեգործական հիմնադրամը «Հոգևորականներն ընդդեմ թրաֆիկինգի» ծրագրի շրջանակներում կազմակերպել էր երկրորդ դասընթացը եկեղեցականների համար, որին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի տարբեր կառույցներից, Հայ Եկեղեցու Հայաստանի և Արցախի թեմերից ժամանած շուրջ 16 եկեղեցականներ: Դասընթացների նպատակն է խորացնել հոգևորականների գիտելիքները թրաֆիկինգի, այդ երևույթի կանխարգելման և զոհերի հետ աշխատանքի մասին:

Թրաֆիկինգին նվիրված դասընթացն սկսվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո բանախոսությամբ հանդես եկավ ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների խորհրդի ստրկության հարցերով հատուկ զեկուցող տիկին Գյուլնարա Շահինյանը՝ ներկայացնելով աշխարհում և Հայաստանում թրաֆիկինգի ընդհանուր վիճակը, նրա դրսևորումները, մարդկանց շահագործման սահմանման նոր միտումները, արտերկրում և Հայաստանում խնդրի վերաբերյալ օրենսդրական ակտերը, հասարակության մեջ թրաֆիկինգի զոհերի ինտեգրմանը և խնդրին վերաբերող այլ հարցեր: Քննարկումների ընթացքում բանախոսը պատասխանեց նաև ներկաներին հուզող բազմաթիվ հարցերի:

Ենթյալ դասընթացի ընթացքում տեղի ունեցան խմբային քննարկումներ զանազան թեմաների շուրջ, որոնց ժամանակ հոգևորականները փորձեցին մատնանշել այն բոլոր ուղիներն ու ձևերը, որոնց միջոցով եկեղեցականը կարող է օգնել թրաֆիկինգի զոհերին, փորձել ինտեգրել նրանց հասարակության մեջ, դառնալ միջնորդը հասարակության և զոհերի ընտանիքի անդամների միջև: Մասնավորապես ընդգծվեց, որ շատ դեպքերում հենց փորձառու հոգևորականի իմաստուն խորհրդի և խոսքի կարիքն ունեն թրաֆիկինգի զոհերը, ուստի այս հարցում մեծ դերակատարություն ունի նաև Հայ Առաքելական Եկեղեցին՝ իր դարավոր փորձառությամբ:

Մասնակիցներն առիթ ունեցան դիտելու նաև թրաֆիկինգի խնդրին նվիրված ուսուցողական և գեղարվեստական ֆիլմեր, որոնցից հետո տեղի ունեցան քննարկումներ:

Դասընթացի մասնակիցներն այցելեցին նաև Կեչառիսի վանական համալիր, ուր մասնակցեցին Խաղաղական ժամերգության:

*ՄԱՅՐ ԱԹՈՐ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ԱՄՓՈՓԻՉ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՈՒՄ ՔԱՆԱՔԵՌԻ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑՈՒՄ

Հունիսի 21-ին տեղի ունեցավ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և ՀԲԸՄ հովանու ներքո գործող Քանաքեռի մանրանկարչական արվեստի դպրոցի ամփոփիչ ցուցահանդեսն ու յոթ շրջանավարտներին ավարտական վկայականների հանձնման արարողությունը:

Քանաքեռի մանրանկարչական արվեստի դպրոցը հիմնադրվել է 1993 թ. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի՝ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության շրջանում: Այն այսօր ունի երկու մանրանկարչական և մեկ գեղանկարի դասարաններ, ուր ուսանում են 4-22 տարեկան 75 երեխաներ և երիտասարդներ:

Հանդիսությունը բացվեց միասնական Տերունական աղոթքով, որից հետո ներկաներին բարի գալուստ մաղթեց մանրանկարչական արվեստի դպրոցի տնօրեն Անահիտ Սեդրակյանը: Նա շնորհակալություն հայտնեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայրական մշտական հոգածության համար, ինչպես նաև իր գնահատանքը հայտնեց Հայրոքյաց տների կենտրոնական կոմիտեին, դասախոսական կազմին և ծնողներին: Ծնորհավորելով մանրանկարչական դպրոցի շրջանավարտ 7 սաներին՝ նա հույս հայտնեց, որ դպրոցում ամբարած համակողմանի գիտելիքները, փորձառությունն ու գեղեցկի, բարու նկատմամբ սերը կօգնեն նրանց հետագա կյանքում ևս:

Այնուհետև ներկաներին ողջունեց և իր օրհնությունը բերեց Հայրոքյաց տների հոգևոր տեսուչ Հոգեշնորհ Տ. Գրիգոր աբեղա Խաչատրյանը: Հայր Սուրբն իր գնահատանքը հայտնեց դպրոցի պաշտոնեությանը, ուսուցչական կազմին և ուրախությամբ նշեց, որ եզակի այս դպրոցի աշակերտներին հնարավորություն է տրված մանրանկարի միջոցով հաղորդակցվելու սուրբգրային պատմություններին, Հայ Առաքելական Եկեղեցու հոգևոր հարուստ ժառանգությանն ու մեր հայրերի հավատքին:

Ավարտական վկայականների հանձնումից հետո ներկաները ծանոթացան ցուցահանդեսի ցուցանմուշներին, որտեղ ներկայացված էին միջնադարյան մանրանկարների մի շարք կրկնօրինակներ, մանրանկարների ինքնուրույն ստեղծագործություններ և գեղանկարներ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

**ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ  
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ  
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ**

Հունիսի 26-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի նախաձեռնությամբ Չարենցավան քաղաքի ու հարակից գյուղերի նախադպրոցական հաստատությունների և գրադարանների աշխատակիցների մասնակցությամբ տեղի ունեցավ ուխտագնացություն Կարենիսի Ս. Մատթեոս (13-րդ դար), Ս. Աստվածածին (5-րդ դար) և Լուսակերտի Ս. Գևորգ (19-րդ դար) եկեղեցիներ:

Սկսյալ ապրիլի 11-ից Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնը Կոտայքի թեմի և Չարենցավանի քաղաքապետարանի հետ համատեղ Չարենցավանի և հարակից գյուղերի նախադպրոցական հաստատությունների, ինչպես նաև գրադարանների աշխատակիցների համար իրականացնում է սեմինար-պարապմունքներ, որոնց նպատակն է հարստացնել մասնակիցների ազգային-հոգևոր գիտելիքները:

Դասընթացի ավարտին՝ հունիսի 27-ին՝ սեմինար-պարապմունքների վերջին հանդիպմանը, մասնակիցներին իր օրհնության խոսքը հղեց Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանը:

Մայիսի 16-ին սեմինարի մասնակիցներն այցելեցին Բջնիի Ս. Աստվածածին (12-րդ դար) և Ս. Գևորգ (16-րդ դար) եկեղեցիներ, իսկ հունիսի 10-ին՝ Արզական գյուղի Ս. Ստեփաննոս եկեղեցի (19-րդ դար) և նշանավոր Նեղուցի վանք (10-12-րդ դարեր):

*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

## ՈՒՆՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ

Մայիսի 23-ից մինչև հունիսի 2-ը, օրհնությամբ Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Ս. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի, Վոլգոգրադի, Սուրբ Գևորգ եկեղեցու մի խումբ հայորդիներ, առաջնորդությամբ հոգևոր հովիվ Տեր Մաղաքիայի, ուխտի գնացին Երուսաղեմ՝ Սուրբ քաղաք:

Տասն օրերի ընթացքում Վոլգոգրադի հայ ուխտավորները եղան մեր Փրկչի տնօրինական գրեթե բոլոր սրբավայրերում:

Մայիսի 25-ին՝ Երևման Սուրբ Խաչի տոնին, Սրբոց Հակոբյանց վանքում մասնակցեցին Սրբազան Պատարագին:

Ուխտավորներին առաջնորդող Վոլգոգրադի հայոց հոգևոր հովիվ Տեր Մաղաքիան Պատարագ մատուցեց Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան տաճարում, Սուրբ կույս Մարիամի գերեզմանին՝ Վերափոխման տաճարում և Փրկչի գերեզմանին՝ Սուրբ Հարության տաճարում:

Ուխտավորները եղան նաև Հորդանան գետում, որտեղ մկրտվել էր Աստվածորդին, բարձրացան Թաբոր լեռ, իրենց աղոթքը վերառաքեցին առ Աստված Համբարձման լեռան վրա, եղան Աստվածամոր ննջման եկեղեցում, «Հայր Մեր»-ի եկեղեցում, ուր ուրախությամբ տեղեկացան, որ 300 լեզուներով գրված «Հայր մեր» աղոթքի շարքում հայերենը զբաղեցնում էր երրորդ տեղը՝ լատիներենից և արաբերենից հետո:

Հայ ուխտավորները առիթ ունեցան լինելու նաև Գալիլիա ծովակի վրա, Մեռյալ և Միջերկրական ծովերում, Նազարեթ, Յաֆֆա, Երիքով, Հոպպե և Թել-Ավիվ քաղաքներում:

Ուխտավորներին իր օրհնությունը բաշխեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ս. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Ողջ ուխտագնացության ընթացքում Վոլգոգրադի ուխտավորներին ուղեկցում էին Երուսաղեմի Հայոց պատրիարքության հոգևոր հայրերը:

Հունիսի 2-ին ուխտավորները վերադարձան Վոլգոգրադ՝ զորացած հավատքով և լի անմոռաց տպավորություններով:

*ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԵՎ ՌՈՒՄԱՍՏԱՆԻ  
ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈՂ ԴԻՎԱՆ*

*ԼՈՒՐԵՐ ԳՈՒԳԱՐԱՅ ԹԵՄԻՑ*

## **ԻԶԵՎԱՆՈՒՄ ՕԾՎԵՑ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԸ**

Հուլիսի 5-ին Իջևանում մեծ հանդիսությամբ օծվեց Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի խաչը: Օծման սրբազան արարողությունը կատարվեց հանդիսապետությամբ և ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջանի: Սրբազան արարողությանը մասնակցում էին Գուգարաց թեմի փոխառաջնորդ Ս. Սասուն ծայրագույն վարդապետ Զմրուխտյանը և հոգևոր հայրեր, ներկա էին մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներն ու համայնքի բնակչությունը:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի նախ խաչը լվացվեց ջրով և գինով և ապա ձեռամբ թեմակալ առաջնորդի օծվեց Սուրբ Մյուռնոնով:

Առաջնորդական փոխանորդ Ս. Սասուն ծայրագույն վարդապետի բարիգալստյան և օրվա խորհրդին նվիրված սրտառույ խոսքից հետո Սեպուհ Սրբազանն իր քարոզում շեշտեց. «Այս հիասքանչ եկեղեցու խաչը սրբագործվեց՝ վերածելով այն հաղթության զենքի և ամրության վահանի ի մխիթարություն և օրհնություն Տավուշ աշխարհի մեր հավատացյալների»: Սրբազան Հայրն իր խոսքում ներկաներին հավուր պատշաճի և հանգամանալից մեկնաբանեց, թե ինչպես խաչը՝ մեր Տիրոջ խաչելությամբ, մահվան գործիքից վերածվեց փրկության միջոցի և մեզ՝ հայերիս համար դարձավ պաշտամունքի առարկա: Սեպուհ Սրբազանը այնուհետև հորդորեց հատկապես երիտասարդությանը, որ քրիստոնեական կյանքով ապրեն և հավատարիմ մնան մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

## **ՕԾՎԵՑ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՔՈՐԻ ԳՅՈՒՂԻ Ս. ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉԸ**

Հուլիսի 12-ին Աքորի գյուղում մեծ հանդիսությամբ օծվեց Ս. Գևորգ (XIII դ.) եկեղեցու գմբեթի խաչը: Օծման սրբազան արարողությունը կատարվեց հանդիսապետությամբ և ձեռամբ Գուգարաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջանի և Ալավերդու տարածաշրջանի հոգևոր հայրերի մասնակցությամբ: Սրբազան արարողությանը ներկա էին Ս. Գևորգ եկեղեցու բարերար ԱԺ պատգամավոր Կարեն Սարիբեկյանը, Ալավերդի քաղաքի ու համայնքային իշխանությունների ներկայացուցիչներն ու գյուղի ազգաբնակչությունը:

Համաձայն Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և մեր հոգեշնորհ վարդապետների կանոնակարգած արարողության՝ ըստ պատշաճի նախ խաչը լվացվեց ջրով և գինով և ապա Սրբազան առաջնորդի ձեռքով օծվեց Սուրբ Մյուռնոնով:

Սրբազան Հայրն իր քարոզում հավուր պատշաճի և հանգամանալից մեկնաբանեց խաչի խորհուրդը և մեզ՝ հայերին համար նրա պաշտամունքի առարկա լինելու հանգամանքը: Սրբազանն իր գոհունակությունն ու գնահատանքը հայտնեց ԱԺ պատգամավոր Կարեն Մարիբեկյանին նրա կատարած բարեգործությունների՝ հատկապես Ս. Գևորգ եկեղեցու վերականգնման ազգանվեր աշխատանքի համար: Սեպուհ Սրբազանն իր ուրախությունը կիսեց գյուղացիների հետ և հայտնեց, որ առաջիկայում կվերածովի տարիներ ի վեր չգործող աղոթատեղին, ուստիև բարեպաշտ ժողովուրդը հնարավորություն կունենա իր աղոթքը բարձրացնել առ Աստված այս պատմական և հնամենի եկեղեցում: Սրբազանը հուսադրեց ներկաներին, որ այլևս չեն խարխափի օտարամուտ տարբեր հոսանքների որոգայթներում և հորդորեց հատկապես երիտասարդությանը, որ քրիստոնեական արժեքներով կենցաղավարեն և հավատարիմ մնան մեր ազգային արժեքներին ու ինքնությանը:

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՈՒՄ ՕԾՎԵՑ ԿՈԹԻ ԳՅՈՒՂԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻՆ

Հուլիսի 13-ին Գուգարաց թեմի առաջնորդ Ս. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանի հանդիսապետությամբ և ձեռամբ կատարվեց Կոթի գյուղի Ս. Աստվածածին (1900 թ.) եկեղեցու վերածման արարողությունը: Ձեռամբ Սրբազան Հոր և մասնակցությամբ առաջնորդական փոխանորդ Ս. Մասուն ծայրագույն վարդապետի և թեմի հոգևոր դասի՝ օծվեցին Ս. Սեդանը, Խորանը, Սկրտության Սուրբ Ավագանը: Արարողության ավարտին նորած եկեղեցում պատարագ մատուցեց Ս. Միմեռն քահանա Առաքելյանը:

Գյուղի հավատացյալ ժողովրդի համար այդ օրը նվիրական ու պատմական էր, քանզի 2007 թ. այդ նույն օրը Սրբազան Հոր ձեռամբ օծվել էր եկեղեցու խաչը: Եկեղեցու օծման արարողության ավարտին Սեպուհ Սրբազանն իր օրհնության ու շնորհավորական խոսքն ուղղեց կոթեցիներին և բոլոր ներկաներին. «Գոհություն ենք հայտնում Բարձրյալն Աստծուն, որ մեր տիրախնամ թեմում ևս մեկ աղոթքի տուն իր դռները բացեց: Ուստի, սիրելի՛ կոթեցիներ, ձեզ ենք հանձնում հավատքի բանալին՝ այս սուրբ եկեղեցին ու Ավետարանը: Այսուհետ ձեր սրտաբուխ աղոթքները, որ կմատուցվեն այս սուրբ տաճարում, թող ուղղվեն մեր Մայր Եկեղեցու անսասանության, մեր անկախ հայրենիքի բարգավաճման ու հայ ժողովրդի բարօրության համար»:

Սրբազանը մեծարելով եկեղեցու բարերարներ՝ համագյուղացիներ Սահակ Սերգոյի և Արտեմ Դիմիտրիի Խաչատրյաններին, Գուգարաց թեմի հոգևոր դասի և ժողովրդի անունից իր երախտագիտությունը հայտնեց և հանուն Վեհափառ Հայրապետի օրհնեց ու բարի մաղթանքներ հղեց ի հիշատակ այս պատմական օրվան:

Արարողությանը ներկա էին Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը, Կոթիի համայնքապետ Ֆելիքս Մելիքյանը, մարզային իշխանությունների ներկայացուցիչներ, համայնքապետեր, բազմաթիվ հյուրեր և համայնքի անդամներ:

Սուրբ Պատարագի ավարտին ներկաներին բաշխվեց երախտիքի ու գոհության մատաղ գյուղացիների արնշատության, հարազատ գյուղի անսասանության և Մայր Հայրենիքի ու Սուրբ Եկեղեցու պայծառության համար:

*ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ՄԱՍԼՈՂ ԴԵՎԱՆ*

## ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Հուլիսի 19-ին տեղի ունեցավ Գեղարքունյաց թեմի Սարուխան համայնքի Ս. Աստվածածին եկեղեցու հիմնարկեքի արարողությունը: Գյուղական համայնքի և հավատացյալների ներկայությամբ, ձեռամբ թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս. Հովհաննիսյանի, օծվեցին եկեղեցու հիմքի 16 քարերը: Եկեղեցին կառուցվում է ծնունդով սարուխանցի Արայիկ Ավետիսյանի ազնիվ բարերարությամբ: Նախագծող ճարտարապետն է Ստեփան Նալբանդյանը:

Համայնքում միաժամանակ հիմնովին նորոգվում է հավատքի ևս մեկ օջախ՝ Ս. Գևորգ եկեղեցին, որը կառուցվել է XIX դ. առաջին կեսին Բայազետից այստեղ ներգաղթած հայերի կողմից:

Հավարտ արարողության Սրբազանը հավաքվածներին ուղղված իր խոսքում նշեց, որ եկեղեցաշինության այս գործընթացը խոսուն վկայություն է հոգևոր վերազարթոնքի, քանզի երկու եկեղեցիներն էլ վեր են հանում՝ իրականացնելով բարերարների վաղեմի ուխտն ու համայնքի երկարամյա երազանքը:

## ԼՈՒՐԵՐ ԳԵՐՄԱՆԻՈՅ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԷՆ

**Սայիսի 11-ին** Գերմանիոյ Աախէն քաղաքին մէջ եկեղեցական եւ մշակութային մասնաւոր յայտագրով մը նշուեցաւ քաղաքի նորակազմ հայ համայնքի հիմնադրութիւնը:

Յայտագրի առաջին մասին Աախէնի Սուրբ Ատալպերթ եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ 1915 թ. Մեծ Եղեռնի նահատակաց հոգեհանգիստ, Գերմանիոյ հայոց առաջնորդ Տ. Գարեգին արքեպս. Պեքճեանի հանդիսապետութեամբ: Առաջնորդ Սրբազանն իր խօսքին մէջ նախ շնորհաւորեց նորակազմ համայնքի հիմնադիրները եւ նաեւ շնորհակալութիւն յայտնեց թէ՛ հայ եւ թէ՛ գերմանացի անձնաւորութիւններուն, որոնք օժանդակած են համայնքի հիմնադրութեան եւ կազմակերպման: Ապա Սրբազան Հայրն անդրադարձաւ տեղի ունեցած ոճրագործութեան ահաւորութեանը՝ ընդգծելով, որ հայ նոր սերունդը պէտք է երբեք չմոռնայ պատմութեան այս էջերը, որոնք իր իսկ ինքնութիւնը կը դրսեւորեն:

Համայնքի հիմնադրութեան հանդիսութեան երկրորդ մասը տեղի ունեցաւ Սուրբ Ատալպերթ եկեղեցւոյ համայնքին սրահին մէջ, ուր ներկաներուն հրամցուեցաւ մշակութային ճոխ յայտագիր մը: Յայտագրի բացման խօսքը կատարեց ատենապետ Տիար Ռազմիկ Աւագեան՝ շնորհակալութիւն յայտնելով մօտ 120 ներկաներուն եւ հայ ու գերմանական հաստատութիւններու ներկայացուցիչներուն, իրենց մասնակցութեան համար: Ապա հայկական պարերով եւ երգերով ելոյթ ունեցան համայնքի երգչախումբն ու պարախումբը, դաշնամուրի ընկերակցութեամբ մեկնաբանուեցան հայկական երգեր՝ ղեկավարութեամբ երաժիշտ Արտակ Ոսկանեանի:

Յայտագիրն աւարտուեցաւ համայնքի Տիկնանց յանձնախումբի կողմէ պատրաստուած ճոխ հիւրընկալութեամբ:

**Սայիսի 12-ին** Հոգեգալուստի տօնին յաջորդ օրը, Նոյվիտի եւ Պիլէֆելտի հայ համայնքները միասնաբար կազմակերպած էին ուխտագնացութիւն մը Պէլճիքայի Պանօ ուխտավայրը:

Բացի զոյգ համայնքներու ուխտաւորներէն ճամբորդութեան կը մասնակցէին այլ հաւատացեալներ ալ՝ Քէօլնի եւ Պէլճիքայի համայնքներէն: Շուրջ 130 հոգիներէ բաղկացող խումբը, նախ մասնակցեցաւ տեղւոյն "Botschaftskapelle" կոչուած եկեղեցւոյ մէջ մատուցուած Սուրբ Պատարագին, զոր մատոյց Տ. Հայագատ քին. Մարտիկեան: Ս. Պատարագի սպասարկութիւնը եւ երգեցողութիւնը կատարեցին ուխտաւոր դպիրները, Տ. Արմէն քին. Մելքոնեանի ղեկավարութեամբ:

Յետ Ս. Պատարագի, ուխտաւորները հանդիսաւոր թափօրով առաջնորդուեցան այն սրբատեղին, ուր Ս. Աստուածածինը 1933-ին 11 տարեկան աղջկան մը ինը անգամներ երեսալով զինքը հրաւիրած էր մշտական աղօթքի եւ նոյն վայրը Աստուծոյ փառքին համար մատուց մը կառուցելու:

Սրբավայրը գտնուող Աստուածամօր արձանին եւ ջրաղբիւրին մօտ կատարուեցաւ կարճ արարողութիւն մը եւս, հոն գտնուող հարիւրաւոր օտար ուխտաւորներու ներկայութեամբ:



Ուխտագնացությունը վերջ գտաւ երեկոյեան ժամերուն աւետարանական հատուածներու ընթերցումով, Ս. Խաչի ուղղուած շարականներու երգեցողութամբ եւ Տ. Արմէն քահանայի եզրափակիչ խրատականով՝ Աստուածամօր եւ միւս սուրբերու բարեխօսութեան եւ հաւատացեալները հետաքրքրող այլ կարեւոր նիւթերու մասին:

**Մայիսի 29-ին** ՀՀ Բնապահպանութեան նախարար Տիար Արամ Հարութիւնեան այցելեց գերմանահայոց Առաջնորդարանը, իր հետն ունենալով նախարարութեան պատասխանատու պաշտօնեաներ եւ ՀՀ Գերմանիոյ լիազօր դեսպանուհի Տիկին Կարինէ Ղազինեանը:

Նախարարն ու իր շքախումբը ընդունուեցան Առաջնորդ Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի անդամներուն կողմէ: Առաջնորդարանի պատուոյ տուարը ստորագրելէ ետք հիւրերը այցելեցին առաջնորդանիստ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցին, Քէօլնի հայ համայնքի եւ առաջնորդարանի սրահները, ուր իրենց տեղեկութիւններ տրուեցան գերմանահայ գաղութի եւ անոր եկեղեցական կեանքի մասին: Յարգելի նախարարն ու իր շքախումբը ապա սուրճի սեղանի շուրջ զանազան նիւթերու մասին մտքերու փոխանակումներ ունեցան Սրբազան Հօր եւ Թեմական Խորհուրդի անդամներուն հետ:

**Յունիսի 4-6-ին** Պէտլին ժամանեց վեց հոգիներէ բաղկացող դարաբաղեան պատուիրակութիւն մը գլխաւորութեամբ՝ ԼՂՀ Խորհրդարանի նախագահ Աշոտ Ղուլեանի: Այցելութեան նպատակն էր Ղարաբաղի Գերմանիոյ մէջ գտնուող բարեկամներու հետ հանդիպիլ, Ղարաբաղեան հարցի նկատմամբ իրենց մօտեցումին աւելի մանրամասն ծանօթանալ:

Վերոյիշեալ նպատակով է որ Պէտլինի Եւրոպական Կաճառին մէջ կազմակերպուած սենփոզիումին ելոյթ ունեցան երեք փրոֆեսորներ եւ տարբեր գիտնականներ, Կաճառին ղեկավարը փրոֆ. Շթրաթընշուրթի գլխաւորութեամբ:

Այս առթիւ կատարուեցաւ նաեւ ընդունելութիւն՝ ՀՀ Պէտլինի դեսպանատան մէջ, որուն մասնակցեցաւ նաեւ գերմանահայոց առաջնորդ Գերշ. Տ. Գարեգին արքեպս. Պէքճեան իր հետն ունենալով Հոգշ. հայրեր Խաչատուր Կնեազեանն ու Եղիշէ Աւետիսեանը:

**Յունիսի 6-ի** երեկոյեան հոգեհանգստեան արարողութիւն մը տեղի ունեցաւ ի Պէտլին Ղարաբաղի շարժման ընթացքին զոհուած զինուորներուն եւ այլ հոգիներուն ի հանգիստ, որուն յաջորդեց Պէտլինի քաղաքապետարանի սրահներէն մէկուն մէջ կազմակերպուած հարց ու պատասխանի հաւաքը, հայ համայնքի ներկայացուցիչներուն հետ: Տիար Ղուլեան Ղարաբաղի հարցին շուրջ ներկաներու հարցումներուն պատասխանելէ բացի, առաջնորդ Սրբազանն ու հայ համայնքի վաստակաւոր ներկայացուցիչներէն Տիար Համօ Պետրոսեանը պարզեւտրեց դարաբաղեան յուշամետալներով:

Ղարաբաղի պատուիրակութեան Գերմանիա այցելութիւնը կազմակերպուած էր Արցախի Պէտլինի ներկայացուցիչներու կողմէ, որուն նոր նշանակուած վարիչն է Տիկին Գայանէ Ափինեան:

**Յունիսի 7-ին** Պեոլինի Հայ Տան մեջ գումարուած համայնքային ժողովին, առաջնորդ Սրբազան Հայրը վարչութեան անդամներուն ներկայացուց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Հոգ. Տ. Եղիշէ վրդ. Աւետիսեանը Պեոլինի եւ շրջանի համար որպէս հոգեւոր հովիւ: Վարչական անդամներուն կողմէ գոհունակութեամբ ողջունուեցաւ Հայր Սուրբը, որ ներկայիս երեք ամսուայ փորձի շրջան մը պիտի բոլորէ՝ ծանօթանալով համայնքի անդամներուն եւ պաշտօնին մանրամասնութիւններուն:

Իսկ նախկին հովիւ Հոգ. Տ. Խաչատուր արդ. Կնեազեան շուրջ երկու տարի անհրաժեշտ փորձը ձեռք ձգելով կոչուեցաւ Հալլը-Զալլը քաղաքի համայնքի հոգեւոր հովութեան պաշտօնին, որ կը տարածուի մինչեւ Պրունշվայկ, Լայքցիկ եւ Տրեզուրն:

**Յունիսի 9-ին** Պօնն-Պոյէլ քաղաքին մեջ Յունաց Առաջնորդարանը կազմակերպած էր Յոյն Եկեղեցոյ Կոստանդնուպոլսոյ Տիեզերական Պատրիարք Բարթողոմէոսի անուանակոչութեան տօնը:

Հայրապետական մաղթանքը տեղի ունեցաւ Յունաց առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ, ուր ներկայ էին տարբեր երկրներու երեսփոխաններ եւ եկեղեցականներ: Գերմանիոյ հայոց Առաջնորդարանը եւս հրաւիրուած էր այդ բարեբաստիկ օրուան: Հանդիսութեանը մասնակցեց Քէօլնի հոգեւոր հովիւ Տ. Հայազատ քնյ. Մարտիկեան, որ իր հերթին Յոյն Եկեղեցոյ Գերմանիոյ թեմի Մէթրոփոլիթին փոխանցեց առաջնորդ Սրբազան Հօր բարեմաղթութիւնները:

**Յունիսի 21-22-ին** տեղի ունեցաւ գերմանահայոց առաջնորդութեան տարեկան երկօրեայ Պատգամաւորական ժողովը ի Քէօլն:

Առաջնորդ Սրբազան Հօր աղօթքով բացուած ժողովին նախագահեց Տոքթ. Բաֆֆի Պետիկեան, որ ձեռնահասօրէն վարեց ժողովը, առիթը տալով 14 համայնքներու ներկայացուցիչներուն իրենց հարցերը ներկայացնելու:

Իսկ Թեմական ժողովի անդամներէն Տիար Ռազմիկ Աւագեան որպէս գանձապահ ներկայացուց տարեկան հաշուեկշիռը եւ իր փոխանորդը Տիար Ռուբէն Քէհեան կատարեց հաշուական լրացումները, ի մասնաւորի անդրադառնալով առաջնորդութեան անդամական դրութեան:

Հոգեւոր դասու աշխատանքներու մասին տեղեկագրութիւն մը կարդաց Հոգ. Տ. Մերովբէ վրդ. Իսախանեան, ապա ժողովականները բարձրացրեցին գանազան առաջարկներ՝ բարելաւելու առաջնորդութեան անդամական դրութիւնը, թեմէն ներս կազմակերպելու եկեղեցասէր երիտասարդաց յանձնախումբ, հայեցի դաստիարակութեան ուսումնական ծրագիր, եւ կատարուեցան տակաւին բազմաթիւ օգտակար առաջարկներ:

Ժողովի աւարտին ընդունուեցան Պոնն քաղաքէն գերմանական դպրոցի մը պատասխանատուները, որոնք 2001 թուականէն ի վեր Հայաստանի Կիւմրի քաղաքի գանազան դպրոցներու աշակերտութեան հետ փոխանակումներ կը կատարեն, նաեւ նիւթական օգնութիւններ ընելով այդ դպրոցներուն: Այս պատասխանատուները իրենց հետ միասին բերած էին շուրջ 15 հայ աշակերտներ, անոնց Կիւմրիի դպրոցի տնօրէն Գագիկ Ստեփանեանի եւ գերմաներէն լեզուի ուսուցչուհի Մարինէ Խաչատուրեանի

ընկերակցությամբ, որոնք հիւրասիրուեցան երկու շաբաթ Գերմանիոյ մէջ եւ աշնան պիտի ընդունին գերմանացի իրենց ընկերները:

Գարեգին Սրբազան ողջունելով հիւրերու այցելութիւնը յուշանուէրներ բաժնեց բոլորին եւ օրհնեց ներկաները: Աշակերտները ստացան տարբեր նուէրներ եւս Գերմանահայ գործարարներու միութեան կողմէ գլխաւորութեամբ Տիար Մուրատ Աքեիւզի, որ այս ձեռնարկը քաջալերելու համար բարերարութիւններ կընէ:

**Յունիսի 29-ին** կիրակի օրը, Քրիստոսի Պայծառակերպութեան Տօնի առթիւ հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Քէօլնի Ս. Սահակ-Մեսրոպ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ մէջ: Ս. Պատարագը մատուցեց եւ քարոզեց Քէօլնի հայ համայնքի հոգեւոր հովիւ Արժ. Տ. Հայազատ քնյ. Մարտիկեան:

Ս. Պատարագին ներկայ էին Եկեղեցիներու Համաքրիստոնէական Խորհուրդէն ներկայացուցիչներու խումբ մը՝ գլխաւորութեամբ Պրունտիի Անկլիքան եկեղեցիէն Գերշ. Պէրնարտ արքեպս. Նթահորթրիի եւ նշեալ խորհուրդի ընդհանուր քարտուղարի փոխանորդ Տիար Կէրկէս Լէմօրուպի: Խումբին կընկերակցէր Գերմանիոյ Միջեկեղեցական խորհուրդի տնօրէնուհի Տիկին Պարպարա Ռուտովֆ: Սրբազան արարողութեան վերջաւորութեան Տ. Հայազատը հիւրերուն բարի գալուստ մաղթելէ ետք ընթերցեց առաջնորդ Գարեգին Սրբազանի ողջոյնի խոսքը, որ ՀՀ Արտաքին գործոց նախարարի այցելութեան պատճառով կը գտնուէր Պէրլին: Ապա հիւր Պէրնարտ Սրբազանը խօսք առնելով շնորհակալութիւն յայտնեց ջերմ ընդունելութեան համար եւ բացատրեց իրենց այցելութեան նպատակը, որն էր ծանօթանալ Գերմանիոյ հայ եկեղեցիին, համայնքին եւ անոր ունեցած խնդիրներուն:

Ս. Պատարագէ ետք հիւրերը ընդունուեցան Թեմական Խորհուրդի աստենապետ Տոքթ. Սարգիս Քէհեաեանի եւ Քէօլնի հայ համայնքի աստենապետուհի Տիկին Մինու Նիքքայի կողմէ համայնքի պարտէզին մէջ սիրոյ սեղանին շուրջ: Ապա գաղափարներու փոխանցման նպատակով ժողով մը տեղի ունեցաւ համայնքի գրադարանին մէջ, ուր հիւրերուն տեղեկութիւններ տրուեցան գերմանահայ գաղութին, անոր առօրեայ կեանքին, դժուարութիւններուն եւ մտահոգութիւններուն մասին: Քննարկման մասնաւոր նիւթ եղաւ Հայոց ցեղասպանութիւնը, անոր ճանաչման հարցը Գերմանիոյ մէջ:

**Յունիսի 30-ին** Գերմանիոյ մէջ ՀՀ դեսպանութեան հրաւերով առաջնորդ Գարեգին Սրբազանը ընկերակցությամբ Միջին Գերմանիոյ հայ համայնքներու հովիւ Հոգ. Տ. Սերովբէ վրդ. Իսախանեանի, ներկայ գտնուեցաւ ՀՀ նոր նշանակուած Արտաքին գործոց նախարար Էտուարդ Նալպանտեանի ի պատիւ տրուած պաշտօնական ճաշին Պէրլինի Ատլոն հիւրանոցին մէջ: Նոր նախարարին առաջին պաշտօնական այցն էր Գերմանիա: Ճաշին հրաւիրուած էին գերմանահայոց գլխաւոր կազմակերպութիւններու բոլոր ներկայացուցիչները:

Ճաշը սկսաւ Սրբազան Հօր բացման աղօթքով, որ միեւնոյն ժամանակ կարճ ողջոյնի խօսք արտասանեց, յանուն Թեմական Խորհուրդի շնորհաւորելով յարգելի Նալպանտեանը իր նոր պաշտօնին համար եւ մաղթեց իր առաքելութեան մէջ լիակատար յաջողութիւն:

Յաջորդաբար խօսք առաւ ՀՀ Գերմանիոյ դեսպան Տիկին Կարինէ Ղազինեան, նոյնպէս ողջունելով նախարարին ու հրաւիրեալներուն, ապա մի առ մի ներկայացուց զիրենք հանդերձ իրենց ներկայացուցած կազմակերպութիւններու գործունէութեամբ:

Հուսկ բանը արտասանեց յարգելի նախարարը, որու ընթացքին ամփոփ կերպով ներկայացուց ՀՀ ներկայ կացութիւնն ու կառավարութեան նոր ծրագիրները:

**Յուլիս 20-ին** Փոթստամի Լէփսիոս Հաուզի անուան յանձնախումբին կողմէ Ֆրիգտորֆի մէջ կազմակերպուեցաւ յատուկ միջոցառում մը, նուիրուած Յովհաննէս ու Մարգարէտա Լէփսիոսներու յիշատակին:

Այս առթիւ Հալլը-ի Սուրբ Մարթին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ առաւօտեան միջեկեղեցական ժամերգութիւն մը, որուն մասնակցեցան՝ շրջանի հոգեւոր հովիւներ Տ. Տ. Եղիշէ վրդ. Աւետիսեանն ու Խաչատուր արքյ. Կնեազեան, ինչպէս նաեւ Յովհաննէս Լէփսիոսի արխիւներու պատասխանատու եւ Հալլը-ի աստուածաբանական համալսարանի տէքան փրոֆ. Հերման Կուլց, Ս. Մարթին եկեղեցւոյ հովիւ Հանս Մարթին Կուլման, յանձնախումբի ատենապետ պատուելի Հանս Ուլրիխ Շուլց եւ Ս. Մարթին եկեղեցւոյ երգչախումբը: Ներկայ էին նաեւ հայ եւ գերմանացի հրաւիրեալներ թիւով շուրջ 300 հոգի:

Ժամերգութեան ընթացքին ներկաներուն իր խօսքն ուղղեց պատուելի Շուլց: Այնուհետեւ Ս. Մարթին եկեղեցւոյ առջեւ կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն Յովհաննէս ու Մարգարէտա Լէփսիոսներու յիշատակին եւ խաչքարի բացումը, որուն վրայ կար հետեւեալ արձանագրութիւնը. «**Լուսաւորեա Տէր զհոգիս ծառայից Քոց**»:

Ընդմիջումէն ետք փրոֆ. Հերման Կուլց նկարներու ցուցադրութեամբ ներկայացուց Լէփսիոսներու կեանքն ու գործունէութիւնը: Այս իմաստալից հանդիսութիւնը վերջ գտաւ ներկայ հոգեւորականներու միասնական աղօթքով եւ օրհնութեամբ:

*ՂԻԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

## ՍԱՐԿԱՎԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՎԻԵՆՆԱՅԻ Ս. ՀՈՒՓՄԻՄԵ ԵԿԵՂԵՑՈՒՄ

2008 թ. հունիսի 1-ին Վիեննայի Ս. Հռիփսիմե եկեղեցում, Ս. Պատարագի ընթացքում, ձեռամբ Կենտրոնական Եվրոպայի և Սկանդինավիայի Հայրապետական Պատվիրակ Գերշ. Ս. Մեսրոպ արքեպս. Գրիգորյանի կատարվեց սարկավագական ձեռնադրություն: Վիեննայում երկար տարիներ բնակվող և Ս. Հռիփսիմե եկեղեցում իր նվիրյալ ծառայությունը բերած Հայրապետ Շարբաթյանը ձեռնադրվեց սարկավագ:

Սրբազան Հայրը շնորհավորեց բոլոր ներկաներին և իր պատգամն ու հորդորը ուղղեց նորընծա սարկավագին՝ Աստուծուց ստացած շնորհներով էլ ավելի շենացնելու և պայծառացնելու Հայ Եկեղեցին:

Սա երկրորդ դեպքն է, որ Ավստրիայի Հայ Առաքելական Եկեղեցական համայնքում սարկավագ է ձեռնադրվում: Ձեռնադրության արարողությանը մասնակցում էին Ավստրիայի հայ համայնքի հոգևոր հովիվ Արժ. Ս. Անդրեաս քին. Իսախանյանը և Հոգշ. Ս. Տիրան արք. Պետրոսյանը:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

*Գանադայի հայոց թեմում*

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Գանատահայոց թեմի առաջնորդարանի դիւանը այսու կը տեղեկացնէ, որ թեմիս 25-րդ պատգամաւորական ժողովը գումարուեցաւ Մայիս 30-Յունիս 1-ին, Մոնթրէալի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցոյ մէջ:

Ժողովը, թեմի Ծրագիր Կանոնագրի համաձայն, ներկայութեամբ 40 պատգամաւորներու, երկրորդ անգամ լինելով, գանատահայոց թեմի առաջնորդ վերընտրեց Գերաշնորհ Տ. Բագրատ եպս. Գալստանեանը:

Ընտրութիւնէն անմիջապէս ետք, թեմի հոգեւոր հովիւները եւ եկեղեցոյ «Կոմիտաս» դպրաց դաս-երգչախումբը, թափօր կազմած, նորընտիր առաջնորդ Սրբազան Հայրը առաջնորդեցին եկեղեցի, ուր կատարուեցաւ Հրաշափառի արարողութիւն: Հրաշափառի արարողութիւնէն ետք, առաջնորդ Սրբազան Հայրը իր անդրանիկ պատգամն ուղղեց ներկայ հաւատացեալներուն եւ պատգամաւորներուն: Պատգամի սկզբնաւորութեան, Սրբազան Հայրը, որդիական խորին զգացումներով իր երախտագիտութիւնը յայտնեց Ազգիս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ աղօթելով Մայր Աթոռ Ս. Էջմիածնի անսասանութեան եւ Վեհափառ Հայրապետի առողջութեան եւ արեւշատութեան համար: Այնուհետեւ, Սրբազան Հայրը շնորհակալութիւն յայտնեց թեմի հոգեւոր հովիւներուն եւ պատգամաւորներուն, գանատահայոց թեմի առաջնորդի բարձրագոյն պաշտօնը իրեն վստահելու համար, իսկ վերջաւորութեան, քաջալերեց ներկաներուն շարունակել կառչած մնալ Հայ Եկեղեցու եւ քրիստոնէական արժէքներով հարուստ հայ ինքնութեանը:

*ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

*Ամերիկայի Արեւելեան թեմէն ներս*

## ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ 40-ԱՄԵԱԿՆ

Նիւ Եորք քաղաքի սրտին վրայ բոյն դրած գեղակերտ Ս. Վարդան Մայր Տաճարի օծումը կատարեց երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ Ապրիլ 28, 1968 թուականին:

Անցնող քառասուն տարիներու ընթացքին՝ Ս. Վարդան Մայր Տաճարը եւ անոր յարակից Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանն ու մշակութային կեդրոնը, եղան թեմի հաւատացեալներու հոգեւոր, մշակութային եւ ընկերային կեդրոնը: Մայր Տաճարի հայկական ճարտարապետական ոճն ու կառոյցը ուշադրութեան առարկան դարձան ու կը դառնան Նիւ Եորքի բնակիչներուն եւ այցելուններուն:

Ս. Վարդան Մայր Տաճարի 40-ամեակը պիտի նշուի զանազան ձեռնարկներով, նկարչական ցուցահանդէս եւ երաժշտական յայտագիր՝ Հինգշաբթի Յունիս 19-ին, Կիրակի Հոկտեմբեր 12-ին՝ հանդիսաւոր Ս. Պատարագ եւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն մահացած կնքահայրերու եւ հիմնադիրներու հոգիներու խաղաղութեան համար: Նոյն օրը՝ յատուկ հանդիսութիւն մը երիտասարդներու համար եւ ապա ճաշկերոյթ եւ յայտագիր Հայկ եւ Ալիս Գալուքճեան հանդիսասրահին մէջ: Տարուան ընթացքին առիթ պիտի տրուի թեմի բոլոր ծովներուն՝ որպէս զի նշանակուած Կիրակի օր մը, իրենց հոգեւոր հովիւներով, դպրաց դասերով եւ հաւատացեալներով այցելէն Մայր Տաճար եւ մասնակցին Ս. Պատարագին:

Յոբելինական այս հանդիսութեանց կազմակերպման համար կազմուած է մասնաւոր յանձնախումբ մը՝ նախագահութեամբ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի, մասնակցութեամբ առաջնորդական փոխանորդ Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաճարեանի եւ լուսարարապետ Տ. Մարտիրոս քինյ Չեւեանի եւ զոյգ ատենապետութեամբ Լին Պէլէրեանի եւ Սանտրա Շահինեան Լայթնրի:

### ***Նկարչական ցուցահանդէս***

Հինգշաբթի Հունիս 19, յետ միջօրէի ժամը 5:30-ին Մայր Տաճարի ներքնասրահին մէջ տեղի ունեցաւ նկարչական ցուցահանդէս, զոր կազմակերպած է ծանօթ արուեստասէր եւ արուեստագէտ Վիքի Շոդակ Յովհաննէսեան:

Իր տեսակին մէջ բացառիկ ցուցահանդէս մըն էր այս: Շատ ճաշակաւոր կերպով ցուցադրուած էին 33 արուեստագէտներու գործերը, որոնք կը ներկայացնէին անցելիք, ներկան եւ ապագան: Առաջին անգամն էր որ բազմաթիւ հանրաժանօթ արուեստագէտներու՝ ինչպէս Արշիլ Կորքիի, Ռուբէն Նաքեանի, Ուիլեմ Սարոյեանի, Յովսէփ Փուշմանի, Մարգիս Խաչատուրեանի, Մոս Մելիքի եւ Սիմոն Մամսունեանի կողքին կային նոր ու տաղանդաւոր արուեստագէտներու անուններ, որոնցմէ քանիսին գործերը առաջին անգամն էր որ կը ցուցադրուէին: Մեծ թիւով արուեստասէրներ ներկայ գտնուեցան այս ցուցահանդէսին:

Յուցահանդէսի բացման խօսքը կատարեց Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քինյ Չեւեան: Խօսք առաւ նաեւ Կարգադիր Յանձնախումբի ատենապետ Մանտրա Շահինեան Լայթնըրը: Յուցահանդէսի կազմակերպիչ Վիքի Շողակ Յովհաննէսեան իր խօսքը սկսաւ հետեւեալ բառերով. «Եթէ հաւատքը Եկեղեցւոյ առաքելութիւնն է, այն ատեն գեղարուեստական արտայայտութիւնները արուեստին առաքելութիւնն են»: Ապա ներկայացուց ներկայ գտնուող արուեստագէտները եւ իր խորին շնորհակալութիւնը յայտնեց առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին, Մայր Տաճարի լուսարարապետ Արժշ. Տ. Մարտիրոս քինյ Չեւեանին եւ Կազմակերպիչ Յանձնախումբի բոլոր անդամներուն:

Առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան իր խօսքին մէջ գոհունակութիւն յայտնեց որ գեղարուեստը գնահատող հոծ բազմութիւն մը ներկայ գտնուելով այս բացառիկ ցուցահանդէսին՝ միասնաբար կը նշեն Ամերիկայի Արեւելեան թեմի պատմութեան մէջ մասնաւոր նշանակութիւն ներկայացնող այս հանգրուանը: Շնորհակալութիւն յայտնեց Կարգադիր Յանձնախումբի ատենապետներուն եւ անդամներուն, ինչպէս նաեւ ցուցահանդէսը կազմակերպող Վիքի Շողակ Յովհաննէսեանին: Սրբազան Հայրը անդրադարձաւ Ս. Վարդան Մայր Տաճարի օծման՝ կատարուած երջանկայիշատակ Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ եւ ըսաւ որ անցնող քառասուն տարիներու ընթացքին Մայր Տաճարը եղած է հաւատքի եւ մշակոյթի կեդրոն մը եւ կը շարունակէ իր այս առաքելութիւնը: Շնորհակալութիւն յայտնեց նաեւ Ուիթնի թանգարանի տնօրէն Ատամ Ուայնպըրկի, որ անձնապէս ներկայ էր, եւ որ ազնուաբար միայն մէկ օրուան համար տրամադրած էր Արշիլ Կորքիի աշխարհահռչակ նկարը՝ «Արուեստագէտը եւ իր մայրը» խորագիրով: «Քառասուն տարի առաջ մեր նախորդները ամէն գոհողութիւն յանձն առին՝ որպէս զի իրականացնեն Մայր Տաճարի գաղափարը: Եւ այսօր մենք երախտագիտութեամբ եւ հպարտութեամբ կը յիշենք զանոնք՝ օրհնելով անոնց բարի յիշատակը: Ս. Վարդան Մայր Տաճարը դարերէ եկող մեր հաւատքի ու ժողովուրդի ներկայութեան խորհրդանիշն է այս Նոր Աշխարհին մէջ: Հայ-Ամերիկեան մեր գաղութը ոչ միայն վերապրողներու եւ հաւատացեալներու համայնք մըն է՝ այլ ստեղծագործողներու եւ անոնց պահպանման նպաստողներու համայնք մը», ի մէջ այլոց ըսաւ Սրբազան Հայրը:

### ***Երաժշտական Յայտագիր Մայր Տաճարին մէջ***

Երեկոյեան ժամը 7:30-ին՝ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ երաժշտական ճոխ յայտագիր՝ մասնակցութեամբ միջազգային համբաւ վայելող երեք արուեստագէտներու՝ սօփրանօ Լուսին Ամարայի, դաշնակահար Շահան Արծրունիի եւ թաւջութակահար Անի Ազնաուրեանի:

Մայր Տաճարը գրեթէ ամբողջութեամբ լեցուած էր արուեստասէր հանդիսականներով:

Մայր Տաճարի դասին մէջ, պատուանդանի մը վրայ զետեղուած էր պոչաւոր դաշնամուր մը: Յայտագիրին բացումը կատարեց վարպետ դաշնակահար Շահան Արծրունի, որ հնչեղային կատարեալ նրբութեամբ, բարձրարուեստ ինքնավստահութեամբ եւ զարմանալի արագութեամբ մեկնաբանեց Արամ Խաչատուրեանի կարգ մը գործերը:



Զարմանահրաշ սոփրանօ Լուսին Ամարա, այժմ 83 տարեկան, շարունակեց յայտագիրը օփերային երկու արիաներով: Անոր ձայնային ջինջ առոգանությունը, յստակ ելեւելներն ու համոզիչ մեկնաբանությունները կրնան օրինակ հանդիսանալ երիտասարդ արուեստագետներուն: Յայտագիրի աւարտին՝ ան երգեց Ռոմանոս Մելիքեանի դառն տրամադրութեամբ «Վարդը», Կոմիտասի սրտազեղ «Կռունկ»ը եւ «Լէ Լէ Եաման»ը, ինչպէս նաեւ Էտկար Յովհաննէսեանի ոգեւորիչ «Երեւան-Էրեբունի»ն:

Թաւջութակահար Անի Ազնաւուրեան, որ նորեկ մը կը նկատուի հայկական շրջանակին մէջ, սկսաւ իր յայտագիրը Ադամ Խուտոյեանի «Մոնաթ»ով՝ յօրինուած մենանուագ թաւջութակի համար: Անոր նուագէն ի յայտ կու գար որ ան կը սիրէ թաւջութակ նուագել եւ իր ոգեւորութիւնը զուգորդուած է իր արուեստին: Անոր թէքնիք վարպետութիւնը եւ երաժշտական հասկացողութիւնը մեծապէս կ'ազդեն անոր կատարողական արուեստին վրայ: Ան շարունակեց յայտագիրը՝ նուագելով Էդվարդ Միրզոյեանի խոհական «Փռէմ»ը եւ Աղեքսանդր Յարութիւնեանի կորովի «Էմբրօմբթի» գործերը:

Շահան Արծրունի, որ համակարգողն էր երաժշտական այս յայտագիրին, նուագակցեցաւ Լուսին Ամարայի եւ Անի Ազնաւուրեանի:

Յաւարտ յայտագիրի գործադրութեան՝ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան շնորհակալութիւն յայտնեց արուեստագետներուն եւ ներկաներուն, նոյն ատեն յիշեց որ Մեթրոփոլիթըն Օփերայի փայլուն աստղերէն Լուսին Ամարան իր մասնակցութիւնը բերած է Ս. Վարդան Մայր Տաճարի օժման արարողութեան:

Նկարչական ցուցահանդէսին համար տրամադրուած սրահներու բարեգարդումը կատարուեցաւ շնորհիւ Տէր եւ Տիկին Տէվլիտ Գասպարեաններու նուիրատուութեան, իսկ երաժշտական յայտագիրի գործադրութիւնը կարելի դարձաւ շնորհիւ «Էտուրբտ եւ Կրսէյս Ալեքսանեան Հիմնադրամ»ի յատկացումին:

Թէ՛ նկարչական ցուցահանդէսը եւ թէ՛ երաժշտական յայտագիր վայելքի պահեր պարգեւեցին բոլոր ներկաներուն, որոնց մէջ կը գտնուէին ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Արմէն Մարտիրոսեան եւ իր ազնիւ տիկինը, Եկեղեցիներու Ազգային Խորհուրդի ատենապետը եւ իր ազնիւ տիկինը, եկեղեցական հայրերը, ծանօթ արուեստագետներ, գրագետներ, դաստիարակներ եւ ազգային դէմքեր: Անոնք ջերմապէս գնահատեցին Ամերիկայի Արեւելեան թեմի Առաջնորդարանի այս բացառիկ նախաձեռնութիւնը, շնորհաւորեցին Ս. Վարդան Մայր Տաճարի օժման 40-ամեակը եւ իրենց սրտաբուխ շնորհակալութիւնները փոխանցեցին առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանին:

*ՂԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

## ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒ ԵՒ ՇՔԱՆՇԱՆՆԵՐՈՒ ՀԱՆՁՆՈՒՄ

Հինգշաբթի Յունիս 20, երեկոյեան ժամը 7:00-ին, Առաջնորդարանի գեղեցկօրէն զարդարուած դահլիճին մէջ տեղի ունեցաւ Հայրապետական Կոնդակի եւ շքանշաններու յանձնում:

Ամերիկայի հայոց Արեւելեան թեմի առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեանի խնդրանքին ընդառաջելով՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Հայրապետական Կոնդակ եւ «Ս. Ներսէս Շնորհալի» շքանշան շնորհած էր Տոքթ. եւ Տիկին Յարութ եւ Շաքէ Մխճեաններուն եւ Հայրապետական Կոնդակ եւ «Ս. Գրիգոր Լուսաւորիչ» շքանշան՝ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Իգա Գոյումճեաններուն:

Հրաւիրեալներու կողիկ բազմութեան մաս կը կազմէին Հայաստանի Հանրապետութեան ԱՄՆ-ի դեսպան Տիար Թաթուլ Մարգարեան, ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Տիար Արմէն Մարտիրոսեան, Առաջնորդարանի Թեմական Խորհուրդի ատենապետ Տիար Ասկըր Թադոսեան եւ անդամներ, Հայ Օգնութեան Ֆոնտի ատենապետ Տիար Ռանտի Կիլեան, մեծարեալներու ընտանեկան պարագաներ եւ մօտիկ բարեկամներ:

Հաւաքոյթին հանդիսավարն էր դոկտ. Դաւիթ Նաճարեան, որ իր խօսքերը համեմեց զուարթարանութիւններով:

Նախքան Հայրապետական Կոնդակներու եւ շքանշաններու տուչութիւնը՝ թեմակալ առաջնորդ Գերշ. Տ. Խաժակ արքեպս. Պարսամեան, իր խօսքը արտասանեց ի մէջ այլոց ըսելով. «Պատիւ եւ հաճոյք է որ այս երեկոյ այստեղ հաւաքուած ենք մեծարելու համար Հայաստանեայց Եկեղեցոյ նուիրեալ երկու զոյգեր՝ Տոքթ. եւ Տիկին Յարութ եւ Շաքէ Մխճեաններ եւ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Իգա Գոյումճեաններ: Տարիներէ ի վեր ես անձնապէս կը ճանչնամ այս պատուական զոյգերը եւ ուրախ եմ որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գնահատելով անոնց եկեղեցանուէր ու ազգանուէր ծառայութիւնները՝ զանոնք պատուած է Հայրապետական Կոնդակով եւ շքանշանով: Ինչպէս զիտէք այս տարուան Առաջնորդարանիս կարգախօսն է «Եկեղեցի եւ Տուն – Մէկ Հոգի Դարձած»: Թէ՛ Եկեղեցոյ եւ թէ՛ տան մէջ մեր հաւատքին մասին կը սորվինք, մենք զմեզ ապահով կը զգանք եւ Քրիստոսի ներկայութիւնը կը վայելենք: Հայկական ընտանիքը փոքրիկ եկեղեցի մըն է եւ պէտք է ըլլայ: Քրիստոնէական աւանդութիւններն ու սովորութիւնները կարեւոր տեղ պէտք է զրաւեն մեր տուններուն մէջ: Զօրաւոր հիմներու վրայ դրուած հայկական տուններ՝ զօրաւոր հիմներու վրայ դրուած համայնքներ կը կազմեն, որոնք իրենց կարգին՝ զօրաւոր եկեղեցի կը կազմեն: Այսօրուան մեծարեալները իրենց ցուցաբերած նուիրումով իրենց տունները, ծուխերը, համայնքները եւ եկեղեցին զօրաւոր հիմներու վրայ դրած են՝ օրինակ հանդիսանալով այլոց: Մենք կը վկայենք այս զոյգ ընտանիքներու զօրութեան մասին: Անոնց զաւակներն ու թոռները կենդանի վկաներն են Հայ Եկեղեցոյ եւ հայկական ժառանգութեանց հանդէպ անոնց ցուցաբերած նուիրումին»: Սրբազան Հայրը անդրադարձաւ Տոքթ. Յարութ Մխճեանի եւ Տիար Յակոբ Գոյումճեանի կեանքին եւ ձեռք բերած յաջողութիւններու՝ թէ՛ ազգային եւ թէ՛ միջազգային

շրջանակներու մէջ:

Ապա, կարդացուեցան Հայրապետական Կոնդակները եւ շքանշաններուն հետ յանձնուեցան մեծարեալներուն:

Տոթք. եւ Տիկին Յարութ եւ Շաքէ Միւսեաններու Կոնդակին մէջ Նորին Սրբութիւնը կը գրէր. «Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ծանօթ ենք ազգօգուտ, եկեղեցանուէր Ձեր երկարամեայ գործունէութեանը: Տասնեակ տարիներ Դուք ազնիւ յանձնառութիւններով եւ ընծայաբերումներով օգտաշատ ծառայութիւն էք բերում ԱՄՆ հայոց Արեւելեան թեմին, որպէս զի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքոյ առաւել կազմակերպուած լինի հայորդեաց համայնքային կեանքը, զօրաւոր՝ նրանց ազգանուէր եւ եկեղեցանուէր ոգին: ... Մենք ուրախ առիթն ենք ունեցել ականատես լինելու Ձեր որդիական աննուագ նախանձախնդրութեան՝ հանդէպ հոգեւոր մեր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը: Մեր ժողովրդի եւ հայրենի մեր երկրի հոգեւոր կեանքի պայծառութեանը աւանդ բերելու ազնիւ մղումով Դուք յանձն առաք Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցու Հայրապետական Գահի պատրաստման հովանաւորութիւնը՝ Ձեր ընտանիքի անունը կապելով նորակառոյց եկեղեցու պատմութեանը: ... Գոհունակութիւն է Մեզ համար նաեւ հաստատել, որ Դուք, մեծայարգ Տիկին Միւսեան, ինչպէս Միացեալ Նահանգներում, այնպէս եւ Հայաստանում բարի անուն ու հռչակ էք վայելում որպէս բարձրակարգ բժիշկ-սրտաբան: Ձեր մասնագիտական կարողութիւնները Դուք սիրով ծառայեցրել էք մեր ժողովրդի զաւակներին, օգնելով նրանց յաղթահարել մարմնական տկարութիւնները եւ առաւել զօրանալ յոյսի ու լաւատեսութեան մէջ: Այսօր Հայաստանում բազմաթիւ հայորդիներ, ի թիւս որոնց եւ եկեղեցականներ, ովքեր Ձեր աջակցութեամբ վերագտել են իրենց առողջութիւնը, երախտագիտութեամբ են յիշում Ձեզ եւ աղօթում Ձեր յաջողութեան համար»:

Իսկ Տէր եւ Տիկին Յակոբ եւ Իգա Գոյումձեաններու Կոնդակին մէջ գրուած էր. «Տասնեակ տարիներ միմեանց զօրակից, Դուք կարեւոր ծառայութիւն էք բերում ազգային մեր կեանքից ներս՝ մեր Սուրբ Եկեղեցին շէն ու պայծառ տեսնելու որդիական նախանձախնդրութեամբ իրականացնելով արժանաւոր բազմաթիւ գործեր ու նախաձեռնութիւններ: ... Հարազատ ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու եւ հայրենի մեր Երկրի հանդէպ Ձեր հոգու անկեղծ սէրն ու նուիրումը Դուք արտայայտում էք նաեւ ի նպաստ Հայ Օգնութեան Ֆոնտի եւ Սուրբ Ներսէս Ընծայարանի Ձեր ստանձնած յանձնառութիւններով եւ Ռումինիայի հայոց թեմում Սուչավայի Սուրբ Խաչ եկեղեցու նորոգութեանց բերած ազնիւ աջակցութեամբ:

Ուրախ ենք, որ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակը Դուք հարստացրեցիք նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին մատուցած ծառայութիւններով՝ սիրայօժար կերպով յանձն առնելով նորակառոյց Միաբանական շէնքի օղորակիչների հովանաւորութիւնը: Արդարեւ, տարիների Ձեր նուիրեալ գործունէութիւնը, որ Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով, ներշնչող ու խանդավառող օրինակ է երիտասարդ հայորդեաց համար՝ իրենց կեանքի ընթացքը բարեզարդելու ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ ու եկեղեցասիրութեամբ իմաստաւորուած գործերով» (տե՛ս «Էջմիածին», 2008, Ե):

ԴԻԻԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

# ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



## «ՈՒՂԱՓԱՌ ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՇԱՐԺՄԱՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԺՈՂՈՎ ՀՈՒՆԱՍՏԱՆՈՒՄ

Հունիսի 8-12-ը Վոլոսում (Հունաստան) Հույն Ուղղափառ Եկեղեցու հրավերով Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը կազմակերպել էր ժողով՝ նվիրված Էկումենիկ շարժման մեջ ուղղափառ կանանց մասնակցությանը:

Ժողովի խորագիրն էր. «Եվ այնտեղ շատ կանայք կային...(Մատթ. ԻԷ 55). Ուղղափառ կանանց մասնակցությունը Էկումենիկ շարժմանը՝ անցյալը, ներկան և ապագան»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ ժողովին մասնակցեց ԵՀԽ-ի Կենտրոնական կոմիտեի անդամ երեցկին Փոլա Դևեջյանը:

Հավաքի նպատակն էր առավել գործուն դարձնել ուղղափառ կանանց ներգրավվածությունը Էկումենիկ շարժման մեջ և էլ ավելի մեծացնել և գորացնել կանանց դերը Էկումենիկ շարժման մեջ:

Ժողովի ընթացքում երեցկինը հանդիպումներ ունեցավ ժողովին մասնակից տարբեր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ, նրանց հետ կիսեց իր փորձառությունը Եկեղեցում կնոջ բերած ծառայության ավանդական տեղի և դերի մասին՝ դրանք ներկայացնելով ժամանակակից մարտահրավերների լույսի ներքո:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱՄՆԻ  
ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ*

## ՆՈՐՎԵԳԻԱՅՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ՆՎԻՐՎԱԾ ՍՈՒՐԲ ՎԱՅՐԵՐԻՆ

Հուլիսի 26-28-ը Թրոնդայում (Նորվեգիա) տեղի ունեցավ Միջազգային համաժողով՝ նվիրված Սուրբ Վայրերին: Համաժողովի թեման էր «Սուրբ Վայրեր. Վայրեր կոնֆլիկտի կամ երկխոսության համար»:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ժողովին մասնակցում էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գևորգյան Ճեմարանի տեսուչ Տ. Մահակ վրդ. Մաշայանը և Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի Տեղեկատվական համակարգի տնօրեն Տ. Վահրամ քհն. Մելիքյանը:

Համաժողովի մասնակիցներն անդրադարձան կոնֆլիկտային գոտիներում գտնվող սրբավայրերին, ինչպիսիք են օրինակ Երուսաղեմում և Իրաքում գտնվող սրբավայրերը: Համաժողովի հիմնական նպատակն էր քննարկել կոնֆլիկտային գոտիներում գտնվող սրբավայրերի պահպանության և դրանք հետագա սերունդներին անվնաս փոխանցելու հարցեր:

*ՄԱՅՐ ԱԹՐՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*



## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

### ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԳԵՐ- ՄԱՆԻԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ

Հուլիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եկեղեցական զարգացման ծառայության Գերմանիայի եկեղեցիների միության պատվիրակությանը՝ ուղեկցությամբ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի (ՀԿՍ) տնօրեն դոկտ. Կարեն Նազարյանի: Պատվիրակության կազմում էին Միության տնօրենների խորհրդի անդամ, Հարավարևելյան Եվրոպայի և Կովկասյան հանրապետությունների ծրագրի, Բալկանների ծրագրի և Հարավարևելյան Եվրոպայի և Կովկասյան հանրապետությունների տարածաշրջանային «Երկխոսության գրասենյակի» պատասխանատուները:

Հանդիպմանը Ամենայն Հայոց Հայրապետն իր գնահատանքը հայտնեց միությանը այն բոլոր օգտաշատ ծրագրերի համար, որ իրականացվում են տարբեր երկրներում և, մասնավորաբար, Հայաստանում՝ հիմնականում Կլոր Սեղան հիմնադրամի միջոցով: Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ Կլոր Սեղանի և Գերմանիայի եկեղեցիների միության միջև ձևավորված սերտ համագործակցությանը և հիմնադրամի աշխույժ գործունեությանը:

Հանդիպմանը խոսվեց նաև Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու սոցիալական ծրագրերի մասին:

ՀԿՍ-ն հիմնադրվել է 1996 թվականին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի համատեղ նախաձեռնությամբ: Այսօր Կլոր Սեղանը հիմնականում աշխատում է համապարփակ համայնքային զարգացման, կարողությունների զարգացման և տարածաշրջանում խաղաղության և հանդուրժողականության խթանման ոլորտներում:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ  
ՉԵԽԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ  
ՆԱԽԱՐԱՐԻՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը նույն օրն ընդունեց Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Գարել Շվարցենբերգին:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց հայ-չեխական հարաբերությունների սերտացման առիթով՝ նշելով, որ երկու ժողովուրդների արժեքներն էլ խարսխված են քրիստոնեական ակունքների վրա: Այս առնչությամբ Նորին Սրբությունը նկատեց, որ քրիստոնեական արժեքները պետք է հիմքը կազմեն մեր կյանքի՝ ընդգծելով, որ առանց Աստծո կյանքը չի կարող իր մեջ երջանկություն պարունակել:

Իր հերթին նախարարը, շնորհակալություն հայտնելով ընդունելության համար, անդրադարձավ հայոց պատմության ընթացքին Հայոց Եկեղեցու կարևոր դերակատարությանը: Պրն Շվարցենբերգն իր այցն իբրև սկիզբ նկատեց երկկողմ համագործակցության՝ կարևորելով այն նաև պետության անցման շրջանի, տնտեսական և սոցիալական դժվարությունների հաղթահարման փորձառության փոխանակման առումով:

Հանդիպման ընթացքին անդրադարձ կատարվեց Չեխիայում ձևավորվող հայ համայնքին, Չեխիայի հոգևոր կյանքին և Եկեղեցի-պետություն հարաբերություններին:

**ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՊԼՈՎ-  
ԴԻՎԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ**

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը հուլիսի 6-ին ընդունեց նաև Պլովդիվի (Բուլղարիա) հայ համայնքի ներկայացուցիչներին, ովքեր ուխտավորաբար գտնվում էին Հայրենիքում:

Նորին Սրբությունը կարևոր նկատեց նմանատիպ այցերը Հայաստան՝ նշելով, որ դրանք գալիս են զորացնելու նրանց ազգային-հայրենասիրական ոգին:

Վեհափառ Հայրապետն իր օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց համայնքային կյանքից ներս իրենց բերած ծառայությունների համար, անդրադարձավ Սփյուռքում հայեցի դաստիարակության անհրաժեշտությանը՝ հույս հայտնելով, որ երիտասարդ սերունդը, չնայած բազում մարտահրավերներին, հասակ կառնի ազգային շնչով՝ լինելով նաև արժանի քաղաքացիները Բուլղարիայի:

\* \* \*

Նույն օրը Վեհափառ Հայրապետն ընդունեց նաև Լեհաստանից Բիալիստոկի միտրոպոլիտ, արքեպիսկոպոս Էդվարդ Օգորովսկուն: Հանդիպման ընթացքում անդրա-

դարձ կատարվեց Հայ Առաքելական և Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցիների միջև առկա ջերմ հարաբերություններին և սերտ համագործակցությանը:

### **ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ «ՇՈՒՇԻ» ՊԱՐԱԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ**

Հուլիսի 6-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթոլիկոսն ընդունեց նաև ԱՄՆ Հայոց Արևելյան թեմից Հայաստան ժամանած Նյու Յորքի Սուրբ Վարդան առաջնորդանիստ եկեղեցու «Շուշի» պարախմբի անդամներին՝ գեղարվեստական ղեկավար Սեդա Պասկայանի ուղեկցությամբ:

Վեհարանի հարկից ներս ողջունելով պարախմբի անդամներին՝ Ամենայն Հայոց Կաթոլիկոսն իր օրհնությունը բերեց պարախմբի անդամ պատանիներին ու երիտասարդներին և իր գնահատանքը հայտնեց գեղարվեստական ղեկավարին և պարուսույցներին՝ երիտասարդներին պարավեստին և ազգային արժեքներին հաղորդ դարձնելու համար: Վեհափառ Հայրապետը հորդորեց երիտասարդներին փարված մնալ ազգային արժեքներին, սիրել իրենց Հայրենիքը և Եկեղեցին, հավատարիմ մնալ իրենց ազգային ինքնությանը և մշակույթին:

Նորին Սրբությունը մաղթեց պարախմբի անդամներին Աստծո օրհնությամբ նորանոր հաջողություններ, որպեսզի իրենց արվեստով շարունակեն ուրախություն և երջանկություն պարզևել շատ ու շատ հայորդիների սրտերին ինչպես ԱՄՆ-ում և Հայրենիքում, այնպես և Հայրենիքի սահմաններից դուրս՝ հոչակ բերելով մեր ազգին:

Վերջում Հայոց Հովվապետը պատասխանեց երիտասարդների հարցերին՝ առաջիկային՝ սեպտեմբեր 28-ին կատարվելիք Մյուռնոսօրհնության արարողության, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի, Հայրենիքում իրականացվող եկեղեցաշինության և ազգային-եկեղեցական կյանքին առնչվող այլ խնդիրների վերաբերյալ:

Հանդիպման ընթացքում որոշվեց, որ «Շուշի» պարախումբը հանդես կգա համերգային ծրագրով նաև Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Ս. Տրդատի բաց խորանի առջևի հարթակում, հուլիսի 9-ին ժամը 20.00-ին:

Հանդիպմանը ներկա էր Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը:

### **ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԳԵՆՏԻՆԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ**

Հուլիսի 9-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթոլիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Արգենտինայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Լեոպոլդո Ալֆրեդո Բրավոյին:



Ողջունելով դեսպանի այցը Մայր Աթոռ՝ Վեհափառ Հայրապետն իր բարեմաղթանքները հայտնեց նորանշանակ դեսպանին և շնորհավորեց նրան Արգենտինայի ազգային տոնի առիթով: Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակություն հայտնեց Հայաստանի ու Արգենտինայի միջև առկա ջերմ հարաբերությունների առիթով: Հայոց Հայրապետը ջերմությամբ վերհիշեց նաև 2004-ի մայիսին իր Հովվապետական այցը Արգենտինա:

Հանդիպմանը խոսվեց նաև Արգենտինայի հայ համայնքի, Լեոնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման անհրաժեշտության և ժողովրդի կյանքում Եկեղեցու կարևոր առաքելության մասին:

\* \* \*

Հուլիսի 11-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը ՀՀ Վճռաբեկ դատարանի 10-ամյակի առիթով ընդունեց Վճռաբեկ դատարանի անդամներին և ԱՊՀ երկրներից Հայաստան ժամանած նույնանուն կառույցների ներկայացուցիչներին:

Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը շնորհավորեց Հայաստանի դատական համակարգի ներկայացուցիչներին՝ Վճռաբեկ դատարանի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ: Վեհափառ Հայրապետը համառոտ ներկայացրեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմությունը, ապա անդրադարձավ օրենքի կրոնական ընկալմանը և աստվածադիր լինելու հանգամանքին:

\* \* \*

Նույն օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հույն Ուղղափառ Եկեղեցու Ալեքսանդրիայի և Աֆրիկայի պատվիրակության վարչական ղեկավար Սպիրիդոն Կամալակիսին:

Հանդիպմանն անդրադարձ կատարվեց հայ և հույն ժողովուրդների միջև առկա ջերմ բարեկամությանը, ինչպես նաև Հայ Եկեղեցու և Ալեքսանդրիայի պատրիարքության հարաբերություններին:

## **ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԵՒՆԻՎ ՆԱԽԱԳԱՀ ԼՈՒԻՍ ՄԱՐԻ ԴԵ ՊՅՈՒԶԻՆ**

Հուլիսի 24-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի նախագահ Լուիս Մարի դե Պյուչին:

Վեհափառ Հայրապետը ողջունեց պարոն դե Պյուչի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին եւ հաջողություն մաղթեց նրա առաքելությանը՝ նշելով, որ երկրում հասարակական լարվածության վերացումը բոլորի սպասումն է: Նորին Սրբությունն ընդգծեց, որ թե՛ իշխանության և թե՛ ընդդիմության ներկայացուցիչներն ու կողմնակիցները Հա-

յաստանյայց Եկեղեցու զավակներն են, և Հայ Եկեղեցուն մտահոգում է յուրաքանչյուր հայորդու ճակատագիրը:

ԵԽԽՎ նախագահը Վեհափառ Հայրապետին ներկայացնելով Հայաստան կատարած իր այցի նպատակները՝ առանձնակի կարևորեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի դերը հասարակության մեջ հաշտարար մթնոլորտի ստեղծման գործում:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաև Ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ջանքերին: Նորին Սրբությունը մասնավորապես մտահոգություն հայտնեց Ադրբեջանից հնչող ռազմատենչ հայտարարությունների առնչությամբ, որ վերջին շրջանում հաճախադեպ է դարձել նաև Ադրբեջանի հոգևոր առաջնորդի կողմից: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Ադրբեջանում հայոց հոգևոր ու մշակութային կոթողների նկատմամբ իրականացվող բարբարոսական քաղաքականությանը՝ մասնավորապես մատնանշելով Հին Զուղայի խաչքարերի իսպառ ոչնչացումը:

*ՄԱՅԸ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԻ  
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՀԱՅ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՍՏ, ԲԱՅՑ ԵՎ ՆՎԻՐՅԱԼ ՄՇԱԿՆ

Կյանքից հեռացավ Մայր Աթոռի «Էջմիածին» ամսագրի բազմամյա և վաստակավոր աշխատակից Վոլոդյա Վազգենի Աբրահամյանը:

Ծնվել է 1930 թ. դեկտեմբերի 5-ին Երևանում՝ Վանից գաղթած ավանդապահ ընտանիքում:

Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում, ապա աշխատել տարբեր հաստատություններում, այնուհետև 1961-66 թթ. ուսանել Երևանի Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետում՝ ստանալով հայոց լեզվի և գրականության ուսուցչի մասնագիտություն:

Ինստիտուտն ավարտելուց հետո մինչև վախճանվելն աշխատեց Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրում նախ որպես սրբագրիչ և ռճաբան, ապա՝ փոխմամբագիր:

Ավելի քան չորս տասնամյակ աշխատելով «Էջմիածին» ամսագրում՝ անգնահատելի վաստակ ունեցավ Մայր Աթոռի պաշտոնական ամսագրի ավանդների փոխանցականության, ճիշտ և գեղեցիկ հայերենով հրատարակելու գործում: Նա նաև ասես կենդանի հիշողությունը լինել այդ տասնամյակների Մայր Աթոռի եկեղեցական կյանքի և իրադարձությունների ու հայրապետական այցելությունների, ուստի որևէ փաստ ճշտելու և կամ որ թվականի ներքո որոնելու համար հաճախ դիմում էին նրան:

Վ. Աբրահամյանը նաև հեղինակն է Մայր Աթոռում կատարված միջոցառումներին, եկեղեցական տարբեր տոներին և իրադարձություններին նվիրված բազմաթիվ հոդվածների, որոնց մի մասն իրեն բնորոշ համեստությամբ տպագրել է առանց հեղինակի մատնանշման՝ որպես թղթակցություն ամսագրի կողմից:

Այդ թղթակցությունները, սակայն, միայն դեպքերի նկարագրությունները չեն: Նրանցում երևում է նաև հեղինակի քաջածանոթությունը Հայոց Եկեղեցու պատմությանը և ծեսին ու տարբեր իրադարձություններին, ինչպես նաև վկայում են հեղինակի գրական ձիրքի և օժտվածության մասին: Որպես գրական անդաստանի համեստ մի մշակ՝ նա իր այդ օժտվածությունը երկար ժամանակ հոգում անթեղված էր պահել և միայն 1990-ական թվականներից իրեն իրավունք վերապահեց թղթին հանձնել և ապա ընթերցողի դատին ներկայացնել հուշագրական և խոհա-փիլիսոփայական բնույթի իր



ստեղծագործությունները, որոնց միջոցով թեև պատկերվում է իր կյանքի ընթացքը, սակայն գեղարվեստական որոշակի մի այնպիսի ընդհանրացվածությամբ, որ այն դուրս եկավ կենսագրական պատումի շրջանակից՝ մի ընտանիքի ողիսականի միջոցով ներկայացնելով Վանի 1915 թ. հերոսամարտի և տարագրությունից մինչև Արևելյան Հայաստանում արևմտահայության ապաստան գտնելու, ապա և հաջորդող տարիների վերհանումի ընթացքը:

Վ. Աբրահամյանի այս գործերը կարևորվում են նաև որպես յուրօրինակ մի փաստագրություն, մի տարեգրություն, որի էջերը կենդանի գույներով վանեցի գաղթականների միջավայրում լսած պատմությունների հիման վրա մեզ են ներկայացնում Վասպուրական աշխարհի ավանդապահ կենցաղը և սովորույթները, Վանի բարբառը, ապա և հին Երևանը: Իրենց ընտանիքի այս կենսապատումը նա ներկայացրեց «Հեղեղացի արմատներ» (1997 թ.) և «Հողմակոծ ցողուններ» (1999 թ.) գրքերում, որոնց վերնագրերն իսկ հուշում են, որ այս գրքերը նվիրված են իր հայրենական միջավայրից պոկված, ապա և վերստին ընձյուղված մի գերդաստանի պատմությանը, որն այնուհետև ամբողջացավ «Ջղզում» եռագրության երկու գրքերում՝ 2001 և 2003 թթ.:

Հաջորդող գրքերում արդեն արծարծվում են հայ ժողովրդի ներկային և գալիքին նվիրված հարցեր, ինչպես նաև հայությանը հուզող հիմնախնդիրները դիտարկվում են արդի աշխարհի և համամարդկային արժեքների ընդհանուր համատեքստում և գրական առումով էլ ունեն գեղարվեստական ուրույն կառուցվածք, որում տարբեր տեսական հարցերը կետ առ կետ քննվում և վերլուծվում են հերոսների երկխոսության միջոցով: Այս ոգով և նման շարադրանքով են գրված «Քավություն» (2005), «Բենիկ և Պանդուխտ» (2006), «Անթեղ» (2006) և «Մենակյացը» (2008) գործերը:

Վ. Աբրահամյանի ստեղծագործություններում արտացոլվել է նաև նրա սերը, ակնածանքն ու նվիրումը Մայր Աթոռի, Հայ Եկեղեցու և մեր ազգային ավանդական արժեքների հանդեպ: Նույն այդ նվիրմամբ նա իր գիտելիքներն է փոխանցել Մայր Աթոռի ապագա միաբանների մի քանի սերունդների, բոլոր նրանց, ովքեր հայոց լեզվին և իրենց կուրսային ու ավարտական աշխատանքներին վերաբերվող որևէ հարցով դիմում էին իրեն: Ահա այս պատճառով Վ. Աբրահամյանի կորուստը խոր ցավ պատճառեց Մայր Աթոռի միաբանությանը Վեհափառ Հայրապետից մինչև ճեմարանավարտ սարկավագները և աշխարհական աշխատողները: Ցավակցության ու վշտակցության իրենց խոսքն ասացին նաև Սփյուռքի տարբեր թեմերում սպասավորող մեր շատ հոգևորականներ, որոնց հոգևոր-գիտական առաջին քայլերի առաջին խրախուսողներից է եղել նա:

Վ. Աբրահամյանն իրեն ճանաչողների հիշողության մեջ կմնա ազնիվ, սկզբունքային, հայրենասեր ու հավատավոր և հոգեկան հարուստ ու հուզական ներաշխարհի տեր մի անձնավորություն, ում ապրած կյանքը մի համեստ, բայց և բոլորանվեր ընծայում էր Հայ Եկեղեցուն, մշակույթին և գրականությանը:

***Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:***

***ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ***

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

### **Հունիսի 1-ին, կիրակի - Գ կիր. զկնի Հոգեգալստեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Աստուծոյ քահանա Կարապետյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Արժանապատիվ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

### **Հունիսի 8-ին, կիրակի - Դ կիր. զկնի Հոգեգալստեան:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Սահակ վարդապետ Մաշայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

### **Հունիսի 15-ին, կիրակի - Ե կիր. զկնի Հոգեգալստեան: Գիւտ տփոյ Սրբուհոյ Աստուածածնի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը «Եւ լուայ ձայն յերկնից, որ ասէր ցիւ. «Գրեա՛, երանի մեռելոցն, որք ի Տէր ննջեցին այժմիկ վաղվադակի. զայս ասէ Հոգին, քանզի հանգեան յաշխատութենէ իւրեանց, բայց միայն գործք իւրեանց չոգան զհետ նոցա» (Հովի. Հայտ. ԺԴ 13) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 13):

### **Հունիսի 29-ին, կիրակի - Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Սահակ վարդապետ Մաշայանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 19):

### **Հուլիսի 6-ին, կիրակի- Բ կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Հովակիմ վարդապետ Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

### **Հուլիսի 13-ին, կիրակի- Գ կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Ս. Հովանան արքեպիսկոպոս Տերտերյանը: «Հայր Մեր»-ից առաջ պատարագիչ Գերաշնորհ Սրբազան Հայրը «Զի ամենայն տուրք բարիք եւ ամենայն պարգեւք կատարեալք ի վերուստ են իջեալք առ ի Քէն, որ եւ Հայր Լուսոյ» բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 23):

**Հուլիսի 20-ին, կիրակի- Դ կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Առեն արեղա Ճեպեճյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հոգեշնորհ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 25):

**Հուլիսի 27-ին, կիրակի- Ե կիր. զկնի Վարդավառի:**

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեդանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Կտրիճ քահանա Դևեջյանը: «Հայր մեր»-ից առաջ Արժանապատիվ Տեր Հայրը հավուր պատշաճի քարոզ խոսեց (տե՛ս էջ 27):

**“ЭЧМИАДЗИН”  
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ  
ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА  
(Июнь-июль 2008)**

1. Первое собрание Общенациональной организации армянской воцерковленной молодежи, 10-14 июля 2008г. (с. 3-6).
2. Панихида в Первопрестольном Св. Эчмиадзине (в память о приснопамятном Католикосе всех армян Гарегине I), 6 июня 2008 г. (с. 7).
3. Послание Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, по случаю Дня Конституции, 5 июля 2008 г. (с. 8).
4. Патриаршие награды (пожалование в течение июля 2008 г. энциклик, ордена “Святой Нерсес Шнорали” и благословений ряду духовных и светских лиц, оказавших большие услуги Армянской Церкви)-(с. 9-10).
5. Патриаршее распоряжение (Объявлен расстриженным иеромонах Кюрег Варданян)-(с. 10).
6. Торжественное мероприятие Геворкянской Духовной Семинарии и Духовной Семинарии Вазгениян в Первопрестольном Св. Эчмиадзине, посвященное окончанию учебного года, 2 июля 2008 г. (с. 11-12).

**ПРОПОВЕДИ**

7. Проповедь архимандрита Овакима Манукяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 15 июня 2008 г. (с. 13-15).
8. Проповедь преподобного иерея Вртанеса Багумяна на первой литургии, отслуженной в церкви Шогакат, 15 июня 2008 г. (с. 16-18).
9. Проповедь архимандрита Саака Машаляна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина в праздник Преображения Господа, 29 июня 2008 г., (с. 19-22).
10. Проповедь Его Высокопреосвященства архиепископа Овнана Тертеряна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 13 июля 2008 г. (с. 23-24).
11. Проповедь иеромонаха Арена Чепечяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 20 июля 2008 г. (с. 25-26).
12. Проповедь преподобного иерея Ктрича Девечяна в Кафедральном соборе Первопрестольного Святого Эчмиадзина, 27 июля 2008 г. (с. 27-29).

## РЕЛИГИОЗНЫЕ И ЦЕРКОВНЫЕ ИССЛЕДОВАНИЯ

13. **ИЕРОМОНАХ МАКАР АКОПЯН** – Вардан Аревелци и каноны собора в Дзагаванке (эклизиологическое исследование)-(с. 30-35).
14. **ИЕРОМОНАХ МАТТЕОС ПОГОСЯН** – Стихотворные толкования трудов Овасапа Себастиа “О бытии творений” и “Детство Христа” (эклизиологическое исследование)-(с. 36-57).
15. **ОГАНЕС ОГАНИСЯН** – Происхождение христологических полемик в III-V веках (религиозное исследование)-(с. 58-67).
16. **АВЕТИС КАЛАШЯН** – Теологическая направленность соборов Лампсака и Тианы (теологическое исследование)-(с. 68-81).

## ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

17. **ВРЕЖ ВАРДАНЯН** – Отношения “Государства и Церкви” в контексте народной войны 450-451 гг. (историковедческое исследование)-(с. 82-92).
18. **ПАРУЙР МУРАДЯН** – К вопросу оценки армянского перевода “Истории Грузии” (историковедческое исследование)-(с. 93-101).
19. **КАРЕН МАТЕВОСЯН** – Скопированный Иоанном Писцом исторический сборник и сделанные им прибавки (кодиологическое исследование)-(с. 102-112).
20. **АЙК АМБАРЦУМЯН** – Некоторые структурные особенности Мушской типологической группы повествования “Сасунские удалцы” (литературоведческое исследование)-(с. 113-117).
21. **АЙК БАЛАСАНИЯН** – Архитектурный комплекс Мармашена и его настенные надписи (историковедческое исследование)-(с. 118-126).
22. **ЛЮДВИГ ОВАКИМОВИЧ КАРАПЕТЯН** – “Великие архимандриты” ... о малых. Басни Мхитара Гоша и Вардана Айгекци (литературоведческое исследование)-(с. 127-134).

## В СВЯТОМ ПЕРВОПРЕСТОЛЕ И В ЕПАРХИЯХ

23. Защита выпускных работ в Геворкянской Духовной Семинарии, 5 июля 2008 г. (с. 135).
24. Стартовал скаутский сбор “Андраник”, 24 июля 2008 г. (с. 136).
25. Сообщение, 8-10 июля 2008 г. (с. 137).
26. Заключительная выставка и вручение выпускных свидетельств в Канакерской школе искусства миниатюры, 21 июля 2008 г. (с. 138).
27. Паломничество для сотрудников дошкольных учреждений и библиотек, 26 июля 2008 г. (с. 139).
28. Паломничество в Святую Землю, 23 мая-2 июня 2008 г. (с. 140).



**Вести из Гугаркской епархии**

29. Освящение креста купола церкви Св. Богородицы в Иджеване, 5 июля 2008 г. (с. 141).
30. Освящение креста купола церкви Св. Геворк в селе Акори Туманянского района, 12 июля 2008 г. (с. 141).
31. Освящение церкви Св. Богородицы в селе Коти Тавушского региона, 13 июля 2008 г. (с. 142).
32. Церемония закладки камня в Гегаркуникской епархии, 19 июля 2008 г. (с. 143).
33. Вести из армянской общины Германии, 11 мая-26 июля 2008 г. (с. 144-148).
34. Рукоположение в дьяконы в церкви Св. Рипсима в Вене, 1 июня 2008 г. (с. 149).

**В армянской епархии Канады**

35. Сообщение о депутатском 25-ом собрании епархии, 30 мая-1 июня 2008 г. (с. 150).

**В Восточной епархии США**

36. Сороколетие освящения Кафедрального собора Св. Вардан (с. 151-153).
37. Вручение патриарших энциклик и орденов, 20 июня 2008 г. (с. 154-155).

**МЕЖЦЕРКОВНЫЕ СВЯЗИ**

38. Собрание “Участие православных женщин в экуменическом движении” в Греции, 8-12 июня 2008 г. (с. 156).
39. В Норвегии состоялся международный конгресс, посвященный Святым Местам, 26-28 июля 2008 г. (с. 157).

**АУДИЕНЦИИ В ПЕРВОПРЕСТОЛЬНОМ СВЯТОМ ЭЧМИАДЗИНЕ**

40. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, делегации Союза Церквей Германии, 6 июля 2008 г. (с. 158).
41. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, министра Иностранных дел Республики Чехии, 6 июля 2008 г. (с. 159).
42. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, представителей армянской общины Пловдива, 6 июля 2008 г. (с. 159).
43. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, членов ансамбля “Шуши”, 6 июля 2008 г. (с. 160).
44. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, посла Аргентины в Армении, 9 июня 2008 г. (с. 160).
45. Аудиенция у Его Святейшества Гарегина II, Католикоса всех армян, председателя ОБСЕ г-на Луиса Мари де Пючи, 24 июля 2008 г. (с. 161-162).

- 
- 
46. **ВАРДАН ДЕВРИКЯН** – Скромный и преданный труженик армянской литературы (слово памяти, посвященное многолетнему заместителю редактора журнала “Эчмиадзин” Володе Абрамяну)-(с. 163-164).
  47. Краткие церковные новости. Информация о Святых Литургиях, проповедях и других церемониях в Кафедральном соборе и мероприятиях в Первопрестольном Святом Эчмиадзине в течение июня-июля 2008 г. (с. 165-166).

**“ETCHMIADZIN”  
OFFICIAL MONTHLY REVIEW OF  
HOLY ETCHMIADZIN  
(June - July 2008)**

1. The first representative meeting of the Pan-Armenian Church Youth Organization, 14 July, 2008 (p. 3-6).
2. Requiem service in the Mother See of Holy Etchmiadzin in memory of Karekin I, Catholicos of All Armenians, July 6, 2008 (p. 7).
3. Message of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians on the occasion of the Day of Constitution, July 5, 2008 (p. 8).
4. Pontifical Awards (Order of “St. Nerses the Graceful” and Letters of Blessing granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, during July 2008 to clergymen and laymen having been of great service to the Armenian Church) (p. 9-10).
5. Rev. Fr. Kyuregh Vardanian was defrocked by the order of His Holiness Karekin II, Catholicos of All Armenians (p. 10).
6. Graduation ceremony of the Gevorkian and Vaskenian Theological Seminaries in the Mother See of Holy Etchmiadzin, July 2, 2008 (p. 11-12).

**SERMONS**

7. Sermon delivered by Rev. Fr. Hovakim Manoukian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, June 15, 2008 (p. 13-15).
8. Sermon delivered by Fr. Vrthanes Baghoumian in Shoghakat Church during his first celebration of Divine Liturgy, June 15, 2008 (p. 16-18).
9. Sermon delivered by Rev. Fr. Sahak Mashalian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy on the occasion of the Feast of Transfiguration, June 29, 2008 (p. 19-22).
10. Sermon delivered by His Eminence Archbishop Hovnan Derderian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, July 13, 2008 (p. 23-24).
11. Sermon delivered by Rev. Fr. Aren Jebejian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, June 15, 2008 (p. 25-26).
12. Sermon delivered by Fr. Ktrij Devejian in the Cathedral of Holy Etchmiadzin during the celebration of Divine Liturgy, June 15, 2008 (p. 13-15).

**RELIGIOUS AND ECCLESIOLOGICAL STUDY**

13. **REV. FR. MAKAR HAKOBIAN** – Vardan Areveltsy and the Rules of the Council of Dzagavan (ecclesiological research) – (p. 30-35).

14. **REV. FR. MATHEOS POGHOSSIAN** – “On the Existence of Creatures” by Hovasap of Sebastia and the prosaic interpretation of Tenorinakank (ecclesiological research) – (p. 36-57).
15. **HOVHANNES HOVHANNISSIAN** – The origin of Christological disputes in the 3rd - 5th centuries (religious research) – (p. 58-67).
16. **AVETIS KALASHIAN** – The theological orientation of the Councils of Lampsak and Tian (theological research) – (p. 68-81).

### **HISTORICAL AND PHILOLOGICAL STUDIES**

17. **VREZH VARDANIAN** – Church-State relations during the national war in 450-451, (historical research) – (p. 82-92).
18. **PARUYR MOURADIAN** – On the evaluation of the Armenian translation of “History of Georgia” (historical research) - (p. 93-101).
19. **KAREN MATHEVOSSIAN** - The historical collection copied by Johan the Scribe and his appendices (manuscript research) – (p. 102-112).
20. **HAYK HAMBARDZUMIAN** – Some structural peculiarities of the typological group of Moush of the accounts of “Sasna tserer” epos (literary research) – (p. 113-117).
21. **HAYK BALASANIAN** – The Architectural Complex of Marmashen and its Inscriptions (historical research) – (118-126).
22. **LUDWIG HOVAK KARAPETIAN** – “Great Church Fathers” ... on the lesser: the parables of Mekhitar Gosh and Vardan Aigheksy (literary research) – (127-134).

### **IN THE MOTHER SEE AND THE DIOCESES**

23. Theses defense in Gevorkian Theological Seminary, July 5, 2008 (p. 135).
24. Commencing of “Andranik” scout outing, July 24, 2008 (p. 136).
25. Press-releases, July 8-10, 2008 (p. 137).
26. Final exhibition and award of diplomas at the art school of miniature of Kanaker, July 21, 2008 (p. 138).
27. Pilgrimage organized for the officials of pre-school institutions and libraries, July 26, 2008 (p. 139).
28. Pilgrimage to the Holy Land, May 23-June 2, 2008 (p. 140).

### **In the Diocese of Gougark**

29. Consecration of the dome-cross of Holy Mother of God Church of Ijevan, July 5, 2008 (p. 141).
30. Consecration of the dome-cross of St. Gevork Church of village Akori in Toumanian region, July 12, 2008 (p. 141).
31. Consecration of the Holy Mother of God Church of Tavoush region, July 13, 2008 (p. 142).

- 
- 
- 32. Foundation blessing in the Diocese of Gegharkounik, July 19, 2008 (p. 143).
  - 33. News from the Armenian Community of Germany, May 11-July 26, 2008 (p. 144-148).
  - 34. Deacons' ordination in St. Hripsimeh Church of Vienna, June 1, 2008 (p. 149).

### **In the Armenian Diocese of Canada**

- 35. Press-release on the 25th representative meeting of the Diocese, May 25-June 1, 2008 (p. 150).

### **In the Eastern Diocese of the Armenian Church of North America**

- 36. The 40th anniversary of the consecration of St. Vardan Cathedral (p. 151-153).
- 37. Granting of Pontifical encyclicals and awards, June 20, 2008 (p. 154-155).

### **INTER-CHURCH NEWS**

- 38. Conference entitled "Orthodox Women's Participation in the Ecumenical Movement" in Greece, June 8-12, 2008 (p. 156).
- 39. International Conference dedicated to Holy Shrines was held in Norway, July 26-28, 2008 (p. 158).

### **AUDIENCES AT THE MOTHER SEE**

- 40. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the delegation of German Churches, July 6, 2008 (p. 158).
- 41. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the Minister of Foreign Affairs of Czech Republic, July 6, 2008 (p. 169).
- 42. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the representatives of the Armenian community of Plovdiv, July 6, 2008 (p. 169-170).
- 43. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the members of "Shoushi" Dance Company, July 6, 2008 (p. 160).
- 44. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to the ambassador of Argentina to Armenia, July 9, 2008 (p. 160).
- 45. Audience granted by His Holiness Karekin II, Catholicos of All Armenians, to Mr. Louis Marie de Putschie, President of PACE, July 24, 2008 (p. 161-162).
- 46. **VARDAN DEVRIKIAN** - The modest and devoted servant of the armenian literature (Commemorative speech dedicated to the memory of Volodya Abrahamian, longstanding deputy editor-in-chief of "Etchmiadzin" monthly review)-(p. 163-164).
- 47. Brief Church News. Information about the Divine Liturgies, sermons and other services held at the Mother See and the Cathedral of Holy Etchmiadzin during June and July 2008 (p. 165-166).

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Համագգային Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց կազմակերպության անդրանիկ պատգամավորական ժողովը .....	3
Հոգեհանգիստ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի հիշատակին .....	7
Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Սահմանադրության օրվա առիթով .....	8
Հայրապետական գնահատություն .....	9
Հայրապետական տնօրինություն .....	10
Գևորգյան Հոգևոր Ճեմարանի և Վազգենյան Հոգևոր Դպրանոցի ամսվերջյան հանդիսությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում .....	11

## ՔԱՐՈԶԽՈՍԱԿԱՆ

Տ. Հովակիմ վարդապետ Մանուկյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....	13
Տ. Վրթանես քահանա Բաղումյանի քարոզը՝ խոսված Ս. Շողակաթ եկեղեցում մատուցված անդրանիկ Ս. Պատարագին .....	16
Տ. Սահակ վարդապետ Մաշալեանի քարոզը՝ խոսուած Ս. Էջմիածնի Մայր Տաճարում Վարդավառին մատուցուած Ս. Պատարագին .....	19
Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....	23
Տ. Առեն արեղա Ճեպեճյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....	25
Տ. Կորիճ քահանա Դևեջյանի քարոզը՝ խոսված Ս. Էջմիածնի Մայր Տաճարում մատուցված Ս. Պատարագին .....	27

## ԿՐՈՆԱ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

<b>Տ. ՄԱԿԱՐ ԱԲԵՂԱ ՀԱԿՈՒԹՅԱՆ</b> – Վարդան Արևելցին և Չազավանից ժողովի կանոնները .....	30
<b>Տ. ՄԱՏԹԵՈՍ ԱԲԵՂԱ ՊՈՂՈՍՅԱՆ</b> – Հովասափ Սեբաստացու «Վասն Լինելութեան արարածոց» և Տնօրինականքի չափածո մեկնությունները	36
<b>ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ</b> – Քրիստոսաբանական վիճաբանությունների ծագումը 3-5-րդ դարերում .....	58
<b>ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ</b> – Լամպսակի և Թիանի ժողովների աստվածաբանական ուղղվածությունը .....	68

**ՊԱՏՄԱ -ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ**

<b>ՎՐԵԺ ՎԱՐԴԱՆՅԱՆ</b> – Պետություն և Եկեղեցի հարաբերությունները 450-451 թթ. ժողովրդական պատերազմի հոլովությունում .....	82
<b>ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ</b> - «Վրաց պատմության» հայերեն թարգմանության գնահատության հարցի շուրջ .....	93
<b>ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ</b> – Յոհան Գրչի ընդօրինակած պատմական ժողովածուն և կատարած հավելումները .....	102
<b>ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՉՈՒՄՅԱՆ</b> - «Մասնա ծոերի» պատումների Մշո տիպաբանական խմբի կառուցվածքային որոշ առանձնահատկություններ .....	113
<b>ՀԱՅԿ ԲԱՆԱՍՆՅԱՆ</b> – Մարմաշենի ճարտարապետական համալիրը և նրա վիմագրերը .....	118
<b>ԼՅՈՒԴՎԻԳ ՀՈՎԱԿԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ</b> - «Մեծ վարդապետները»... փոքրերի մասին. Մխիթար Գոշի և Վարդան Այգեկցու առակները ....	127

**ՄԱՅՐ ԱԹՈՂՈՒՄ ԵՎ ԹԵՄԵՐՈՒՄ**

Ավարտաճառերի պաշտպանություն Գևորգյան Հոգևոր Ճեմարանում .	135
Մեկնարկեց «Անդրանիկ» սկաուտական բանակումը .....	136
Հաղորդագրություն .....	137
Ամփոփիչ ցուցահանդես և ավարտական վկայականների հանձնում Քանաքեռի մանրանկարչական արվեստի դպրոցում .....	138
Ուխտագնացություն նախադպրոցական հաստատությունների և գրադարանների աշխատակիցների համար .....	139
Ուխտագնացություն Մուրբ Երկիր .....	140

**Լուրեր Գուգարաց թեմից**

Իջևանում օծվեց Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի խաչը .....	141
Օծվեց Թումանյանի շրջանի Աքորի գյուղի Ս. Գևորգ եկեղեցու գմբեթի խաչը .....	141
Տավուշի մարզում օծվեց Կոթի գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին .....	142
Հիմնարկեթի արարողություն Գեղարքունյաց թեմում .....	143
Լուրեր Գերմանիոյ հայ համայնքին .....	144
Սարկավազական ձեռնադրություն Վիեննայի Ս. Հովհաննես եկեղեցում	149

**Կանադայի հայոց թեմում**

Հաղորդագրություն թեմի 25-րդ պատգամավորական ժողովի .....	150
---------------------------------------------------------	-----

**Ամերիկայի Արևելեան թեմէն ներս**

Սուրբ Վարդան Մայր Տաճարի օծման 40-ամեակը .....	151
Հայրապետական Կոնդակներու և շքանշաններու հանձնում .....	154

**ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ**

«Ուղղափառ կանանց մասնակցությունը էկումենիկ շարժմանը» խորագրով ժողով Հունաստանում .....	156
Նորվեգիայում տեղի ունեցավ միջազգային համաժողով նվիրված Սուրբ Վայրերին .....	157

**ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ**

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Գերմանիայի Եկեղեցիների միության պատվիրակությանը .....	158
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չեխիայի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին .....	159
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Պլովդիվի հայ համայնքի ներկայացուցիչներին .....	159
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Շուշի» պարախմբի անդամներին .....	160
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Արգենտինայի դեսպանին .....	160
Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԵՒԽՎ նախագահ Լուիս Մարի դե Պյուչին .....	161
<b>ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ</b> - Հայ դպրության համեստ, բայց և նվիրյալ մշակը (հիշատակի խոսք նվիրված «Էջմիածին» ամսագրի երկարամյա փոխիմրագիր Վոլոդյա Աբրահամյանին) .....	163
Եկեղեցական բեմ. լուրեր .....	165